

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գ. Ա. Ղարիբյան, Ա. Ա. Խառատյան, Ռ. Կ. Իսահակյան

**ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ
ԿԱՊԻՏԱԼԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2017**

ՀՏԴ 338:331.1

ԳՄԴ 65.050+65.240

Ղ 471

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
գիրական խորհուրդը*

Խմբագիր՝ տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ա. Խ. Մարկոսյան**

Գ. Ա. Ղարիբյան, Ա. Ա. Խառատյան, Ռ. Կ. Իսահակյան

Ղ 471 Անկախության տարիներին Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները/ Գ. Ա. Ղարիբյան, Ա. Ա. Խառատյան, Ռ. Կ. Իսահակյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2017, 340 էջ:

Գիրքը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի զարգացման հիմնական դրսևորումների և առանձնահատկությունների հետազոտությունը: Հայաստանում շուկայական տնտեսության կայացման մեծ դժվարությունների և բաց թողած ճակատագրական սխալների վերլուծության համատեքստում բացահայտվել են ՀՀ մարդկային կապիտալի կորուստները, դրանց պատճառները, հաղթահարման ուղիները և առաջիկա զարգացման հիմնախնդիրները:

ՀՏԴ 338:331.1

ԳՄԴ 65.050+65.240

ISBN 978-5-8084-2230-8

© ԵՊՀ հրատ., 2017

© Գ. Ա. Ղարիբյան, Ա. Ա. Խառատյան,
Ռ. Կ. Իսահակյան, 2017

Հովհաննես Թումանյանը 1921 թ.-ին Իրավիայում գրնվող Ավերիք Իսահակյանին ցավով գրում է. «... Մենք թե՛ դրսից, թե՛ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխավորապես մենք: Մենք եմ ասում, և սրա մեջ է ճշմարտությունը ... էսքան աղերսների մեջ ոչ մի մեղավոր չերևաց, ոչ ոք պատասխանի չկանչվեց: Եվ ոչ մեկը անձնասպան չեղավ, որ ապացուցաներ, թե ամոք ու խղճմունք կա էս ժողովրդի մեջ»:¹

¹ Լ. Հախվերդյան, Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը, Երևան, 2000, էջ 27-28:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	7
ԳԼՈՒԽ 1. Մարդկային կապիտալը և նրա զարգացման հիմնական դրսևորումները նախախորհրդային և Խորհրդային Հայաստանում.....	10
1.1 Մարդկային կապիտալի էությունը և հետազոտման մեթոդաբանությունը	10
1.2 Մարդկային կապիտալը նախախորհրդային Հայաստանում	33
1.3 Մարդկային կապիտալը Խորհրդային Հայաստանում	36
ԳԼՈՒԽ 2. Կապիտալի նախասկզբնական կուտակման հայաստանյան դժվարությունները, կոռուպցիոն բնույթը և ծանր հետևանքները	45
2.1 Կապիտալի նախասկզբնական կուտակումը, ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանում շուկայական տնտեսության կայացումը.....	45
2.2 Հայաստանի տնտեսական և սոցիալական խորը ճգնաժամը.....	59
ԳԼՈՒԽ 3. Հարստության և եկամուտների բևեռացված բաշխումը և Հայաստանի բնակչության զանգվածային աղքատացումը.....	78
3.1 Բաշխման հարաբերությունները Հայաստանի անցումային տնտեսությունում	78
3.2 Տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի բևեռացումը	105
3.3 Բնակչության զանգվածային աղքատացումը և դրա դրսևորման ձևերը	119
Գլուխ 4. ՀՀ մարդկային կապիտալի կորուստները և դրանց կանխման հիմնախնդիրները.....	160
4.1 Մարդկային կապիտալի քանակական կորուստները և հաղթահարման հիմնախնդիրները	160

4.1.1 Մարդկային կապիտալի ներդրումային հնարավորությունները ՀՀ անցումային ժամանակաշրջանում.	160
4.1.2 Մարդկային կապիտալի բնական կորուստները	172
4.1.3 Միգրացիոն գործընթացները ՀՀ անցումային ժամանակաշրջանում	222
4.2 Մարդկային կապիտալի որակական կորուստները և կրթության զարգացման հիմնախնդիրները	274
4.3 Գործազրկությունը՝ որպես մարդկային կապիտալի որակական կորուստ, և դրա կանխման ուղիները	301
Վերջաբանի փոխարեն	320
Օգտագործված գրականության ցանկ	332

Ներածություն

Մենագրությունը ՀՀ ԳԱԱ քոթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Ղարիբյանի և նրա ասպիրանտների՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա. Խառատյանի և տնտեսագիտության թեկնածու Ռ. Իսահակյանի համատեղ աշխատանքն է: Պրոֆ. Գ. Ղարիբյանը 1960-ական թվականներից մինչև այսօր Հայաստանի սոցիալական զարգացումների, մասնավորապես բնակչության եկամուտների և կենսամակարդակի, ինչպես նաև մարդկային կապիտալի հարցերին վերաբերող շուրջ 90 գիտական հետազոտություններ է հրատարակել: Դոց. Ա. Խառատյանը ատենախոսություն է պաշտպանել Հայաստանի Հանրապետությունում կապիտալի նախասկզբնական կուտակման և բաշխման շուկայական հարաբերությունների կայացման հարցերի շուրջ, իսկ Ռ. Իսահակյանի ատենախոսությունը նվիրված է ժամանակակից Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի զարգացման միտումներին:

Հայտնի է, որ ԽՍՀՄ-ում 1965 թ.-ից սկսված պլանային, վարչահրամայական սոցիալիզմը, շուկայական սոցիալիզմին անցնելու ռեֆորմները (կոսիզինյան, գորբաչովյան) տապալվեցին և հանգեցրին ԽՍՀՄ-ի փլուզմանը: Այդ ժամանակահատվածում բացասական միտումներով զարգացումները սուր ձևեր ընդունեցին մասնավորապես Հայաստանում՝ պայմանավորված 1988 թ.-ի Մայիսակի կործանարար երկրաշարժով և Հայաստանի՝ դարաբաղյան հակամարտության հետևանքով ձևավորված տնտեսական շրջափակմամբ: Այդ բոլորի արդյունքում 1996 թ.-ին աղքատության մակարդակը հասավ 55.0 տոկոսի, և 800 հազարից մեկ միլիոն մարդ երկրից արտագաղթեց: Մարդկային կապիտալի այդպիսի ահռելի կորուստ տարա-

ծաշրջանի ոչ մի երկրում չի եղել: Իսկ բնական և տնտեսական քիչ ռեսուրսներ ունեցող Հայաստանի համար կա մի փրկություն՝ բարձր արդյունավետությամբ օգտագործել մարդկային կապիտալը, ամեն ինչ անել, որ բացառվեն մարդկային կապիտալի ինչպես քանակական, այնպես էլ որակական կորուստները:

19-րդ և 20-րդ դարերում Եվրոպան և ԱՄՆ-ն հասան տնտեսական գերբարձր աճի, սոցիալական մեծ զարգացումների, բնակչության բարձր կենսամակարդակի, ի թիվս այլ գործոնների, նաև այն պատճառով, որ տարբեր ճանապարհներով, մասնավորապես գաղութացման և այլ միջոցներով, աշխարհից իրենց երկիրը ներկրեցին հսկայական քանակի ռեսուրսներ: Վերջին հաշվով հենց շատ ռեսուրսներ կամ կենսական տարածքներ ունենալը դարձավ XX դարում Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների աշխարհը վերաբաժանելու հիմնական պատճառը:

Այսօր միջուկային կործանարար զենքը հանդես է գալիս որպես գաղող գործոն է և կանխում է աշխարհը նորից վերաբաժանելու համաշխարհային նոր պատերազմը: Ավելի բարձր կենսամակարդակի, սոցիալական ավելի մեծ զարգացման հասնելու խնդիրը արդի դարաշրջանում լուծվում է «խաղաղ» ճանապարհով՝ «Ճապոնիայի», «Սինգապուրի» մոդելներով հիմնականում մարդկային կապիտալի, մարդկային ռեսուրսների հնարավորությունները բարձր արդյունավետությամբ օգտագործելու միջոցով:

Նշված ուղին որքան գայթակղիչ է, նույնքան էլ՝ դժվար: Բոլոր ազգերը կուզենային հասնել սոցիալական բարձր զարգացման, սակայն շատ երկրների ժողովուրդներ շարունակում են գոյատևել աղքատիկ կենսամակարդակով:

Ո՞րն է Հայաստանի ծանր գնով ձեռք բերած անկախ պետականությունը, ազգային ինքնությունը և զարգացումը, այդ թվում՝ ազատագրված Արցախը փրկելու և հուսալի դարձնելու ուղին: Միակ ուղին մեր մարդկային կապիտալի զարգացումն ու նրա արդյունավետ օգտագործումն է, որը կայուն և բարձր տնտեսական աճ, դրա արդյունքում նաև բարձր կենսամակարդակ ապահովելու հիմնական գրավականն է: Չնայած ծանր ու դժվար, համարյա պատերազմա-

կան իրավիճակում է երկիրը, փրկության և զարգացման այլ ուղի չունենք: Ամեն գնով հայաստանցին «պետք է դառնա ճապոնացի», ճապոնացու նման անմնացորդ նվիրվի իր երկրին, հայրենիքի համար պայքարում լինի պատրաստ անգամ անձնագոհության, ժողովրդի նկատմամբ լինի ազնիվ ու նվիրված, հաստատի ընդհանուր բարոյականություն և ազնվություն, այդ բոլորի արդյունքում հաղթահարի ընչաքաղցությունը և մեր ամենամեծ չարիքը՝ կոռուպցիան:

Այդ բոլորին Հայաստանը կարող է հասնել առաջին հերթին մարդկային կապիտալի համակողմանի զարգացման ու արդյունավետ օգտագործման միջոցով:

ԳԼՈՒԽ 1. Մարդկային կապիտալը և նրա զարգացման հիմնական դրսևորումները նախախորհրդային և Խորհրդային Հայաստանում

1.1 Մարդկային կապիտալի էությունը և հետազոտման մեթոդաբանությունը

Մարդկային կապիտալի բովանդակությունը և առանձնահատկությունները հնարավոր դարձավ բացահայտել միայն կապիտալի ընդհանուր տեսության կայացման հիմքի վրա, որը իրականացրին դասականներ Վ. Պետին, Ա. Սմիթը, Դ. Ռիկարդոն, և ավարտին հասցրեց Կ. Մարքսը: Պատահական չէ, որ իր տնտեսագիտական հիմնական հետազոտությունը նա անվանել է «Կապիտալ», բոլոր երեք հատորներում էլ հետազոտվում է «կապիտալը»: Առաջին հատորում Կ. Մարքսը նախ հետազոտում է կապիտալի արտադրության գործընթացը կամ կապիտալն ընդհանրապես: Դրանով Մարքսը բացահայտեց հավելյալ արժեքի տեսությունը, հետևաբար նաև կապիտալի տեսությունն ընդհանրապես, որից հետո միայն վերլուծեց կապիտալի կոնկրետ ձևերը:

Ինչ վերաբերում է մարդկային կապիտալին, Կ. Մարքսը, ըստ էության, այն վերագրել է հավելյալ արժեք ստեղծող մարդու աշխատության՝ փոփոխում կապիտալին: Ուստի «կապիտալի այն մասը, որ վեր է ածվում աշխատության արտադրության պրոցեսի մեջ փոխում է յուր արժեքը..., վերարտադրում է յուր համարժեքն ու սրանից գերազանցող... հավելյալ արժեքը..., կապիտալի այս մասը... անվանում են փոփոխում կապիտալ»:² Կ. Մարքսը ընդգծում է հենց փոփոխում

² Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1933, էջ 174:

կապիտալի դերը՝ որպես նոր արժեք՝ հավելյալ արժեք ստեղծողի, որպես ընդհանրապես հասարակության տնտեսական զարգացման կրողի: Ուստի մարդկային կապիտալը ոչ միայն դուրս չի մնացել Կ. Մարքսի հետազոտման դաշտից, այլև ընկած է նրա հիմքում: Քանի որ, վերջին հաշվով, կապիտալի կուտակման միակ աղբյուրը հավելյալ արժեքն է, իսկ հավելյալ արժեք ստեղծողը փոփոխում՝ մարդկային կապիտալն է, նշանակում է հենց Կ. Մարքսի տեսությունն է անմիջապես շեշտադրում մարդկային կապիտալի դերը հասարակական արտադրության զարգացման գործում: Մարդկային կապիտալի մարքայան այս տեսությունը, մեր տպավորությամբ, կարծեք թե դուրս է մնացել սույն խնդիրների քննարկումներից: Համեմայն դեպս, մարդկային կապիտալի հետազոտություններում Մարքսի դերը անհրաժեշտ ուշադրության և գնահատման չի արժանացել: Ինչպես նկատեցինք, այսօրվա ըմբռնմամբ մարդկային կապիտալը Կ. Մարքսի «Կապիտալ» աշխատության շրջանակներում քննարկվել է մաս արժեքի, մասնավորապես հավելյալ արժեքի ստեղծմանը մասնակցելու տեսանկյունից: Այդ պատճառով մենք սահմանափակվենք դրանով՝ հատուկ անդրադարձ կատարելով մարդկային կապիտալի տեսության կայացման գործընթացներին ու պատմությանը:

Չնայած մարդկային կապիտալի նկատմամբ տնտեսագիտության և ընդհանրապես հասարակության վերաբերմունքը աճեց հատկապես 20-րդ դարում, նրա տեսությունը հիմնականում ձևավորվել է դասական տնտեսագիտության կայացման ժամանակաշրջանից: Այսպես, մարդկային կապիտալի տեսությանն անդրադարձել է տնտեսագիտության նախահայրը՝ Վիլյամ Պետտին:³ Նա փորձեց ազգի հարստության կազմում նյութական արժեքների՝ հողի, կապիտալի, ռենտայի և շահույթի շարքում գնահատել մաս մարդուն:⁴ Այդ հարցադրումն էլ հենց դարձավ ելակետ մարդկային կապիտալի տեսության ուսումնասիրության և կայացման համար: Վ. Պետտին կապիտալ համարեց մաս հարստություն կամ նյութական կապիտալ ստեղծողին՝ մարդուն: Ավելին, հարստություն և նյութական արժեք-

³ У. Петти, Экономические и статистические работы, I и II. Соцэкгиз, 1940, стр. 156.

⁴ Նույն տեղում, էջ 150:

ներ ստեղծելու գործում Վ. Պետտին բոլոր մարդկանց նույն դերը և նույն արժեքը չի տալիս: Նա ազգային հարստություն ստեղծելու գործում, հետևաբար և դրա կազմում որպես կապիտալ մարդկանց գնահատման չափը կախվածության մեջ դրեց մարդու տարիքից, նրա հմտությունից, որակավորումից, փորձից և վերջին հաշվով՝ նրա աշխատանքի արդյունավետությունից: Այդ մոտեցմամբ Վ. Պետտին հասուն տարիքի մարդուն երեխայից երկու անգամ, իսկ նավաստուն գյուղացուց երեք անգամ «թանկ» գնահատեց: Այդպիսով Վ. Պետտին ոչ միայն մարդկային կապիտալի տեսության, այլ նաև նրա գնահատման գիտական մեթոդաբանության հիմքերը դրեց:

Մարդկային կապիտալի տեսության և մեթոդաբանության կայացման գործում մեծ դերակատարություն ունեցավ Ադամ Սմիթը: «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» աշխատությունում Ա. Սմիթը ելնում է այն հարցադրումից, որ յուրաքանչյուր երկրի ժողովրդի տարեկան աշխատանքը վերածվում է ազգի հարստության: Ընդ որում՝ ըստ նրա հարստության չափը կախված է, մի կողմից, արտադրության միջոցների ընդհանուր քանակից և զարգացվածության աստիճանից, իսկ մյուս կողմից՝ բանվորների թվից, ընդունակություններից, հմտություններից և նրանց զարգացման վրա կատարվող ներդրումներից: Հետևաբար Ա. Սմիթը ևս ազգի հարստության չափը մի կողմից կախվածության մեջ դրեց ֆիզիկական կապիտալի՝ արտադրության միջոցների, քանակից և որակից, մյուս կողմից՝ մարդկային կապիտալի ծավալից, որակից և հմտության աստիճանից:

Ադամ Սմիթը գտնում էր, որ ազգային հարստության ավելացումը, մեծ հաշվով, կախված է արտադրության միջոցների կատարելագործման և բանվորների որակավորման բարձրացման համար կատարվող ներդրումներից:⁵

Այդ վերջինը շատ կարևոր է հատկապես մարդկային կապիտալի գնահատման մեթոդաբանությունում: Կ. Մարքսը «Կապիտալի» երկրորդ հատորում կապիտալի շրջապտույտի և պտույտի մոդելները

⁵ А. Смит, Исследование о природе и причинах богатства народов, М., 1962, стр. 208, 490.

վերլուծելիս աշխատուժը դիտեց արտադրողական կապիտալի բաղադրամասս և, ըստ էության, բացահայտեց աշխատուժի՝ որպես մարդկային կապիտալի տեսակի շրջապտույտի առանձնահատկությունները: Կ. Մարքսը նշում է. «Արտադրության անմիջական գործընթացում մարդու ընդունակությունների զարգացումը կարելի է դիտարկել որպես հիմնական կապիտալի արտադրություն, ընդ որում, այդ հիմնական կապիտալը հենց ինքը՝ մարդն է»:⁶ Ավելին, Մարքսի բնորոշմամբ, կապիտալը իր դրսևորման բոլոր ձևերում առանձնանում է մի ընդհանուր, էական հատկանիշով, հավելյալ արժեք՝ շահույթ, ազգային հարստություն ստեղծելու օգտակարությամբ: Այդ պատճառով էլ մարդկային կապիտալը նա դիտարկում է որպես հավելյալ արժեքի՝ հարստության ստեղծողի ընդունակություն: Այդ առնչություններում Կ. Մարքսը մարդկային կապիտալում առանձնացնում է հենց աշխատուժը՝ որպես հարստություն, հավելյալ արժեք, շահույթ, աշխատավարձ և ընդհանրապես եկամուտ ստեղծող: «Աշխատուժ կամ աշխատելու կարողություն ասելով հասկանում ենք միագումարությունը ֆիզիկական և հոգևոր հատկությունների, որոնք գոյություն ունեն կենդանի անձնավորության մեջ, և որոնց նա շարժունակության մեջ է դնում ամեն անգամ, երբ որևէ տեսակի սպառողական արժեք է արտադրում»:⁷ Դա, ի տարբերություն տնտեսագիտության նախորդ դասականների, մարդկային կապիտալի վերլուծության և գործառության ղեքի բացահայտման ու գնահատման միանգամայն նոր մոտեցում է: Այդ մոտեցմամբ էլ Կ. Մարքսը արժեքի աշխատանքային տեսությամբ բացահայտեց աշխատուժի, հետևաբար և մարդկային կապիտալի, վերարտադրության առանձնահատկությունները: Դա մասնավորապես վերաբերում է մարդկային կապիտալի վերարտադրության արժեքի կառուցվածքին ու դրա համար անհրաժեշտ ծախսումների չափերին և միտումներին:

Մարքսը գրում է, որ աշխատուժի արժեքը մյուս ապրանքների ամեն մեկի արժեքի նման որոշվում է այն աշխատաժամանակով, որ

⁶ К. Маркс, Ф. Энгельс, Капитал, соч. 2-ое изд., т. 46, ч. II, Москва, 1939, стр. 221.

⁷ Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1933, էջ 133:

անհրաժեշտ է այդ առանձնահատուկ բանի արտադրության, ուրեմն և վերարտադրության համար: Մարդկային ընդհանրական բնությունը այնպես փոխելու համար, որ նա աշխատանքի մի ճյուղի մեջ արվեստ ու հմտություն ձեռք բերի, զարգացած և առանձնահատուկ աշխատուժ դառնա, պահանջվում է մի որոշ դաստիարակություն ու կրթություն, որոնք իրենց հերթին ապրանքային համարժեքների մի ավելի մեծ կամ ավելի փոքր գումար են արժեքում: Նայած աշխատուժի շատ կամ քիչ բարդացած բնության՝ նրա դաստիարակության ծախսերը տարբեր են լինում: Ուրեմն ուսուցման այս ծախսերը մտնում են նրա արտադրության վրա ծախսված արժեքների շրջանակի մեջ: Աշխատուժի սեփականատերը մահկանացու է: Ուստի, որպեսզի նրա շուկայում երևան գալը մշտատև լինի ..., աշխատուժի արտադրության համար անհրաժեշտ է կենսամիջոցների գումար, որը պարունակում է... բանվորների երեխաների կենսամիջոցներն էլ...: Աշխատուժի արժեքը հանգում է կենսամիջոցների մի որոշ գումարի արժեքին: Նա փոխվում է հենց այս կենսամիջոցների արժեքի փոխվելու հետ:⁸

Կ. Մարքսը միաժամանակ բացահայտեց աշխատուժի՝ մարդկային կապիտալի վերարտադրության ծախսերի արժեքի փոփոխման ու շարժման միտումները և, դրանցով պայմանավորված, նրա վերարտադրության համար համապատասխան ներդրումների չափերի փոփոխությունները: Իրականում, ըստ Մարքսի վերը նշված տեսության, հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացումը հատկապես կենսամիջոցներ արտադրող ճյուղերում, իջեցնելով աշխատուժի վերարտադրության համար անհրաժեշտ կենսամիջոցների արժեքը, տրամաբանորեն պետք է իջեցնի նաև աշխատուժի կամ մարդկային կապիտալի արժեքը, որը կհանգեցնի մարդկային կապիտալի վերարտադրության ծախսերի կրճատմանը: Սակայն մյուս կողմից և միևնույն ժամանակ, հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացումը, որն արդյունք է գիտատեխնիկական առաջընթացի, արտադրողների մասնագիտա-

⁸ Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1933, էջ 136-138:

կան հմտությունների և նրանց ընդհանուր գիտակրթական ու մշակութային մակարդակների բարձրացման, առաջ է բերում հասարակության, այդ թվում՝ և արտադրողների ու նրանց ընտանիքի անդամների, պահանջմունքների բազմապատկում, մեծացում, որը տրամաբանորեն կհանգեցնի մարդկային կապիտալի վերարտադրության ծախքերի արժեքի, հետևաբար և աշխատավարձի բարձրացմանը: Այդ գործընթացները հատկապես արդյունավետորեն են ընթանում արդյունաբերական և սոցիալ-մշակութային տեսակետներից առավել զարգացած երկրներում:

Մարդկային կապիտալի տեսության կայացման գործում զգալի է Ալֆրեդ Մարշալի դերը: Մասնավորապես, գնահատելի է Ա. Մարշալի կողմից մարդկային կապիտալի հիմնական բաղադրիչ տարրերի՝ մարդու ընդունակությունների, կրթության, դաստիարակության և առողջության դերի ընդգծումը և դրանց համար անհրաժեշտ ներդրումների անհրաժեշտության գաղափարը: Ա. Մարշալին է պատկանում «ամենից թանկ կապիտալն այն է, որ ներդրվել է մարդկային էության մեջ» միտքը:⁹ Այդ կարևոր գաղափարը նրա կողմից հիմնավորվում է նրանով, որ որքան մեծ են ներդրումները մարդկային կապիտալում, այնքան զարգացած և արտադրողական է դառնում այն, նույնքան մեծ է լինում նրա հատույցը տնտեսական աճի և, վերջին հաշվով, բնակչության կենսամակարդակի բարձացման գործում:

Մարդկային կապիտալը հետազոտվել է հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մարդկային կորուստները արժեքային՝ դրամական, գնահատման ենթարկելու կապակցությամբ: Պահանջվում էր նրա արժեքային գնահատման ժամանակ ճիշտ մեթոդով հաշվարկել մարդու վերարտադրության, այդ թվում՝ նրա որակավորման բարձրացման ծախսերը: Այդ առնչությամբ խիստ կարևորվում էին աշխատավարձի կապիտալացման մեթոդով մարդկային կապիտալի կորուստների արժևորումը և գնահատումը: Մարդկային կապիտալի վերարտադրության արժևորման ու դրամական գնահատումների հարցերում խորհրդային տնտեսագետներից

⁹ А. Маршал, Принципы экономической науки, СПб., 1993, стр. 270.

առաձնանում էր ակադեմիկոս Ստանիսլավ Ստրումիլինը: Երկրի ինդուստրացման և կուլտուրական հեղափոխության խնդիրները քննարկելու նպատակով ակադեմիկոս Ս. Ստրումիլինը առաջարկեց հաշվարկել և համեմատել ժողովրդական կրթության և աշխատողների որակավորման բարձրացման վրա կատարվող ծախսերն ու դրանց փոխհատուցման և վերջնական սոցիալ-տնտեսական արդյունքները: Ավելին, Ս. Ստրումիլինը հետազոտեց նաև կրթության տարբեր մակարդակների համեմատական ազդեցությունները աշխատանքի արտադրողականության բարձրացման և սոցիալ-տնտեսական զարգացումների վրա:¹⁰

Մարդկային կապիտալի տեսությունը՝ որպես հետազոտությունների ինքնուրույն, առանձին ոլորտ, գործնականում ձևավորվեց 20-րդ դարի 50-60-ական թվականներին: Հեղինակներն էին ամերիկացի տնտեսագետներ, նոբելյան մրցանակի դափնեկիրներ Թ. Շուլցը և Հ. Բեքերը: Մինչ այդ տնտեսագիտությունն առավել կարևորում էր հողը, ֆիզիկական կապիտալը, փողը, և դրանք էին համարվում հարստության ստեղծման հիմնական և վճռորոշ գործոնները: Դրանց միջոցով էր առաջարկվում լուծել սոցիալ-տնտեսական հիմնական խնդիրները՝ տնտեսական աճը, արդյունավետության բարձրացումը, աղքատության հաղթահարումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը և այլն: Թ. Շուլցը և Հ. Բեքերը, չբացառելով տնտեսական զարգացման ավանդական գործոնների մեծ դերը, առավել կարևորեցին մարդկային կապիտալի, հատկապես գիտելիքահենք մարդկային կապիտալի առանձնահատուկ դերը: Թ. Շուլցը ուղղակի նշում էր, որ համապատասխան ներդրումներով մարդկային արժեքավոր ձեռքբերովի հնարավորությունները և գիտելիքները ոչ այլ ինչ են, քան մարդկային կապիտալ, և որ դրանք սահմանափակ չեն:¹¹

Հարրի Բեքերը ավելի ընդլայնեց այդ սահմանումը՝ նշելով, որ «մարդկային կապիտալը ձևավորվում է ի հաշիվ մարդու մեջ կա-

¹⁰ Т. О. Разумов, И. Г. Телешова, Образование и человеческое развитие, М.Т.Е.Н.С. 2000, стр. 21.

¹¹ Schultz Investing in people: the economics of population quality. BERKELY, University of California press, 1981, p. 27.

տարված ներդրումների, որոնք ներառում են կրթությունը, արտադրությունում պատրաստվելը, առողջապահությունը և տեղաշարժերի վրա կատարված ծախսերը»:¹²

Մարդկային կապիտալի առանձնահատկությունների և առավելությունների ավելի հարուստ մեկնաբանություն է տալիս ամերիկացի գիտնական Ջ. Գրեյսոնը: Անդրադառնալով մարդկային կապիտալի առավելություններին՝ նա գրել է. «Մարդկային կապիտալը ավելի արժեքավոր ռեսուրս է, ավելի կարևոր, քան բնական ռեսուրսները կամ կուտակված հարստությունը: Հենց մարդկային կապիտալն է և ոչ թե գործարանները, սարքավորումներն ու արտադրական պաշարները արդյունավետության և տնտեսական աճի, մրցունակության անկյունաքարը»:¹³ Մարդկային կապիտալի տեսության հեղինակները, ընդգծելով նրա առաջնային դերը, չեն նսեմացնում կամ հերքում կապիտալի մյուս՝ ավանդական տեսակների կարևորությունը: Ավելին, նրանք նշում էին, որ առանց հողային, ֆիզիկական, դրամական և կապիտալի այլ ձևերի մարդկային կապիտալը միայնակ հարստության ստեղծման արդյունավետ պաշար չի կարող դառնալ: Ավանդական կապիտալների առկայության պայմաններում միայն մարդկային կապիտալը արդյունավետ կգործի և մեծ հարստության ու կենսամակարդակի աճի աղբյուր կդառնա:

Հայ տնտեսագետները ևս ուսումնասիրել են մարդկային կապիտալը: Նրանց շարքում կարելի է հատկապես առանձնացնել Հ. Ղուշյանին, Գ. Վարդանյանին, Ռ. Ղանթարջյանին, Կ. Ավետիսյանին, Հ. Գալստյանին, Վ. Մակունցին:¹⁴

¹² G. S. Baacker, Investment in Human Capital, A. Theoretical and Empirical Analysis, N. Y., 1964, p. 33.

¹³ Дж. Грейсон, К. О’Делл, Американский менеджмент на пороге XXI века, М., Экономика, 1991, стр. 196, 275.

¹⁴ Գ. Ղարիբյան, Ա. Մարկոսյան, Հ. Ասատրյան, Մարդկային զարգացման հայեցակարգը և մարդկային կապիտալի զարգացման աստիճանի գնահատումը, Սոցիալ-տնտեսական վերափոխումները և զարգացման միտումները ՀՀ-ում: Հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2004, էջ 114-117: Գ. Վարդանյան, Գիտելիքահենք տնտեսություն, Երևան, 2008: Կ. Ավետիսյան, Մարդկային կապիտալի զարգացման և վերարտադրության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով), սեղմագիր, Երևան, 2004: Հ. Գալստյան, Մտավոր կապիտալի ձևավորման առանձնահատկությունները և

Հայ տնտեսագետները մասնավորապես անդրադարձել են մարդկային կապիտալի՝ որպես տնտեսագիտական հասկացության, առանձնահատկությունների վերլուծությանը: Ընդ որում՝ նրանք կարևորում են ներդրումները հատկապես բնակչության առողջությունում և կրթությունում: Մարդկային կապիտալի տեսության ծավալում մեկնաբանություն է տվել պրոֆեսոր Հ. Ղուշչյանը: Նրա վերլուծություններում շեշտադրվում են մարդկային կապիտալի կայացման և տնտեսության մեջ նրա կուտակման կարևորությունը, նրա՝ մարդուց անբաժան լինելը և մարդու մեջ կայանալը, նյութական և սոցիալական շահերի ներդաշնակ զարգացումը և նրանում շարունակական ներդրումների անհրաժեշտությունը:

Հայ տնտեսագետներից մարդկային կապիտալի վերլուծություններով լուրջ հետազոտություն է կատարել պրոֆեսոր Գ. Վարդանյանը: Նա իր «Գիտելիքահենք տնտեսություն» աշխատությունում նշում է. «Մարդկային կապիտալը կարելի է դիտարկել որպես մարդկային ներուժի այն արժեքավոր հատկությունը, որը կարող է զարգացվել համապատասխան ներդրումների միջոցով, և որը կարող է կապիտալացվել տնտեսական շրջանառության գործընթացում, բերելով եկամուտ աշխատավարձի կամ շահույթի ձևով»:¹⁵ Ըստ էու-

վերարտադրության հիմնախնդիրները, սեղմագիր, Երևան, 2008: Վ. Մակուց, Մարդկային կապիտալի ձևավորման և օգտագործման հիմնախնդիրները ՀՀ-ում, Երևան, 2011: Գ. Ղարիբյան, Ռ. Իսահակյան, Մարդկային կապիտալի տեսության և մեթոդաբանության հարցեր, ԵՊՀ տնտեսագիտության տարեգիրք 2012, Երևան, 2013, էջ 57-68: Ռ. Իսահակյան, Մարդկային կապիտալը և նրա կորուստները կրթության ոլորտում, «Ալլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2013, #5(12), էջ 32-36: Ռ. Իսահակյան, Մարդկային կապիտալի զարգացման միտումները, Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր: Ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողով, Նյույորքի ժողովածու, ԵՊՀ, ԵԳՄ, Երևան, 2014, էջ 22-25: Գ. Ղարիբյան, Մ. Եղիազարյան, Ռ. Իսահակյան, Բնակչության առողջությունը՝ մարդկային կապիտալի բաղադրամաս, կորուստները և կանխման հիմնախնդիրները, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2013, Երևան, էջ 180-193: Գ. Ղարիբյան, Ռ. Իսահակյան, Միգրացիան որպես արտագաղթի տեսակ և դրա զարգացումները Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2013, Երևան, 2014, էջ 55-70: Հ. Ղուշչյան, Ռ. Դանթաբջյան, Մարդկային կապիտալի վերարտադրության պետական կարգավորումը, Երևան, «Տնտեսագետ», 2002:

¹⁵ Գ. Վարդանյան, Գիտելիքահենք տնտեսություն, Երևան, 2008, էջ 60:

թյան, պրոֆեսոր Գ. Վարդանյանը ավելի է «ընդարձակում մարդկային կապիտալ» հասկացությունը՝ նրան վերագրելով ոչ միայն շահույթ արտադրելու հատկությունը, այլ նաև իր իսկ վերարտադրության ֆոնդի՝ աշխատավարձ ստեղծելու հատկությունը: Նա նշում է. «Մոցիալական կապիտալը հարկ է դիտարկել որպես հատուկ հասարակական ներուժ, կապիտալ, որը, փոխգործակցելով կապիտալի մյուս տեսակների հետ, մշակութային, քաղաքական, ինստիտուցիոնալ և կարգավորող պայմանների համատեքստում նպաստում է տնտեսական աճի կայունացմանը, տնտեսության դինամիզմին ու մրցունակությանը»:¹⁶ Պրոֆ. Գ. Վարդանյանը հատուկ անդրադարձ է կատարել, հատկապես կրթական կապիտալի զարգացման և նրանում լուրջ ներդրումների անհրաժեշտության հարցերին: Ըստ նրա գնահատումների՝ ՀՀ-ում առաջացել են լուրջ մարտահրավերներ մարդկային կրթական կապիտալի վերարտադրությունում, մասնավորապես ՀՆԱ-ի նկատմամբ կրթության ոլորտում կատարվող ներդրումների համրային ծախսերի ցածր մակարդակի պատճառով: Ըստ հեղինակի հաշվարկների՝ ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ-ում կրթության բնագավառում կատարված ծախսերը մի քանի անգամ զիջում են ինչպես զարգացած երկրների, այնպես էլ համաշխարհային միջին մակարդակներին: Նշենք, որ աշխարհում դեռևս 2004 թ.-ին կրթության զարգացման հիմնական ծախսերը կազմել են շուրջ 2.5 տրիլիոն դոլար:

Մարդկային կապիտալն ապահովում է ԱՄՆ ազգային արդյունքի թողարկման և հավելածի մոտավորապես 75 %-ը: Այստեղից էլ այն մարտահրավերները, որն ունի Հայաստանը մարդկային կրթական կապիտալի զարգացման ոլորտներում:

Հայ տնտեսագետներից մարդկային կապիտալի զարգացման և վերարտադրության խնդիրներով թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել Կ. Ավետիսյանը 2004 թ.-ին, Վ. Մակունցը՝ 2011 թ.-ին: Կ. Ավետիսյանը իր ատենախոսությունում անդրադարձել է մարդկային կապիտալի տեսության ձևավորման ու կայացման պատմությանը, հատկապես ուսումնասիրել է մարդկային կապիտա-

¹⁶ Տե՛ս Գ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 18:

լի գործառնությունները տնտեսության գլոբալացման զարգացումներում: Այդ բոլոր քննարկումները, վերլուծությունները, հայաստանյան առանձնահատկությունների բացահայտումներն ու եզրակացությունները արժեքավոր ներդրում են Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի հետազոտության և ստացված արդյունքները սոցիալ-տնտեսական վերափոխումներում կիրառելու գործում: ¹⁷ Նշված ատենախոսությունները, ինչպես նաև ՀՀ-ում մարդկային կապիտալին նվիրված մյուս ուսումնասիրությունները, խնդիր չեն դրել հետազոտել մարդկային կապիտալի զարգացման միտումները և հատկապես կորուստները: Այդ պատճառով մեր աշխատանքի հիմնական մասը նվիրված է մարդկային կապիտալի կորուստների պատճառների և դրանց հաղթահարման ու կանխման հիմնախնդիրների քննարկումներին:

Մարդկային կապիտալի *հեղափոխման մեթոդաբանությունը* տարբերվում է նյութական և դրամական կապիտալների հետազոտման մեթոդաբանությունից: Դա բացատրվում է կապիտալի ավանդական տեսակներից մարդկային կապիտալի ունեցած տարբերություններով և առանձնահատկություններով: Մարդկային կապիտալի կրողը մարդն է, և այն գոյություն ունի մարդու կենսագործունեության բոլոր փուլերում և դրսևորումներում՝ նրա ծնունդից մինչև մահը: Այդ պատճառով այն բազմաստիճան է, երկարաժամկետ և ունի բարդ կառուցվածք: Այստեղից էլ մարդկային կապիտալի հետազոտման մեթոդաբանության առանձնահատկությունները, որոնք հանգում են հետևյալ հիմնական պահանջներին.

- մարդկային կապիտալը ուսումնասիրել նրա ձևավորման, կայացման ու զարգացման հաջորդական փուլերում և դրսևորումներում,
- բացահայտել յուրաքանչյուր փուլի առանձնահատուկ դերը,

¹⁷ Կ. Ավետիսյան, Մարդկային կապիտալի զարգացման և վերարտադրության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով), սեղմագիր, Երևան, 2004:

- բազմակողմանիորեն վերլուծել մարդկային կապիտալի արտադրողական փուլի կարևոր գործունեությունը և նրա սոցիալ-տնտեսական արդյունքները,
- դիտարկել մարդկային կապիտալի «ֆիզիկական և բարոյական մաշվածքի» առանձնահատկությունները և դրսևորման ձևերը:

Մեծ հաշվով մարդկային կապիտալը ձևավորվում, կայանում է, իր արտադրողական գործառության ղեկը կատարում և կյանքի ուղին սվարտում է մարդու երեք տարիքային խմբերում: Նման սահմանազատումը և խմբավորումը միանգամայն բավարարում է վերը շարադրված մեթոդաբանության պահանջներին: Հասկանալի է, որ նման բաժանումը վերաբերում է մակրոտնտեսական մակարդակի ազգային հասարակական մարդկային կապիտալին: Այն ներառում է երկրի ողջ բնակչությունը՝ իր երեք մեծ խմբերով:

Առաջին խումբը բնակչության դեռևս չաշխատողներն են՝ մինչև 16 տարեկանները, երկրորդ խումբը՝ 16-62 տարեկան աշխատող բնակչությունը, և երրորդը՝ 63 տարեկանից մեծ տարիքի բնակչության այլևս չաշխատող խումբը: Ընդ որում՝ գործող արտադրողական մարդկային կապիտալը երկրորդ խմբի զանգվածն է, որը ոչ միայն իրեն է վերարտադրում, այլև վերարտադրում է ինչպես առաջին խմբին՝ դեռևս չաշխատողներին, այնպես էլ երրորդ խմբին՝ այլևս չաշխատողներին:

Առաջին՝ դեռևս չաշխատողների խումբը՝ երեխաները, կազմում են մարդկային կապիտալի ձևավորման կայացման և վերարտադրության ամենակարևոր, հասարակության զարգացումն ապահովող խումբը: Այդ խմբի վերարտադրությունից են կախված առաջիկա և ապագա երկրորդ խմբի մարդկային կապիտալի կայացման ինչպես քանակական, այնպես էլ հատկապես որակական զարգացումները: Ժամանակակից զարգացած երկրներում (ԱՄՆ, Ճապոնիա, Արևմտյան Եվրոպայի երկրներ) մարդկային կապիտալի առաջին խումբը գտնվում է հասարակության, մասնավորապես սոցիալական պետությունների ուշադրության կենտրոնում: Մարդկային կապիտալի մեծ դերը ռեալ գնահատող երկրները ոչինչ չեն խնայում առաջին

խմբի՝ երեխաների, ինչպես կենսաբանական բնույթի պահանջմունքների բավարարման, այնպես էլ՝ նախադպրոցական և դպրոցական կրթական համակարգերի արդյունավետ զարգացման համար: Այդ խնդիրների բովանդակային վերլուծությունները աշխատանքի հաջորդ բաժիններում հանգամանորեն քննարկվելու են, այդ պատճառով առայժմ բավարարվենք շարադրվածով:

Ինչ վերաբերում է մարդկային կապիտալի երկրորդ խմբի վերարտադրությանը, այն կազմում է նրա միջուկը՝ գիտելիքով հարստացած և շարունակ հարստացող, փորձով և հմտություններով լրացվող գործող արտադրողական կապիտալը: Դա գիտելիքահենք մարդկային արտադրողական կապիտալն է, որի գործառության ղեկը երկրի և ամբողջ բնակչության համար հարստություն ստեղծելն է, արտադրության գործընթացում շարունակ կատարելագործվելն ու հմտանալը:¹⁸

Աղյուսակ 1.1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային ռեսուրսները, հազար մարդ (միջին տարեկան)¹⁹

	1995 թ.	1997 թ.	2001 թ.	2002 թ.	2003 թ.	2012 թ.	2014 թ.	2015 թ.
Ընդամենը աշխատանքային ռեսուրսներ	2 132.6	2 173.3	2 406.2	1 976.9	2 008.4	2 260.8	2 180.2	2 106.7
Տնտեսապես ակտիվ բնակչություն ընդամենը	1 581.9	1 538.3	1 411.7	1 240.1	1 232.4	1 418.3	1 375.7	1 316.4

¹⁸ Գ. Ղարիբյան, Կ. Ավետիսյան, Մարդկային կապիտալի տեսության ձևավորումը և զարգացումը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, N 1, էջ 43-52:

¹⁹ Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թ. հունվար-դեկտեմբեր, Երևան, 2017, էջ 14: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, Երևան, էջ 49-50:

Ջրադ- վածներ ընդամենը այդ քվում՝	1 476.4	1 372.2	1 264.9	1 106.4	1 107.6	1 172.8	1 133.6	1 072.7
Տղա- մարդ	864.0	701.6	682.9	578.5	581.8	605.0	607.5	589.5
Կին	612.4	670.6	582.0	527.9	525.8	567.8	556.3	544.1

Աղյուսակ 1.1-ը փաստում է, որ վերջին 20 տարիներին Հայաստանում մարդկային արտադրողական կապիտալը կրճատվել է: ՀՀ աշխատանքային ռեսուրսները 1995-2015 թթ. ժամանակահատվածում 2132.6 հազարից դարձել են 2106.7 հազար մարդ, զբաղվածների թիվը 1476.6 հազարից նվազել է մինչև 1072.7 հազար մարդ: Այս ամենը խոսում է մեր երկրի արտադրական ներուժի կրճատման մասին:

Աշխատանքի միջազգային, հասարակական և ներգործարանային բաժանումների խորացումը, ձևավորելով կոլեկտիվ մարդկային կապիտալը, իր հերթին նպաստում է նրա համակողմանի զարգացումներին: Դեռևս իր ժամանակին Կ. Մարքսը կապիտալիստական պարզ կոոպերացիան և մանուֆակտուրան վերլուծելիս գրել է. «Ուրիշների հետ պլանաչափորեն համագործակցելու միջոցին բանվորը դեռ է շարտում յուր անհատական սահմանացանկերը և ծավալում, զարգացնում է յուր՝ իբրև մարդկային սեռի ներկայացուցչի կարողությունները»:²⁰ Դրա հետևանքով մեծանում է նրա արտադրողական արդյունավետությունը: Աշխատանքի արտադրողականության բարձրացման հնարավորությունները ավելի է մեծացնում մանուֆակտուրան: «Մանուֆակտուրան մի կողմից աշխատանքի բաժանում է մտցնում արտադրության մի պրոցեսի մեջ, իսկ մյուս կողմից նա համակցում է առաջներում անջատ եղած արհեստները»:²¹ Այդ բոլորի արդյունքում անգամ ձեռքի աշխատանքի հիմքի վրա աշխատանքի արտադրողականությունը բարձրանում է: Ուշադրության է արժանի այն իրողությունը, որ ինչպես պարզ կոոպերացիայի, այն-

²⁰ Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1933, էջ 295:

²¹ Նույն տեղում, էջ 302:

պես էլ մանուֆակտուրայի «օրգանները մարդիկ են», զուտ մարդկային կապիտալը: Մարդկային կապիտալը զարգացման նոր ազդակներ է ստանում խոշոր մեքենայական արտադրության, մասնավորապես ժամանակակից գիտելիքահենք տնտեսության պայմաններում: Ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխությունը, արտադրության գործընթացների ավտոմատացումը և համակարգչային հնարավորությունների միջոցով լայն չափերով հեռակառավարումը հրամայական են դարձնում մարդկային կապիտալի շարունակական զարգացումը ինչպես կրթական համակարգի, այնպես էլ բուն արտադրության գործընթացների փոխառնչություններում:

Մարդկային կապիտալի կայացումը երկրորդ՝ 16-62 տարիների փուլում ունի նաև այն առանձնահատկությունը, որ միավորվում և փոխլրացվում են կրթական համակարգի գիտելիքահենք ձեռքբերումները ավտոմատ համակցված գործընթացներով: Ջարգացած շուկայական տնտեսության պայմաններում մարդկային կապիտալը միկրոտնտեսական մակարդակում տնտեսապես իրացվում է որպես ձեռնարկության մարդկային կապիտալ: Այդ պատճառով տրամաբանական է մարդկային կապիտալը քննարկել և դիտարկել որպես կոլեկտիվ մարդկային կապիտալ: Նման մեթոդաբանական մոտեցումը բացահայտում է մարդկային կապիտալի այն առանձնահատուկ գծերը, որոնք դրսևորվում են ձեռնարկությունում: Վերջին հաշվով հենց ձեռնարկության մեջ են դրսևորվում մարդու գիտելիքները, արտադրական փորձը, հմտությունը, նրա սոցիալական և բարոյահոգեբանական գործոնները և կոնկրետ գնահատվում շահութաբերության աստիճանն ու աշխատողների՝ կոլեկտիվի, սոցիալ-տնտեսական բավարարվածությունը: Ավելին, ձեռնարկությունում, և ընդհանրապես միկրոմակարդակում ոչ միայն ստուգվում, գնահատվում են մարդկային կապիտալի արդյունավետությունը, մարդու առողջությունը, գիտելիքը, փորձը և հմտությունը, այլ նաև ձեռնարկության մեջ են դրանք բազմապատկվում և հարստանում: Մարդկային կապիտալի առանձնահատկություններից և առավելություններից մեկն էլ այն է, որ, ի տարբերություն նյութական կապիտալի, որն արտադրության մեջ վերջին հաշվով ֆիզիկական և բարոյական մաշվածքի ձևերով

սպառվում և շարքից դուրս է գալիս, մարդկային կապիտալը շատ երկար ժամանակ (16-62 տարեկանները) ոչ միայն գործում է, այլև այդ ընթացքում շարունակ վերարտադրվում է՝ հարստանալով գիտելիքով ու հմտանալով փորձով: Նյութական ոչ մի կապիտալ այդպիսի երկարաժամկետ հատվածով և որակական աճով դժվար թե գործի: Դրանով է նաև մարդկային կապիտալը տարբերվում սովորական նյութական կապիտալից, դրանում է մարդկային կապիտալի առավելություններից մեկը:

Այդ բոլորով հանդերձ, մարդկային կապիտալը ևս մաշվածքի, դադարի իր ժամանակը և առանձնահատկություններն ունի: Կենսաթոշակի տարիքը մարդկային կապիտալի ֆիզիկական «մաշվածքի» գիծն է, ժամանակը: Մարդկային կապիտալն ունի նաև բարոյական «մաշվածք», որը դրսևորվում է կա՛մ սահմանված թոշակային տարիքից ցածր հասակում ծանր հիվանդությամբ, կա՛մ էլ գիտատեխնիկական նորագույն պահանջներին չհամապատասխանելու և չբավարարելու պարագաներում: Հասարակությունը մարդկային կապիտալի բարոյական մաշվածքով մեծ կորուստներ է կրում, քանի որ որոշ ժամանակահատվածում աշխատանքը հիվանդության և այլ պատճառներով դադարեցնելով՝ նրա գոյության, կրթության և առողջության պահպանման վրա ընտանիքների և հասարակության կատարած ներդրումները՝ ծախսերը, չեն փոխհատուցվում: Պետությունը պարտավոր է իր սոցիալական տրանսֆերտներով շարունակ համապատասխան ներդրումներ կատարել և հնարավորինս շուտ հակազդել մարդկային կապիտալի բարոյական մաշվածքին՝ նվազագույնի հասցնելով այն: Հետևաբար մարդկային կապիտալի էությունը և մյուս կապիտալների համակցությունում նրա առանձնահատկություններն ու առավելությունները հնարավոր է բացահայտել միայն նրա կառուցվածքի դրսևորման վերը շարադրված երեք փուլերի առանձնահատկությունների, գործառության տարբեր դերերի վերլուծության մեթոդաբանությամբ: Մարդկային կապիտալի «եռաստիճան մոդելն» իր քանակական արտացոլումն է գտել բնակչության վերարտադրության վերլուծություններում, ժողովրդագրական ուսում-

նասիրություններում, մասնավորապես և՛ 2001 թ.-ի, և՛ 2011 թ.-ի ՀՀ մարդահամարի արդյունքներում:

Աղյուսակ 1.2. ՀՀ բնակչության տարիքային կառուցվածքը

1990-2016 թվականներին

(տարեսկզբի դրությամբ, տոկոսներով)²²

	1990 թ.	2001 թ.	2011 թ.	2015 թ.	2016 թ.
Աշխատունակ տարիքից ցածր	32.3	26.3	20.2	20.5	21.0
Աշխատունակ տարիքի	59.7	60.0	67.8	66.9	66.1
Աշխատունակ տարիքից բարձր	8.0	13.7	12.0	12.6	12.9

Աղյուսակ 1.2-ը վկայում է, որ ընդամենը 26 տարիների ընթացքում ՀՀ բնակչության տարիքային կազմում նկատելի փոփոխություններ են կատարվել: Նվազել է աշխատունակ տարիքից ցածր բնակչության բաժինը և ավելացել է աշխատունակ տարիքի, հատկապես, աշխատունակ տարիքից բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը: Եթե 1990 թ.-ին աշխատունակ տարիքից ցածր բնակչության բաժինը կազմում էր 32.3 %, ապա 2016 թ.-ին՝ 21.0 %, այսինքն՝ 26 տարիների ընթացքում այն նվազել է ավելի քան 11 տոկոսային կետով: Միաժամակ այդ նույն ժամանակահատվածում աճել է աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռը՝ 1990 թ.-ի 8 %-ից 2016 թ.-ին հասնելով 12.9 %-ի: Դա բացատրվում է բնակչության ծնելիության գործակցի իջեցմամբ, որոշ չափով՝ նաև կյանքի միջին տևողության մեծացմամբ:

2015 թ.-ի տնային տնտեսությունների (տ/տ) հետազոտության արդյունքների համաձայն՝ մշտական բնակչության հաշվարկով տնային տնտեսության անդամների միջին թվաքանակը կազմել է 3.7 մարդ՝ 3.5 քաղաքային բնակավայրերում և 4.1 գյուղական բնակավայրերում, իսկ առկա բնակչության հաշվարկով՝ համապատասխան-

²² Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2013, էջ 26: Տե՛ս նաև Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 28: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 27:

մաքար 3.5, 3.3 և 3.8 մարդ: 2015 թ.-ին երեք և պակաս անդամ ունեցող տ/տ-ների տեսական կշիռը 44.1 % էր 2010 թ.-ի՝ 38.2 %-ի համեմատ: 2015 թ.-ին մինչև 16 տարեկան երեխա չունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմել է 57.1 % 2004 թ.-ի 45.3 %-ի դիմաց, նախորդ տարվա համեմատ նվազել են մեկ և երեք երեխա ունեցող տ/տ-ների մասնաբաժինները, իսկ 2 երեխա ունեցող տ/տ մասնաբաժինն աճել է և կազմել 20.3 %: 2016 թ.-ին բազմանդամ (6 և ավելի անդամ ունեցող) տ/տ-ները գերակշռել են գյուղական բնակավայրերում՝ 27.2 %, քաղաքայինի 16.9 %-ի դիմաց:²³ Ամուսնացողների միջին տարիքը քաղաքներում տղամարդկանց մոտ դարձել է 30, կանանց մոտ՝ 27, իսկ գյուղերում՝ համապատասխանաբար 29 և 25 (2016 թ.-ին):²⁴

Մարդկային կապիտալի այդ կառուցվածքը կարևոր է հաշվեկշռելու նախ և առաջ ամբողջական մարդկային կապիտալի վերաբերադրությունը: Եթե մենք է աշխատունակ տարիքից ցածր և հատկապես աշխատունակ տարիքից բարձր բնակչության բաժինը, ավելի մենք բեռ է ընկնում աշխատունակ տարիքի բնակչության վրա ապահովելու ինչպես առաջինների՝ երեխաների, այնպես էլ վերջինների՝ ծերերի կյանքի պայմանները:

Բնակչության կառուցվածքում աշխատունակ տարիքի անձանց բաժնի կրճատումը նվազեցնում է երկրի արտադրական հնարավորություններն ու երկարաժամկետ բացասական ազդեցություն ունենում պոտենցիալ ՀՆԱ-ի վրա: Արտադրության մակարդակի կրճատումն ու մեծահասակների տեսակարար կշռի ավելացումն ուղեկցվում է հարկաբյուջետային հատվածում անհավասակշռվածության ավելացմամբ (հարկային մուտքերի նվազման հետ աճում են առողջապահության և սոցիալական ապահովության ծախսերը):

Մյուս կողմից՝ հասարակության վաղվա օրը, մարդկային կապիտալի համալրման միակ ռեսուրսը աշխատունակ տարիքից ցածր բնակչությունն է: Հասարակությունը, մասնավորապես աշխատունակ տարիքի բնակչությունը, որքան շատ ներդրումներ կատարի աշ-

²³ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, Երևան, 2016, էջ 28:

²⁴ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 43:

խատունակ տարիքից ցածր բնակչության գոյության, զարգացման, կրթության և առողջապահության վրա, այնքան ապագայի համար ավելի զարգացած, ավելի մեծ ներուժով մարդկային կապիտալ կստեղծի: Այդ ծախսերը և ներդրումները ամենաարդյունավետ ու ապագայի համար զարգացման մեծ հնարավորություններ ստեղծող ներդրումներն են:

Ինչ վերաբերում է աշխատանքի տարիքից բարձր բնակչության բաժնի աճին (1990-2016 թթ.՝ 8.0 %-ից 12.9 %), դա մարդկային կապիտալի աշխատանքային ռեսուրսների վերարտադրության տեսակետից հակառակ արդյունքը կարող է տալ: Աշխատանքի տարիքից բարձր տարիք ունեցող մարդիկ, ըստ էության, մարդկային գործող արտադրողական կապիտալ չեն, ուստի նրանց պահպանման ծախսերը արդեն չեն կարող մարդկային կապիտալում ուղղակի ներդրումներ լինել և հետագայում փոխհատուցվել: Նրանց պահանջմունքների բավարարման ծախսերը, ֆոնդերը, հասարակությունը պարտավոր է հատկացնել որպես աշխատունակ տարիների ստեղծած արժեքի կուտակում, որը վերածվել է անաշխատունակ տարիների սպառման կենսաֆոնդի: Ոչ ոք մեր հարգարժան կենսաթոշակառուներին ոչինչ չի մվիրում: Այդ ֆոնդը հենց իրենց աշխատունակ տարիների ստեղծածն է, որը հետագայում նրանք ստանում են որպես կենսաթոշակ: Որքան գործող մարդկային կապիտալը արդյունավետորեն է աշխատում, այնքան ավելի մեծ ազգային հարստություն է ստեղծում, որքան սոցիալապես արդարացի է բաշխվում այդ հարստությունը ընթացիկ և ապագա անձնական սպառման ֆոնդերի միջև, այնքան մեծանում են մարդկային կապիտալի արդյունավետության բարձրացման բարոյական և սոցիալական խթանները: Դրանով է բացատրվում, որ տնտեսական բարձր արդյունավետություն և կենսամակարդակ ունեցող եվրոպական հարուստ և այլ երկրներում մարդու երջանիկ կյանքի վայելքի փուլը համարում են կենսաթոշակային տարիքից հետո ընկած ժամանակահատվածը:

Մարդկային կապիտալի կայացման գործում, մեծ հաշվով, հիմնական դերը ընտանիքինն է: Մարդկային կապիտալի հիմնական բաղադրիչները գլխավորապես ընտանիքում են ձևավորում: Որքան

էլ կարևոր լինի առողջապահության համակարգը, մարդու առողջ լինելու ամենակարևոր դերը կատարում է ընտանիքը: Երեխան ընտանիքում է միայն ֆիզիկապես ու հոգեբանորեն առողջ մեծանում, ընտանիքն է նրան մարդկային կապիտալ դարձնում: Ընտանիքը իր խնամքով և ջերմ սիրով, նորմալ սնունդով, համերաշխ ապրելակերպով և դաստիարակությամբ, իր մեջ ժամանակակից աշխարհի բոլոր պահանջները բավարարող մարդու մարդկային կապիտալի վերարտադրության անփոխարինելի բաղադրիչներն է խտացնում: Դրանով է բացատրվում, որ նոր՝ երրորդ հազարամյակում, համարյա բոլոր զարգացած երկրներում երեխաներին մանկատներից մասսայաբար ընտանիք տեղափոխելու և այնտեղ մեծանալու, կայանալու գործընթացներ են զարգանում: Այդ բոլորը հիմք են դառնում՝ ընդհանրացնելու, որ մարդկային կապիտալի սկզբնական և հիմնական տեսակը ընտանեկան մարդկային կապիտալն է:

Մարդկային կապիտալի վերարտադրության համակարգում մեծ է ընտանիքի դերը նաև մարդու դաստիարակության գործում: Կրթությունը մարդուն տալիս է գիտելիքներ, նրան դարձնում է մասնագետ, գիտուն, հնարամիտ: Կրթությունը ձևավորում և ստեղծում է գիտելիքահենք մարդ՝ գիտելիքահենք տնտեսության համար: Սակայն այդ բոլորը կարող են մարդկությանը ծառայել միայն որոշակի դաստիարակության դեպքում, որը նույնպես հիմնականում տեղի է ունենում ընտանիքում: Ընտանեկան դաստիարակությունը իր տեսակով առանձնահատուկ է և տարբերվում է դաստիարակության մյուս բոլոր ձևերից: Այն նախ և առաջ ունի գեներտիկ, սերունդից սերունդ փոխանցելու միտում: Ընտանեկան դաստիարակությունը ունի նաև ավանդույթի փոխանցման միտում: Եվ վերջապես, ընտանեկան դաստիարակությունը վարքագծային դաստիարակություն է, ընտանիքի անդամները գործնականում միմյանց դաստիարակում և հղկում են՝ դարձնելով իսկապես ինտելեկտուալ մարդկային կապիտալ: Առանց դաստիարակության մարդկային կապիտալը հրաշքներ արարելու հետ մեկտեղ կարող է մեծ չարիքներ բերել հասարակությանը:

Մարդկային կապիտալի ձևավորման, կայացման ու զարգացման հաջորդ կարևոր ոլորտը տնտեսական-արտադրական գործունեության ոլորտն է՝ արդյունաբերական ձեռնարկությունը, գյուղատնտեսությունը, առևտուրը, բանկային համակարգը, ծառայությունները և այլն: Միայն արտադրական և ոչ արտադրական ոլորտներում է ընտանեկան, կրթական մարդկային կապիտալը զարգանում, հմտանում և դառնում բարձր արտադրողական ձեռնարկության մարդկային կապիտալ: Բուն արտադրության, աշխատանքային գործունեության մեջ է կրթված մարդկային կապիտալը շարունակում զարգանալ, հմտանալ և դառնալ բարձր արտադրողականությանը և արդյունավետությանը գործող մարդկային կապիտալ: Հենց ձեռնարկության և ծառայությունների ոլորտում են ստուգվում կրթագիտական կապիտալի արժեքը, արտադրողականությունը, որակը: Ավելին, ձեռնարկության մեջ է կրթական կապիտալը հարստանում և դառնում անհատի ինտելեկտուալ արտադրողական կապիտալ: Ընդ որում՝ մարդկային գիտակրթական կապիտալը խտացվում է նաև որպես մտավոր սեփականություն, հետևաբար՝ որպես մտավոր մարդկային կապիտալ: Մտավոր կապիտալը երրորդ հազարամյակում ներուճակ մեծ պաշար է, որը կարող է դրսևորվել և՛ որպես սոցիալական կապիտալ, և՛ որպես ազգային կապիտալ, և՛ որպես քաղաքական կապիտալ: Գնալով փոքրանում են ֆիզիկական կապիտալային ռեսուրսներն ու պաշարները, և աճում են մարդկային կապիտալային հզորությունները և՛ քանակական, և՛ որակական դրսևորումներում: Հասարակության զարգացման գործում մարդկային կապիտալի դերը զգալիորեն գերազանցել է ֆիզիկական կապիտալի որոշակի պաշարները և հնարավորությունները: Մասնավորապես, արագ է աճում մարդկային մտավոր կապիտալը՝ դառնալով ամենահեռանկարային կապիտալը: Դրա արտահայտման ձևերից են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների անսահման աճող հնարավորությունները և զարգացումները: Գիտական մտավոր մարդկային կապիտալը հասարակական կապիտալի զարգացման մեծ ներուժ ունեցող տեսակն է, որը՝ որպես անսահման պաշար, խտացված է ոչ այլ տեղում, քան «փոքրիկ» մարդու մեջ:

Մարդկային կապիտալը իր վերարտադրության և կենսագործունեության գործընթացներում դրսևորվում է որպես պետական, սոցիալական, ազգային և քաղաքական մարդկային կապիտալ: Պետական մարդկային կապիտալը քանակապես ներկայացնում է երկրի ողջ բնակչությունը նրա թվաքանակով, տարիքային դրսևորումներով, կրթական ցենզով, առողջության ցուցանիշներով և այլ հատկություններով, որոնց հանգամանորեն կանոնադաշտնաճառվող աշխատանքի հաջորդ մասերում:

Սոցիալական մարդկային կապիտալը սոցիալական ոլորտում սոցիալական զարգացումներն ապահովող մարդկային գործունեությունն է: Սոցիալական հիմնական ոլորտները կրթական, առողջապահական և մշակութային ոլորտներն են: Սակայն սոցիալական զարգացումները միայն դրանցով չեն սահմանափակվում: Սոցիալական զարգացումներն ընդգրկում են նաև ժողովրդագրական, աշխատանքային, եկամուտների բաշխման և վերաբաշխման, ինչպես նաև՝ ապրելակերպի, կենսամակարդակի և ծառայությունների արտադրության ու սպառման ոլորտները:

Մարդկային զարգացման հետարդյունաբերական ժամանակաշրջանը բնորոշվում է սոցիալական ոլորտի, սոցիալական հարաբերությունների քանակական և որակական ավելի արագ փոփոխությունների ու զարգացումների միտումներով: Սոցիալական մարդկային կապիտալը կոչված է նաև կազմակերպելու հասարակության չաշխատողների, կենսաթոշակառուների կենսաապահովումը: Հասարակության հումանիզացիայի հիմնական չափանիշը հենց այդ ոլորտի կենսագործունեության արդյունքներն են: Այդ տեսակետից դեռևս աշխարհում, այդ թվում՝ մեր հանրապետությունում, շատ չլուծված և խոցելի տեղեր կան: Հասարակության սոցիալական զարգացման մակարդակը միայն այն դեպքում է դառնում համաշխարհային չափանիշներով գնահատված և ճանաչված, երբ աղքատությունը բացառված է, և հասարակության կենսաթոշակառուները ապրում են նորմալ կենսամակարդակի ու ապրելակերպի, ինչպես նաև կյանքի որակի պահանջները բավարարող չափանիշներով: Քանի որ սոցիալական ոլորտները և դրանց զարգացումներն ընթանում են հա-

սարակության միջին մակարդակները գերազանցող տեմպերով, այդ պատճառով սոցիալական մարդկային կապիտալը ևս ենթարկվում է այդ չափանիշների առաջանցիկ զարգացումների միտումներին:

Ինչ վերաբերում է ազգային մարդկային կապիտալին, ապա այն ներառում է բոլոր տեսակի մարդկային կապիտալները, նրանց արդյունավետ գործառնությունները, որոնց միջոցով ապահովվում են նաև ազգային կյանքի զարգացումները: Դրա երաշխիքները պետականությունը, կրոնը (ՀՀ-ում՝ հայ քրիստոնեական հավատը) և ազգային մշակույթն են: Մեր ժամանակներում հայ ազգային պետականությունը կերտվեց Արցախյան հաղթական գոյամարտում հազարավոր հերոսացած մահատակների արյան գնով:

Հասարակության զարգացման համակարգում առաջնային դեր է խաղում նաև մարդկային քաղաքական կապիտալը: Դրա կրողը պետությունն է՝ իր արտաքին և ներքին կառույցներով: Պետք է խոստովանել, որ պատմականորեն այդ ոլորտում պարծենալու շատ բան չունենք: Արցախի ազատագրումը ապագայում գոյատևելու և զարգանալու մեծ հույս տվեց: Ժողովուրդը վերջապես տոնեց ծանր, բայց պատվավոր հաղթանակ: Մնում է, որ մեր ժողովուրդը, բանակը, պետական այրերը սրբությամբ պահպանեն հազարավոր հերոսների արյան գնով շահած և ապագա ազգային գոյության ու զարգացման համար հույս ներշնչող այդ դժվարին հաղթանակը:

1.2 Մարդկային կապիտալը նախախորհրդային Հայաստանում

Խորհրդային Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների և դրանց արդյունքում մարդկային կապիտալի իրավիճակների փոփոխությունների մասին ճիշտ պատկերացում կազմելու համար, անհրաժեշտ է թեկուզ շատ համառոտ ներկայացնել նախախորհրդային Հայաստանի պատկերը:

Մինչև խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանը Ռուսաստանի ագրարային ծայրամասերից էր: 1913 թ.-ին (ներկա սահմաններով) Հայաստանում բնակվում էր շուրջ մեկ միլիոն մարդ: 1920 թ.-ին բնակչության թիվը նվազեց և կազմեց ընդամենը 720 հազար, որից 200 հազարը՝ փախստական, 50 հազարը՝ անապաստան ու ծնողազուրկ երեխաներ: Ամենուրեք տիրում էին սովը և համաճարակը: Լայն թափով աճում էր գործազրկությունը: Բնակչության շուրջ 89 %-ը կազմում էր գյուղական բնակչությունը: Սա նշանակում է, որ նախախորհրդային Հայաստանի բնակչության կենսամակարդակը որոշվել է գյուղական բնակչության կենսամակարդակով: Գյուղացիների շուրջ 45 %-ը կազմել են չքավորները, որոնք համարյա զուրկ են եղել սեփական ցանքատարածությունից և լծկան անասուններից:

*Մեկին մեր գյուղում մի թիզ հող ունի
Թըքես մի ծերից, մյուս ծերը կրնկնի...*

Այդպես է պատկերել գյուղացու սակավահողությունը հայ աշխատավորի «հառաչանքը» երգող Հովհաննես Թումանյանը: Խոսք չէր կարող լինել գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման, քիմիական պարարտանյութերի օգտագործման մասին: Այդ բոլորի արդյունքում բնական անբարենպաստ պայմաններին (երաշտ և այլն) հաջորդում էր սովը:

Գյուղական բնակչության հիմնական և շատ հաճախ միակ սննդամթերքը հացն էր, որը մեծ տանջանքով ու դժվարությամբ էր ձեռք բերվում: Գյուղացին հիմնականում կրում էր կոշտ բրդից կամ բամբակից իր պատրաստած կոպիտ հագուստը, հագնում էր տրեխ,

կոշիկը հազվագյուտ երևույթ էր: Փոքր երեխաների զգալի մասը կիսամերկ վիճակում էր: Խոսք չէր կարող լինել կահույքի և կուլտուր-կենցաղային ապրանքների սպառման մասին: Հայ գյուղացին գրկված էր անհրաժեշտ հոգևոր բարիքներից օգտվելու հնարավորու-թյունից:

Տիրապետում էր համատարած անգրագիտությունը: Հաճախ կրկնվող սովը, պարտքերը, աճող նյութական կարիքները, կիսագոր-ծագուրկ վիճակը հարկադրում էին հայ գյուղացուն թողնել պապենա-կան տունը, ընտանիքը և մեկնել արդյունաբերական քաղաք, որպես-զի աշխատավարձի մի մասը տնտեսի և տուն ուղարկի՝ պարտքերը մարելու: Հայ պանդուխտին դեպի իրեն էր ձգում հատկապես Բա-քուն՝ Անդրկովկասի արդյունաբերության կենտրոնը: Փաստերը ցույց են տալիս, որ Բաքու գնացող հայ պանդուխտների թիվը մեծ է եղել: Նրանք հայրենիքից հեռու ապրող, ամեն տեսակի գրկանք կրող մար-դիկ էին: Քիչ չեն եղել դեպքեր, երբ պանդուխտ հայը, հարմար աշ-խատանք չգտնելով, դատարկ գրպանով վերադարձել է տուն՝ պատ-րաստ ամենաչնչին վարձատրությամբ աշխատելու:

Մխիթարական չէր նաև հայ բանվորի վիճակը: Նախախորհրդ-դային Հայաստանում կային 5 պղնձաձուլական գործարաններ, որոնք տարեկան արտադրում էին ընդամենը 6912 տոննա սև պղինձ: Գործում էին 13 փոքր էլեկտրակայան, որոնց տարեկան արտադ-րանքը կազմում էր 5.1 մլն կվտ/ժ էլեկտրէներգիա: Գինու, օղու և կո-նյակի արտադրությունը կենտրոնացված էր Շուստովի և Սարաջենե-րի ձեռքերում: Երևանում գործում էր կաշվի մշակման գործարան և ոչ մեծ տպարան ու մեխանիկական գործարան: Բացի դրանից՝ գոր-ծում էին երկաթգծի վերանորոգման արհեստանոց և տնայնագործու-թյան այլ արհեստանոցներ: Առաջին համաշխարհային պատերազ-մի և քաղաքացիական կոնֆլիկտի հետևանքով այդ ամենը քայքայ-վել էր և մատնվել անգործության: Եթե 1913 թ.-ին ամբողջությամբ վերցրած արդյունաբերության արտադրանքը բնակչության մեկ շնչի հաշվով Ռուսաստանում կազմում էր 50 ռուբլի, Հայաստանում՝ ըն-դամենը 15 ռուբլի, այսինքն՝ 3.3 անգամ պակաս: Նախախորհրդային Հայաստանում աշխատանքային օրվա տևողությունը ավելի երկար

էր, քան Ռուսաստանում: Այսպէս, եթե Ռուսաստանում 1897 թ.-ի օրենքով խոշոր արդյունաբերական մեկ աշխատօրվա տևողությունը սահմանափակվում էր 11.5 ժամով, ապա Հայաստանում 20-րդ դարի սկզբին այն հասնում էր 12-13 ժամի: Աշխատօրվա աշխատի տևողության պայմաններում ցածր էր բանվորի աշխատավարձը: Հայաստանի պղնձարդյունաբերության մեջ մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձը 1914 թ.-ին կազմում էր 21 ռուբլի այն դեպքում, երբ 1912 թ.-ին Բաքվի նավթարդյունաբերության բանվորի միջին ամսական աշխատավարձը կազմել է 34 ռուբլի: Բանվորների աշխատավարձը ցածր էր հատկապես մանր արդյունաբերության մեջ: 1910 թ.-ին Երևանի մանր ձեռնարկություններում աշխատող բանվորների ամսական աշխատավարձը կազմում էր 10-15 ռուբլի:

Նախախորհրդային Հայաստանում բացակայում էր սոցիալական ապահովությունը: Բանվորը գուրկ էր վարձատրվող արձակուրդի և ժամանակավոր անաշխատունակության համար ապրուստի միջոցներ ստանալու իրավունքից: Բանվորներն ապրում էին բնակարանային անմխիթար պայմաններում և գրեթե զրկված էին բժշկական և բարեկիրք սպասարկման ծառայություններից: Պղնձարդյունաբերական ձեռնարկությունների բանվորները ապրում էին մոտակա գյուղերում և հանքավայրերում կառուցված գետնավոր, մութ ու խոնավ տներում: 900-ական թվականներից ձեռնարկատերերը կառուցում էին մեկհարկանի անշուք հանրակացարաններ, որտեղ յուրաքանչյուր սենյակում տեղավորվում էին 6-10 բանվոր:²⁵ Առաջին համաշխարհային պատերազմը և քաղաքացիական կռիվները, ծայրաստիճան քայքայելով ու կազմալուծելով առանց այն էլ հետամնաց տնտեսությունը, Հայաստանի բնակչության կենսամակարդակն էլ ավելի իջեցրին: 1919 թ.-ին Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ.-ի համեմատությամբ կրճատվեց ավելի քան 13 անգամ, ցանքատարածությունները 345.7 հազար հեկտարից իջան մինչև 82.7 հազար հեկտար, այսինքն՝ նվազեցին ավելի քան 4 անգամ: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1913 թ.-ի

²⁵ Մ. Արոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դարի սկզբին, Երևան, 1968, էջ 289-296:

65.8 միլիոն ռուբլուց իջավ մինչև 11.3 միլիոնի (1926-1927 թթ. գներով), այսինքն՝ կրճատվեց 5.8 անգամ: Հայաստանում մոլեգնում էին սովը, համաճարակային բազմաթիվ հիվանդություններ:²⁶ Ահա այն ժառանգությունը, որը 1920 թ.-ին ստացավ նորաստեղծ Խորհրդային Հայաստանը:

1.3 Մարդկային կապիտալը Խորհրդային Հայաստանում

Խորհրդային Հայաստանը ստացավ ծանր ժառանգություն՝ տնտեսապես լիակատար քայքայված երկիր, գյուղացիական կիսաաղքատ բնակչություն, 200 հազար անօգնական փախստականներ, 50 հազար անապաստան և ծնողազուրկ որբ երեխաներ: Քաղցի և սովի հետևանքով զգալի թվով երեխաներ մահացան: Այդ աննկարագրելի սոցիալական ծանր, ճգնաժամային պայմաններում վիճակը փրկեց առաջադեմ երկրների, մասնավորապես Ռուսաստանի և ԱՄՆ-ի նյութական բազմակողմանի օգնությունը՝ փրկելու հատկապես անպաշտպան որբ երեխաներին: Կառուցվեցին որբանոցներ, ստեղծվեցին պայմաններ նաև նրանց կրթության և դաստիարակության համար: Այդօրինակ արդյունավետ փրկարար օգնության օրինակ էին Գյումրիի ամերիկյան մանկատները և, ընդհանրապես, ԱՄՆ-ի ցույց տված մարդասիրական, անշահախնդիր նյութական օգնությունը:

Բնակչությունը սովից և ծանր կարիքից փրկելու համար Հայաստանի կառավարությանը օգնության հասան նաև Ռուսաստանը և մյուս հանրապետությունները: 1921 թ.-ին Ռուսաստանը Հայաստանին նվեր ուղարկեց 71200 փութ ցորեն և ալյուր, ինչպես նաև՝ 1.350.000 արշին մանուֆակտուրա: 1922 թ.-ին Ռուսաստանի ժողկոմսովետը որպես սերմացու Խորհրդային Հայաստան ուղարկեց 100 000 փութ ցորեն, իսկ 1923 թ.-ին ԽՍՀՄ-ի աշխատանքի և պաշտպանության խորհրդի որոշումով Հայաստանին որպես դոտացիոն

²⁶ Ա. Խանջյան, Պայքարի և հաղթանակների ուղիով, Երևան, 1937, էջ 7:

ֆոնդ հատկացրեց է 650 000 փութ հացահատիկ և մոտ 600 հազար ռուբլի՝ արտահայտված ոսկով:

Աղյուսակ 1.3. Հայաստանի բնակչության թվաքանակը,
հազար մարդ²⁷

Տարիներ	Ողջ բնակչությունը	Բնակչության ընդհանուր թվաքանակը, տոկոսներով	
		Քաղաքային	Գյուղական
1926	881.3	19.0	81.0
1939	1282.3	28.6	71.4
1959	1763.0	50.0	50.0
1970	2491.9	59.5	40.5
1979	3030.7	65.7	34.3
1989	3448.6	68.7	31.3
1991	3574.5	69.5	30.5

Խորհրդային Հայաստանը պատմական կարճ ժամանակաշրջանում անցավ տնտեսական և սոցիալական զարգացման հսկայական ճանապարհ՝ ցարական Ռուսաստանի հետամնաց ագրարային երկրից դառնալով բարձր զարգացած արդյունաբերական, մեքենայացված գյուղատնտեսական և ծաղկող մշակույթի ու գիտության երկիր: Բնակչության թվաքանակը 1926-1991 թթ. ժամանակահատվածում 881.3 հազարից դարձավ 3 մլն 574.5 հազար մարդ (Աղյուսակ 1.3):

Հայաստանի բնակչության կենսամակարդակի կայունացման և բարձրացման երաշխիքը հանրապետության սեփական արտադրողական ուժերի զարգացումն էր: Այդ նպատակով վերականգնվեցին ու կառուցվեցին արդյունաբերական նոր ձեռնարկություններ, հանքահորեր, էլեկտրակայաններ, ոռոգման համակարգեր և այլն:

Ընդարձակվեցին ցանքատարածությունները, վերականգնվեցին խաղողի և պտղատու այգիները: 1928 թ.-ին արդյունաբերության և

²⁷ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001, Երևան, էջ 23:

գյուղատնտեսության արտադրանքը գերազանցեց նախապատե-
րազմյան 1913 թ.-ի մակարդակը: Հանրապետությունը 1940 թ.-ին
դարձավ արդյունաբերական երկիր, որի արտադրանքը մոտ 9 ան-
գամ գերազանցեց 1913 թ.-ի մակարդակը:²⁸

Սոցիալ-տնտեսական դրական խոշոր տեղաշարժեր կատարվե-
ցին գյուղում: Ձևավորվեցին մեքենայացված գյուղացիական տնտե-
սություններ: 1937 թ.-ին հանրապետության դաշտերում աշխատում
էին 1358 տրակտոր, 127 կոմբայն, 395 բեռնատար ավտոմեքենա և
գյուղատնտեսական այլ մեքենաներ: 1940 թ.-ին գյուղատնտեսու-
թյան համախառն արտադրանքը 1913 թ.-ի համեմատությամբ
կրկնապատկվել էր:

Հայրենական պատերազմից հետո սկսվեց Հայաստանի տնտե-
սության բուռն ու բազմակողմանի զարգացման նոր շրջանը: 1946-
1965 թթ.-ին հանրապետության արդյունաբերության մեջ կապիտալ
ներդրումների գումարը կազմեց 1416 միլիոն ռուբլի, որը գրեթե տասն
անգամ ավելի է նախորդ 25 տարիների ընթացքում կատարված կա-
պիտալ ներդրումների գումարից: Արդյունաբերությունը դարձավ
բազմաճյուղ: Հատկապես ձևավորվեցին և արագ զարգացան ար-
դյունաբերության այնպիսի նորագույն ճյուղեր, ինչպիսիք են ատո-
մային էներգետիկան, հաստոցաշինությունը, էլեկտրոնիկան և քի-
միական արդյունաբերությունը, ինչպես նաև՝ պաշտպանական ար-
դյունաբերության բազում ձեռնարկություններ և գիտահետազոտա-
կան լաբորատորիաներ: Այդ բոլորի արդյունքում, եթե 1950 թ.-ին ար-
դյունաբերության համախառն արտադրանքը գերազանցում էր
1913 թ.-ի մակարդակը մոտավորապես 21.6 անգամ, ապա 1965 թ.-ին՝
մոտավորապես 107 անգամ: Արդյունաբերական զարգացման տեմ-

²⁸ Գ. Ղարիբյան, Անհրաժեշտ արդյունքը սոցիալիստական վերարտադրության հա-
մակարգում, «Բանբեր Մոսկվայի համալսարանի», սերիա 8, տնտեսագիտություն,
փիլիսոփայություն, 1963, N 1: Տե՛ս նաև Գ. Ղարիբյան, Անհրաժեշտ և հավելյալ ար-
դյունքը սոցիալիստական հասարակարգում, Երևան, 1968: Տե՛ս նաև Գ. Ղարիբյան,
Բնակչության կենսամակարդակը և նրա բարձրացումը Սովետական Հայաստանում,
Երևան, 1972, էջ 57-60:

պերով Հայաստանը միութենական հանրապետությունների մեջ գրավում էր առաջին տեղերից մեկը²⁹:

Հայաստանի ժողովրդական տնտեսությունը հատկապես արդյունավետորեն զարգացավ 1965-1970 թթ.-ին: Այդ տարիներին ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը հասավ 3 մլրդ 210 մլն ռուբլու: Դա հնարավորություն տվեց այդ տարիներին Հայաստանում կառուցելու և շահագործման հանձնելու 110 արդյունաբերական նոր ձեռնարկություններ և խոշոր արտադրամասեր, որի շնորհիվ ՀԽՍՀ ազգային եկամտի մեջ արդյունաբերության բաժինը 1970 թ.-ին հասավ 67 %-ի: Հատկապես բարձր տեմպերով աճեցին մեքենաշինության առաջնային և նոր ճյուղերը:

Աղյուսակ 1.4. Ազգային եկամտի աճի տեմպերը ՀԽՍՀ-ում³⁰

	1960 թ.	1965 թ.	1970 թ.
Ընդամենը ազգային եկամուտ, տոկոսներով 1960 թ.-ի նկատմամբ համադրելի գներով			
ԽՍՀՄ	100.0	137.0	199.0
ՀԽՍՀ	100.0	148.0	235.0
Ազգային եկամուտը բնակչության մեկ շնչի հաշվով, ռուբլի			
ԽՍՀՄ	677	833	1189
ՀԽՍՀ	577	706	815
Նույնը տոկոսներով՝ 1960 թ.-ի նկատմամբ			
ԽՍՀՄ	100.0	123.0	161
ՀԽՍՀ	100.0	122.4	141.0

Այդ տարիներին բարձր տեմպերով զարգացան նաև Հայաստանի գյուղատնտեսությունը, տրանսպորտը: Արդյունքում ՀԽՍՀ-ում

²⁹ Հայկական ՍՍՀ արտադրողական ուժերի զարգացման և տեղաբաշխման հիմնական ուղղությունների կանխատեսումը 1976-1980 թթ. հեռանկարում: Բաժին 9- կենսամակարդակը, Երևան, 1973:

³⁰ Народное хозяйство СССР в 1970 г., стр. 533-534. Սովետական Հայաստանը 50 տարում, Երևան, 1970, էջ 213:

ազգային եկամտի աճի տեմպերը, ամբողջությամբ վերցրած, գերազանցեցին ԽՍՀՄ զարգացման տեմպերին (Աղյուսակ 1.4):

Ինչ վերաբերում է բնակչության մեկ շնչի հաշվով ազգային եկամտի աճի տեմպերին, ՀԽՍՀ-ը զիջում է ԽՍՀՄ-ին այն պատճառով, որ այս տարիներին բնակչության աճի տեմպերը ՀԽՍՀ-ում ավելի բարձր էին, քան ԽՍՀՄ-ում: Այդ բոլորի արդյունքում էապես աճեց նաև բնակչության կենսամակարդակը (Աղյուսակ 1.5): Ինչպես նկատում ենք, 1960 թ.-ից սկսած՝ շուրջ 15 տարի կայուն և բարձր տեմպերով աճել են բնակչության դրամական եկամուտները և մանրածախ ապրանքաշրջանառությունը, հատկապես խնայողությունները: Ընդ որում՝ մեկ ընտանիքի հաշվով ՀԽՍՀ բնակչության խնայողությունների աճը ԽՍՀՄ-ում ամենաբարձրն էր: Բնակչության մեկ շնչի հաշվով խնայողությունների աճով ՀԽՍՀ-ն զիջում էր միայն մերձբալթյան հանրապետություններին, քանի որ այնտեղ ընտանիքի միջին չափը երեք մարդ էր, Հայաստանում՝ շուրջ 4.5 մարդ:

Աղյուսակ 1.5. ՀԽՍՀ բնակչության դրամական եկամուտների, մանրածախ ապրանքաշրջանառության և խնայողությունների (ավանդների) աճը 1960-1974 թվականներին, տոկոսներով³¹

	1960 թ.	1970 թ.	1974 թ.
Բնակչության դրամական եկամուտները	100	286.8	372.1
Մանրածախ ապրանքաշրջանառությունը	100	245.0	327.2
Բնակչության ավանդները	100	778.0	1254.8

Այդ ժամանակահատվածում հանրապետությունում բարձր տեմպերով ավելացան նաև երկարատև օգտագործման արդյունաբերական կենցաղային ապրանքների և ծառայությունների սպառման ծավալները: 1968 թ.-ին քաղաքային բնակչության ընտանիքների գույքի հատուկ հետազոտության արդյունքում Երևան քաղաքը

³¹ Գ. Ա. Гарибян, Проблемы повышения уровня жизни населения, Ереван, 1977, стр. 206.

առանձնացավ և դարձավ ԽՍՀՄ ամենաապահով քաղաքներից մեկը:

Արագ աճեցին նաև սպառման հանրային ֆոնդերից բնակչությանը տրամադրվող դրամական հատկացումները, ինչպես նաև անվճար և արտոնյալ պայմաններով ծառայությունները: Եթե 1958 թ.-ին այդ կարգի հատկացումները կազմել են 1352 մլն ռուբլի, ապա 1990 թ.-ին՝ 1793 մլն ռուբլի, այսինքն՝ աճել են շուրջ 33 %-ով: Արագ աճեցին նաև բնակչության անձնական օժանդակ տնտեսությունների եկամուտները: 1990 թ.-ին 1985 թ.-ի նկատմամբ դրանց ծավալները համարյա կրկնապատկվեցին: Ինչ վերաբերում է բնակչության ավանդների աճին, ապա եթե 1985 թ.-ի վերջում դրանց ընդհանուր գումարը կազմում էր 2681 մլն ռուբլի (բնակչության մեկ շնչի հաշվով՝ 796 ռուբլի), ապա 1991 թ.-ին այն կազմեց 10 մլրդ ռուբլի (մեկ շնչի հաշվով՝ 2893 ռուբլի), այսինքն՝ գրեթե քառապատկեց: ԽՍՀՄ-ում, այդ թվում՝ ՀԽՍՀ-ում, բաշխման և վերաբաշխման հարաբերություններով բնակչությունը ձեռնարկություններից և հիմնարկություններից եկամուտներ ստանում էր աշխատավարձի ձևով և անձնական օժանդակ տնտեսություններից՝ զուտ արդյունքի ձևով: Բացի դրանից՝ հատկապես վերաբաշխման համակարգով բնակչությունը պետությունից, ձեռնարկություններից, կազմակերպություններից եկամուտներ էր ստանում ուղղակի տրանսֆերտների և անվճար ու արտոնյալ պայմաններով ծառայությունների ձևով, որոնք կոչվում էին սպառման հանրային ֆոնդեր: Բնակչության եկամուտների աղբյուրները և կառուցվածքը արտացոլվել են ընտանիքների սպառողական բյուջեների հետազոտություններում (Աղյուսակ 1.6):

Աղյուսակ 1.6. ՀԽՍՀ բնակչության սպառողական բյուջեի եկամուտների կառուցվածքը (տոկոսներով)³²

	1960 թ.	1965 թ.	1970 թ.	1971 թ.
Ընտանիքի ամբողջական եկամուտը, այդ թվում՝	100	100	100	100
աշխատավարձ	73.4	73.3	72.3	72.3
եկամուտներ՝ սպառման հանրային ֆոնդերից	22.3	22.4	21.8	21.8
այլ եկամուտներ՝ անձնական օժանդակ տնտեսությունից և այլն	4.3	4.3	5.9	5.9

Բնակչությունը եկամուտների 73-75 %-ը ստանում էր աշխատավարձի ձևով, իսկ շուրջ 22 %-ը՝ սպառման հանրային ֆոնդերից և բավարարում էր իր բազմաբնույթ պահանջմունքները: Ընդ որում՝ սպառման հանրային ֆոնդերը ձևավորվում էին տարբեր աղբյուրներից: Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 1.7-ի տվյալները, սպառման հանրային ֆոնդերի ձևավորման հիմնական աղբյուրը պետության բյուջեի միջոցներն էին: Ինչ վերաբերում է սպառման հանրային ֆոնդերի բաշխման ձևերին, ապա հիմնականում գերիշխում էին անվճար ծառայությունները: Այսպես, 1960 թ.-ին դրանց բաժինը կազմում էր 95.9 %, իսկ 1975 թ.-ն՝ 93.2 %:

Աղյուսակ 1.7. ՀԽՍՀ սպառման հանրային ֆոնդերի կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների³³

Ձևավորման աղբյուրները	1960 թ.		1975 թ.	
	միլիոն ռուբլի	տոկոսն ընդհանուրի մեջ	միլիոն ռուբլի	տոկոսն ընդհանուրի մեջ
Պետական բյուջեի միջոցները և նման այլ աղբյուրներ	197.4	95.9	735.9	93.2
Չեռնարկությունների միջոցները	5.5	2.6	32.3	4.1

³² Գ. Ա. Гарибян, Проблемы повышения уровня жизни населения, Ереван, 1977, стр. 121.

³³ Նույն տեղում, էջ 160.

Կոլտնտեսությունների միջոցները	1.9	0.9	9.8	1.2
Արհմիությունների և այլ կազմակերպությունների միջոցները	1.2	0.6	11.7	1.5

Հիմնականում սպառման համրային ֆոնդերի միջոցներով էին իրականացվում բնակչության անվճար կրթությունը և բուժումը, բնակարաններով ընտանիքներին ապահովելը:

Բնակչության կենսամակարդակի առավել կարևոր բնութագրիչ են ընտանիքների անձնական սպառման ծավալը և կառուցվածքը: Հետազոտությունները ցույց են տվել, որ մինչև 1980-ական թվականների կեսերը ոչ միայն աճել է բնակչության կողմից պարենային ապրանքների սպառումը, այլև բարելավվել է դրա կառուցվածքը (Աղյուսակ 1.8):

Բնակչության բարեկեցության բնութագրիչ է նաև երկարատև օգտագործման ապրանքներով ընտանիքների ապահովվածությունը: 1985-1990 թթ.-ին այդպիսի ապրանքների վաճառքը երկրի մանրածախ առևտրում աճեց արագ տեմպերով: Հատկապես մեծացան ռադիոսարքավորումների, կարի մեքենաների և կահույքի ֆիզիկական ծավալները: 1990 թ.-ին անվճար և արտոնյալ պայմաններով Հայաստանի բնակչությանը մատուցված ծառայությունների արժեքը կազմեց 1372 մլն ռուբլի:

Աղյուսակ 1.8. ՀԽՍՀ-ում սննդամթերքի հիմնական տեսակների սպառումը
(բնակչության մեկ շնչի հաշվով, տարեկան, կգ)³⁴

	1985 թ.	1990 թ.
Միս և մսամթերք	49.0	45.0
Կաթ ու կաթնամթերք	433	421
Չու (հատ)	148	139
Չուկ և ձկնամթերք	4.9	4.4
Շաքար	28.7	34.6

³⁴ Статический ежегодник Армении, Ереван, 1990, стр. 67.

Կարտոֆիլ	65.0	49.0
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	135.0	122.0
Մրգեր և հատապտուղներ	47.0	42.0
Հացամթերք (հաց և մակարոնեղեն)	134	109.0

Խորհրդային Հայաստանում 1975 թ.-ին սոցիալական մինիմումը սահմանվեց ամսական 50 ռուբլու, իսկ 1988 թ.-ին՝ 78 ռուբլու չափով: Մոտավոր հաշվարկներով 1981 թ.-ին Հայաստանում ընտանիքների ընդամենը 5 %-ն է գտնվել աղքատության մեջ: Դա հարաբերական աղքատություն էր, քանի որ բնակչության սոցիալական հիմնական ծառայությունները անվճար բավարարվում էին:

Այդ նույն ժամանակ արագ են աճել առավել ապահովված ընտանիքների եկամուտները: Այսպես, եթե 1981 թ.-ին ամսական 200 ռուբլի և ավելի միջին շնչային եկամուտ ունեցողների տեսակարար կշիռը կազմել է 5.2 %, ապա 1989 թ.-ին այն հասավ 18.2 %-ի: Այդ միտումները դրսևորվել են՝ միաժամանակ առաջ բերելով բնակչության եկամուտների ապագա կարգավորման խնդիրներ:

ԳԼՈՒԽ 2. Կապիտալի նախասկզբնական կուտակման հայաստանյան դժվարությունները, կոռուպցիոն բնույթը և ծանր հետևանքները

2.1 Կապիտալի նախասկզբնական կուտակումը, ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանում շուկայական տնտեսության կայացումը

Անցումը շուկայական տնտեսության սկսվում է կապիտալի նախասկզբնական կուտակումով: Այդ պատճառով տնտեսական արդյունավետությունը և այդ հիմքի վրա սոցիալական զարգացումները, աշխատավարձի մեծությունը և տարբերությունները, ինչպես նաև բնակչության կենսամակարդակի բարձրացման հնարավորությունները նախ և առաջ պայմանավորված են տվյալ երկրում կապիտալի նախասկզբնական կուտակման առանձնահատկություններով և հետևանքներով:

Կապիտալի նախասկզբնական կուտակումը պատմականորեն տեղի է ունեցել 16-17-րդ դարերում: Դրան անդրադարձել է Ա. Սմիթը, սակայն այդ հիմնահարցի լիարժեք հետազոտությունը, վերլուծությունը և գնահատականները տրվել են Կ. Մարքսի կողմից: Այդ հետազոտության արդյունքում Մարքսը գրել է. «...Այսպես կոչված նախասկզբնական կուտակումը ոչ այլ ինչ է, քան արտադրողի և արտադրամիջոցների անջատման պատմական պրոցես»: Այն ներկայանում է իբրև «նախասկզբնական» գործընթաց, որովհետև կազմում է կապիտալի ու դրան համապատասխանող արտադրության եղանակի նախապատմությունը:

Կապիտալիստական հասարակության տնտեսական կառուցվածքն առաջ է եկել ֆեոդալական հասարակության տնտեսական կառուցվածքից, որի քայքայումը ազատել է նրա տարրերը, և որոնց (գյուղացիների) այս ունեզրկման պատմությունը մարդկային տալեգրության մեջ գրված է արյան ու կրակի գծերով:³⁵

Մարքսը միաժամանակ բացահայտեց նախասկզբնական կուտակման սոցիալական արյունալի և դաժան հետևանքները աստիճանաբար կարգավորող շուկայական և պետական լծակները: Նախ, կապիտալի նախասկզբնական կուտակումը երկարատև (շուրջ մեկ դար) ժամանակահատված ընդգրկող սոցիալ-տնտեսական պատմական գործընթաց էր: Քանի որ կապիտալի նախասկզբնական կուտակման փուլում կապիտալի փոփոխում մասը (աշխատուժը) էապես գերազանցում էր նրա հաստատուն տարրին՝ հաստատուն կապիտալին (արտադրության միջոցներին), այդ պատճառով կապիտալի կուտակմանը զուգընթաց վարձու աշխատանքի նկատմամբ պահանջարկը արագ էր աճում: Աշխատուժի, աշխատանքի նկատմամբ պահանջարկը հատկապես արագ էր աճում այն պատճառով, որ կուտակվող կապիտալը գերազանցապես արտադրողաբար էր կիրառվում, արտադրողաբար ներդրումներով նոր մանուֆակտուրաներ էին բացվում: Քանի որ աշխատուժի առաջարկը ժողովրդագրական օրենքների սահմանափակության պատճառով այդքան արագ չէր կարող աճել, բնականորեն աշխատուժի շուկայում աշխատավարձը բարձրանում էր: Աշխատավարձի բարձրացումը կրճատում էր շահույթը, հետևաբար՝ մանուֆակտուրայի ընդլայնման ու զարգացման ներքին կուտակման ֆոնդը, այդ թվում՝ աշխատուժի նկատմամբ շուկայական պահանջարկը:

Աշխատաշուկայի զարգացումների այդ բարդ հետևանքների կարգավորմանը մասնակից դարձավ պետությունը: Պետությանը անհանգստացնում էր բանվորների աշխատավարձի արագ բարձրացումը: Անգլիական պետությունը սահմանեց առավելագույն աշխատավարձ, բայց աշխատավարձի նվազագույն չափ չսահմանեց:

³⁵ Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1933, էջ 686-687:

Ավելին, Անգլիայի Եղիզաբեթ թագուհին հրապարակեց օրենք՝ պատ-
ժելու ինչպես առավելագույնից բարձր աշխատավարձ վճարողնե-
րին, այնպես էլ՝ ստացողներին: Սա ցույց է տալիս, որ արդեն 16-րդ
դարից սկսած՝ պետությունը զբաղված էր աշխատավարձի կարգա-
վորմամբ և կապիտալիստական հասարակության կազմավորման ու
զարգացման խնդիրներով: Կ. Մարքսի «Կապիտալի» առաջին հա-
տորի 24-րդ գլխում շուրջ 60 էջի շարադրանքում ոչ մի խոսք չկա պե-
տական ու մասնավոր ընդհանուր շահերի մասին:

Անդրադառնալով դրան և Անգլիայի ներկա տնտեսական ու սո-
ցիալական բարձր մակարդակին՝ պետք է մինչև 16-րդ դարը հետ
նայել և դասեր քաղել, թե ինչպես պետք է ծանր պայմաններից հաս-
նել տնտեսական ու սոցիալական հզոր ու բարգավաճող երկրի:
Դժբախտաբար, շատ ժողովուրդների, հատկապես Անգլիայի, կապի-
տալի նախասկզբնական կուտակման դժվար ճանապարհ անցած
պատմական այդ դասը մեր կառավարությունները մի կողմ թողեցին,
որի արդյունքում այսօր 25 տարվա Հայաստանի Հանրապետությու-
նը կանգնել է ծանր մարտահրավերներ հաղթահարելու փաստի
առաջ: Դրանում համոզվելու և աշխատանքի խնդիրները լուսաբա-
նելու գիտական տրամաբանությամբ անդրադառնա՞նք շուկայական
տնտեսության անցման հայաստանյան դժվարությունների և դրանց
սոցիալական հետևանքների շարադրմանը:

Անցումը շուկայական տնտեսության, ինչպես նշեցինք, սկսվում
է կապիտալի նախասկզբնական կուտակումով: ԽՍՀՄ-ում և սո-
ցիալիստական մյուս երկրներում անցումը շուկայական տնտեսու-
թյանը մույնպես պետք է սկսվեր կապիտալի նախասկզբնական կու-
տակումով, սակայն 20-21-րդ դարերում՝ ոչ թե ֆեոդալիզմից, այլ
վարչաիրամայական պլանային տնտեսությունից՝ սոցիալիզմից:
Ուստի և ժամանակագրական և բովանդակային առումներով պլա-
նային սոցիալիստական տնտեսությունից անցումը շուկայական
տնտեսության չէր կարող չունենալ շատ էական առանձնահատկու-
թյուններ և դրսևորման նոր ձևեր:

1960-ականների կեսերից ԽՍՀՄ-ում շուկայական տնտեսու-
թյանն անցնելու անհրաժեշտ խնդիրները սկսեցին քննարկվել նախ

գիտական շրջանակներում: Սոցիալիզմից, սոցիալիստական պլանային տնտեսությունից հրաժարվելու և այն կապիտալիստական շուկայական տնտեսությունով փոխարինելու հարց չէր դրվում: Խնդիրը հենց սոցիալիզմի զարգացման համար շուկայական հարաբերություններ ներարկելուն էր վերաբերում, քանի որ արդեն ընդունվում էր, որ միջազգային շուկայում և միջազգային տնտեսական մրցակցություններում ԽՍՀՄ պլանային տնտեսությունը սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշներով ակնհայտորեն գիջում էր կապիտալիստական շուկայական տնտեսության արդյունավետությանը:

Քաջատեղյակ լինելով 16-րդ դարում կապիտալի նախասկզբնական կուտակման դասական մոդելի սոցիալական դաժան գործընթացներին և հետևանքներին՝ ստեղծվեց ԽՍՀՄ ականավոր տնտեսագետների, սոցիոլոգների և քաղաքագետների հեղինակավոր հանձնաժողով, որը 1965 թ.-ից գլխավորում էր ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահ Ա. Կոսիգինը, իսկ 1985 թ.-ից՝ ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը:³⁶ Հանձնաժողովը մշակեց շուկայական տնտեսությանն անցնելու, հետևաբար մաս կապիտալի նախասկզբնական կուտակում իրականացնելու պետական գիտական ծրագիր՝ նպատակ ունենալով աստիճանաբար այն իրականացնել շուկայական սոցիալիստական պլանային տնտեսության պայմաններում՝ խուսափելով մեծ ցնցումներից և բնակչության աղքատացումից:

Նշված հանձնաժողովների կողմից մշակված մոդելներով ԽՍՀՄ-ում վարչահրամայական պլանային սոցիալիստական տնտեսությունը չվերաճեց շուկայական սոցիալիստական տնտեսության, որը ողբերգական հետևանքներ ունեցավ ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ի, այնպես էլ միութենական բոլոր հանրապետությունների համար: Դրա օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները շատ էին: Հիմնականը ՍՄԿԿ Կենտկոմի, մասնավորապես ՍՄԿԿ Կենտկոմի ռեակցիոն

³⁶ Այդ հանձնաժողովների անդամներ էին հայազգի մեծ գիտնականներ, ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ստեփան Սիտարյանը և ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արեկ Աղամբեգյանը:

գործիչ Սուսլովի բացասական դիրքորոշումն էր մասնավորեցմանը, և ընդհանրապես սոցիալիզմի ու մասնավոր սեփականության համատեղելիությանը: Այդ բոլորի արդյունքում ՍՄԿ Կենտկոմը 1960-ականների կեսերի տնտեսական ռեֆորմներում, ըստ էության, շուկայական սոցիալիստական տնտեսությանն անցնելու մոդելից դուրս թողեց մասնավոր սեփականությունը և շուկայական ազատ մրցակցությունը: Դա մարքսիզմը որպես դոգմա ընդունելու ու կիրառելու դասական օրինակ էր, որը ԽՍՀՄ-ի և միութենական բոլոր հանրապետությունների համար ունեցավ և մինչև այսօր շարունակում է ունենալ ծանր հետևանքներ:

Իմաստուն Չինաստանը կարողացավ շուկայական տնտեսություն կառուցելու սովետական տաղանդաշատ գիտնականների մեծ ջանքերով մշակած մոդելի ստեղծագործական ու արդյունավետ կիրառմամբ ավելի քիչ նյութական ռեսուրսներով փայլուն անցում կատարել շուկայական սոցիալիզմին և արդյունքում ԱՄՆ-ից հետո աշխարհում դառնալ տնտեսապես երկրորդ հզոր երկիրը: Ընդ որում՝ Չինաստանը իր մեծ երկրի սոցիալ-տնտեսական այդ արմատական և դժվար վերափոխումները հաջողությամբ իրականացրեց ոչ միայն ԽՍՀՄ-ում մշակված մոդելով, այլ նաև՝ այդ մոդելի հեղինակների, մասնավորապես Չինաստան հրավիրված ակադեմիկոս Ստեփան Սիտարյանի կողմից Չինաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության ամենաբարձր ղեկավարության համար անցկացված մեկամսյա խորհրդակցությունների և քննարկումների արդյունքում:

Անշուշտ, այդ դժվար խնդիրը հաջող ու արդյունավետ լուծելու հարցում վճռող դեր խաղացին Չինաստանի մի քանի սկզբունքային դիրքորոշումները.

- Չինաստանը չիրաժարվեց զարգացման սոցիալիզմի ուղուց,
- շարունակեց պահպանել և զարգացնել կոմունիստական կուսակցության ղեկավար դերը,
- անողորք ու անգիջում պայքար կազմակերպեց կոռուպցիայի բոլոր դրսևորումների դեմ,

- 20-րդ և 21-րդ դարերի զարգացումներով և փիլիսոփայությամբ Չինաստանը վերանայեց սոցիալիզմ կառուցելու մասնավոր սեփականության ժխտողական մարքսյան դիրքորոշումը, դրզման:

Չինաստանը զարգացրեց շուկայական սոցիալիզմի նոր տեսություն, ըստ որի՝ շուկայական սոցիալիզմը պետք է կառուցել ինչպես հանրային (պետական), այնպես էլ՝ մասնավոր սեփականության հիմքերով: Դրանով է բացատրվում, որ Չինաստանում սեփականաշնորհման ճանապարհով չմասնավորացվեց պետական սեփականությունը: Այն հիմնականում պահպանվեց և զարգացավ՝ կազմելով շուկայական սոցիալիզմի հիմնական և կենտրոնական ողնաշարը:

Չինաստանը ընտրեց միակ ճիշտ ուղին՝ պահպանելու և զարգացնելու սոցիալիզմը և էլ ավելի մեծացնելու կոմունիստական կուսակցության ղեկավար դերը: Դրանով չինացիները շարունակեցին հավատարիմ մնալ ու հավատալ սոցիալիզմի գաղափարներին և ստեղծագործաբար դրանք զարգացնել: Ավելին, նրանք սոցիալիզմի կառուցումը տեղափոխեցին ուժեղ կոմունիստական կուսակցության, հզոր ու անկաշառ սոցիալական պետության և միլիոնավոր ընտանիքների ու մարդկանց մասնավոր սեփականության ներդաշնակ ու արդյունավետ զարգացումների վրա:

Չինացիները իրենց դարավոր իմաստությամբ 20-21-րդ դարերում սոցիալիզմի նկատմամբ ձևավորված հավատքը դարձրին սրբություն և մեկ ու կես միլիարդ մարդու հուսալիսբ չարեցին: Ընդհակառակը, շուկայական սոցիալիզմին անցնելու ճանապարհին շատ չլուծված խնդիրներ լուծվեցին: Նախ, անձեռնմխելի թողնելով պետական ձեռնարկությունների հանրային սեփականությունը՝ բոլոր միջոցներով բարձրացվեց պետական ձեռնարկությունների արտադրության որակը, արդյունավետությունը և շահութաբերությունը: Դրան զուգահեռ թույլատրվեց անհատներին, ընտանիքներին մասնավոր, ցանկացած չափերի ներդրումներ կատարել և դրանց տնտեսական արդյունքները և շահույթը որպես մասնավոր սեփականություն թողնել ձեռներեցներին: Արդյունքում մասնավոր սեփականությունը ոչ միայն թույլատրվեց, այլև դարձավ մանր ու միջին ձեռնար-

կատերերի, մաս հարուստների ձևավորման հիմքը: Մարդկանց, ընտանիքների հարստացման ոչ մի սահմանափակում պետությունը չդրեց, և դրա արդյունքում առաջ եկան նոր մասնավոր հարյուրավոր միլիոնատերեր, որոնք նույնպես կազմեցին Չինաստանի շուկայական սոցիալիզմի օրգանական, անբաժան մասը:

Չինաստանը 21-րդ դարում դարձավ պետական հասարակական և մասնավոր սեփականությունների ներդաշնակ ու արդյունավետ զարգացման հիմքի վրա շուկայական սոցիալիզմի ստեղծողը:

Դեպի շուկայական տնտեսություն վերափոխումների երկրորդ մոդելը «շուկային թերապիան» է, որը հիմնված է մոնետարիզմի տեսության վրա և ենթադրում է անցումը շուկային իրականացնել ոչ թե պետության օգնությամբ, այլ շուկայական ինքնակարգավորման միջոցով ոչ թե դանդաղ, աստիճանաբար, այլ արագացված տեմպերով: Հայաստանը, դժբախտաբար, ընտրեց հենց այդ մոդելը, որը և խիստ բարդացրեց անցումը շուկայական տնտեսությանը: «Շուկային թերապիա» կիրառած մյուս երկրների նման Հայաստանի Հանրապետությունը մեծ դժվարությունների առաջ կանգնեց, և նշված մոդելի կիրառումը սոցիալական ծանր հետևանքներ ունեցավ:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո շուրջ 80 % պետական սեփականություն կազմող երկրի արտադրական ֆոնդերը, հսկայական հարստությունը, ըստ էության, մնացին անտեր և բաժին ընկան կոռումպացված նոմենկլատուրային: Հենց այդ կոռումպացված նոմենկլատուրան էլ իրականացրեց 20-21-րդ դարերի՝ ԱՊՀ երկրների, այդ թվում՝ և Հայաստանի կապիտալի մախասկզբնական կուտակումը, որի առանձնահատկությունները բացահայտել են պրոֆեսորներ Բ. Պլիշնսկին, Ի. Չապլավսկայան, Բ. Ռակիտսկին, Վ. Մաուն, Ն. Շմելերը, Ն. Ռիմաշևսկայան, Վ. Ռադակը, իսկ Հայաստանում՝ հիմնականում Ա. Խառատյանը:³⁷

³⁷ Ա. Խառատյան, Բնակչության կենսամակարդակի շերտավորման և նրա կարգավորման հիմնախնդիրները անցումային տնտեսությունում (ՀՀ օրինակով): Սեղմագիր, Երևան, 2003: Տե՛ս նաև Գ. Ղարիբյան, Ա. Խառատյան, Կապիտալի մախասկզբնական կուտակման առանձնահատկությունները պլանայինից շուկայական տնտեսության անցման շրջանում, «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա», N 4, 2002, էջ 4-9:

Սեփականատիրական հարաբերություններում ընթացող փոփոխություններում և զարգացումներում հիմնականը հանրային և կոլեկտիվ սեփականության մասնավորեցումն է, մասնավոր կապիտալիստական սեփականության ձևավորումը և կայացումը, ինչպես քաղաքում՝ արդյունաբերության, այնպես էլ գյուղում՝ գյուղատնտեսության մեջ: Հետևաբար, կապիտալի նախասկզբնական կուտակումը տեղի է ունենում պետական և կոլեկտիվ սեփականության հիմքերի վրա, որը նոր երևույթ է և էապես դժվարացնում է մասնավոր կապիտալիստական հարաբերությունների ձևավորման և կայացման գործընթացները:

Կապիտալի նախասկզբնական կուտակման և բնակչության կենսամակարդակի, եկամուտների ու սպառման շերտավորման փոխառնչությունների բացահայտումը հիմնականում պետք է փնտրել պետական և կոոպերատիվ սեփականության մասնավորեցման բնույթի, ձևերի և առանձնահատկությունների մեջ: ԱՊՀ երկրներում կապիտալի նախասկզբնական կուտակումը և սեփականատիրական հարաբերությունների արմատական փոփոխությունները հիմնականում իրականացվեցին հին ու նոր սերտաճած մոմենտալատուրայի կողմից: Ընդ որում՝ ի հայտ եկան կապիտալի նախասկզբնական կուտակման նոր ձևեր, աղբյուրներ, գործոններ և օբյեկտներ, որոնք համարյա բացակայում էին դասական մոդելում: Այդ առանձնահատկությունների և տարբերությունների հիմնական կենտրոնը, օջախը պետության գործունեության առանձնահատկությունների մեջ էր: Հին դասական մոդելում կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացում պետությունն իր գործունեությամբ և օրենքներով նպաստում էր նոր ձևավորվող բուրժուազիային՝ սատարելով կապիտալի նախասկզբնական կուտակմանը:

ԽՍՀՄ-ում կապիտալի նախասկզբնական կուտակումը, ըստ էության, պետք է իրականացվեր երկու փուլով: Առաջինը՝ «խաղաղ», աստիճանական, սոցիալիզմի պահպանման և զարգացման ուղիով, որը կոնկրետ իր արտացոլումը գտավ 1965 թ.-ից սկսած դեպի շուկայական տնտեսություն սկզբնավորված տնտեսական ու սոցիալական բարեփոխումների և հատկապես 1980-ականներից գործաշովյան

«Վերակառուցման» ծավալուն զարգացումների արդյունքներում: Այդ ժամանակահատվածում կոոպերատիվների արդյունավետ զարգացումը, ըստ էության, ԽՍՀՄ-ում կապիտալի նախասկզբնական կուտակման սկզբնական գործընթացն էր: Այսպես, 1986 թ.-ին ընդունվեց օրենք «Անհատական աշխատանքային գործունեության մասին», որն օրինականացնում էր մասնավոր ձեռներեցությունը և ինչ-որ չափով՝ նաև մասնավոր սեփականությունը: Հիշենք, որ այդ թվականին ԽՍՀՄ-ում արդեն գործում էր «ստվերային կապիտալը»՝ շուրջ 20 միլիոն մարդու զբաղվածությամբ: 1988 թ.-ին ընդունվեց «Կոոպերացիայի մասին» օրենքը, որով թույլատրվում էր կիրառել վարձու աշխատանք, ինչ-որ չափով՝ գնագոյացման ազատություն և մասնավոր սեփականություն: 1989 թ.-ին ընդունվեցին վարձակալության մասին մի շարք նորմատիվ ակտեր: Դա նոր առաջադիմական քայլ էր սեփականության իրավունքում՝ սեփականության վերաբաշխման և սեփականության ձևերի փոփոխության հարցերում: 1990-1991 թթ.-ին ԽՍՀՄ-ում ստեղծվեց սեփականության իրավունքը և սեփականության ձևերը փոխելու մասին օրենսդրական դաշտ, որը ներառում էր նաև պետական սեփականությունը ապապետականացնելու և սեփականաշնորհելու գործընթացները: Դա տնտեսական բարեփոխումների, հասարակության դեմոկրատական վերակառուցման, կենտրոնական պետության անմիջական ղեկավարությամբ և աջակցությամբ սոցիալիզմի հիմքերի ամրապնդման նպատակներ հետապնդող մոդել էր, որը ներդաշնակորեն կենսագործվեց Չինաստանում (մեր գիտնականների մշակած մոդելով), իսկ ԽՍՀՄ-ում այն տապալվեց, և արդյունքում փլուզվեց ամբողջ ԽՍՀՄ համակարգը:

Այսպիսով՝ կապիտալի նախասկզբնական կուտակման զարգացումները տեղի ունեցան ԽՍՀՄ-ի փլատակների վրա: Տնտեսության կառավարման և զարգացման վարչաիրամայական համակարգը խորտակվեց, իսկ երկրի ամենահզոր քաղաքական ուժը՝ Կոմունիստական կուսակցությունը և նրա Կենտրոնական կոմիտեն, կործանվեց: Աշխարհի երկրորդ հզոր պետությունը՝ ԽՍՀՄ-ը, ըստ էության, դադարեց գոյություն ունենալ: ԽՍՀՄ տնտեսական ինտեգրացված համակարգը և՛ արտադրության, և՛ փոխանակության, և՛ ռեսուրսների

բաշխման ու վերաբաշխման, ինչպես նաև՝ սպառման ոլորտներում, ըստ էության, վերացավ: ԽՍՀՄ միասնական համակարգի նախկին միութենական հանրապետություններն անկախացան, դարձան առանձին պետություններ, որոնք հետագայում ընդգրկվեցին ԱՊՀ նոր ստեղծված համակարգում: Այդ բոլորի արդյունքում կապիտալի նախասկզբնական կուտակման երկրորդ և հիմնական վճռող փուլը տեղի ունեցավ ԽՍՀՄ կենտրոնական իշխանության և Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի ղեկավարման կատարյալ բացակայության պայմաններում, բառի լայն իմաստով՝ անտե-րության պայմաններում, դրանից բխող ալան-թալանի, ինչու չէ նաև՝ բացահայտ լայն ծավալ ստացած նոր պետությունների կոռուպ-ցիայի մթնոլորտում:

ԽՍՀՄ 70 տարիներին ստեղծված հսկայական ազգային հարստության (որը հիմնականում գոյություն ուներ պետական սե-փականության ձևով) «սեփականաշնորհման» անվան տակ, բայց, ըստ էության, կոռուպցիոն, մասնավորեցումը դարձավ կապիտալի նախասկզբնական կուտակման գլխավոր ուղղությունը և հիմնական ուղին: Արագորեն ձևավորվեց հին և նոր սերտաճած մոմենկլատու-րան, որն իր բնույթով կլանային և կոռուպցիոն էր: Այդ «նոր կլա-նային կոռուպցիոն մոմենկլատուրայի» գործունեությունը Հայաս-տանում անվերահսկելի դարձավ նաև այն պատճառով, որ հասարա-կությունը ոչ միայն տնտեսապես, այլ նաև քաղաքական և բարոյա-հոգեբանական տեսակետից խոր ցնցումների մեջ էր: Առաջինը 1988 թ.-ի դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժն էր, որը շուրջ 25 հազար մարդկային կյանք խլեց: Չնավորվեց «Աղետի գո-տին», իր բոլոր դաժան արհավիրքներով: Երկրորդը Ղարաբաղյան հակամարտությունն էր, շուրջ չորս տարի տևողությամբ պատե-րազմն իր ծանր սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական կոր-ծանարար հետևանքներով:

ԽՍՀՄ փլուզմամբ Հայաստանի նախկինում ձևավորված տնտե-սական կապերը կտրուկ խզվեցին և ողջ տնտեսությունն ու կյանքը ուղղակի կաթվածահար եղան: Դրանով է բացատրվում, որ Հայաս-տանում ձևավորված կլանային կոռուպցիոն մոմենկլատուրան (որը

ներառեց նաև «գեներալիտետը») ազատ տնօրինեց 70 տարիներին ստեղծված երկրի ազգային հարստությունը և այն «սեփականաշնորհեց». այսինքն՝ ամենատարբեր ձևերով դարձավ դրա սեփականատերը:

Ընդ որում՝ նոմենկլատուրան միատարր չէր: Ձեռնարկությունների նախկին սովետական ղեկավարները ձեռներեցության մասնագիտական ունակությունների և ղեկավարման տեսակետից ավելի առաջադիմական, նախընտրելի սոցիալական խումբ էին ներկայացնում: Սակայն սեփականաշնորհված ձեռնարկության կառավարման «առաջին ջութակը» տնօրինում էր նոր քաղաքական ղեկավարը, այդ թվում՝ դարաբաղյան պատերազմական գործողություններին «մասնակցած», բայց մասնագիտական գիտելիքներ և կառավարման փորձ և նախկինում ոչինչ չունեցող, նաև դժվար վերահսկվող վերը նշված ղեկավարը: Արագ և շուտ հարստանալը դարձավ նոր ձևավորված կլանային կոռուպցիայի, հատկապես առաջին դեմքերի գործելակերպը և ապրելակերպը: Դա անգամ դրսևորվեց «Ադետի գոտու» վերականգնման հսկայական տեխնիկական պարկը տնօրինելու և ընդհանրապես հանրապետության ձեռնարկությունների և կառույցների մետաղյա կոնստրուկցիաների և հաճախ դեռևս գործող հաստոցների՝ իբրև մետաղյա ջարդոն երկրից թալանելու և Իրանում վաճառելու միջոցով շատ արագ հարստանալու մեջ: Բայց դա միայն սկիզբն էր: Նոր իշխանական վերնախավը, նոմենկլատուրան, որը տնտեսական, քաղաքական, իրավական և պաշտպանական կառույցներից սերտաճած միավորում էր, դարձավ երկրի ազգային հարստության «սեփականաշնորհման հիմնական իրականացնողը»: Իրավացի են այն տնտեսագետները, որոնք գտնում են, որ մեր երկրի անցումային տնտեսությունում կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացում վճռող դեր խաղում էին հենց այդ կոռուպցիոն իշխանությունները: Անվերահսկելի կոռուպցիոն իշխանության հիմնական գործառույթը դարձավ ուղղակի և անուղղակի (ստվերային) ճանապարհներով ազգային հարստության յուրացումը և կուտակումը: Ընդ որում՝ կուտակման չափերը կախված էին նոմենկլատուրայի բուրգում զբաղեցրած տեղով: Առյուծի բաժինը պատկանում

էր բուրգի գլխի տնօրինողին, իսկ դրանից ցած գտնվողներին՝ համամասնաբար:

Բացի ուղղակի սեփականաշնորհումից՝ ժամանակակից անցումային տնտեսություններում կապիտալի նախասկզբնական կուտակման աղբյուր հանդիսացան «սղաճը, պետական կառույցների կամ պաշտոնյաների կողմից հովանավորության առկայությունը, տարբեր բնույթի վարկերին և օգնության միջոցներին տնօրինելը, կոռուպցիան, որոշակի ապրանքների արտադրության կամ վաճառքի գործում մենաշնորհային դիրքերը և անգամ պետական արտաքին պարտքը»:³⁸ Այդ բոլորի շնորհիվ սեփականաշնորհված ձեռնարկությունների նոր տերերը խոշոր օբյեկտները, թանկարժեք սարքավորումները, կառույցները և պաշարները ձեռք բերեցին խորհրդանշական չնչին գներով՝ համարյա «անվճար»:

Հետսոցիալիստական երկրներում կապիտալի նախասկզբնական կուտակման շատ կարևոր աղբյուր են «ստվերային» եկամուտները: Դրանց զգալի մասը տարբեր ձևերով վերաբաշխվում և կենտրոնանում է իշխանական օլիգարխների տնօրինության տակ: ՀՀ-ում պաշտոնական գնահատականների համաձայն՝ 1994 թ.-ին ՀՆԱ-ի մեջ ստվերային տնտեսության տեսակարար կշիռը կազմել է 27.0 %, 1995 թ.-ին՝ 31.6 %, 1996 թ.-ին՝ 34.3 %, 1997 թ.-ին՝ 28.9 %, 1998 թ.-ին՝ 25.6 %, 1999 թ.-ին՝ 29.0 %³⁹, մինչդեռ իրականում այն ՀՆԱ-ում մոտավոր հաշվարկներով 40-50 % է կազմել: Ստվերային գործառնությունները, չնայած մեծ ռիսկին, հարկեր չվճարելու արդյունքում դառնում են ավելի եկամտաբեր, քան պաշտոնականը և վերաժվում կապիտալի նախասկզբնական կուտակման կարևոր աղբյուրի:

³⁸ Ա. Խառատյան, Բնակչության կենսամակարդակի շերտավորման և նրա կարգավորման հիմնախնդիրներն անցումային տնտեսությունում, սեղմագիր, Եր., 2003, էջ 7: Տե՛ս նաև Գ. Ղարիբյան, Ա. Խառատյան, Անցումային տնտեսության բաշխման հարաբերությունները և բնակչության կենսամակարդակի շերտավորման ու սոցիալական արդարության հիմնախնդիրները, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, Հ. 1 (109): Գ. Ղարիբյան, Ա. Հակոբջանյան, Բնակչության եկամուտների բաշխման և վերաբաշխման հարաբերությունները Հայաստանի Հանրապետության անցումային տարիներին, Երևան, 2011, էջ 24:

³⁹ Statistical measurement of non-observed economy, Workshop. 16-20 of October 2000, Sochi, Russian Federation, pp. 28, 36.

Անցումային տնտեսությունում ստվերային տնտեսության մեծ եկամուտների մի մասը կոռուպցիոն լծակներով յուրացնում են իրավական և իշխանական այլ օղակներ: Այդ բոլորը ծնում և ձևավորում է կապիտալի նախասկզբնական կուտակման մի այնպիսի օղակ, ինչպիսին «տանիքն» (крыша) է: Հենց «տանիքն» է ստվերային տնտեսության հովանավորը և ստվերային մեծ եկամուտների նախասկզբնական կուտակման հիմնական սեփականատերը: «Տանիքը» հաճախ ավելի զորավոր և ազդեցիկ լծակ է, քան օրինական իշխանության մարմինը:

«Տանիքի» համար կուտակման աղբյուր են դառնում ոչ միայն ստվերային եկամուտները, այլ նաև «պետական ռենտան»: «Պետական ռենտան» դրսևորվում է արտոնյալ վարկերի, արտահանման ու ներմուծման համակարգում հարստության յուրացման նպատակով նպաստավոր միջավայր ստեղծելու, պետական եկամտաբեր պատվերների և այլ եղանակներով: *Բնակչության ունեցվածքին, մասնավորապես Երևանի կենտրոնում բնակարանների որակյալ մասին տիրելու շար դաժան գործիք դարձավ բանկային ահավոր բարձր տոկոսներով (25-30) բնակչությանը վարկեր տրամադրելը:* Մանր և միջին ձեռնարկատիրության չկայանալու արդյունքում բարձր վարկային տոկոսը լրացուցիչ կերպով տիրացավ մեծ հարստության հատկապես որակյալ բնակարանային ֆոնդին տիրանալու միջոցով:

Այսպիսով՝ ի տարբերություն 16-17-րդ դարերում կապիտալի նախասկզբնական կուտակման դասական մոդելի, որտեղ պետությունը հանդես էր գալիս կապիտալի նախասկզբնական կուտակմանը նպաստողի և սատարողի դերում, 20-21-րդ դարեմուտին ԱՊՀ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, պետությունը, պետական իշխանությունները տարբեր ձևերով ու եղանակներով հանդես եկան որպես կապիտալի նախասկզբնական կուտակման անմիջական իրականացնողներ, որը ոչ միայն կոռուպացրեց երկիրը, այլև ձևավորեց հենց պետական հատվածում հարուստների, անգամ օլիգարխների դինաստիա: Արդյունքում պետական իշխանության օղակները դարձան կապիտալի նախասկզբնական կուտակման հիմնական կրողները, կապիտալի սեփականատերեր: Պաշտոնը և կապիտալի

սեփականությունը սերտաճեցին միմյանց հետ: Այդ երևույթը դարձավ համընդհանուր, որի արդյունքում ձևավորվեց հետսոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը՝ հարուստների (այդ թվում՝ օլիգարխների), միջին և աղքատների դասերը, ինչը և հիմք դարձավ ու պայմանավորեց հասարակության անդամների միջև եկամուտների բաշխման և վերաբաշխման հարաբերությունների, մասնավորապես եկամուտների շերտավորման և հարստության բևեռացման զարգացումները:

Ընդ որում՝ ՀՀ-ում ունևորների մեծ մասը խուսափում է իր կուրակումները երկրի ներսում արտադրողական կապիտալի վերածելուց, որի արդյունքում մինչև այսօր էլ գործազրկությունը չի հաղթահարվել, իսկ աղքատությունը շարունակվում է 30 %-ի սահմաններում պահպանվել:

Այդ բոլորով հանդերձ, երկրի կառավարման առաջին տասը տարիներին ձևավորվեցին շուկայական տնտեսության բնորոշ որոշ հարաբերություններ, ինստիտուտներ և կառավարման համակարգ, որը հնարավոր դարձրեց լուծելու հետևյալ խնդիրները.

- գների և արտաքին առևտրի ազատականացում, դրամավարկային քաղաքականության իրականացման գործիքների և մեխանիզմների օգտագործում,
- մասնավորեցում, սեփականության բազմաձևության և մրրցակցության որոշ պայմանների ապահովում,
- ֆինանսական շուկայի ինստիտուտների ձևավորում և կայացում,
- հարկաբյուջետային համակարգի և հարաբերությունների վերակառուցում,
- պետական կառավարման համակարգի վերակառուցում և կառավարման նոր մեթոդների ու ձևերի յուրացում, բնական մենաշնորհների գործունեության կանոնակարգում,
- սոցիալական պաշտպանության և երաշխիքների համակարգի ձևավորում,

- միջազգային շուկաների հետ փոխներտաճում:⁴⁰

Վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվել են որոշակի քայլեր՝ շուկայական օրենսդրական դաշտի ձևավորման և դրա միջոցով առաջադրված «բարեփոխումներն» իրականացնելու համար: Ինչ խոսք, որ «բարեփոխումները», ամբողջությամբ վերցրած, արդյունավետ չէին կարող լինել: Նախ պակասում էր փորձը: Երկրորդ, որը շատ խոցելի էր Հայաստանի համար, բացակայում էին այդ վերափոխումներն իրականացնող բարեխիղճ և պատասխանատու, բանիմաց մասնագետները: Նախկին պետական ապարատը տապալվեց: Կառավարման փորձ ունեցող ղեկավարները զրկվեցին իշխանությունից, պաշտոններից և անցան երկրորդ, երրորդ պլան կամ ընդհանրապես դուրս մնացին կառավարման դաշտից՝ իրենց տեղը գիջելով նոր ղեկավարներին: Դրանք հիմնականում քաղաքական ակտիվիստներ և պատերազմի դաշտ «մտած» կամ չմտած մասնակիցներ էին՝ զուրկ մասնագիտական կրթությունից և ղեկավարման ունակությունից ու փորձից: Դառնալով տնօրեններ՝ նրանք օգտվում էին միայն մի բանից՝ ձեռնարկությունը լուծարելու, ունեցվածքը վաճառելու և հարստանալու իրավունքից, որը և երկիրը հասցրեց աղետալի վիճակի:

2.2 Հայաստանի տնտեսական և սոցիալական խորը ճգնաժամը

Որո՞նք էին 1990-ականների սկզբին նախկին սոցիալիստական երկրներում իրականացված տնտեսական և սոցիալական բարեփոխումների ձախողման հիմնական պատճառները: Վերջին երկուսուկես տասնամյակի ընթացքում փաստերի վերաիմաստավորումը և հետազոտական մի շարք աշխատանքների վերլուծությունը հնարավորություն են տալիս բացահայտելու անցյալի սխալները: Համաշ-

⁴⁰ Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան, 2001, էջ 67-68:

խարհային բանկի 2005 թ.-ի զեկույցի համաձայն՝ 1990-ականների սկզբին իրականացված բարեփոխումների ժամանակ կատարված սխալներից էր այն, որ «...մակրոտնտեսական կայունության, ներքին ազատականացման, և հրապարակայնության ...սկզբունքները նեղ մեկնաբանվում էին որպես ֆիսկալ պակասությունների միմիալացում, գնաճի միմիալացում, սակագների միմիալացում, մասնավորեցման մաքսիմալացում, ֆինանսների ազատականացման մաքսիմալացում այն ենթադրությամբ, որ այդ փոփոխությունների շատ լինելը լավ է բոլոր ժամանակներում և բոլոր տեղերում, անտեսելով այն փաստը, որ այդ մեթոդները հնարավոր մեթոդներից միայն մի քանիսն են ...»:⁴¹

Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրներում շուկայական բարեփոխումները իրականացվեցին «շուկային թերապիայի» մեթոդով՝ արագ և միանգամից: Անտեսվեցին քաղաքականությունների հերթականությունը և իրագործման արագությունը, ինչն էլ շատ երկրներում հանգեցրեց աղետալի արդյունքների: Այս երկրներում արտադրության անկումն այնքան խորն էր և երկարատև, որ 1990 թ.-ի եկամուտների մակարդակը վերականգնելու համար շատերից պահանջվեց ավելի քան մեկ տասնամյակ: Այժմ արդեն անցյալի դասերը թույլ են տալիս եզրակացնել, որ գերակայությունների հաջորդականության որոշումը բարեփոխումների հաջող իրագործման բանալին է: Վերջինս պահանջում է ոչ միայն առողջ տնտեսական վերլուծություն, այլ նաև քաղաքական իրավիճակի ըմբռնում:

Հաջորդ կարևոր եզրակացությունն է, որ չկա այնպիսի լավագույն գործնական քաղաքականություն, որը միշտ և ամեն տեղ տա նույն դրական արդյունքը: Որևէ երկրի բարեփոխումների հաջող քաղաքականությունը պատճենելու փորձը այլ երկրում հաճախ ձախողվում է: Ինստիտուցիոնալ համատեքստը, թերևս, ամենակարևոր գործոնն է՝ որոշելու՝ արդյոք տվյալ քաղաքականությունը տեղին կլինի,

⁴¹ Economic Growth in the 1990s: Learning from a Decade of Reform, The World Bank, 2005, p. 11.

թե՛ ոչ: Անցումային տնտեսությամբ երկրների ինստիտուցիոնալ պայմանների տարբերությունները ենթադրում էին միջոցառումների և քաղաքականությունների տարբերություն, որն անտեսվեց: Հաշվի չառնվեց նաև այն հանգամանքը, որ ինստիտուտները հաճախ խորապես արմատացած են և դժվար փոխվող: Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրներում ինստիտուցիոնալ բարեփոխումները կիսատ մնացին նույնիսկ պետական տնտեսության խոշոր հատվածների սեփականաշնորհման պայմաններում: 1990-ականների սկզբին այդ երկրներից շատերում այս հանգամանքը նպաստեց արտադրության փլուզմանը:

Ի հակադրություն դրան՝ նույն ժամանակահատվածում Չինաստանում բարեփոխումների գործընթացն իրականացվեց աստիճանաբար, կախվածությունը շուկայական ուժերից ավելացվեց քայլ առ քայլ: Արդյունքում երկրի արդյունաբերական սեկտորն ընդլայնվեց, և բարձր տնտեսական աճի շնորհիվ աղքատության մեջ ապրող մարդկանց թիվը կրճատվեց:

Ինչ վերաբերում է Հայաստանին, անցումը կենտրոնացված պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության հարթ չի ընթացել: 1988 թ.-ին հայ ժողովուրդը երկու մեծ ցնցում ապրեց: Առաջինը Սպիտակի երկրաշարժն էր, որը Հայաստանի մի զգալի հատվածը՝ 700 հազարից ավելի բնակչությամբ, մի քանի վայրկյանում վերածեց աղետի գոտու, և որի ծանր հետևանքները այսօր լիովին դեռ հաղթահարված չեն: Երկրորդը Ղարաբաղյան շարժումն էր, որը վերաճեց Արցախի համար ազատագրական պատերազմի: Չորսամյա պատերազմն ավարտվեց հայ ժողովրդի հաղթանակով, սակայն տնտեսական և սոցիալական ծանր հետևանքներով և բեռով: 1990-ականների սկզբի «բարեփոխումների» արդյունքում մեր երկիրը հայտնվեց տնտեսական և սոցիալական խորը ճգնաժամի մեջ, որի պատճառները քննարկենք ավելի հանգամանորեն:

Սպիտակի երկրաշարժը: 1988 թ.-ի դեկտեմբերի 7-ին Հայաստանի մոտ 40 %-ն ընդգրկող տարածքում տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ՝ էպիկենտրոնում 10 բալ ուժգնությամբ: Զոհվեց 25 հազարից ավելի մարդ, 19 հազարը հաշմանդամ դարձավ, անօթևան

մնաց 530 000 բնակիչ, ոչնչացվեց երկրի արտադրական կարողությունների ավելի քան մեկ երրորդը: Երկրաշարժի հետևանքով ավերվեցին քաղաքներ (Սպիտակ, Գյումրի) և տասնյակ գյուղեր: Լրիվ կամ մասամբ ավերվեց ավելի քան 230 արդյունաբերական օբյեկտ (82 հազ. աշխատատեղով), քանդվեց կամ տարբեր աստիճանի վնասվեց 8.9 մլն քառ. մ ընդհանուր մակերեսով բնակարանային ֆոնդը, 150.2 հազ. աշակերտական տեղով հանրակրթական դպրոցներ, առողջապահական 416 օբյեկտ, ինչպես նաև այլ նշանակություն ունեցող օբյեկտներ:⁴² Հազարավոր մարդիկ մնացին առանց կացարանի, առանց աշխատանքի, առանց տարիներով կուտակված տնային գույքի, ունեցվածքի: Նյութական վնասը գնահատվեց 13 մլրդ ռուբլի: *Բնական աղբյուրը Հայաստանի բնակչության զանգվածային աղքատացման առաջին մեծ գործոնն էր:*

Երկրաշարժի հետևանքների վերացման նպատակով ընդունվել են մի շարք որոշումներ: 1989 թ.-ին նախկին Խորհրդային Միության իշխանությունների կողմից ընդունված որոշումների համաձայն՝ նախատեսվում էր միութենական հանրապետությունների, նախարարությունների, գերատեսչությունների ուժերով և միջոցներով 1989-1990 թթ.-ին վերականգնել Աղետի գոտին: Չնայած կատարված մեծ ծավալի աշխատանքներին՝ վերականգնողական աշխատանքները տարբեր պատճառներով նախատեսված ծավալներով չիրականացվեցին, որի հետևանքով սառեցվեց շուրջ 4700 անավարտ օբյեկտ:

1991 թ.-ից սկսած՝ Աղետի գոտու վերականգնման աշխատանքների ամբողջ ծանրությունը հիմնականում ընկավ Հայաստանի Հանրապետության վրա: Ստեղծված իրավիճակից ելնելով՝ ՀՀ կառավարությունը 1994 թ.-ի հոկտեմբերի 7-ի թիվ 17 որոշումով հաստատեց Աղետի գոտու վերականգնման նոր ծրագիր, և Աղետի գոտու վերականգնման ժամկետը երկարաձգվեց մինչև 2000 թ.-ը:

Երկրաշարժից 10 տարի անց Աղետի գոտու վերականգնման գործընթացի վերլուծության արդյունքները կանխորոշեցին Աղետի գոտու բնակավայրերի վերականգնման քաղաքականության շարու-

⁴² Հայաստանի Հանրապետության օրենքը Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին, 27.07.2001:

նակության և ճշգրտման անհրաժեշտությունը: Արդյունքում ՀՀ կառավարության 1998 թ.-ի նոյեմբերի 11-ի թիվ 701 որոշումով հավանության արժանացավ Աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագիրը: 1989-2000 թթ. ժամանակահատվածում ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրացված ներդրումների դիմաց Աղետի գոտու բնակավայրերում գործարկվել են 3.5 մլն քառ. մ ընդհանուր մակերեսով բնակելի տներ, սակայն բնակչության զգալի մասը շարունակում էր ապրել ժամանակավոր կացարաններում: 2001 թ.-ի հուլիսի 27-ին հաստատվեց Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը, որի համաձայն՝ բնակարանային խնդիրների լուծման համար անհրաժեշտ ծախսերի ծավալը նախատեսվում է 46.613 մլրդ դրամ: Բնակչության զբաղվածության աստիճանի բարձրացման և Աղետի գոտու բնակավայրերի արտադրական ներուժի առավելագույնս օգտագործման նպատակով Աղետի գոտում կանխատեսվում է շուրջ 9500 աշխատատեղերի ստեղծում:⁴³

Չնայած ձեռնարկված միջոցառումներին և որոշակի դրական տեղաշարժերին՝ *Աղետի գոտու բնակչությունը այսօր էլ շարունակում է մնալ գործազրկության և աղքատության տեսանկյունից ՀՀ ամենախոցելի խումբը:*

Ղարաբաղյան հակամարտությունը: Լեռնային Ղարաբաղի խնդրի ներկա փուլը սկիզբ է առել ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին և վերածվել է հակամարտության, քանի որ ի պատասխան Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման՝ Ադրբեջանը որդեգրեց ուժային քաղաքականություն: Լեռնային Ղարաբաղի (Արցախի) մասին՝ որպես պատմական Հայաստանի մաս, հիշատակումներ կան դեռևս Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Կլավդիոս Պտղոմեասի, Պլուտարքոսի, Դիոն Կասիոսի և անտիկ այլ հեղինակների աշխատություններում, մինչդեռ Ադրբեջան պետությունն առաջին անգամ քաղաքական քարտեզի վրա հայտնվել է

⁴³ Հայաստանի Հանրապետության օրենքը Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին, 27.07.2001

1918 թ.-ին՝ ռուսական կայսրության փլուզումից հետո:⁴⁴ 1920 թ.-ին՝ տարածաշրջանի խորհրդայնացումից հետո, Ղարաբաղը, նրա ժողովրդի կամքին հակառակ, Ստալինի նախաձեռնությամբ ինքնավար մարզի կարգավիճակով միացվեց Ադրբեջանին՝ բոլշևիկյան Կովկասյան բյուրոյի 1921 թ.-ի որոշմամբ, որը այդպիսի որոշում կայացնելու լիազորություն չուներ:

1988 թ.-ի փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի պատգամավորների խորհուրդը որոշում կայացրեց դիմելու Խորհրդային Միության, Ադրբեջանի և Հայաստանի պառլամենտներին (Ազգային ժողովներին)՝ ինքնավար մարզը Ադրբեջանի կազմից Հայաստանի կազմ տեղափոխելու մասին:⁴⁵ Հայաստանի պառլամենտը համաձայնեց, իսկ Ադրբեջանի պառլամենտը մերժեց: ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները, մերժելով խնդրանքը, այնուամենայնիվ, Ղարաբաղում ստեղծեցին հատուկ կառավարման կոմիտե՝ Ղարաբաղն ուղղակիորեն ենթարկելով Մոսկվային: 1990 թ.-ի ապրիլի 3-ի «Խորհրդային Միությունից Միութենական Հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ԽՍՀՄ կազմից Միութենական Հանրապետության դուրս գալու դեպքում ինքնավար կազմավորումները և հավաք բնակվող ազգային փոքրամասնությունները իրավունք ստացան ինքնուրույն որոշելու իրենց հետագա կարգավիճակը:⁴⁶ 1991 թ.-ի օգոստոսի 30-ին Ադրբեջանը, վերոնշյալ օրենքին համապատասխան, հռչակեց իր անկախությունը: Ադրբեջանը իր 1991 թ.-ի հոկտեմբերի 18-ի անկախության մասին սահմանադրական ակտով անվավեր համարեց Խորհրդային Միության ակտերը այն մասով, որը վերաբերում էր Ադրբեջանին, ներառյալ Ղարաբաղը խորհրդայնացված Ադրբեջանին միացնելու մասին բոլշևիկյան որոշումները:

⁴⁴ Շ. Քոչարյան, Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Երևան, 2015:

⁴⁵ Decision of the Special Session of the NKAO Council of Peoples Deputies of XX Session, 20 February 1988, at <http://nkr.am/en/decision--of-the-special-session-of-the-nkao-council-of-peoples-deputies-of-xxsession/41/>.

⁴⁶ Закон о порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР от 3 апреля 1990 года. http://www.libussr.ru/doc_ussr/usr_16379.htm.

1991 թ.-ի սեպտեմբերի 2-ին Ղարաբաղի ինքնավար մարզը՝ Շահումյանի շրջանի հետ միասին, հռչակեց իրեն անկախ հանրապետություն: Խորհրդային Միության լուծարման պահին նախկին Ադրբեջանի Միութենական Հանրապետության տարածքում ձևավորված էին երկու անկախ և իրավահավասար սուբյեկտներ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը:

Սկսած 1992 թ.-ից՝ Ադրբեջանը լայնածավալ ռազմական գործողություններ իրականացրեց ԼՂՀ-ի դեմ, սակայն հայերը կարողացան ազատագրել Արցախը: Հակամարտության ռազմական փուլը ավարտվեց 1994 թ.-ի մայիսին զինադադարի մասին անժամկետ համաձայնագրով:⁴⁷

Ղարաբաղյան հակամարտությունը պայմանավորեց Ադրբեջանի կողմից *Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի տնտեսական շրջափակման իրականացումը*, ինչպես նաև Ադրբեջանից շուրջ 360 հազար հայ փախստականների Հայաստանում հայտնվելը: Միայն Ադրբեջանի սահմանակից Հայաստանի մի շարք տարածքներում ավերվեցին հարյուրից ավելի բնակավայրեր, ավելի քան 70 հազար մարդ լքեց իր տունը՝ դառնալով ներքին տեղահանվածներ:⁴⁸ Փախստականների մեծ մասը գումարվեց հանրապետության կարիքավորներին: *Ղարաբաղյան հակամարտությունը դարձավ Հայաստանի բնակչության զանգվածային աղքատացման հաջորդ գործոնը:*

ԽՍՀՄ փլուզումը: Վերը նշված երկու ծանր հարվածներ ստացած Հայաստանը ԽՍՀՄ փլուզման արդյունքում հայտնվեց ոչ պակաս կործանարար իրավիճակում: Դրա հետևանքով մինչ այդ արդեն սկսված սոցիալ-տնտեսական ճգնաժամը Հայաստանում սուր ձևեր և ծանր հետևանքներ ունեցավ, քանի որ նրա արդյունաբերությունը (որը կազմում էր ՀՆԱ-ի 74 %-ը) և ընդհանրապես տնտեսությունը մեծ կախվածության մեջ էին կենտրոնից, միութենական այլ հանրապե-

⁴⁷ Սկսած 1995 թվականից՝ խաղաղ կարգավորման գործընթացն ընթանում է միջազգային մանդատ ունեցող ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահների (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա) միջնորդությամբ բանակցությունների ձևաչափով: Չնայած միջնորդների հետևողական ջանքերին՝ Ղարաբաղյան խնդիրը դեռևս կարգավորված չէ:

⁴⁸ Աղբատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան, 2003, էջ 25:

տություններից ինչպես հումքային ռեսուրսների ամենօրյա ներկրման, այնպես էլ արտաքին շուկաներում պատրաստի արտադրանքի արտահանման և իրացման առումներով: ԽՍՀՄ փլուզումը հանգեցրեց ՀՀ առևտրատնտեսական կապերի խզման, որը իր հերթին հանգեցրեց ՀՆԱ-ի ահավոր չափերով կրճատման՝ դառնալով մասսայական գործազրկության և բնակչության աղքատացման պատճառ: Այսպես, 1990-1993 թթ. ընթացքում ՀՆԱ-ն կրճատվեց ավելի քան 2 անգամ՝ 1993 թ.-ին կազմելով 1990 թ.-ի մակարդակի 46.9 %-ը, որն այդ ժամանակ ամենաբարձր տնտեսական անկման ցուցանիշն էր ԱՊՀ երկրներում:⁴⁹

1993 թ.-ին 1988 թ.-ի համեմատությամբ արդյունաբերության անկումը կազմեց 64.0 %-ը, էլեկտրաէներգիայի արտադրությունը կրճատվեց 58 %-ով, քիմիական և նավթաքիմիական արդյունաբերության արտադրական ծավալները՝ 80.0 %-ով, իսկ սննդի արդյունաբերությունը՝ 60-90 %-ով:

Ատոմակայանի և «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման գործունեության սառեցումը: Ավերիչ երկրաշարժից, տնտեսական շրջափակումից և Ղարաբաղյան հակամարտությունից խոցված երկրում անցնելի էր կանգնեցնել Ատոմակայանը և «Նաիրիտ»՝ հզոր գիտաարտադրական միավորումը՝ Հայաստանին զրկելով Ռուսաստանի և այլ երկրների հետ շահավետ տնտեսական համագործակցության այդ շատ կարևոր օղակից, իսկ բնակչությանը՝ հազարավոր աշխատատեղերից, ապրուստի միջոցներից, լույսից և ջերմությունից: Հայաստանի արդյունաբերական երկու հսկաների՝ «Ատոմակայանի» և «Նաիրիտի» փակումով, տնտեսության ճգնաժամի խորացման հետևանքով հարյուրավոր ձեռնարկություններ դադարեցին աշխատել, և *645 հազար աշխատող դարձավ գործազուրկ՝ համալրելով աղքատ բնակչության շարքերը:*

Հայաստանում շուկայական տնտեսական համակարգին անցնելու անարդյունավետ մոդելի արդյունքում 1990-1997 թթ.-ին հանրապետության համախառն ներքին արդյունքը կրճատվեց 40 %-ով,

⁴⁹ Աղբատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան, 2003, էջ 25:

իսկ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը՝ շուրջ 54 %-ով:

1999 թ.-ի տնտեսական ցուցանիշները նախորդ տարիների առավելագույն մակարդակի համեմատությամբ ունեցան հետևյալ տոկոսային արժեքները.⁵⁰

- ՀՆԱ, 60 % (1989 թ.-ի համեմատ),
- արդյունաբերական արտադրանք, 41 % (1987 թ.-ի համեմատ),
- գյուղատնտեսական արտադրանք, 78 % (1986 թ.-ի համեմատ),
- մանրածախ ապրանքաշրջանառություն, 40 % (1990 թ.-ի համեմատ):

Արտադրության ծավալների նման կրճատումը հանգեցրեց *զանգվածային գործազրկության*⁵¹ սրելով աշխատաշուկայի լարվածությունը:

Աղյուսակ 2.1. Աշխատաշուկայի փոփոխությունները և գործազրկությունը ՀՀ-ում⁵¹

Ցուցանիշներ	1995 թ.	1996 թ.	1997 թ.
Աշխատուժի թիվը (հազ. մարդ)	1600.3	1572.6	1564.4
Զբաղվածների թիվը (հազ. մարդ)	1468.6	1413.4	1403.4
Գործազուրկների թիվը (հազ. մարդ)	131.7	159.2	161.4
Ազատ աշխատատեղերը (աշխատանքի պահանջարկը, մարդ)	1077	525	757

Պաշտոնական տվյալներով գործազուրկների թիվը աճում էր (Աղյուսակ 2.1), սակայն հանրապետության սովերային տնտեսության մեծ ծավալների, գործազուրկների զգալի մասի չգրանցվելու և այլ պատճառներով գործազրկության և զբաղվածության հրատարակած պաշտոնական տվյալները հեռու են ճշգրիտ լինելուց: Այսպես, եթե

⁵⁰ Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001, էջ 10:

⁵¹ Изменяющее общество: теория, практика, 1,2, ЕГУ, 1997, стр. 64.

Աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայության տվյալներով 1998 թ.-ին պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը կազմել էր 9.4 %, 1999 թ.-ին՝ 11.2 %, ապա «Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը» գիտական հետազոտության տվյալների համաձայն՝ այդ տարիներին տնտեսապես ակտիվ բնակչության 27.3 %-ը գործազուրկ էր:⁵² Այս ցուցանիշը ՀՀ-ում անհամեմատ բարձր էր, քան Ռուսաստանում և ԱՊՀ այլ երկրներում: Հանրապետության գործազրկության իրական մակարդակը ավելի բարձր կլիներ, իսկ սոցիալական լարվածությունն ավելի սուր, եթե աշխատունակ բնակչության մի զգալի մասը չարտագաղթեր արտերկիր: Այդ բոլորի արդյունքում, բնականաբար, ՀՀ *աշխատաշուկան* չէր կարող լիարժեք ձևավորվել ու կայանալ և շուկայական տնտեսությանը հատուկ բաշխման հարաբերությունները չէին կարող դառնալ բնակչության կենսամակարդակը բարձրացնող և արտադրության արդյունավետությունը խթանող համակարգ:

Այսպիսով՝ ԽՍՀՄ փլուզման արդյունքում տնտեսական կապերի խզումը և հարյուրավոր ձեռնարկությունների կործանումը, Ատոմակայանի և «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման գործունեության սառեցումը, խոր տնտեսական անկումը ՀՀ բնակչության մասսայական գործազրկության և աղքատացման պատճառ հանդիսացան:

Նումենկլատուրային սեփականաշնորհումը և բնակչության ավանդների սառեցումը: 1990-ականների սկզբին Հայաստանի բնակչության հիմնական զանգվածի աղքատացման և եկամուտների բեռնացման գործում նշանակալի դեր խաղաց սեփականաշնորհման գործընթացը: Այն իրականացվեց բնակչության անհավասար ելակետային հնարավորությունների պայմաններում, որտեղ էական դեր խաղաց բնակչության նախկին համակարգում արդեն ձևավորված սոցիալական շերտավորումը (ամհրաժեշտ տեղեկատվության և ֆինանսական միջոցների մենաշնորհացման տեսանկյունից): Սեփականաշնորհման ժողովրդական ուղին, ըստ էության, անիրական

⁵² Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001, էջ 47:

մնաց, քանի որ մասնավորեցվող ընկերությունների հաշվեկշռային արժեքի 20 % կազմող մասնակի անհատույց սեփականաշնորհման սերտիֆիկատները չնչին գներով անցան նոր հարուստներին:

1999-2001 թթ. սկսվեց համրային սեփականության մասնավորեցման գործընթացը, որն իրականացվեց հին և նոր սերտաճած ընչաքաղց նոմենկլատուրայի կողմից: Մասնավորեցման առաջին փուլն իրականացվեց ընդգծված քաղաքական բաղադրիչի գերակայությամբ: Համայնավարության հիմքերի շուտափույթ վերացման նպատակով մասնավորեցումն ընթացավ ակնհայտորեն արագացված քայլերով: Դրա վառ օրինակը *հողի սեփականաշնորհումն* է, որը հետխորհրդային պետությունների շարքում Հայաստանն իրականացրեց առաջինը (դեռևս 1991 թ.-ին): Մինչև «վերափոխումները», մինչև հողի սեփականաշնորհումը գյուղն իր բոլոր թերություններով հանդերձ պահպանել էր դարերից եկած իր ավանդական նկարագիրը: Խորհրդային տարիներին հանրապետությունում գործում էին 860 գյուղացիական խոշոր տնտեսություններ, որոնց գերակշռող մասը խոշոր ապրանքային տնտեսություններ էին: Աշխատանքների զգալի մասը մեքենայացված էր, մատաղ սերունդը ստանում էր որակյալ միջնակարգ կրթություն՝ ուսումը շարունակելով բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում: Հողի սեփականաշնորհման արդյունքում, առանց գյուղացու համար անհրաժեշտ պետական աջակցության ամբողջական քաղաքականության մշակման և իրականացման, ձևավորվեցին չափազանց մասնատված հողակտորներով շուրջ 320 հազար գյուղացիական մասնավոր մանր տնտեսություններ⁵³, որոնցից յուրաքանչյուրին միջին հաշվով բաժին էր ընկնում 1.3 հեկտար հողաբաժին, այն էլ՝ չորս տարբեր, իրարից հեռու հողատարածքներում, որը բացառում էր ինդուստրացված գյուղատնտեսությունը: Դրան գումարվեց նաև այն, որ այդ «վերափոխումներով» գյուղացիական տնտեսությունները միանգամից զրկվեցին գյուղատնտեսական մեքենաներից, տեխնիկայից, և գյուղացին մնաց ձեռքի անարտադրողական

⁵³ Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան, 2001, էջ 67-68:

աշխատանքի հույսին, իսկ տնտեսությունն ապրանքայինից դարձավ բնատնտեսություն: Դա հանցագործություն էր, որը, սակայն, այդ տարիներին իշխանությունների կողմից թմբկահարվում էր որպես գյուղատնտեսությունը առաջինը վերափոխելու առավելության օրինակ:

Պրոֆեսորներ Հ. Սարգսյանը և Ա. Մարկոսյանը «Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները» աշխատանքում գրում են. «Տնտեսվարման նոր պայմաններում ... առանձնահատուկ կարևորություն է ստանում գյուղատնտեսական արտադրության և այն սպասարկող ենթակառուցվածքների արդիականացումը... Սակավահող մեր հանրապետությունում վարելահողերի ավելի քան մեկ երրորդը նպատակային չի օգտագործվում...: Գյուղատնտեսական հողատարածքների մասնատվածությունն ու գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը անհնար են դարձնում սեփականաշնորհված հողակտորներում համակարգված ցանքաշրջանառության կազմակերպումը, ռոտզման, պարարտացման և հողաբարելավման ու ագրոտեխնիկական անհրաժեշտ այլ միջոցառումների արդյունավետ իրականացումը...: Շատ գյուղացիական տնտեսություններում սահմանված գների մակարդակը նույնիսկ չի փոխհատուցում արտադրության վրա կատարված ծախսերը»:⁵⁴ Այդ բոլորի արդյունքում երիտասարդները, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերից արտագաղթում են, ծննդաբերությունը կրճատվում է, դպրոցներում սովորողների թիվը նվազում է, առանձին գյուղերում անգամ դպրոցները փակվում են: Փաստորեն, կործանման եզրին է հասցվել հայ ժողովրդի դարերով առանց պետականության գոյատևելու հիմնական բջիջը՝ ավանդական գյուղական ընտանիքը:

1990-ականներին վիճակը մխիթարական չէր մաս արդյունաբերական ձեռնարկությունների, բնակարանային ֆոնդի, անավարտ շինարարության և պետական գույքի մասնավորեցման ոլորտներում: Մեծածավալ մասնավորեցման արդյունքում պետական գույքի 20 %-ն

⁵⁴ Հ. Սարգսյան, Ա. Մարկոսյան, Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Երևան, 2014, էջ 355, 356:

անհատույց տրվեց ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվին: 1994-1995 թթ.-ին մի քանի ամսում հանրապետության տարբեր ճյուղերի 1010 միջին ու խոշոր ձեռնարկություններ (ընդհանուրի 53 %-ը) սեփականաշնորհվեցին այդ եղանակով: Դրա հետևանքով բաժնետեր դարձավ հանրապետության 126571 քաղաքացի: Բացի դրանից՝ անհատույց սեփականաշնորհման երկրորդ ուղին մասնավորեցման ծրագրերում ընդգրկված ձեռնարկությունների արժեքի 30 %-ը հավասար բաժիններով 20.000-ական դրամ անվանական արժեք ունեցող սեփականաշնորհման սերտիֆիկատներով բաշխվեց հանրապետության բնակչությանը: *Սակայն այդ միջոցները՝ սերտիֆիկատները, թեկուզ փոքր ու միջին քիզնեսում ներդրումների չվերաժկեցին:* Նախ, չաշխատեցին ներդրումային հիմնադրամները և ներդրումների համար շուկայական այլ ենթակառուցվածքները: Ինչ վերաբերում է *բնակչության կուրակած եկամուտներին, դրանք խնայողական դրամարկղերում որպես ավանդներ սառեցվեցին:* Դա, ըստ էության, կապիտալի նախասկզբնական կուտակման հայաստանյան խայտառակ առանձնահատկությունն էր: Հայաստանի բնակչության շուրջ 11-12 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք ավանդները եթե վերադարձվեին իրենց սեփականատերերին, ոչ մի կասկած չէր կարող լինել, որ ստացած սերտիֆիկատների հետ ծավալուն ներդրումներ կկատարվեին, և փոքր ու միջին ձեռներեցությունը զարգացում կստանար՝ իր տնտեսական և սոցիալական դրական լուրջ հետևանքներով: Իրականում դա տեղի չունեցավ և տարիների ընթացքում ընտանիքների ստացած սերտիֆիկատները չնչին գներով վաճառվեցին նոմենկլատուրային՝ մեծացնելով նրանց կապիտալը: Ահա դրա արդյունքում էր, որ *Հայաստանում չչեղավորվեց միջին խավը*⁵⁵:

Փոխարենը ձևավորվեց *քեռնացված հասարակություն*՝ զուգորդված զանգվածային աղքատությամբ: Այսպես, 1996 թ.-ին Հայաստանում աղքատության մակարդակը կազմեց 54.7 %, 1999 թ.-ին՝ 55.0 %: 1996 թ.-ին աղքատության բարձր մակարդակներ են գրանցվել հատ-

⁵⁵ Գ. Ղարիբյան, Ա. Խառատյան, Ետսոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի ուսումնասիրության մեթոդաբանական մոտեցումներ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, N 2(110):

կապես Շիրակի (63.1 %), Կոտայքի (62.4 %) և Վայոց ձորի (61.5 %) մարզերում (Աղյուսակ 2.2):

Աղյուսակ 2.2. Աղքատության մակարդակն ըստ հանրապետության մարզերի 1996 և 1999 թվականներին⁵⁶

	Աղքատության կամընթացը, տոկոսներով	Աղքատ բնակչության ծախսերի միջին պակասորդը, տոկոսներով	Աղքատության կամընթացը, տոկոսներով	Աղքատության սրբանշանը, տոկոսներով
1996թ.				
ք. Երևան	58.2	39.81	23.17	11.56
Արագածոտն	51.1	35.43	18.12	8.51
Արարատ	54.2	37.94	20.55	10.47
Արմավիր	38.1	32.79	12.48	5.76
Գեղարքունիք	48.1	36.02	17.31	8.53
Լոռի	51.5	35.68	18.38	8.91
Կոտայք	62.4	40.59	25.31	13.45
Շիրակ	63.1	43.02	27.17	15.17
Սյունիք	47.1	34.87	16.42	8.11
Վայոց ձոր	61.5	46.62	28.67	17.50
Տավուշ	56.1	46.41	26.05	14.90
Հայաստանի Հանրապետություն	54.7	39.32	21.52	11.08
1999թ.				
Հայաստանի Հանրապետություն	55.0	35.0	19.0	9.0

1996 թ.-ին ՀՀ բնակչության 70 %-ի համար մեկ շնչին ընկնող համախառն եկամուտը ցածր էր նվազագույն պարենային զամբյուղի (ՆՊԶ) արժեքից, մինչդեռ բնակչության 10 % համեմատաբար ունևոր խավի համախառն եկամուտները մեկ շնչի հաշվով գերազան-

⁵⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2000, Երևան, Բնակչության կենսամակարդակ և սոցիալական ոլորտ, էջ 27, <http://www.armstat.am/file/doc/687.pdf>:

ցում էին ՆՊՁ-ի արժեքը 7 և ավելի անգամ⁵⁷: 1999 թ.-ին երևանաբնակ բնակչության ամենաառաջատար 20 %-ին բաժին էր ընկնում եկամուտների 3 %-ը, իսկ ամենաառաջատար 20 %-ին՝ եկամուտների 60 %-ը⁵⁸: Հետագա տարիներին, չնայած տնտեսական աճի բարձր ցուցանիշների արձանագրմանը (2001 թ.-ի առաջին կիսամյակում ՀՆԱ-ի 6.6 % աճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ)՝ ՀՀ միջին բնակչի համար սպառողական զամբյուղը մնաց անհասանելի: 2001 թ.-ի երկրորդ եռամսյակում ՀՀ-ում միջին անվանական աշխատավարձը կազմել է 22.696 դրամ (48 ԱՄՆ դոլար), մինչդեռ ամսական նվազագույն սպառողական զամբյուղը՝ շուրջ 60 ԱՄՆ դոլար:⁵⁹

Ջինիի եկամտային գործակիցը Հայաստանում 1987-1990 թթ.-ի համար գնահատված 0.27-ից 1996-1999 թթ.-ին հասել էր 0.60-ի, որը վկայում էր եկամուտների գերբնեռացվածության մասին: 1996-2001 թթ.-ին եկամուտների մեծ անհավասարությունը փոքր-ինչ կրճատվեց: Ջինիի եկամտային գործակիցը 0.60-ից նվազեց մինչև 0.54, այնուհանդերձ, 2001 թ.-ին ՀՀ բնակչության ամենահարուստ 10 %-ը ստացավ եկամուտների 39.4, իսկ ամենաաղքատ 10 %-ը՝ 1.5 %-ը: Ընթացիկ ծախսերի ցուցանիշների համադրումը համեմատաբար բարվոք արդյունքներ արձանագրեց՝ համապատասխանաբար 25.5 %-ը և 3.4 %-ը (Աղյուսակ 2.3): 2001 թ.-ին Երևան քաղաքի բնակչության ամենահարուստ 10 %-ի մեկ շնչի հաշվով միջին ամսական ընթացիկ եկամտի հարաբերությունը ամենաաղքատ 10 %-ի նույն ցուցանիշին կազմել է 40.6:1, մինչդեռ մեկ շնչի հաշվով միջին ամսական սպառողական ծախսերի հարաբերությունը՝ 11.5:1:⁶⁰

⁵⁷ «ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը» ազգային զեկույց, Երևան, 1998, էջ 52:

⁵⁸ Հ. Սարգսյան, Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում, պետության դերը, Երևան, 2001, էջ 36:

⁵⁹ Տնտեսական միտումներ: Եռամսյակային բողարկում, Հայաստան, ապրիլ-հունիս: Երևան, 2001, էջ 69:

⁶⁰ ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999 և 2000 թթ., Վիճակագրական տեղեկագիր, Երևան, 2002, էջ 63, 74:

Այսպիսով՝ նոմենկլատուրային սեփականաշնորհումը և բնակչության ավանդների սառեցումը նպաստեցին ՀՀ բնակչության եկամուտների աճելիքի քննադատմանը և աղքատության զարգացմանը:

Աղյուսակ 2.3. Բնակչության եկամուտների և ծախսերի բաշխումն ըստ դեցիլային խմբերի⁶¹

Դեցիլներ	Մեկ շնչի հաշվով ընթացիկ ծախսերը, %			Մեկ շնչի հաշվով ընթացիկ եկամուտները, %		
	1996 թ.	1999 թ.	2001 թ.	1996 թ.	1999 թ.	2001 թ.
Ամենաաղքատ 10%	2.1	3.0	3.4	0.3	0.4	1.5
	3.4	4.0	5.3	1.3	1.5	3.0
20%	4.3	5.0	6.5	2.3	2.5	3.4
30%	5.2	5.0	7.2	3.3	3.5	5.1
40%	6.2	7.0	7.8	4.4	4.9	5.9
50%	7.5	8.0	9.2	5.9	6.2	6.5
60%	9.1	10.0	10.3	8.0	8.1	9.0
70%	11.5	12.0	11.0	11.3	10.7	10.6
80%	15.7	16.0	13.8	17.4	16.0	15.6
90%	35.0	29.0	25.5	45.8	46.2	39.4
Ամենահարուստ 10%	0.4436	0.372	0.344	0.602	0.593	0.535
Ձիճի գործակիցը						

Գնաճը: Հայաստանում բնակչության եկամուտների վերաբաշխման և աղքատացման գործում որոշակի դեր խաղաց գների ազատականացմանը հաջորդած գնաճը: ՀՀ-ում գները ազատականացվեցին 1992 թ.-ի հունվարին, սպառողական գների ինդեքսը 1993 թ.-ի դեկտեմբերին 1992 թ.-ի դեկտեմբերի համեմատ կազմեց 10996.2 %: Նախ, գնաճը վերաբաշխեց եկամուտներն ի վնաս

⁶¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2002, Երևան, էջ 93:

խնայողությունների տերերի: Դրանք արժեզրկվեցին: Երկրորդ՝ բնակչության մի ստվար զանգված տուժեց աշխատավարձերի և կենսաթոշակների երկարաժամկետ չվճարումների պատճառով: ՀՀ-ում աշխատավարձի պարտքը 1998 թ.-ին կազմեց 8456.7 մլն դրամ, 1999 թ.-ին՝ 13145.0 մլն դրամ, 2000 թ.-ին՝ 15703.8 և 2001 թ.-ին՝ 16979.6 մլն դրամ:⁶² Երրորդ, սղաճը պայմանավորեց ձեռնարկությունների հիմնական կապիտալի վերաբաշխումը, որը երկար ժամանակ ձեռնարկությունների հաշվեկշռում արտացոլվում էր սկզբնական արժեքով: Հիպերինֆլացիայի արդյունքում սկզբնական արժեքը վերջնականապես կտրվեց շուկայականից, և դրա դրամական արտահայտությունը, ըստ էության, կորցրեց տնտեսական իմաստը: Հայաստանում 1990-ականներին մասնավորեցված պետական գույքի դիմաց գումարը կազմեց մոտ 276.3 մլն ԱՄՆ դոլար, որից սերտիֆիկատներով վճարը կազմել էր 48.7 %:⁶³ Հասկանալի է, որ մասնավորեցված պետական գույքի ցույց տրված չափերը շատ հեռու են իրականությունից:

Վարկերը: 1990-ականներին հետսոցիալիստական երկրներում նոմենկլատուրայի հարստացման աղբյուրներից մեկը արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրումն էր որոշակի պետական ձեռնարկություններին շրջանառու միջոցների ձեռքբերման նպատակով: Այդ վարկերը տրվում էին բացասական իրական տոկոսադրույքով: Ռուսաստանում, օրինակ, տարեկան 10-25 %-ով այն դեպքում, երբ սղաճի մակարդակը հասավ տարեկան 2500 %-ի: Արտոնյալ վարկի ընդհանուր գումարը 1992 թ.-ին կազմեց Ռուսաստանի ՀՆԱ-ի մոտ 30 %-ը:⁶⁴ Վարկերի ստացումը հետսոցիալիստական բոլոր երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, հնարավորություն տվեց հարստություն կուտակելու և՛ վարկառու ձեռնարկությունների ղեկավարությանը, և՛ վարկերը բաշխող կոռումպացված չինովնիկությանը, և՛ միջնորդ առևտրային բանկերին:

⁶² ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 1998, էջ 172:

⁶³ Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան, 2001, էջ 68:

⁶⁴ B. Granvill, The Success of Russian Economic Reforms, London. The Royal Institute of International Affairs, 1995, p. 67.

Այսօր Հայաստանում բնակչության զգալի մասը աղքատանում է ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի բարձր տոկոսադրույքների պատճառով (տարեկան 22-24 %): Անկախացումից մինչև այսօր ահավոր բարձր տոկոսադրույքներով վարկերը բնակչության ուղղակի ունեզրկման, բնակելի տների և գույքի բռնագրավման դաժան միջոց են:

Հայաստանում տնտեսական բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացի արդյունքների վերաբերյալ 1999 թ.-ի փետրվարին ակադեմիկոս Գ. Պողոսյանի ղեկավարությամբ ուշագրավ սոցիոլոգիական հարցում անցկացվեց: «Ձեր կարծիքով տնտեսական բարեփոխումներն ընդհանուր առմամբ օժանդակե՞լ են Հայաստանի տնտեսության զարգացմանը» հարցին հարցվողների 34.1 %-ը պատասխանել է, որ բարեփոխումները ոչնչով չեն օժանդակել երկրի տնտեսությանը, 39.3 %-ը՝ պատասխանել է, որ դրանք նույնիսկ վատթարացրել են իրադրությունը: Փաստորեն՝ հարցվողների երկու երրորդը (73.4 %-ը) ժխտել է բարեփոխումների դրական ազդեցությունը:⁶⁵

«Բարեփոխումների» արդյունքում 1991-2000 թթ.-ին Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունը հայտնվեց սոցիալ-տնտեսական ճգնաժամային լուրջ ցնցումների և հիմնախնդիրների մեջ: Մինչև 1994 թ.-ը տնտեսական զարգացումներն ընթացել են տնտեսական կտրուկ անկման պայմաններում: 1994 թ.-ից հետո ձեռք բերված որոշ կայունությունը չդարձավ տնտեսական դինամիկ, համաչափ զարգացման հիմք, քանի որ մակրոտնտեսական և հատկապես կառուցվածքային անհամամասնությունները ոչ միայն չհաղթահարվեցին, այլև ավելի խորացան: 1990 թ.-ին արտաքին պարտք չունեցող Հայաստանը 1995 թ.-ին կուտակել էր 372.6 մլն ԱՄՆ դոլարի, 2000 թ.-ին՝ 859.5 մլն ԱՄՆ դոլարի արտաքին պարտք: 1995-2001 թթ.-ին ՀՆԱ-ի նկատմամբ արտաքին պարտքը 29 %-ից աճել է մինչև 43 %:⁶⁶ Հայաստանի պետական պարտքը (կառավարության արտաքին ու ներքին պարտքը ու ԿԲ պարտքը) 2017 թ.-ի արդյունքներով

⁶⁵ Գ. Պողոսյան, Հայ հասարակությունը XXI դարասկզբին, Երևան, 2006, էջ 125:

⁶⁶ ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 1998:

ակնկալվում է 6 մլրդ 277 մլն չափով (ՀՆԱ-ի 55.1 %-ը): Պետական պարտքի 83.1 %-ը արտաքին պարտքն է: 2017 թ.-ին Հայաստանի արտաքին պարտքը կհասնի 5 մլրդ 217 մլն դոլարի (ՀՆԱ-ի 45.8 %-ը)⁶⁷, որի ընթացիկ սպասարկման ծավալները մոտեցել են կառավարելիության ռիսկային սահմաններին:

⁶⁷ <https://news.am/arm/news/354573.html>

ԳԼՈՒԽ 3. Հարստության և եկամուտների բեռնացված բաշխումը և Հայաստանի բնակչության զանգվածային աղքատացումը

3.1 Բաշխման հարաբերությունները Հայաստանի անցումային տնտեսությունում

Տնտեսական հարաբերությունների համակարգում բնակչության եկամուտների ձևավորման և փոփոխության վրա ամփոփականորեն և ամենից շատ ազդում են բաշխման ու վերաբաշխման հարաբերությունները: Այդ պատճառով անցումային տնտեսությունում ևս խնդրի քննարկումը պետք է սկսել դրանից: 1990-ականներին անցումային տնտեսությամբ երկրներում բաշխման և վերաբաշխման գործընթացները ընթացան կենսամակարդակի շերտավորման աճի ուղղությամբ, որի արդյունքում վերջինս բացառիկ կոշտ ձևեր ընդունեց՝ զուգակցվելով բնակչության հիմնական զանգվածի աղքատացման գործընթացների հետ: Այսօր այս երկրներում բնակչության կենսամակարդակի բեռնացման գործոնը գնալով ավելի մեծ կարևորություն է ձեռք բերում, քանի որ զգալի չափով որոշում է ինչպես տնտեսական առաջընթացի տեմպերը, այնպես էլ՝ հասարակության սոցիալ-հոգեբանական մթնոլորտը:⁶⁸

⁶⁸ Գ. Ղարիբյան, Ա. Խառատյան, Անցումային տնտեսության բաշխման հարաբերությունները և բնակչության կենսամակարդակի շերտավորման ու սոցիալական արդարության հիմնախնդիրները, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, N 1(109), էջ 43:

Բաշխման հարաբերությունները դասական տնտեսագետների կողմից դիտարկվել են որպես տնտեսական հարաբերությունների մաս: Կ. Մարքսը բաշխման հարաբերությունները համարում էր արտադրական հարաբերությունների շրջված երեսը: «Քաղաքատնտեսության բննադատության շուրջը» աշխատությունում նա բաշխումը դիտարկում է որպես հասարակական վերարտադրության չորս (արտադրություն, բաշխում, փոխանակություն, սպառում) օղակներից մեկը: Արտադրությունը և սպառումը վերարտադրության չորս փուլերից հիմնականն են, որտեղ արտադրությունը ելակետայինն է, իսկ սպառումը՝ եզրափակիչը: Դրանք իրենց նշանակությամբ այնքան են նույնական, որ առանց մեկի մյուսը լինել չի կարող: Այդ պատճառով դասականները հաճախ նշում էին, որ արտադրությունը սպառում է, իսկ սպառումը՝ արտադրություն: Սակայն շուկայական տնտեսության համակարգում որքան էլ կարևորվեն արտադրությունը և սպառումը, արտադրված արդյունքը մինչև չբաշխվի և չփոխանակվի, չի կարող սպառվել և նոր արդյունքի վերարտադրություն սկսվել: Ընդ որում՝ արտադրողի կողմից սպառվող բարիքի չափը որոշվում է ոչ միայն արտադրված արդյունքի քանակով, այլ նաև՝ բաշխման հարաբերություններով, տնտեսական կյանքի վերարտադրության, մասնավորապես բաշխման օրենքներով: Ստեղծված նոր արդյունքը՝ ազգային եկամուտը, վերջին հաշվով տրոհվում է անհրաժեշտ և հավելյալ արդյունքների, սպառման և կուտակման ֆոնդերի: Այդ բաժանումը հատուկ է հասարակական վերարտադրության բոլոր ժամանակներին, տնտեսական բոլոր համակարգերին: Սակայն նոր ստեղծված արդյունքի անհրաժեշտ և հավելյալ մասերի բաժանման բնույթը տարբեր է, հաճախ՝ խաբուսիկ: Այսպես, Կ. Մարքսը «Կապիտալի» առաջին հատորում, անդրադառնալով նոր ստեղծված արդյունքի անհրաժեշտ և հավելյալ մասերի բաժանման պարտադիր լինելուն, նշել է, որ հաճախ սեփականատիրական և տնտեսական հարաբերությունները քողարկում են այդ բաժանումը. «Կոռալին աշխատանքի ժամանակ կոռավարի այն աշխատանքը, որ նա կատարում է հենց յուր համար, ու պարտադիր աշխատանքը, որ կատարում է կալվածատիրոջ համար, իրարից տարբերվում էին տարածականորեն և

ժամանակապես, շոշափելիորեն զգալի կերպով: Ստրկական աշխատանքի ժամանակ աշխատօրվա նույնիսկ այն մասը, որի ընթացքում ստրուկը լոկ փոխհատուցում է յուր անձնական կենսամիջոցների արժեքը և այդ միջոցին ուրեմն նա հենց յուր համար է աշխատում, իրոք թվում է իբրև տիրոջ համար կատարված աշխատանք: Նրա ամբողջ աշխատանքն անվճար աշխատանք է թվում: Վարձու աշխատանքի ժամանակ, ընդհակառակը, մինչև անգամ հավելյալ աշխատանքը կամ անվճար աշխատանքը վճարված աշխատանք է թվում»:⁶⁹

Շուկայական տնտեսության համակարգում անհրաժեշտ արդյունքը հիմնականում դրսևորվում է աշխատավարձի ձևով, իսկ հավելյալ արդյունքը՝ շահույթի, ռենտայի և տոկոսի:

Այժմ տեսնենք, թե ինչպես, ինչ օրենքներով ու գործոններով են որոշվում «անհրաժեշտ արդյունքի»՝ աշխատավարձի չափերը շուկայական տնտեսական համակարգում ընդհանրապես, առանձին երկրներում՝ մասնավորապես: Ուշադրության են արժանի տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Ադաջանյանի «Տնտեսագիտության տեսություն» ուսումնական ձեռնարկում արտադրված բարիքներն ըստ արտադրության գործոնների սեփականատերերի միջև բաշխման վերլուծությունը և գնահատումը: Հիմք ընդունելով ամերիկյան նշանավոր տնտեսագետներ Պ. Սամուելսոնի և Կ. Ռ. Մակքոնեյի մեթոդաբանությունը՝ հեղինակը արտադրված բարիքների բաշխման շուկայական մոդելում խիստ կարևորել է արտադրության գործոնների կամ տնտեսական ռեսուրսների դերը: Նա գրում է. «Ստեղծված բարիքները բաշխվում են արտադրության գործոնների սեփականատերերի միջև ըստ դրանց օգտագործման արդյունավետության: Սա նշանակում է, որ աշխատողը ձգտում է անընդհատ բարձրացնել իր աշխատանքի արտադրողականությունը: Եթե աշխատողը միավոր ժամանակում ավելի շատ արտադրանք է թողարկում, ապա նրա վարձատրության չափն էլ մեծ կլինի: Նույնը վերաբերում է կապիտալի, հողի սեփականատերերին և ձեռներեցնե-

⁶⁹ Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1933, էջ 507:

րին: Նրանցից յուրաքանչյուրը սեփական եկամտի ավելացման նպատակով ձգտում է մեծացնել իր ռեսուրսի արտադրողականությունը: Այսինքն, տեղի է ունենում բարիքների բաշխում՝ ըստ ռեսուրսների օգտագործման արդյունավետության»:⁷⁰ Մնում է ավելացնել, որ բարիքների բաշխումը կախված է, իհարկե, հիմնականում ռեսուրսների օգտագործման արդյունավետությունից, բայց չի կարելի անտեսել նաև օգտագործվող ռեսուրսի մեծությունը, ծավալը:

Քանի որ քննարկման առարկան բնակչության եկամուտների բաշխումն ու վերաբաշխումն է, ապա ելակետային հարցը, անշուշտ, աշխատավարձի մեծության, նրա շարժման, փոփոխության օրինաչափությունների բացահայտումն է: Վաղ շրջանի դասական տնտեսագետներից Վ. Պետտին գտնում էր, որ աշխատավարձը, հողի վարձավճարը և շահույթը որոշվում են տնտեսական օրենքներով, այլ ոչ թե քաղաքական որոշումներով: Վ. Պետտիի դրույթները բանվորների, դրամական կապիտալի սեփականատերերի ու հողատերերի եկամուտների մասին տեսական հետազոտությունների հիմք հանդիսացան դասական դպրոցի հաջորդ շատ ներկայացուցիչների համար: Հետևելով Վ. Պետտիին՝ Ա. Սմիթը, Դ. Ռիկարդոն և Թ. Մալթուսը աշխատավարձը բնութագրել են որպես բանվորի աշխատանքի գին, որը ներկայացնում է բանվորի և նրա ընտանիքի գոյության համար կենսամիջոցների գինը: Վ. Պետտին հանդես եկավ աշխատավարձի նվազագույն մեծության օրենքի կողմնակցի դիրքերից: Նա նշում էր, որ ապրանքների գների բարձրացմամբ հասարակությունում աշխատավարձի մակարդակի բարձրացման անհրաժեշտություն կառաջանա: Սակայն Վ. Պետտին անբույլատրելի էր համարում աշխատավարձի չափից ավելի բարձրացումը և գերազանցումն անհրաժեշտ կենսամիջոցների արժեքի նվազագույնի մակարդակից: Այս պարագայում, ըստ Պետտիի, տեղի կունենար կատարվող աշխատանքի ծավալի նվազում: Ձեռնարկատերերի և հողատերերի եկամուտները Վ. Պետտիի կողմից բնութագրվում են նրանց կողմից միասնականացված «ռենտա» հասկացության միջոցով՝ դրանով փո-

⁷⁰ Հ. Աղաջանյան, Տնտեսագիտության տեսություն, մաս I, Երևան, 2009, էջ 51:

խարհներով այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են ֆերմերի շահույթը և փոխատվական տոկոսը:⁷¹

Ֆիզիոկրատների դպրոցի հիմնադիր Ֆրանսուա Զենեն, որն առաջինն անդրադարձավ հասարակության տարբեր շերտերի մասնակցությանը ազգային հարստության ստեղծմանը, հաստատում էր, որ ազգը բաղկացած է երեք՝ արտադրողների, սեփականատերերի և անպտուղների դասակարգից, որոնք տարբեր կերպ են մասնակցում ազգային համախառն արդյունքի ստեղծմանը, բաշխմանը և ստանում համապատասխան եկամուտներ:⁷²

Ըստ Ա. Սմիթի՝ տարեկան արդյունքը եկամուտների ձևով բաշխվում է երեք դասակարգերի՝ բանվորների, կապիտալիստների և հողատերերի միջև: Աշխատավարձը Ա. Սմիթի դիտարկումներում գտնվում էր ուղիղ կախվածության մեջ երկրի ազգային հարստության մակարդակից և կապիտալի կուտակման տեմպերից: Եթե տեղի էր ունենում կապիտալի կուտակման տեմպերի աճ, և աշխատանքի նկատմամբ պահանջարկը գերազանցում էր առաջարկը, տնտեսությունում հաստատվում էր աշխատավարձի նվազագույն մակարդակից բարձր աշխատավարձ: Այսպիսով՝ նա ժխտեց մինչև կենսանվազագույնի մակարդակը աշխատավարձի մեծության իջեցման օրինաչափությունը: Ի տարբերություն Վ. Պետտիի՝ Սմիթը գտնում էր, որ բարձր աշխատավարձի առկայության ժամանակ կգտնվեն ավելի գործունյա, ջանասեր և խելամիտ բանվորներ, քան ցածր աշխատավարձի դեպքում: Շահույթը՝ որպես կապիտալի եկամուտ, որոշվում է շրջանառության մեջ գտնվող (սպառվող) կապիտալի արժեքով: Նրա կարծիքով՝ շահույթը իր կապիտալը ռիսկի ենթարկող ձեռնարկատիրոջ եկամուտն է:⁷³ Խոսքը, անշուշտ, տնտեսական շահույթի մասին է:

Արտադրության գործոնների տեսության հիմնադիր Ժ. Բ. Սեյը սահմանեց, որ արտադրության յուրաքանչյուր գործոն, մասնակցե-

⁷¹ Антология экономической классики, т. 1, Москва, 1992, стр. 91.

⁷² Ф. Кенэ, Избранные экономические произведения, Москва, 1960, стр. 360.

⁷³ А. Смит, Исследование о природе и причинах богатства народов, Москва, 1962, стр. 331-333.

լով արտադրության գործընթացին, իր տիրոջը բերում է տվյալ գործոնի ծախսերին համապատասխան եկամուտ: Մեյը գտնում էր, որ աշխատավարձը պարզև է, որը տրվում է աշխատողին՝ աշխատանքային ծառայությունների դիմաց, ռենտան՝ հողի ծառայությունների դիմաց, իսկ շահույթը, ըստ նրա, բաժանվում է երկու մասի. մի մասը հանդես է գալիս որպես ձեռնարկատիրական եկամուտ, որը պարզև է ձեռնարկատիրական գործունեության, ռիսկի, տաղանդի և այլնի համար, մյուս մասն էլ տոկոսի տեսքով տրվում է կապիտալի մատուցած ծառայությունների դիմաց:⁷⁴

Աշխատավարձի տեսությունը յուրովի մեկնաբանեց և զարգացրեց Կ. Մարքսը: Եթե մինչ այդ բոլոր դասականները աշխատավարձը դիտում էին որպես աշխատանք ռեսուրսի գին, ապա Կ. Մարքսը աշխատանքը սահմանազատեց աշխատուժից, և աշխատավարձը համարեց աշխատուժ ռեսուրսի գինը: Դա միանգամայն նոր մոտեցում էր, և հենց դա է ընկած նրա հավելյալ արժեքի տեսության հիմքում: Ինչ վերաբերում է աշխատավարձի մեծությանը, դրա վրա ազդող գործոններին, ժամանակի մեջ դրա փոփոխություններին, ապա «Կապիտալի» առաջին հատորում շարադրված է մի ամբողջ քննական տեսություն: Ընդգծվում է, որ աշխատավարձը աշխատուժ ռեսուրսի արժեքը կամ գինն է: Հետևաբար նրա մեծությունը «որոշվում է այն աշխատաժամանակով, որն անհրաժեշտ է այդ առանձնահատուկ ապրանքի արտադրության, ուրեմն և վերարտադրության համար»:⁷⁵ Ավելի կոնկրետ՝ «աշխատուժի արժեքը այն կենսամիջոցների արժեքն է, որոնք անհրաժեշտ են աշխատուժի տիրոջ գոյությունը պահպանելու համար»:⁷⁶ Քանի որ աշխատուժի տերը՝ բանվորը, մահկանացու է, աշխատուժի արժեքը՝ աշխատավարձը, ներառում է նաև այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են բանվորի և իր ընտանիքի պահպանման և վերարտադրության համար: Բանվորի կրթության և որակավորման բարձրացման, ինչպես նաև բանվորի սոցիալական պահանջմունքների բավարարման համար ծախսերը Կ. Մարքսը ևս

⁷⁴ М. Блауг, Экономическая мысль в ретроспективе, Москва, 1994, стр. 137, 148.

⁷⁵ Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1933, էջ 136:

⁷⁶ Նույն տեղում:

ներառում է աշխատուժի արժեքի՝ աշխատավարձի մեջ: Մարքսը բացահայտեց նաև աշխատավարձի փոփոխության հակասական միատումները՝ կախված հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացումից և կենսամիջոցների նկատմամբ բանվորի ընտանիքի պահանջմունքների աճից: Հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացումը, իջեցնելով կենսամիջոցների արժեքը, նպաստում է աշխատուժի արժեքի, հետևաբար և աշխատավարձի մակարդակի իջեցմանը, իսկ հասարակական կյանքի առաջընթացով պայմանավորված պահանջմունքների աճը, ընդհակառակը, նպաստում է աշխատուժի արժեքի, հետևաբար նաև աշխատավարձի աճին:

Ամերիկացի տնտեսագետ Ջ. Կլարկի «Հարստության բաշխումը» գրքում նշվում է, որ արտադրությանը մասնակցում են չորս գործոն՝ կապիտալը փողի տեսքով, կապիտալ բարիքները՝ արտադրության միջոցներն ու հողը, ձեռնարկատիրական գործունեությունը և բանվորների աշխատանքը: Ըստ Ջ. Կլարկի՝ արտադրության յուրաքանչյուր գործոն ունի յուրահատուկ արտադրողականություն և կատարյալ մրցակցության պայմաններում նրանցից յուրաքանչյուրը կարող է ապահովել իր ներդրմանը համապատասխան եկամուտ: Կապիտալը բերում է տոկոս, կապիտալ բարիքները՝ ռենտա, ձեռնարկատիրական գործունեությունը՝ ձեռնարկատիրական շահույթ, աշխատանքը՝ աշխատավարձ:⁷⁷

20-րդ դարի մեծ տնտեսագետ Ջ. Քեյնսը ամբողջական տեսություն գարգացրեց պետության կողմից բնակչության եկամուտների վերաբաշխման վերաբերյալ: Ջ. Քեյնսը մակրոտնտեսական մակարդակում տնտեսական անկայունության և ցնցումների պատճառներից մեկը համարում էր շուկայական տնտեսության լրիվ զբաղվածության մշտական ապահովման անկարողությունը: Ըստ Քեյնսի՝ պետության վերաբաշխման լծակներով հասարակության անդամների միջև եկամուտների առավել հավասարաչափ և արդյունավետ բաշխումը կհանգեցնի բնակչության ամբողջական սպառման աճին:

⁷⁷ Б. Кларк, Распределение богатства, Москва, 1934, стр. 41-43.

Ժամանակակից տնտեսագիտությունը աշխատավարձը դիտում է որպես աշխատանք ռեսուրսի գին, որը կոնկրետ դրսևորվում է աշխատաշուկայում՝ կախված աշխատանքի նկատմամբ շուկայական առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունից: Հասկանալի է, որ տնային տնտեսությունների պահանջմունքների բավարարման գործում պետք է հիմք ընդունել իրական աշխատավարձը: Ինչ վերաբերում է աշխատավարձերի տարբերակմանը, ապա, բացի աշխատանքի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունից, դրա վրա ազդում են մի շարք գործոններ, մասնավորապես աշխատանքի մասնագիտական որակավորման մակարդակը: Բարձր որակավորում ստանալու համար ընտանիքը որոշակի ծախսեր է կատարում, իսկ ապագա աշխատողը ուսումնառության մեծ ջանքեր է ներդնում, որոնք հատուցվում են բարձր աշխատավարձով: Կան աշխատանքներ, որտեղ պահանջվում են ոչ միայն գիտելիքներ, այլ նաև մեծ լարվածություն և հմտություն, որոնք մույնպես փոխհատուցվում են բարձր աշխատավարձով: Կան առողջության համար վտանգավոր, անհրապույր և ծանր աշխատանքներ, որոնց կատարման համար հասարակությունը հարկադրված է բարձր աշխատավարձ վճարել, հակառակ դեպքում այդ ոլորտները անհնարին կլինի աշխատողներով ապահովել:

Վարչաիրամայական տնտեսաձևից շուկայական տնտեսությանն անցնելու հետևանքով տնտեսական մոդ հարաբերությունների ձևավորումը պայմանավորեց անցումային տնտեսության մոդ բաշխման հարաբերությունների կայացումը: Սոցիալ-տնտեսական մոդ պայմաններում էապես փոխվեցին նաև բնակչության եկամուտների աղբյուրները, տեսակները և կառուցվածքը: Այդ փոփոխությունները հավաքական ձևով իրենց արտահայտությունն են գտնում տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի կառուցվածքում: Հաստատանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը տնային տնտեսությունների հետազոտություն անցկացնելու նպատակով մշակել է տնային տնտեսությունների եկամուտների բոլոր տեսակների գնահատման և հաշվարկման մեթոդաբանությունը: Նշվում է, որ «Տնային տնտեսությունների եկամուտների ներքո հաս-

կացվում են դրամական և բնամթերքով ստացված բոլոր եկամուտները (ըստ աղբյուրների), ինչպես նաև՝ սոցիալական աջակցության բոլոր տեսակները, մասնավոր տրանսֆերտները, նվերները, սեփականության և անշարժ գույքի վաճառքից ստացված եկամուտները, օգտագործված խնայողությունները և այլն: Տնային տնտեսության ամբողջական եկամուտները կազմված են դրամական եկամուտների բոլոր հոդվածներից և այնպիսի ոչ դրամական եկամուտներից, ինչպիսիք են տնային տնտեսության կողմից սպառվող (օգտագործվող) սեփական տնտեսությունից ստացված սննդամթերքը՝ դրամական արտահայտությամբ, ինչպես նաև՝ բարեկամներից կամ այլ անձանցից անվճար ստացված ոչ պարենային ապրանքները և ծառայությունները»:⁷⁸

Մեկ նկատառում: Անցումային տնտեսական համակարգում, ցավոք, մեծ են ստվերային տնտեսության չափերը: Հայաստանում 1997 թ.-ին դրանք հասան բարձր մակարդակի՝ կազմելով ՀՆԱ-ի 66.3 %-ը⁷⁹: Դրանով պայմանավորված՝ Հայաստանում այդ տարիներին տնային տնտեսությունների եկամուտների շուրջ 1/3-ը ստվերային բնույթ ուներ, որը վերը նշված եկամուտների հաշվարկման մոդելում չի արտացոլվել: Ընդ որում, ստվերայնությունն առավել բնորոշ էր քաղաքային տնային տնտեսություններին, որոնց եկամուտների շուրջ 50 %-ը ստվերային բնույթի էր:

Այժմ ծանոթանանք Հայաստանի Հանրապետության տնային տնտեսությունների եկամուտների տեսակներին և ամբողջական եկամուտների կազմում դրանց տեսակարար կշռին:

Շուկայական հարաբերություններին անցնելու հետևանքով էապես փոխվում են բնակչության եկամուտների աղբյուրները, դրանց տեսակները և փոփոխության միտումները, այդ բոլորի արդյունքում՝ եկամուտների և հատկապես ծախսերի կառուցվածքը:

⁷⁸ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2010, էջ 113:


⁷⁹ Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան, 2001, էջ 80:

Աղյուսակ 3.1. 1998-1999 թթ. ՀՀ տնային տնտեսությունների ընթացիկ դրամական եկամուտների կառուցվածքն ըստ աղբյուրների⁸⁰

Դրամական եկամուտների տեսակները	տոկոսներով
Ընդամենը դրամական եկամուտներ, այդ թվում՝	100
վարձու աշխատանքից	24.6
ինքնագլխավորությունից	10.8
գյուղմթերքների և անասունների վաճառքից	32.1
սեփականությունից (վարձակալական վճար, տոկոս, դիվիդենտ)	0.1
պետական նպաստներ և բոշակներ	9.3
տրանսֆերտներ, որից՝	19.1
օգնություն հայաստանաբնակ բարեկամներից	6.5
օգնություն Հայաստանից դուրս բնակվող բարեկամներից	12.6
այլ եկամուտներ	4.0

Պլանային տնտեսությամբ բնորոշ եկամուտների որոշ տեսակներ ուղղակի վերացան, և ձևավորվեցին դրամական եկամուտների նոր տեսակներ: 1990-ական թվականների առաջին տասնամյակում աշխատավարձը դադարել էր տնային տնտեսության հիմնական եկամուտ լինելուց, իսկ մասնավոր սեփականությունը դեռ չէր դարձել եկամտի կարևոր աղբյուր: Այդպիսիք դարձել էին գյուղմթերքների և անասունների վաճառքից ստացված եկամուտները, հատկապես տրանսֆերտները: Այդ փոփոխություններն իրենց արտացոլումը գտան Աղյուսակ 3.1-ում, որտեղ ներկայացված ծավալում մոդելը հիմնականում ներառում է տնային տնտեսությունների բոլոր եկամուտներն իրենց աղբյուրներով, դրսևորման ու ստացման ձևերով և 1990-ականների անցումային տնտեսության բաշխման հարաբերությունների հայելի է: Աղյուսակից երևում է, որ 1998-1999 թթ.-ին ՀՀ տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն գյուղմթերքների և անասունների վաճառքից ստացվող եկամուտները՝ 32.1 %:

⁸⁰ Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղբյուրությամբ, Երևան, 2001, էջ 14:



Գծապատկեր 3.1. 2001 թ. ՀՀ տնային տնտեսությունների ընթացիկ դրամական եկամուտների կառուցվածքն ըստ հիմնական աղբյուրների⁸¹

Գծապատկեր 3.1-ը փաստում է, որ 2001 թ.-ին աշխատավարձը բնակչության եկամուտների կառուցվածքում արդեն կազմել է 31 % (1998-1999 թթ.՝ 24.6 %), գյուղմթերքների և անասունների վաճառքից ստացված եկամուտները՝ 15 % (1998-1999 թթ.՝ 32.1 %), տրանս-ֆերտները՝ 18 % (1998-1999 թթ.՝ 19.1 %)։

Աղյուսակ 3.2. ՀՀ տնային տնտեսությունների ընթացիկ դրամական ծախսերի կառուցվածքը 1998-1999 թվականներին (տոկոսներով)⁸²

Դրամական ծախսերի հոդվածները	տոկոսներով
Ընդամենը դրամական ծախսեր, այդ թվում՝	100
սննդամթերքի համար	67.0
ալկոհոլային խմիչքներ	1.4
ծխախոտ	6.4

⁸¹ Գ. Ղարիբյան, Ա. Խառատյան, Անցումային տնտեսության բաշխման հարաբերությունները և բնակչության կենսամակարդակի շերտավորման ու սոցիալական արդարության հիմնախնդիրները, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003 թ, N 1(109):

⁸² Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղբյուրայինը, Երևան, 2001, էջ 14:

ոչ պարենային ապրանքների համար	12.8
ծառայությունների դիմաց	12.4

Դիտարկենք նաև 90-ական թվականների տնային տնտեսությունների դրամական ծախսերի կառուցվածքը, որի համաձայն՝ դրամական ծախսերի 67.0 %-ը ուղղվում է սննդամթերք ձեռք բերելուն (Աղյուսակ 3.2):

Աղյուսակ 3.3. Հայաստանի տնային տնտեսությունների եկամուտների տեսակները 2004 և 2009 թվականներին
(մեկ շնչի հաշվով, միջին ամսական)⁸³

	դրամ		%	
	2004 թ.	2009 թ.	2004 թ.	2009 թ.
1.Դրամական եկամուտներ, այդ թվում՝	14450	28038	86.0	91.8
-վարձու աշխատանք	7009	15328	41.6	50.2
-ինքնագլխավորություն	1158	1534	6.8	5.0
-գյուղմթերքի և անասունի վաճառք	1603	1667	9.4	5.5
-սեփականություն (վարձակալության վճարներ, տոկոսավճարներ, շահաբաժիններ)	23	25	0.1	0.1
-պետական թոշակներ և նպաստներ	1962	5615	11.6	18.4
-տրանսֆերտներ, դրանցից՝	1817	2669	11.3	8.7
-Հայաստանում ապրող բարեկամներից	373	354	2.1	1.2
-Հայաստանից դուրս ապրողներից	1431	2315	8.2	7.5
-այլ եկամուտներ	878	1200	5.2	3.9
2.Ոչ դրամական եկամուտներ, այդ թվում՝	2406	2503	14.0	8.2
-սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից	2086	2230	12.2	7.3
-անվճար ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ	320	273	1.8	0.9
Ընդամենը ամբողջական եկամուտ	16856	30541	100	100

⁸³ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, Երևան, 2010, էջ 114:

Աղյուսակ 3.4. Հայաստանի տնային տնտեսությունների եկամուտների աղբյուրներն ըստ բնակավայրի տեսակի, 2004 և 2009 թվականներ (տոկոս) ⁸⁴,

	Քաղաքային բնակավայր		Գյուղական բնակավայր	
	2004 թ.	2009 թ.	2004 թ.	2009 թ.
1.Դրամական եկամուտներ, այդ թվում՝	93.1	96.1	71.6	80.6
- վարձու աշխատանք	52.9	60.8	20.0	26.5
- ինքնագրավածություն	8.1	5.9	5.3	3.2
-գյուղմթերքի և անասունի վաճառք	1.5	0.4	24.7	16.8
-սեփականություն	0.2	0.1	-	0.1
-պետական թոշակներ և նպաստներ	11.0	17.3	12.2	20.7
-տրանսֆերտներ, դրանցից՝	13.6	9.4	5.3	7.1
-Հայաստանում ապրող բարեկամներից	3.1	1.4	0.6	0.6
-Հայաստանից դուրս ապրողներից	10.5	8.0	4.7	6.5
-այլ եկամուտներ	5.8	2.2	4.1	6.2
2.Ոչ դրամական եկամուտներ, այդ թվում՝	6.9	3.9	28.4	19.4
-սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից	4.8	2.8	26.9	18.8
-անվճար ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ	2.1	1.1	1.5	0.6
Ընդամենը ամբողջական եկամուտ	100	100	100	100

2004 թ.-ի, առավել ևս 2009 թ.-ի՝ Հայաստանի Հանրապետության բնակչության եկամուտների կառուցվածքի փոփոխություններն ու միտումները փաստում են, որ նախ, արդեն գտնվում ենք շուկայական տնտեսական հարաբերությունների մոդելում, որտեղ աշխատավարձը և ընդհանրապես դրամական եկամուտները ոչ միայն գերակշռող են, այլև միտում ունեն աճելու, իսկ ոչ դրամական եկամուտները՝ նվազելու (Աղյուսակներ 3.3 և 3.4): Երկրորդ, անգամ վեց տարիների զարգացումներում նկատելի է պետական թոշակների և նպաստների տեսակարար կշռի որոշակի աճի միտումը ինչպես քա-

⁸⁴ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2008, էջ 89: Տե՛ս նաև Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2010, էջ 115:

դաքում, այնպես էլ՝ գյուղում, որն արդյունք է պետության սոցիալական քաղաքականության ոլորտի դրական զարգացումների: Երրորդ, տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքում արդեն մեծ չէ մասնավոր տրանսֆերտների բաժինը: Դրանք քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների եկամուտներում նվազման միտում ունեն (2004 թ.-ի 13.6 %-ից 2009 թ.-ին՝ 9.4 %), իսկ գյուղական բնակչության համար նկատելի է աճի միտումը (2004 թ.-ին՝ 5.3 %, իսկ 2009 թ.-ին՝ 7.1 %): Վերջինս արդյունք է գյուղական բնակավայրերից, մասնավորապես սահմանամերձ և բարձր լեռնային գոտիներից աշխատուժի զգալի արտագաղթի:

2015 թ.-ին Հայաստանում տնային տնտեսությունների եկամուտների բոլոր աղբյուրների մեջ ամենամեծ բաժինն ունի վարձու աշխատանքը (Աղյուսակ 3.5), որը կազմում է քաղաքային բնակավայրերում եկամուտների շուրջ 60.0 %-ը, իսկ գյուղական բնակավայրերում՝ շուրջ 38.0 %-ը:

Աղյուսակ 3.5. Տնային տնտեսությունների անվանական եկամուտների աղբյուրները 2008-2015 թվականներին
(մեկ շնչի հաշվով միջին ամսական)⁸⁵

	Քաղաքային բնակավայր				Գյուղական բնակավայր			
	դրամ		%		դրամ		%	
Տարիներ	2008	2015	2008	2015	2008	2015	2008	2015
1. Դրամական եկամուտներ, այլ թվում	30174	58607	96,8	97,9	20254	42103	78,0	88,1
վարձու աշխատանք	16068	35371	57,9	59,1	78881	17963	29,6	37,6
Ինքնագաղվածություն	3084	5675	9,9	9,5	1092	3468	4,1	7,3
գյուղմթերքի և կենդանիների վաճառք	201	233	0,6	0,4	4670	6698	17,6	14,0
սեփականություն (վարձակալու-	49	781	0,2	0,3	10	7	0,0	0,0

⁸⁵ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբյուրությունը, Երևան, 2016, էջ 115:

քյան վճարներ, տոնավաճառներ, շահութաբաժիններ)								
պետական թոշակներ և նպաստներ	5006	10033	16,1	16,8	4615	8049	17,3	10,8
տրանսֆերտներ, որից՝	3094	5248	9,9	8,7	1950	3792	7,3	7,9
Հայաստանում ապրող բարեկամներից	587	681	1,9	1,1	125	113	0,7	0,2
Հայաստանից դուրս ապրողներից	2507	4557	8,0	7,6	1755	3679	6,6	7,7
այլ եկամուտներ	672	1866	2,2	3,1	536	2126	2,1	4,5
2. Ոչ դրամական եկամուտներ, այլ թվում՝	686	908	2,2	1,5	5642	5550	21,6	11,9
սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից	686	908	2,2	1,5	5642	5550	21,6	11,6
անվճար ոչ պարենային ապրանքներ ու ծառայություններ	324	353	1,0	0,6	210	138	0,8	0,3
Ընդամենը եկամուտ	31,184	59867	7100	100	26606	17791	100	100

Քաղաքային, ինչպես նաև գյուղական բնակավայրերում դրամական եկամուտների երկրորդ աղբյուրը պետական թոշակներն ու նպաստներն են (16-17 %), ինչպես նաև տրանսֆերտները (8-10 %): Ինչ վերաբերում է ոչ դրամական եկամուտներին, ապա Աղյուսակ 3.5-ից երևում է, որ 2015 թ.-ին դրանց տեսակարար կշիռը քաղաքում կազմել է 2.1 %, իսկ գյուղական բնակավայրերում՝ շուրջ 12 %:

Այսպիսով՝ Աղյուսակներ 3.1-3.5-ի վերլուծությունը ցույց տվեց տնային տնտեսությունների եկամուտների աղբյուրների բազմազանությունը և եկամուտների կառուցվածքում դրանց փոփոխության մի-

տումները: Այստեղից կարող ենք ասել, որ աղքատությունը հաղթահարելու համար տնային տնտեսությունների եկամուտների աճի աղբյուրները և ուղիները ևս բազմազան են. մի իրողություն, որը պահանջում է սոցիալական քաղաքականության հստակ ուղիներ ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների կենսամակարդակի բարձրացման գործում:

Աղքատություն ծնող կարևոր պատճառներից մեկը տնային տնտեսությունների միջև եկամուտների անհավասար բաշխումն է: Հնարավոր է, որ երկիրն ունենա բարձր տնտեսական աճ, բայց աղքատության հաղթահարման վրա դրա ազդեցությունն աննշան լինի, եթե եկամուտները խիստ անհավասար են բաշխվում տնային տնտեսությունների միջև, եթե տնտեսական աճի պտուղներից օլիգարխները և ընդհանրապես հարուստները շատ են օգտվում, իսկ աղքատները՝ աննշան չափերով:

Աղյուսակ 3.6-ի տվյալները ցույց են տալիս, որ 2004 և 2009 թթ.-ին, ըստ դեցիլային խմբերի, տնային տնտեսությունների դրամական եկամուտների կառուցվածքը զգալի չափերով տարբերակվում է:

Այսպես, I դեցիլային խմբում փոքր է աշխատանքից ստացվող եկամուտը (13.0 %՝ 2004 թ.-ին և 8.5 %՝ 2009 թ.-ին), բայց մեծ՝ թոշակների և նպաստների (45.7 % և 51.5 %), ինչպես նաև՝ գյուղամթերքների վաճառքից եկամուտների բաժինը (21.9 % և 14.5 %), մինչդեռ X դեցիլային խմբում, ընդհակառակը, մեծ է աշխատանքից եկամուտի բաժինը (61.4 % և 68.4 %) և փոքր՝ թոշակների և նպաստների (3.8 % և 10.1 %), ինչպես նաև՝ գյուղամթերքի վաճառքից ստացվող եկամուտների բաժինը (8.1 % և 6.4 %): X դեցիլային խմբում մեծ է նաև տրանսֆերների բաժինը (19.0 % և 12.5 %):

**Աղյուսակ 3.6. Հայաստանի տնային տնտեսությունների դրամական
եկամուտների կառուցվածքն ըստ դեցիլային խմբերի 2004 և 2009
թվականներին**
(մեկ շնչի հաշվով, միջին ամսական)⁸⁶

	դեցիլային խմբեր	տարիներ	դրամական եկամուտներ	Գրամական եկամուտներ, այդ թվում					այլ եկամուտներ	
				աշխատանքից	թոշակներ, նպատներ, կրթաթոշակներ	եկամուտներ՝ գյուղմթերքի վաճառքից	տրամաֆերտներ	որից		
								Հայաստանում ապրող բարեկամներից		Հայաստանից դուրս ապրող բարեկամներից
I	2004	100	13.0	45.7	21.9	6.9	3.2	3.7	12.5	
	2009	100	8.5	51.5	14.5	6.0	1.9	4.1	19.6	
V	2004	100	49.9	23.9	12.3	7.4	1.7	5.7	6.5	
	2009	100	54.8	25.6	6.6	8.3	1.5	6.8	4.7	
X	2004	100	61.4	3.8	8.1	19.0	3.3	15.6	7.7	
	2009	100	68.4	10.1	6.4	12.5	1.4	11.1	2.6	

Հայաստանում, ըստ դեցիլային խմբերի, եկամուտների նման անհավասարաչափ բաշխվածությունը պայմանավորված է աշխատավարձի տարբերակված բաշխմամբ, տնային տնտեսությունների կազմով, երեխաների թվով, ինչպես նաև դրսից ստացվող տրամաֆերտների ոչ համաչափ մակարդակներով:

⁸⁶ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, Երևան, 2010, էջ 120-121:

Աղյուսակ 3.7. Գրամական անվանական եկամուտների շարժն ըստ տնային տնտեսությունների դրամական եկամուտների դեցիլային խմբերի 2004 և 2015 թվականներին

(մեկ շնչի հաշվով, միջին ամսական, դրամով)⁸⁷

	Դեցիլային խմբեր ըստ դրամական եկամուտների									
2004 թ.	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
Դրամական եկամուտները	2260	4395	6189	8017	9869	11903	14337	17882	23793	47061
այլ թվում՝ եկամուտներ՝ աշխատանքից	294	959	2029	3384	4929	6323	8105	11498	15944	28881
թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	1032	1872	2175	2094	2357	2315	2190	2059	1921	1771
եկամուտներ՝ գյուղ-մթերքի վաճառքից	495	810	909	1282	1213	1683	1775	1867	3211	3823
տրանսֆերտներ	157	188	444	592	728	1000	1582	1875	2840	8933
որից Հայաստանում ապրող բարեկամներից	73	90	160	214	169	344	353	318	567	1602

⁸⁷ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատուրությունը, Երևան, 2016, էջ 116, 118:

Հայաստանից դուրս ապրող բարեկամներից	84	98	284	378	559	656	1229	1539	2223	7331
այլ եկամուտներ	282	566	632	665	642	582	685	601	777	3653
2015 թ.										
դրամական եկամուտներ	10299	19082	25414	31424	37664	43682	50708	60711	76501	168604
այդ թվում՝ եկամուտների՝ աշխատանքից	1278	6743	12053	17175	22168	25230	30965	38818	53268	128878
թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	9845	6853	7159	8080	10127	12671	11410	11079	9910	107220
եկամուտների՝ գույքի վաճառքից	1234	2447	2637	2031	1726	1334	1928	1958	2475	8980
տրանսֆերտներ	526	1097	1665	2395	1857	3114	3949	7227	8692	16176
որից՝ Հայաստանում ապրող բարեկամներից	86	255	217	515	219	60	337	918	963	1096
Հայաստանից դուրս	440	842	1427	1850	1637	3050	3612	6308	7729	7538

ապրող բարե- կամե- րից										
այլ եկա- մուտներ	2316	1942	1500	43	1786	1333	2456	1629	2156	3550

Աղյուսակ 3.7-ի տվյալները ներկայացնում են տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով ամսական անվանական եկամուտների շարժն ըստ դեցիլային խմբերի 2004 և 2015 թթ.-ին և հավաստում, որ Հայաստանի Հանրապետությունում անկախության տարիներին, ընդհուպ մինչև 2015 թ.-ը, տնային տնտեսությունների միջին ամսական մեկ շնչի հաշվով եկամուտները բավականին անհավասար են բաշխվել: Եթե 2004 թ.-ին 10-րդ դեցիլային խմբի տնային տնտեսությունների շնչային եկամուտները շուրջ 21 անգամ (20.8) գերազանցում էին 1-ին դեցիլային խմբում գտնվող տնային տնտեսությունների շնչային եկամուտների մակարդակը, ապա 2015 թ.-ին այդ տարբերությունները կրճատվել են և կազմել 16.3 անգամ: Դա, անշուշտ, դրական միտում է, սակայն մեր օրերում 16 անգամ տարբերությունը շատ մեծ է, որը սոցիալական անարդարությունների և կոռուպցիայի հետևանք է և հակազդում է Հայաստանի Հանրապետության աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացմանը, մասնավորապես արտագաղթի կանխման գերխնդրի լուծմանը:

Վերջին տասը տարիներին ՀՀ տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով եկամուտների բևեռացումը փաստում է, որ այն այսօր ևս մնում է խիստ անհանգստացնող: Եկամուտների նման մեծ բևեռացումը Հայաստանում առկա խորը աղքատության առաջացման հիմնական պատճառները մեկն է:

Ըստ դեցիլային խմբերի եկամուտների, մասնավորապես դրամական եկամուտների, տարբերակված բաշխման առանձնահատկությունների վերլուծությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն բնակչության կենսամակարդակի իրական վիճակի և զարգացումների հետազոտման, այլև պետության ճիշտ հասցեագրված ու նպա-

տակային սոցիալական քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար:

Բնակչության եկամուտների չափերը (մեկ շնչի հաշվով) և կառուցվածքը որոշակի ազդեցություն ունեն տնային տնտեսությունների սպառողական ծախսերի չափերի և կառուցվածքի վրա: Եկամուտները, վերջին հաշվով, ծախսումներով են դառնում սպառում, ինչը բնակչության կենսամակարդակի անմիջական ցուցանիշներից է: Ընդ որում՝ տնային տնտեսությունների սպառողական ծախսերի ցուցանիշներն առավել ճիշտ են արտացոլում բնակչության կենսամակարդակը և դրա փոփոխությունները, քանի որ դրանք եկամուտների համեմատ ավելի վստահելի են (եկամուտները հաճախ տարբեր պատճառներով թաքցվում են): Ըստ տնային տնտեսությունների հետազոտության վիճակագրական ծառայության մեթոդաբանության՝ տնային տնտեսությունների ծախսերն ունեն Աղյուսակ 3.8-ում ներկայացված տեսքը:⁸⁸

Տնային տնտեսությունների սպառողական ծախսերը չեն ներառում հարկերը, դրամահավաքները, պարտքերի մարումը, ալիմենտները, բարեկամներին օգնությունը, տուգանքները, վարկերի մարումը, ինչպես նաև տնային տնտեսությունների արտադրական գործունեության հետ կապված ծախսերը:

Աղյուսակ 3.8. Տնային տնտեսությունների ծախսերը

1. Պարենային ապրանքներ	2. Ոչ պարենային ապրանքներ	3. Ծառայություններ
-միս և մսամթերք -կաթ և կաթնամթերք	-հագուստ, կտորեղեն, կոշիկ	բնակարային (կոմունալ, կենցաղային)
-ծու		սպասարկման (առանց հեռախոսի)
-ծուկ և ձկնամթերք	-կահույք, գորգեր, -կենցաղային նշանակության ապրանքներ	-մշակութային, հանգստի և սպորտի

⁸⁸ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2010, էջ 123:

-շաքար և հիուշակեղեն	-հիգիենայի պարագաներ	-կրթության, ուսուցման և նախադպրոցական դաստիարակության
-կարագ և բուսական այլ յուղեր -կարտոֆիլ -բանջարաբուստանային այլ մշակաբույսեր -մրգեր, հատապտուղներ -հաց և հացամթերք	-տրանսպորտային միջոցներ և վառելիք	-բժշկական և առողջաբանային
-այլ մթերք	- ոչ պարենային այլ ապրանքներ	-տրանսպորտի և կապի:
-սնունդ՝ տնից դուրս		
-ալկոհոլային խմիչք		
-ծխախոտ		

Բնակչությունն ըստ որոշակի գործոնների (բնակավայրեր, գյուղ-քաղաք, մեկ շնչի հաշվով եկամուտներ և այլն) խմբավորելով՝ կարելի է ստանալ և վերլուծել եկամուտների ու ծախսերի գործառութային կախվածությունը և անհավասար բաշխվածության գնահատականը: Մենք կսահմանափակվենք՝ միայն արձանագրելով, որ շնչային եկամուտի և ծախսերի կառուցվածքի միջև գոյություն ունի որոշակի կախվածություն, այնպիսի կախվածություն, որ սպառողական ծախսերի կառուցվածքով հնարավոր է գնահատել տնային տնտեսությունների կենսամակարդակը, անգամ՝ եկամուտները: Որքան փոքր են տնային տնտեսությունների մեկ շնչին ընկնող եկամուտները, այնքան մեծ բաժին են կազմում պարենային ապրանքների ձեռքբերման վրա կատարած ծախսերը և համեմատաբար փոքր բաժին՝ ոչ պարենային ապրանքների ձեռքբերման, հատկապես ծառայությունների համար վճարված ծախսերը: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հաշվարկներով 2009 թ.-ին Հայաստանի տնային տնտեսությունների ծախսերը սննդի վրա կազմել են 51.1 %, ոչ պարենային ապրանքների ձեռքբերման ծախսերը՝ 15.5 %, ծառայությունների համար վճարումները՝ 28.8 %, ծխախոտի գնումը՝ 3.7 տոկոս, ալկոհոլային խմիչքների համար ծախսերը՝ 0.9 %⁸⁹:

⁸⁹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, Երևան, 2010, էջ 123:

**Աղյուսակ 3.9. Տնային տնտեսությունների սպառողական հիմնական
ծախսերի կառուցվածքն ըստ բնակավայրի 2004 և 2009 թվականներին
(մեկ շնչի հաշվով, միջին ամսական)⁹⁰**

	Քաղաքային բնակավայր				Գյուղական բնակավայր			
	դրամ		%		դրամ		%	
	2004	2009	2004	2009	2004	2009	2004	2009
Սպառողական ծախսեր, այդ թվում՝	20933	29119	100	100	16458	24916	100	100
սնունդ	11109	14221	53.1	48.8	10281	14003	62.5	56.2
ոչ պարենային ապրանքներ	2841	4390	13.6	15.1	2695	4112	16.4	16.5
ծառայություններ	5919	9173	28.2	31.5	2670	5644	16.2	22.7

Հայաստանի Հանրապետությունում 2004-2009 թթ.-ին, բնակչության եկամուտների աճով պայմանավորված, տնային տնտեսությունների ծախսերի կառուցվածքում առկա էին դրական տեղաշարժեր. փոքրացել էր սննդի վրա կատարված ծախսերի բաժինը և մեծացել ոչ պարենային ապրանքների և ծառայությունների ծախսերի բաժինը, որը բնակչության կենսամակարդակի համապատասխան բարձրացման արտացոլումն է:

Դրամական եկամուտների ու ծախսերի այդ զարգացումները և փոփոխությունները իրենց արտացոլումն են գտել տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքի հետազոտություններում: Աղյուսակ 3.9-ում ներկայացված է տնային տնտեսությունների հիմնական սպառողական ծախսերի կառուցվածքը գյուղ-քաղաք կտրվածքով:

Աղյուսակից հետևում է, որ 2004-2009 թթ.-ին.

- Հայաստանի տնային տնտեսությունների սպառողական ծախսերը բոլոր ուղղություններով որոշ չափով աճել են,
- սպառողական ծախսերի կառուցվածքում դեռևս մեծ են սննդի վրա կատարվող ծախսերը ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում,

⁹⁰ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, Երևան, 2010, էջ 125:

- դեռևս փոքր են ծառայությունների համար կատարվող ծախսերը, հատկապես գյուղական բնակավայրերում:

Աղյուսակ 3.10. Հայաստանի տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքը 2004 և 2015 թվականներին⁹¹

	Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական սպառողական ծախսերը			
	դրամ		%	
	2004 թ.	2015 թ.	2004 թ.	2015 թ.
սպառողական ծախսեր, այդ թվում՝	19251	42867	100	100
սնունդ, որից՝	10797	18705	56.1	43.6
սնունդ՝ տնից դուրս	227	540	1.2	1.3
ալկոհոլային խմիչքի գնում	163	237	0.8	0.6
ծխախոտի գնում	808	1414	4.2	3.3
ոչ պարենային ապրանքներ	2787	8074	14.5	18.8
ծառայություններ, այդ թվում՝	4696	14437	24.4	33.7
առողջապահության	1500	2659	7.8	6.2
կրթության	708	488	3.7	1.1
բնակ. կոմունալ	1146	5689	6.0	13.3
տրանսպորտ	694	1441	3.6	3.4
կապ	291	2393	1.5	5.6
մշակույթ	3	101	0.0	0.2
խրափաբանական ծառայություններ	3	376	0.0	0.9
այլ ծառայություններ	351	390	1.8	3.0

⁹¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, 2016, էջ 124:

2004 և 2015 թթ.-ին Հայաստանի տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքների համադրումից (Աղյուսակ 3.10) հետևում է, որ, չնայած դիտարկվող ժամանակահատվածում տնային տնտեսությունների ամսական սպառողական ծախսերի կառուցվածքում սննդի վրա կատարվող սպառողական ծախսերի բաժնի կրճատմանը (56.1 %՝ 2004 թ.-ին և 43.6 %՝ 2015 թ.-ին), դրանց բաժինը դեռ ամենամեծն է: Դա տնային տնտեսությունների դեռևս ցածր կենսամակարդակի արդյունք է: Ինչ վերաբերում է ոչ պարենային ապրանքների ձեռքբերման վրա կատարված ծախսերին, ապա, չնայած 2015 թ.-ին դրանց բաժնի աճին (2004 թ.-ին՝ 24.4 %, 2015 թ.-ին՝ 33.7 %), այնուհանդերձ, այդ ծախսերը սննդային ապրանքների վրա կատարված ծախսերից քիչ են: Ծառայությունների վրա կատարված ծախսերը 2004 թ.-ին կազմել են 24.4 %, իսկ 2015 թ.-ին հասել են 33.7 %-ի: Ծառայությունների վրա ՀՀ տնային տնտեսությունների կատարած ծախսերը ևս ցածր կենսամակարդակի արդյունք են: Հիշենք, որ բարձր կենսամակարդակ ունեցող երկրներում տնային տնտեսությունների կատարած մնաց ծախսերը գերազանցում են ընդհանուր ծախսերի 60 %-ը:

Աղյուսակ 3.11. ՀՀ տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքն ըստ բնակավայրի տեսակի 2004 և 2015 թվականներին
(մեկ շնչի հաշվով միջին ամսական)⁹²

Ծախսերի հոդվածները	Քաղաքային բնակավայր				Գյուղական բնակավայր			
	դրամ		%		դրամ		%	
	2004 թ.	2015 թ.	2004 թ.	2015 թ.	2004 թ.	2015 թ.	2004 թ.	2015 թ.
սպառողական ծախսեր, այդ թվում՝	20433	47,61	100	100	16458	35786	100	100
սնունդ	11109	19014	53,1	40,3	10281	18197	62,5	50,9
սնունդ՝ տնից դուրս	321	801	1,5	1,7	72	111	0,4	0,3

⁹² Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, Երևան, 2016, էջ 125:

ակտիվային խմբի գնում	173	222	0,8	0,5	146	263	0,9	0,7
ծխախոտի գնում	894	1470	4,3	3,1	666	1320	4	3,7
ոչ պարենային ապրանքներ	2841	8394	13,6	17,8	2695	7546	16,4	21,1
ծառայություններ, այդ թվում՝	5916	18061	28,2	38,3	26,70	8460	16,2	23,6
առողջապահության	1794	3745	8,6	7,9	1002	868	6,1	2,4
կրթության	976	713	4,7	1,5	265	118	1,6	0,3
բնակ. կոմունալ	1382	6865	6,6	14,5	755	3765	4,6	10,5
տրանսպորտ	9,99	1778	4,6	3,8	303	886	1,8	2,5
կապ	421	2656	2	5,6	75	1959	0,5	5,5
մշակույթ	4	163	0,0	0,3	0	0	0	0
իրավական ծառայություններ	4	450	0,0	1,0	0	253	0	0,7
այլ ծառայություններ	406	1700	1,9	4,2	260	611	1,6	1,7

Ուշադրության է արժանի ՀՀ տնային տնտեսությունների ծախսերի կառուցվածքն ըստ բնակավայրի տեսակի: Աղյուսակ 3.11-ից հետևում է, որ 2004 և 2015 թթ.-ին քաղաքային բնակավայրերի կենսամակարդակը ավելի բարձր է, քան գյուղականը:

Հայաստանի Հանրապետությունում բնակչության առանձին խմբերի (քվինտիլային և դեցիլային) սպառողական ծախսերի ցուցանիշները էապես փոխվում են՝ պայմանավորված տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամտով:

**Աղյուսակ 3.12. Ծախսերի հիմնական զանգվածների մասնաբաժինը
տնային տնտեսությունների միջին ամսական սպառողական ծախսերի
կառուցվածքում 2004 և 2009 թվականներին (մեկ շնչի հաշվով, միջին ամսա-
կան)⁹³**

			այդ թվում՝				
դեցիլային խմբեր	տարիներ	սպառողական ծախսեր	անդամները	ավելի օրային խմբեր	ծխախոտ	ոչ պարենային ապրանքներ	ծառայություններ
I	2004	100	73.4	0.4	5.1	8.6	12.5
	2009	100	63.6	0.2	5.1	7.7	23.4
X	2004	100	38.0	1.1	2.9	18.6	39.4
	2009	100	38.9	1.2	2.5	20.1	37.3

Աղյուսակ 3.12-ի տվյալները խոսում են այն մասին, որ I դեցիլային խմբի համեմատ X դեցիլային խմբում շուրջ երկու անգամ փոքր է սննդամթերքի վրա կատարված ծախսերի բաժինը, և, ընդհանրապես, շուրջ երեք անգամ մեծ՝ ոչ պարենային ապրանքների և երկու անգամ մեծ՝ ծառայությունների վրա կատարված ծախսերի բաժինը: Ուստի հաստատվում է այն օրինաչափությունը, որ գոյություն ունի հակադարձ կորելացիոն կապ ընտանիքի շնչային եկամտի և սննդամթերքների վրա կատարվող ծախսերի միջև և դրական կորելացիոն կապ՝ ընտանիքի շնչային եկամտի ու ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների վրա կատարվող ծախսերի միջև: Դա, բնականաբար, չի նշանակում, որ վերին դեցիլային խմբերում ընտանիքները բացարձակ մեծություններով ավելի քիչ պարենային

⁹³ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, Երևան, 2010, էջ 127-128:

ապրանքներ են գնում, այսինքն՝ ավելի վատ են սնվում: Իրականում բարձր դեցիլային խմբերում գտնվող ընտանիքները բացարձակ չափերով ավելի շատ և թանկ սննդամթերք են սպառում, որը նրանց բարձր կենսամակարդակի ցուցանիշներից է:

3.2 Տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի բևեռացումը

Հայաստանի Հանրապետությունում կապիտալի նախասկզբնական կուտակման ծանր դրսևորումները և կաթվածահար հետևանքները, 1991-1994 թթ.-ի էներգետիկ ու տնտեսական խոր ճգնաժամը, հարյուրավոր և հազարավոր ձեռնարկությունների աշխատանքների դադարեցումը, զանգվածային գործազրկությունը, մութը և ցուրտը, բնակչության սոցիալական բացարձակ անպաշտպանվածությունը, ամենաթողությունը և կոռուպցիան հանգեցրին նրան, որ սկիզբ առավ զանգվածային աղքատությունը, և շուրջ մեկ միլիոն աշխատունակ բնակչություն երկրից արտագաղթեց: Դա մեծ աղետ էր: Նորից Հայաստանը սկսեց դատարկվել հայերից, այս անգամ ոչ թե թուրքի յաթաղանից, այլ սպառնացող սովից:

Այդպիսի իրավիճակում ի՞նչ նկարագիր ուներ Հայաստանի Հանրապետությունը, ինչպիսի՞ն էր նրա սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական զարգացումների նկարագիրը, ինչպե՞ս էր տեղի ունենում 21-րդ դարի հիմնական հրամայականը՝ մարդկային զարգացման, մասնավորապես նրա սոցիալական ինդիկատորների վերարտադրությունը և այլն:

Այս և մնանատիպ այլ հարցերի վիճակագրական և տեսական վերլուծությունը տրված է այդ ժամանակահատվածի մի շարք գիտական հետազոտություններում, վիճակագրական զեկույցներում և մնանատիպ այլ նյութերում: Դրանց մեջ առանձնանում է 2001 թ.-ին հրատարակված «Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցը: Այսպես, այդ զեկույցում բացահայտվեց, որ 1991-1994 թթ.-ին

Հայաստանի Հանրապետության տնտեսական համակարգային ճգնաժամի հետևանքով սպառումը գերազանցեց արտադրված նոր արժեքին. 1993 թ.-ին՝ 10.6 %-ով, 1995 թ.-ին՝ 17.5 %-ով: Այդ երևույթը առավել ընդգծված է դրսևորվել տնային տնտեսությունների մակարդակում: Սույն զեկույցում նշվում է, որ «...Եթե 1990 թ.-ի նկատմամբ 1998 թ.-ին ըստ իրական եկամուտների բնակչության գնողունակության աստիճանի անկումը կազմել է 10 անգամից ավելի, ապա տնային տնտեսությունների կողմից սպառման վրա կատարված ծախսերը նույն ժամանակահատվածում կրճատվել են ընդամենը 18.2 տոկոսով, ինչը վկայում է տնային տնտեսությունների խնայողությունների «գերմաշման», դրանց բնատնտեսացման, ինչպես նաև՝ պաշտոնական և մասնավոր տրանսֆերտներից կախվածության մակարդակի բարձրացման մասին»⁹⁴:

1991-1994 թթ.-ին ՀՀ տնային տնտեսությունների հետազոտությունը ցույց տվեց, որ այդ և հետագա տարիներին ըստ եկամուտների և ծախսերի բնակչության բաշխվածության անհավասարությունը և բևեռացումը խիստ մեծացել են: Այդ ընդհանրացումը հիմնավոր դարձնելու նպատակով նախ մեր կողմից վերլուծվեցին անցումային նշված ամենաձանր ժամանակահատվածում Հայաստանի բնակչության եկամուտների տեսակները և կառուցվածքը, այնուհետև ուսումնասիրվեց բնակչության դրամական ծախսերի կառուցվածքը: Եթե Հայաստանի միջին բնակչի համար սննդամթերքի վրա կատարված ծախսերը 1998-1999 թթ.-ին կազմում էին 67 %, իսկ ծառայությունների դիմաց ծախսերը՝ 12.4 %, ապա բնակչության ամենաքիչ ապահովված դեցիլային խմբերում ծախսերի կառուցվածքն ավելի լարված էր. դրանց 77.0 %-ը կազմում էին սննդի համար կատարված ծախսերը, իսկ 7.0 %-ը՝ ծառայությունների դիմաց ծախսերը:

Վերը նշված հետազոտության արդյունքների համաձայն՝ 1998-1999 թթ.-ին 20 % ամենաշատ եկամուտներ ունեցողների (վերին քվինտիլային խումբ) և 20 % ամենաքիչ եկամուտներ ունեցողների (ատորին քվինտիլային խումբ) եկամուտների տարբերությունը ու-

⁹⁴ Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001, էջ 13:

սումնասիրվող ժամանակահատվածում կազմել էր 32.2 անգամ:⁹⁵ Նշենք, որ այդ նույն ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնությունում, ըստ եկամուտների, 20 % ամենահարուստ և 20 % ամենաաղքատ խմբերի եկամուտների բևեռացման տարբերությունը կազմել է ընդամենը 16 անգամ, այսինքն՝ Հայաստանի համեմատ երկու անգամ քիչ: Հասկանալի է, որ ըստ դեցիլային խմբերի բնակչության եկամուտների բևեռացումը ավելի մեծ է, որը, դժբախտաբար, այդ հետազոտության մեջ չի հաշվարկվել:

Ըստ եկամուտների և ծախսերի բնակչության մասն աննախադեպ բևեռացումը և հասարակության ավելի քան կեսի աղքատությունը ազգային ողբերգություն էր իր սոցիալական հետևանքներով: Ըստ եկամուտների՝ բնակչության մասն ահավոր բևեռացումը և զանգվածային աղքատությունը բացառեց միջին դասի կայացումը, որը նորմալ զարգացող հասարակության համար ոչ միայն շատ կարևոր էր, այլև անհրաժեշտ: Սույն հետազոտությունում նշված է, որ «բնակչության մասն բևեռացվածությունը վկայում է, այսպես կոչված, միջին խավի չկազմավորման մասին, ինչն ունի ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև քաղաքական նշանակություն, քանզի միջին խավի բացակայությունը նույնն է, ինչ քաղաքական լայն հեռարանի բացակայությունը քաղաքացիական հասարակության ցանկացած քաղաքական ուժի համար»⁹⁶: Միջին խավի չկազմավորվելը ոչ միայն տնտեսական, սոցիալական, այլ նաև քաղաքական «դատարկություն» ստեղծեց հասարակության օրգանիզմում, հնարավորություն չտվեց զարգացնելու մանր և միջին մրցակցային ձեռներեցությունը, մեծացնելու զբաղվածությունը, կրճատելու գործազրկությունը և աղքատությունը, բարձրացնելու կենսամակարդակը: Չմոռանանք, որ հետսոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը ոչ միայն վերափոխումների արդյունքն է, այլ նաև անցումային հասարակության և տնտեսության վրա ազդող էական գործոններից մեկը:

⁹⁵ Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001, էջ 15:

⁹⁶ Նույն տեղում, էջ 16:

Հետսոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքում կարելի է առանձնացնել հետևյալ դասերը՝ հարուստներ (իշխող դաս), ունևորներ, միջին դաս, աղքատներ: Հարուստների դասը երկրում գրավում է ամենաբարձր դիրքը՝ թվաքանակով չգերազանցելով բնակչության 5-10 %-ը: Անցումային տնտեսությունում հասարակության զարգացման հետագիծը որոշելու տեսակետից ամենամեծ դերը խաղում է հենց իշխող դասը (էլիտայի այն մասը, որը մասնակից է ողջ երկրի մասշտաբով կարևորագույն տնտեսական և քաղաքական որոշումների ընդունմանը): Իշխող դասի վարքից են կախված ինչպես սոցիալական լարվածությունը մեղմացնելուն ուղղված արդյունավետ սոցիալական քաղաքականության իրագործումը, այնպես էլ նոր սպառողական չափանիշները: Ունևորների դասի տեսակարար կշիռը տնային տնտեսությունների ընդհանուր թվաքանակում ևս մեծ չէ (հիմնականում 9-րդ դեցիլային խումբը և 10-րդի մի մասը): Այս դասի միջուկը կազմում են խոշոր ձեռներեցները և բարձրաստիճան որոշ պաշտոնյաներ: Միջին դասը ներառում է հասարակության ինտելեկտ ձևավորող ամենակարևոր խավը, աշխատանք ռեսուրսի հիմնական տերերին, տնային տնտեսությունների հիմնական մասին: Ընդ որում՝ միջին դասը միատարր չէ: Այն ընդգրկում է «վերին միջին դասը», «միջանկյալ միջին դասը», որը գերակշռող է և «ստորին միջին դասը»:⁹⁷

Հետսոցիալիստական երկրների միջին դասը կազմում է բնակչության շուրջ 20-35 %-ը, իսկ համեմատաբար համասեռ «միջին դասի հասարակություն» հանդիսացող զարգացած Արևմտյան Եվրոպայի(միաժամանակ նման հասարակությունը մնում է ծայրահեղ տարբերակված)՝ 60-80 %-ը: Հայաստանում, ըստ էության, միջին դասը չկայացավ: Արդյունքում ունենք, որ ՀՀ միջին դասը չի կարող լիարժեք կատարել իր հիմնական գործառնությունները, դառնալ երկրի հիմնական հարկային դոնորը, ներքին ներդրողը և քաղաքական

⁹⁷ Գ. Ղարիբյան, Ա. Խառատյան, Ետսոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի ուսումնասիրության մեթոդաբանական մոտեցումներ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003 թ., N 2(110), էջ 3-10:

կյանքի կայունացնողը: Դրա փոխարեն բնակչության մեծ մասը, 1996 թ.-ին՝ շուրջ 55.0 %-ը, դարձավ աղքատ, և ձևավորվեց աղքատների մեծաքանակ դասը: Այդ դասն այսօր էլ, ցավոք, Հայաստանի տնային տնտեսությունների ընդհանուր թվաքանակում մեծ կշիռ ունի՝ կազմելով բնակչության մեկ երրորդը:

Աղքատությունը, հիմնականում պայմանավորված լինելով տնտեսական գործոններով, նաև բաշխման հարաբերությունների, սոցիալական և անգամ քաղաքական գործոնների և գործընթացների արդյունք է: Աղքատությունը ճիշտ գնահատելու, նրա տեղը և հետևանքները հասարակական կյանքի վրա ճիշտ բացահայտելու համար շատ կարևոր են հասարակության առկա սոցիալական իրավիճակն ընդհանրապես, ըստ եկամուտների՝ բնակչության բևեռացման պատճառները, չափերը, դրանց զարգացման միտումները՝ մասնավորապես: Եթե հասարակությունը, ազգը, ժողովուրդը աղքատ է ամբողջովին, դա մեծ դժբախտություն է:

Պատկերը այլ էր ԽՍՀՄ-ում, որտեղ բնակչության եկամուտների մեծ բևեռացված բաշխվածություն չկար, եկամուտների տարբերությունների չափերը մեծ չէին, դրանք շատ թե քիչ հավասար էին: Այսպես, 1960 թ.-ին ԽՍՀՄ բանվորների վերին խմբի աշխատավարձը գերազանցում էր ստորին խմբինը ընդամենը 4 անգամ, շնչային եկամուտը՝ 5 անգամ:⁹⁸ Հայաստանում 1989 թ.-ին ընտանիքների միջին շնչային եկամուտների վերին դեցիլը ստորինին գերազանցել է 6.7 անգամ՝ 1981 թ.-ի 4.6-ի դիմաց: 1988-1990 թթ.-ի ընթացքում դրամական արտահայտությամբ ամենացածր միջին շնչային եկամուտով ընտանիքների թիվը կրճատվել է ավելի քան 5 անգամ, իսկ ամենաբարձր միջին շնչային եկամուտով ընտանիքներինն ավելացել է շուրջ 7 անգամ:⁹⁹

⁹⁸ Б. Н. Казанцев, Некоторая статистика уровня жизни рабочего класса, СОЦИС, 1993, стр. 3-14.

⁹⁹ Գ. Ղարիբյան, Հ. Մազպանյան, Բնակչության եկամուտների և կենսամակարդակի միտումները Հայաստանում (1980-1990 թթ.), «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, N 1(94), էջ 33:

Ինչպես նկատում ենք, և՛ ԽՍՀՄ-ում ամբողջությամբ վերցրած, և՛ ՀԽՍՀ-ում, ըստ եկամուտների՝ բնակչության խոր բևեռացում չի եղել: Վերին 20 % հարուստների և ստորին 20 % աղքատների եկամուտների տարբերությունն ընդամենը 5-8 անգամ է եղել և ոչ թե 32 անգամ, ինչպես 1996-1998 թթ.-ին Հայաստանում էր:

ԽՍՀՄ-ում եկամուտների անհավասարությունը փոքր է եղել նաև միութենական հանրապետությունների կտրվածքով:

**Աղյուսակ 3.15. Եկամուտների անհավասարությունը և աղքատությունը
Խորհրդային Միությունում 1989 թվականին¹⁰⁰**

Երկիրը	Ձինիի եկամտային գործակից	1 շնչին ընկնող եկամուտ (ռուբլի)	1 շնչի հաշվով ամսական 75 ռուբլուց ցածր եկամուտ ունեցող բնակչությունը (տոկոսներով)
Ռուսաստան	0.278	178.65	5.0
Լիտվա	0.278	201.93	2.3
Լատվիա	0.274	198.72	2.4
Էստոնիա	0.299	219.18	1.9
Բելառուս	0.238	170.29	3.3
Ուկրաինա	0.235	153.35	6.0
Մոլդովա	0.258	141.33	11.8
Հայաստան	0.259	134.85	14.3
Վրաստան	0.292	150.15	13.0
Ադրբեջան	0.328	110.33	33.6
Ղազախստան	0.289	142.92	15.5
Ղրղզստան	0.287	104.06	32.6
Տաջիկստան	0.308	82.94	51.2
Ուզբեկստան	0.304	91.29	43.6
Թուրքմենստան	0.307	102.26	35.0
ամբողջ ԽՍՀՄ	0.289	158.83	11.0

¹⁰⁰ Inequality and Poverty in the CIS 1989-2002, CIS Conference, University of Southampton, 2003, p. 7.

Աղյուսակ 3.15-ի տվյալները ցույց են տալիս, որ ԽՍՀՄ-ում միութենական հանրապետությունները, ըստ եկամուտների մեծությամբ, գրեթե հավասարաչափ են բաշխված: Այսպես, Ջինիի եկամտային գործակիցն ամբողջ ԽՍՀՄ մասշտաբով միջինը կազմել է 0.289: Ջինիի գործակցի ամենացածր ցուցանիշը եղել է Ուկրաինայում՝ 0.235, Հայաստանում այն կազմել է 0.259: Ամենաբարձր ցուցանիշը եղել է Տաջիկստանում՝ 0.308, այնուհետև Թուրքմենստանում՝ 0.307 և Ուզբեկստանում՝ 0.304: Ինչպես նկատում ենք, Ջինիի գործակցի համաձայն՝ անհավասարությունը եղել է չափավոր: Այն բարձր է եղել հատկապես միջին ասիական հանրապետություններում, որի պատճառներից են ընտանիքների բազմանդամությունը, շատ երեխաներ ունենալը, ընտանիքի երկրորդ անդամի՝ կնոջ ցածր ներգրավվածությունը աշխատանքի մեջ: Այդ բոլորը հանգեցրել են նրան, որ նշված հանրապետություններում ցածր է եղել մասն մեկ շնչին ընկնող եկամուտը:

Աղյուսակ 3.15-ի տվյալները վկայում են, որ ամենամեծ շնչային եկամուտ ունեցել են մերձբալթյան հանրապետությունները, որոնք ունեցել են սոցիալ-տնտեսական ավելի զարգացած մակարդակ և ընտանիքի անդամների ավելի փոքր թիվ (միջինը 3): Քիչ երեխաներ ունենալու շնորհիվ միջին ընտանիքի երկրորդ անդամների՝ կանանց շուրջ 70.0 %-ն աշխատել է: Նշենք, որ այդ տարիներին Հայաստանում կանանց զբաղվածությունը 40.0 %-ի սահմաններում էր:

Ուշադրության է արժանի մասն ԽՍՀՄ-ում 1 շնչի հաշվով ամսական 75 ռուբլուց ցածր եկամուտ ունեցող բնակչության անհավասարաչափ բաշխվածության պատկերը: Աղյուսակ 3.15-ի թվերը ցույց են տալիս, որ եթե միջինը ամբողջ ԽՍՀՄ-ում մեկ շնչի հաշվով ամսական 75 ռուբլուց ցածր եկամուտ ուներ բնակչության 11.0 %-ը, ապա Տաջիկստանում՝ 51.2 %-ը, Ուզբեկստանում՝ 43.6 %-ը, Թուրքմենստանում՝ 35.0 %-ը, Ռուսաստանում՝ 5.0 %-ը, Հայաստանում՝ 14.3 %-ը: Այսպիսով՝ ըստ մեկ շնչի հաշվով ամսական 75 ռուբլուց ցածր եկամուտ ունեցողների բնակչության բաշխվածության, անապահովների բաժինը մեծ էր նորից միջին ասիական հանրապետություններում: Իսկ ընդհանրապես, ըստ միութենական հանրապետությունների, անհա-

վասարություն առկա է եղել, սակայն ոչ մեծ չափերի: Հետևաբար ԽՍՀՄ-ում այդ ցուցանիշներով եղած անհավասարությունը ոչ մի նմանություն չունի ըստ եկամուտների բնակչության բեռնացման ժամանակակից ծանր պատկերի և, դրանով պայմանավորված, սոցիալական լարվածության ու դրա հետևանքների հետ:

Եթե 1989 թ.-ին ամբողջ ԽՍՀՄ-ի համար Ջինիի եկամտային գործակիցը եղել է 0.289, ապա պլանայինից շուկայական տնտեսության անցած ԱՊՀ երկրներում 1997 թ.-ին միջինը՝ 0.397: Աղյուսակ 3.16-ի տվյալները վկայում են, որ 1997 թ.-ին համեմատաբար հարուստ երկրներն ունեցել են բնակչության եկամուտների ավելի փոքր անհավասարություն: Հայաստանը պատկանում էր այն երկրների խմբին, որոնցում բնակչության եկամուտների մեծ անհավասարությունը գուգակցվում էր բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցածր մակարդակի հետ, և բնական է, որ աղքատության խնդիրը Հայաստանում ավելի սուր էր արտահայտված, քան ներկայացնում էր 0.431 կազմող Ջինիի գործակիցը:

Աղյուսակ 3.16. Բնակչության եկամուտների մակարդակը և բաշխվածությունը ԱՊՀ երկրներում 1997 թվականին¹⁰¹

	ՀՆԱ-ն բնակչության 1 շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	Ջինիի եկամտային գործակիցը
Ադրբեջան	2.039	0.311
Հայաստան	2.053	0.431
Բելառուս	5.768	0.248
Վրաստան	4.992	0.518
Ղազախստան	4.435	0.354
Ղրղզստան	2.31	0.431
Մոլդովա	2.175	0.466
Ռուսաստան	7.031	0.370
Տաջիկստան	2.013	0.467

¹⁰¹ СНГ в 2005 году. Статистический справочник, М., 2006. стр. 145.

Թուրքմենստան	2.664	0.408
Ուզբեկստան	2.103	0.416
Ռուսիան	3.295	0.351
ԱՊՀ երկրների միջինը	3.406	0.397

Ավելացնենք, որ 1996 թ.-ին Հայաստանում հատուկ հետազոտության շրջանակներում հաշվարկվել է Ջինիի եկամտային գործակցի առավել ճշգրիտ մեծությունը՝ հավասար 0.65-ի, որը ցույց էր տալիս եկամուտների բաշխվածության ավելի մեծ բևեռացում (Աղյուսակ 3.17):

Դիտարկենք, թե ինչպիսին էր Ջինիի գործակիցը Հայաստանի Հանրապետությունում, և ի՞նչ միտումներ են արձանագրվել:

Ներկայացվող Աղյուսակ 3.17-ի տվյալները փաստում են, որ, իրոք, 1996 թ.-ից սկսած՝ Հայաստանի Հանրապետությունում Ջինիի գործակիցը շատ բարձր էր և մինչև այսօր էլ, չնայած փոքրացման միտմանը, դեռ մնում է բարձր, որը, ըստ եկամուտների, բնակչության խոր բևեռացման արտացոլումն է: Ավելին, 1996-2008 թթ.-ին արձանագրվել է տնտեսական աճ, սակայն, ցավոք, դրան համապատասխան, ըստ եկամուտների, բնակչության բևեռացումը քիչ է կրճատվել:

Աղյուսակ 3.17. Ջինիի գործակիցը ՀՀ-ում 1996-2009 թվականներին¹⁰²

	1996 թ.	2001 թ.	2004 թ.	2007 թ.	2008 թ.	2009 թ.
Ջինիի գործակից (ըստ ամբողջական եկամուտների)	0.653	0.528	0.387			
Ջինիի գործակից (ըստ ընթացիկ եկամուտների)	0.602	0.535	0.413			
Ջինիի գործակից (ըստ եկամուտների)			0.395	0.371	0.339	0.355
Ջինիի գործակից (ըստ սպառման)			0.260	0.288	0.242	0.257

¹⁰² ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2006, էջ 164, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2010, էջ 46, www.armstat.am:

Ըստ ՄԱԿ-ի հետազոտությունների արդյունքների՝ 2004 թ.-ին ՀՀ-ում եկամուտների հարաբերություններն ըստ դեցիլային խմբերի կազմել է 8, ըստ քվինտիլային խմբերի՝ 5, Ջինիի եկամտային գործակիցը՝ 0.338: Ըստ CIA-ի հետազոտությունների արդյունքների՝ 2004 թ.-ին ՀՀ-ում եկամուտների հարաբերություններն ըստ դեցիլային խմբերի կազմել է 25.8, իսկ Ջինիի եկամտային գործակիցը՝ 0.41:¹⁰³ ՀՀ պաշտոնական տվյալներով 2004 թ.-ին ՀՀ-ում եկամուտների հարաբերություններն ըստ դեցիլային խմբերի կազմել է 20.8, իսկ Ջինիի եկամտային գործակիցը՝ 0.395:¹⁰⁴

2000-2007 թթ.-ին հանրապետությունում գրանցվել է երկնիշ թվերով տնտեսական աճ: Եկամուտների բևեռացման չափերը, չնայած նվազմանը, մնացել են բարձր, որի մասին են վկայում Աղյուսակներ 3.18-ի և 3.19-ի տվյալները: Ըստ սպառողական ծախսերի՝ եկամուտների հարաբերակցությունը փոքր է այն պատճառով, որ ստորին քվինտիլների և դեցիլների ընտանիքները սպառումը մեծացրել են տնային գույքի վաճառքի հաշվին:

Աղյուսակ 3.18. Հայաստանի 20 % ամենաապահով և 20 % ամենաաղքատ բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը 2002-2009 թվականներին՝ ըստ քվինտիլային խմբերի¹⁰⁵

	20 % ամենաապահով և 20 % ամենաաղքատ բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը					
	2002 թ.	2004 թ.	2006 թ.	2008 թ.	2009 թ.	2009 թ.
Ըստ դրամական եկամուտների, անգամ	15.3	10.6	7.6	7.8	8.0	8.4
Ըստ սպառողական ծախսերի, անգամ	6.2	5.8	5.4	5.2	5.1	5.6

¹⁰³ hy. wikipedia.org/wiki/Աշխարհի երկրներն ըստ եկամտային տարբերության:

¹⁰⁴ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2006, էջ 164:

¹⁰⁵ Աղյուսակը կազմվել է www.armstat.am տվյալներով:

Աղյուսակ 3.19. Հայաստանի 10 % ամենաաղքատ և 10 % ամենաաղքատ բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը 2002-2009 թվականներին՝ ըստ դեցիլային խմբերի¹⁰⁶

	10 % ամենաաղքատ և 10 % ամենաաղքատ բնակչության եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը					
	2002 թ.	2004 թ.	2006 թ.	2008 թ.	2009 թ.	2009 թ.
Ըստ դրամական եկամուտների, անգամ	32.4	20.8	13.9	14.1	14.5	16.4
Ըստ սպառողական ծախսերի, անգամ	10.9	9.5	8.7	8.0	7.9	9.0

Ինչպես նկատում ենք, 2009-2015 թ.-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանում եկամուտների անհավասարությունն աճել է: 2015 թ.-ին, ըստ դրամական եկամուտների, բնակչության վերին և ստորին դեցիլային խմբերի բաշխվածության բևեռացումը կազմել է 16.4 անգամ, որը սոցիալական, բարոյաստիճերական, քաղաքական և, վերջին հաշվով, նաև ազգային անվտանգության լուրջ խնդիր է:

Համաշխարհային բանկի գնահատմամբ՝ Հայաստանում 2014 թ.-ին սպառման անհավասարության Ջինիի գործակցի 0.277 արժեքը մատնացույց է անում անհավասարության չափավորից ցածր մակարդակներ.

1) անհավասարությունը համեմատ աճ է ունեցել 2008-2014 թթ.-ի¹⁰⁷ ընթացքում,

2) անհավասարության մակարդակը, ըստ էության, ամենամեծն է Երևանում,

3) տարածաշրջանների միջև շատ մեծ անհավասարություն կ'կա (Աղյուսակ 3.20):¹⁰⁸

¹⁰⁶ Աղյուսակը կազմվել է www.armstat.am տվյալներով:

¹⁰⁷ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները 2008-2014 թթ.-ի՝ Հայաստանի ՏՏԿԱՀ-ի հիման վրա, <http://documents.worldbank.org>:

¹⁰⁸ Հարավային Կովկասի աղքատության հարցերի թիմ: Համաշխարհային բանկի աղքատության և հավասարության վարչություն 4 հոկտեմբերի, 2016:

Աղյուսակ 3.20. Սպառման անհավասարության ցուցանիշը Հայաստանում¹⁰⁹

Տարի	Սպառման անհավասարության Ձինիի գործակից	Թեյլի միջին ($\alpha = -1$)	Սպառման անհավասարության Ձինիի գործակից		
			Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
2008	0.242	0.097	0.247	0.246	0.222
2009	0.257	0.111	0.269	0.258	0.230
2010	0.265	0.115	0.297	0.241	0.134
2011	0.266	0.117	0.305	0.248	0.207
2012	0.269	0.123	0.279	0.271	0.248
2013	0.271	0.124	0.289	0.286	0.231
2014	0.277	0.129	0.341	0.244	0.215

Ուշադրության է արժանի նաև *բնակչության եկամուրների անհավասարությունը ՀՀ մարզերի և Երևան քաղաքի կիրովածքով*: Չնայած երկրի փոքր տարածքին՝ ՀՀ մարզերը որոշակիորեն, իսկ առանձին ցուցանիշների գծով էականորեն տարբերվում են իրենց սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական ներուժով, տնտեսության կառուցվածքով և սոցիալական խնդիրների գերակայությամբ:¹¹⁰ Բնականաբար, յուրաքանչյուր մարզի համար գոյություն ունեն տարածքային առանձնահատուկ հիմնախնդիրներ, որոնք ազդում են մարզի տնտեսական ու սոցիալական զարգացումների միտումների վրա:

ՀՀ-ում տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման իրավիճակն ընդհանուր առմամբ բնութագրվում է.

- մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկություններով, ենթակառուցվածքների զարգացման աստիճանով, ներդրումների և արտահանման ծավալներով, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակում

¹⁰⁹ Ձինիի և Թեյլի գործակիցները 0-1-ի տիրույթում են, իսկ Ձինիի գործակցի 1 արժեքը (Թեյլի գործակցի 0 արժեքը) վկայում է բացարձակ անհավասարության մասին:

¹¹⁰ 1995 թ.-ի դեկտեմբերի 11-ի «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով ՀՀ տարածքը բաժանվեց 10 մարզերի և Երևան քաղաքի, ստեղծվեց 930 համայնք, այդ թվում՝ քաղաքային՝ 47, քաղաքի 12, գյուղական՝ 871:

- և տնտեսական վերափոխումների իրականացման տեմպերում տարածքային խոր տարբերությունների պահպանմամբ,
- տարածքային զարգացման հնարավորությունների արդյունավետ կառավարման համակարգերի անկատարությամբ,
 - սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի և հեռավոր շրջանների տնտեսավարման ոլորտի անկայունությամբ ու սոցիալ-տնտեսական մի շարք սուր հիմնախնդիրների առկայությամբ:

Ակնհայտ է, որ սահմանամերձ և բարձր լեռնային շրջաններում սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն ավելի սուր արտահայտվածություն ունեն, ինչը դրսևորվում է աղքատության և գործազրկության ավելի բարձր մակարդակներով, ծնելիության մակարդակի անկմամբ, արտագաղթի մեծ չափերով և բնակչության թվաքանակի զգալի նվազմամբ:

Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշների համակարգում ՀՀ մարզերի տնտեսական զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երևանում առկա է գերկենտրոնացում: Տասնամյակներ շարունակ Հայաստանում եղել են տարածքային զարգացման անհամաչափ դրսևորումներ, բևեռացում: Մայրաքաղաքում են կենտրոնացած հանրապետության արդյունաբերական ներուժի շուրջ կեսը, գիտական, գիտահետազոտական ներուժի ավելի քան 90 %-ը, կրթական և մշակութային հաստատությունների մեծ մասը:

ՀՀ տարածքային զարգացման անհամաչափ դրսևորումները, բևեռացումը անդրադառնում են նաև ըստ մարզերի բնակչության եկամուտների անհամաչափ բաշխման վրա: Եկամուտների անհավասարաչափ բաշխումը ՀՀ մարզերի և Երևան քաղաքի կտրվածքով պայմանավորված է նախ և առաջ վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններով ու մակարդակով, աշխարհագրական դիրքով և բնակլիմայական պայմաններով: Որպես կանոն՝ որքան բարձր են որևէ մարզի տնտեսական զարգացման ցուցանիշները, այնքան համեմատաբար մեծ է աշխա-

տավարձի մակարդակը, ցածր՝ գործազրկության և աղքատության մակարդակները և արտագաղթի ծավալները:

**Աղյուսակ 3.21. Միջին ամսական անվանական աշխատավարձ՝
ըստ մարզերի և Երևան քաղաքի, դրամ¹¹¹**

	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Հայաստանի Հանրապետություն	140 739	146 524	158 580	171 615	188 851
ք. Երևան	147 911	160 804	166 127	180 105	204 192
Արագածոտն	94 895	102 191	111 702	119 174	128 846
Արարատ	112 117	117 551	126 262	135 560	153 900
Արմավիր	121 143	126 010	136 533	145 798	160 212
Գեղարքունիք	113 497	112 439	121 369	136 583	149 117
Լոռի	106 045	113 456	127 282	140 497	151 571
Կոտայք	118 316	126 488	136 343	146 077	165 857
Շիրակ	103 091	104 240	115 847	124 203	135 137
Սյունիք	162 826	178 606	187 878	197 836	225 933
Վայոց ձոր	99827	105624	117660	127964	146218
Տավուշ	99451	102247	117831	128297	163108

Աղյուսակ 3.21-ի համաձայն՝ 2012-2016 թթ.-ի ժամանակահատվածում Հայաստանում միջին ամսական անվանական աշխատավարձը դրսևորել է աճի կայուն միտում՝ 2012 թ.-ի 140 739 դրամից դառնալով 188 851 դրամ 2016 թ.-ին: Դա, իհարկե, դեռ չի նշանակում Հայաստանի բնակչության ընդհանուր կենսամակարդակի աճ: Նախ, այդ ժամանակահատվածում աճել է նաև գների մակարդակը (2012 թ.-ին՝ 2.6, 2013 թ.-ին՝ 5.8, 2014 թ.-ին՝ 3.0 և 2015 թ.-ին՝ 3.7 %-ով)¹¹²՝ նվազեցնելով իրական աշխատավարձը: Երկրորդ, բնակչության մեծ մասի աշխատավարձը ցածր է միջինից, աշխատավարձերի բաշխման կորն ունի լոգնորմալ բաշխում: Երրորդ, առկա է աշ-

¹¹¹ Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թ. հունվար-դեկտեմբեր, Երևան, 2017, էջ 15:

¹¹² Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, Երևան, էջ 33:

խատավարձերի անհավասարաչափ բաշխում մարգային կտրվածքով և մարզերի ներսում: Այսպես, 2016 թ.-ին Սյունիքի մարզում գրանցված միջին աշխատավարձը շուրջ երկու անգամ բարձր է Արագածոտնի մարզի միջին աշխատավարձից: Միաժամանակ մեծ է եկամուտների անհավասարությունը հենց Սյունիքի մարզում, քանի որ գործազրկության բարձր մակարդակը (15.7 %՝ 2015 թ.-ին) զուգակցվում է աշխատանք ունեցողների բարձր եկամուտներով՝ պայմանավորված Ղափանի, Քաջարանի և Ագարակի պղնձամոլիբդենային գործարաններում առկա բարձր աշխատավարձով:

ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունները մեղմելու նպատակով Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ.-ի հեռանկարային զարգացման ռազմավարության և Հայաստանի Հանրապետության 2016-2025 թթ.-ի տարածքային զարգացման ռազմավարության հիմնական գերակայություններին համահունչ ՀՀ մարզերի կտրվածով մշակվել են 2017-2025 թթ.-ի տարածքային զարգացման ռազմավարություններ: Իսկ ընդհանրապես բնակչության կենսամակարդակի բևեռացումը մեղմելու լավագույն տարբերակը համալիր միջոցառումների կիրառումն է՝ եկամուտների վերաբաշխման քաղաքականության զուգակցումը մարդկային կապիտալում ներդրումների իրականացմանը, լայնամասշտաբ, զբաղվածությանը նպաստող, տնտեսական աճին միտված տնտեսական քաղաքականությանը:

3.3 Բնակչության զանգվածային աղքատացումը և որս դրսևորման ձևերը

Մի կողմից երկրի սոցիալ-տնտեսական համակարգային խորը ճգնաժամը, մյուս կողմից ըստ եկամուտների և սպառման բնակչության անմախաղեպ բևեռացումը 1994-1996 թթ.-ին Հայաստանի Հանրապետության բնակչության կեսից ավելին դարձրին աղքատ:

Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանում աղքատության խորացման և մասշտաբային ծավալման առաջին փուլը 1988 թ.-ի դեկտեմ-

բերյան կործանարար երկրաշարժն էր, որը ոչ միայն տասնյակ հազարավոր մարդկային կյանք խլեց, այլև ոչնչացրեց երկրի արտադրական կարողությունների ավելի քան մեկ երրորդը: Դա Հայաստանում զանգվածային աղքատության սկիզբն էր, որը, ըստ էության, կարելի է անվանել բնական աղետի աղքատություն:

ՀՀ աղքատության ծավալման երկրորդ առանձնահատկությունը Ղարաբաղյան հակամարտության աղքատությունն է: Քառամյա դարաբաղյան պատերազմը հսկայական վնաս հասցրեց առանց այն էլ երկրաշարժից խոցված Հայաստանին, նրա տնտեսությանը և բնակչության սոցիալական վիճակին: Այդ ամենն էլ ավելի սրեց սոցիալական լարվածությունը Հայաստանում:

Ինչպես ԱՊՀ բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում բնակչության համընդհանուր զանգվածային աղքատացումը տեղի ունեցավ պլանային տնտեսությունից շուկայական տնտեսական համակարգին անցնելու դժվարին վերափոխումների հետևանքով: Տնտեսական սրընթաց անկումը, զանգվածային գործազրկությունը, բնակչության ավանդների սառեցումը, եկամուտների և հարստության խիստ բևեռացված բաշխումն այն սոցիալ-տնտեսական օբյեկտիվ պատճառներն էին, որոնք և ծնեցին տրանսֆորմացիոն աղքատությունը: Ընդ որում՝ տրանսֆորմացիոն աղքատությունը հանկարծախաս բնույթ ունի և սոցիալ-հոգեբանական ցավագին հետևանքներ ունեցավ արագ հաջողություններ ակնկալող ժողովուրդների շրջանում, քանի որ գերիշխում էր այն մտայնությունը, թե անցումը շուկային կլինի արագ և սեղմ ժամկետներում, տեղի կունենա սոցիալ-տնտեսական ընդհանուր բարգավաճում: Իրականում ճիշտ հակառակը կատարվեց: Շուկայական մոդելին անցնելու սոցիալ-տնտեսական վերափոխումներն ընթացան շատ դանդաղ, կոռումպացված և մեծ սխալներով ու բացթողումներով: Արդյունքում ստացվեց ոչ թե բարգավաճում, այլ հասարակության մի ստվար մասի աղքատացում: Ընդ որում՝ տրանսֆորմացիոն աղքատությունը, որպես կանոն, հարկադիր բնույթ ունի: Եթե ժամանակակից սոցիալամետ շուկայական տնտեսություններում աղքատ բնակչությունը՝ գործազուրկները, անտույնները, մուրացկանները, հասարակությունից օտարվածները և

ուրիշներ, հիմնականում իրենք են կամովին ընտրում իրենց կարգավիճակը, ապա ետոցիալիստական երկրների աղքատները ստիպված են համակերպվում փոփոխված իրադրությանը, ու երկար ժամանակ աղքատի կարգավիճակում մնալուց հետո են նրանց մոտ վերանում տնտեսական գործունեություն ծավալելու հնարավորությունները, ձգտումները, խթանները, աղքատությունը դառնում է իրողություն և ապրելակերպ:

1978 թ.-ի գարնանը Երևանի պետական համալսարանը հանդիսավորությամբ նշում էր *ամերիկահայ մեծ գրող Վիլյամ Սարոյանի* ծննդյան 70-ամյակը: Համալսարանի լեվի-լեցուն մեծ *դահլիճում համալսարանի ռեկտոր ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը գրողին շնորհավորեց*, որից հետո սկսվեց հարցերի պատասխանը: Այն հարցին, թե ում եք համարում դժբախտ մարդ, Վիլյամ Սարոյանը մի պահ լռեց և հետո ասաց. «*Դժբախտը աղքատ մարդն է, որը բանտարկված չէ, հիվանդ չէ, բայց անկարող է իրեն և իր բարեկամներին օգնել*»:

Այո՛, աղքատությունը մեծ դժբախտություն է, սոցիալական դժբախտություն:

Աղքատությունը նոր երևույթ չէ: Այն դարերով գոյություն է ունեցել և ընդգրկել է մարդկային հոծ զանգվածներ, աշխարհամասեր, տարածաշրջաններ: Աղքատությունը գոյություն է ունեցել և գոյություն ունի ոչ միայն տնտեսապես հետամնաց երկրներում, այլ նաև՝ զարգացած: Այն տարբեր երկրների, տարբեր ժողովուրդների համար ունի առաջացման, գոյատևման և վերարտադրության ինչպես ընդհանուր, այնպես էլ՝ տարբեր պատճառներ և գործոններ: Միատեսակ չեն նաև աղքատության դրսևորման ձևերը, սրությունը, խորությունը և սոցիալ-տնտեսական հետևանքները:

Աղքատությունը չափելու և գնահատելու համար անհրաժեշտ է սկսել նրանից, թե ում կարելի է համարել աղքատ, ինչ մեթոդով որոշել այդ հարցը: Տեսականորեն և գործնականում այդ հիմնախնդիրը լուծվում է բազմաստիճան համակարգված մոտեցումներով կամ մոդելներով: Աղքատության որոշման, չափման և գնահատման տրամաբանական մոտեցումներից մեկը կարող ենք անվանել գոյատև-

ման մոդել, իսկ մյուսն ավելի լայն ու ընդգրկուն է և կոչվում է մարդկային զարգացման մոդել: Նշված երկու մոտեցումների (մոդելների) սկզբունքային տարբերությունը և առանձնահատկությունն այն է, թե որպես արժեքային գնահատման շեմ՝ կենսամիջոցների ինչպիսի որակական և քանակական հավաքածու ենք ընտրում: Դա միաժամանակ նշանակում է, թե ինչ որակավորման մարդկային կապիտալի վերարտադրությունն է ընկած արժեքային գնահատման շեմի հիմքում:

Գոյարևման մոդելով աղքատությունը չափելու և գնահատելու հիմքում որպես արժեքային շեմ ենթադրվում են (դիտարկվում են) կենսամիջոցների այն հավաքածուն և այն քանակը, որն անհրաժեշտ է մարդու ֆիզիկական գոյատևման, սովից չմեռնելու նվազագույն պահանջմունքները բավարարելու համար: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է որակավորում չունեցող աշխատուժի վերարտադրությանը կամ ընդհանրապես մարդու ֆիզիկական գոյությանը: Այստեղից էլ ձևավորվեց կամ առաջ եկավ աղքատության գիծը որոշելու նվազագույն սպառողական զամբյուղի գաղափարը կամ մոդելը: Ընդ որում՝ գոյատևման մոդելով աղքատության գիծը որոշվում է նվազագույն պարենային սպառողական զամբյուղով:

Նվազագույն պարենային սպառողական զամբյուղը կազմում է սպառողական ընդհանուր զամբյուղի մի մասը: Աղքատության պարենային գծի կառուցման համար վերցվում է ամենաշատ օգտագործվող սննդամթերքի 24 տեսակ: Ըստ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) առաջարկությունների՝ ոչ հարուստ երկրների համար պարենային զամբյուղի նվազագույն էներգետիկան մեկ շնչի հաշվով պետք է կազմի օրական 2100 կկալ: Ընտրված սննդամթերքի վերակշռման ճանապարհով հաշվարկվել և ստացվել է պարենային զամբյուղը (բնեղեն արտահայտությամբ), որն էլ ընդունվել է որպես նվազագույն պարենային զամբյուղ, իսկ դրա արժեքային արտահայտությունն ընդունվել է որպես աղքատության պարենային գիծ: Ընդ որում՝ աղքատության պարենային գիծը, ըստ էության, բացարձակ աղքատության գիծն է:

Հարաբերական աղքատությունը միջին շնչային օրական (ամսական, տարեկան) եկամուտների այն մակարդակն է, որը թույլ չի տալիս ունենալ տվյալ երկրին բնորոշ միջին ապրելակերպ: Ի տարբերություն բացարձակ աղքատության՝ հարաբերական աղքատությունը որպես՝ երևույթ, հնարավոր չէ վերացնել: Անգամ հոգուտ քիչ եկամուտներ ունեցողների եկամուտների՝ ընդգծված խնամակալական վերաբաշխման պայմաններում հարաբերական աղքատությունը շարունակում է գոյատևել: Կարող են միայն դրա չափերը կրճատվել և դրսևորման ձևերը փոխել:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ *աղքատությունը բնութագրվում է որպես մարդկանց կենսաբանական, սոցիալական, հոգևոր և մշակութային նվազագույն պահանջ-մոնիթորը բավարարելու անհնարինություն, անկարողություն: Բացարձակ աղքատությունը գոյաբնույտ համար անհրաժեշտ կենսամիջոցների որոշակի նվազագույն չափի ապահովման անկարողությունն է:* Այստեղից հետևում է, որ աղքատ են այն տնային տնտեսությունները, որոնց մեկ շնչին ընկնող սպառողական ծախսերը ցածր են նվազագույն սպառողական զամբյուղից, այսինքն՝ ցածր են աղքատության գծից: Շատ աղքատ են այն տնային տնտեսությունները, որոնց մեկ շնչին ընկնող սպառողական ծախսերը ցածր են նվազագույն պարենային զամբյուղի արժեքից: Ուստի աղքատության գիծը նվազագույն սպառողական զամբյուղի մեծությունն է, իսկ շատ աղքատության գիծը՝ նվազագույն պարենային զամբյուղի արժեքը:

Աղքատությունը բնութագրող մյուս ցուցանիշներն են աղքատության խորությունը և աղքատության սրությունը: Աղքատության խորությունը բնութագրում է, թե աղքատության գծից ցածր ինչ խորության վրա են աղքատները, բնակչության որ տոկոսն են կազմում: Աղքատության սրությունը ցույց է տալիս, թե որքան շատ աղքատներ են կենտրոնացած աղքատության ստորին մակարդակում, ըստ որում՝ աղքատ բնակչության ծախսերի միջին պակասորդը բնութագրում է, թե աղքատի միջին ծախսերը որքանով են պակաս աղքատության գծից¹¹³:

¹¹³ Մարդկային զարգացման հիմունքներ, Երևան, 2004, էջ 168-173

**Աղյուսակ 3.22 Բնակչության աղքատության գնահատման ցուցանիշները
ՀՀ-ում 1996-2005 թվականներին¹¹⁴**

	1996 թ.	1999 թ.	2001 թ.	2002 թ.	2003 թ.	2005 թ.
Աղքատության մակար- դակ, %	54.7	55.05	50.09	49.7	42.9	29.8
Ծայրահեղ աղքատության մակարդակ, %	27.7	22.9	16.0	13.1	7.4	4.6
Աղքատության խորություն, %	21.5	19.0	15.1	13.5	8.9	5.4
Աղքատության սրություն, %	11.1	9.0	6.1	5.2	2.8	1.6
Աղքատության ընդհանուր գիծ, դրամ	10784	11735	12019	12261	12629	20289
Աղքատության պարե- մային գիծ, դրամ	6612	7194	7368	7516	7742	13266

**Աղյուսակ 3.23 Բնակչության աղքատության գնահատման ցուցանիշները
ՀՀ-ում 2006-2015 թվականներին¹¹⁵**

Ցուցանիշների անվանումը	2006 թ.	2007 թ.	2008 թ.	2009 թ.	2014 թ.	2015 թ.
Աղքատության մակար- դակ, %	26.5	25.0	27.6	34.1	30.0	29.8
Ծայրահեղ աղքատության մակարդակ, %	4.1	3.8	1.6	3.6	2.3	2.0
Աղքատության խորություն, %	3.8	4.9	5.1	7.8	4.9	4.7
Աղքատության սրություն, %	1.1	1.5	1.4	2.4	1.4	1.3
Աղքատության ընդհանուր գիծ, դրամ	21555	23168	25188	25870	33401	34234
Աղքատության պարե- մային գիծ, դրամ	14300	15753	17232	17141	23384	24109

¹¹⁴ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ԱՎԾ, Երևան, 2004, էջ 476: Պարենային ապահովություն և աղքատություն, 2006 թ.-ի հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2007, էջ 92-93: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թ.-ի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2009, էջ 28, www.armstat.am տվյալները: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 38-41:

¹¹⁵ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2004, էջ 47: Տե՛ս նաև Պարենային ապահովություն և աղքատություն, 2006 թ.-ի հունվար-դեկտեմբեր, Երևան, 2007, էջ 92-93, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2009 թ.-ի հունվար-դեկտեմբեր, Երևան, 2010, էջ 28, www.armstat.am:

Աղյուսակներ 3.22-3.24-ում ներկայացված պաշտոնական վիճակագրական տվյալները վկայում են, որ 2005-2007 թթ.-ին աղքատությունը ՀՀ-ում դրսևորել է անկման միտում, իսկ 2008-2015 թթ.-ին՝ աճի: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Հայաստանի ՀՆԱ-ն նվազեց 14 %-ով, նվազեց նաև արտերկրի բարեկամներից ստացվող տրանսֆերտների մեծությունը: Արդյունքում 2007 թ.-ի 25.0 %-ից 2009 թ.-ին աղքատության մակարդակը դարձավ 34.1 %: Չնայած 2009-2015 թթ.-ի ժամանակահատվածում աղքատության մակարդակը նվազել է, սակայն շարունակում է մնալ բարձր: 2015 թ.-ին այն կազմել է 29.8 %, շատ աղքատների տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ՝ 10.4 %, ծայրահեղ աղքատներինը՝ 2.0 %: Սա նշանակում է, որ Հայաստանում աղքատությունը դեռ ընդգրկում է բնակչության զգալի շերտեր և դրա հաղթահարումը հրատապ խնդիր է:

Աղյուսակ 3.24. Աղքատության հիմնական ցուցանիշները 2008, 2014 և 2015 թվականներին (տոկոսներով)¹¹⁶

	2008 թ.			2014 թ.			2015 թ.					
	Ճայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ճայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ճայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	%-ը աղքատ բնակչ. մեջ	Աղքատության խորությունը	Աղքատության արտաքինը
Քաղաքային բնակավայրեր, այդ թվում՝	1,9	13,0	27,6	2,4	11,2	30,0	2,2	10,4	29,4	61,5	4,7	1,3

¹¹⁶ Հայաստանի սոցիալական ոլորտները և աղքատությունը, Երևան, 2016, էջ 40:

Երևան	1,1	8,1	20,1	2,0	9,0	25,2	2,0	8,3	25,0	27,4	3,9	1,1
Այլ քա- ղաք- ներ	2,8	18,2	35,8	2,9	13,6	35,1	2,4	12,8	34,4	34,1	5,5	1,5
Գյուղա- կան բնակա- վայրեր	1,2	11,9	27,5	2,0	10,4	29,9	1,7	10,3	30,4	38,5	1,9	1,3
Ընդա- մե- նը	1,6	12,6	27,6	2,3	10,9	30,0	2,0	10,4	29,8	100	4,7	1,3

Ուշադրության են արժանի 2004-2015 թթ.-ի ժամանակահատվածում Հայաստանի աղքատության մակարդակի ցուցանիշների զարգացումները և փոփոխությունները, որոնք արտացոլվում են Աղյուսակ 3.25-ում: Ինչպես նկատում ենք, 2004-2015 թթ.-ի ընթացքում Հայաստանում աղքատության մակարդակը նվազել է 44 %-ով՝ մոտ 54 %-ից դառնալով 29.8 %: Ծայրահեղ աղքատության մակարդակը նվազել է 55 %-ով՝ 2004 թ.-ի 4.4 %-ի համեմատ 2015 թ.-ին կազմելով 2.0 %:

Աղյուսակ 3.25. ՀՀ աղքատության մակարդակի ցուցանիշների զարգացման ընթացքը 2004-2015 թվականներին (տոկոսներով)¹¹⁷

Տարիներ	Ոչ աղքատ բնակչության մակարդակը	Աղքատ բնակչության մակարդակը		
		նրանցից՝ շատ աղքատ բնակչության մակարդակը		
				այդ թվում՝ ծայրահեղ աղքատ բնակչության մակարդակը
2004	46,5	53,5	32,6	4,4
2007	73,6	26,4	14,5	2,0
2009	65,9	34,1	20,1	3,6
2010	64,2	34,1	20,1	3,6
2015	70,2	29,8	10,4	2,0

¹¹⁷ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 41:

2004-2015 թթ.-ին Հայաստանում աղքատության հիմնական ցուցանիշների որոշ դրական տեղաշարժերը չեն փրկում վիճակը: 2015 թ.-ին աղքատների ընդհանուր թվաքանակը կազմել է 900 հազար մարդ, նրանցից շատ աղքատների թվաքանակը (ներառյալ ծայրահեղ աղքատները)՝ մոտ 310 հազար, իսկ ծայրահեղ աղքատներինը՝ 60 հազար¹¹⁸: Երեք միլիոնից էլ պակաս բնակչության մեջ 900 հազարը մեծ թիվ է, քանի որ այսօր Հայաստանում 3 մարդուց մեկը շարունակում է մնալ աղքատ: Դա ցավալի վիճակ է, որը խիստ սահմանափակում է ընտանիքների ներդրումների չափերը մարդկային կապիտալի զարգացումներում:

Աղքատության հետ սերտորեն կապված է գործազրկության երևույթը: Գործազուրկները համարվում են առավել վտանգված խումբ, քանի որ հանրապետությունում սահմանված գործազրկության նպաստի միջին չափը բավարար չէ գործազուրկի և նրա ընտանիքի նվազագույն պահանջմունքները բավարարելու համար: Ըստ ՀՀ ԱՎԾ իրականացրած ընտրանքային հետազոտության տվյալների՝ 2006 թ.-ին գործազուրկների 41.2 %-ն աղքատ էր, իսկ 8.7 %-ը՝ շատ աղքատ: 2008 թ.-ին այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 27.6 և 5.3 %¹¹⁹:

2015 թ.-ին աշխատանք չունեցող տնային տնտեսություններում աղքատության մակարդակը կազմել է 35.2 %, որը 6.5 տոկոսային կետով բարձր է միջին հանրապետական մակարդակից, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 3.2 %՝ միջին հանրապետական մակարդակը գերազանցելով 1.7 անգամ (Աղյուսակ 3.26)¹²⁰:

Ինչպես նշվել է նախորդ բաժիններում, աշխատավարձերի տարբերակումը բազմասպեկտ կտրվածքներով որոշիչ դեր է խաղում տնային տնտեսությունների կենսամակարդակի ձևավորման, այդ թվում՝ նաև աղքատության առաջացման գործում:

Զբաղվածության ներկայիս ճյուղային կառուցվածքում արտադրողականության ցածր մակարդակով աչքի ընկնող ճյուղերում (գյու-

¹¹⁸ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 40:

¹¹⁹ Նույն տեղում, էջ 48:

¹²⁰ Նույն տեղում, էջ 55:

դատնետեսություն, կրթություն, առողջապահություն, մշակույթ) ձևավորված աշխատավարձի մակարդակները, չնայած վերջին տարիներին դրսևորված աճի որոշ միտումներին, շարունակում են մնալ շատ ցածր: Նշված ճյուղերում զբաղվածները և նրանց ընտանիքի անդամները այլ եկամուտների բացակայության դեպքում համալրում են աղքատ բնակչության շարքերը: Ըստ ՀՀ-ում իրականացված աղքատության հետազոտությունների արդյունքների՝ *զբաղվածությունը դեռևս աղքատությունից խուսափելու գրավականը* չէ: Այսպես, 2007 թ.-ին աղքատ էր զբաղվածների 45.2 %-ը¹²¹, 2015 թ.-ին՝ մեկ զբաղված անդամ ունեցող տնային տնտեսությունների 30.7 %-ը, երկու զբաղված անդամ ունեցողների 27.4 %-ը և երեք ու ավելի զբաղված անդամ ունեցողների 25.4 %-ը (Աղյուսակ 3.26):

Աղյուսակ 3.26. Հայաստանում աղքատության մակարդակն ըստ տնային տնտեսությունում աշխատող անդամների թվաքանակի 2008 և 2015 թվականներին (15-75 տարիքի) (տոկոսներով)¹²²

Տնային տնտեսությունում աշխատող անդամների թվաքանակը	2008թ.		2015թ.			
	Ցայրսին աղքատ	Աղքատ	Ցայրսին աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ	%-ը համեմատելով բնակչության մեջ
Ոչ ոք չի աշխատում	5,7	46,6	3,2	35,2	14,7	12,0
Աշխատում է մեկ անդամ	2,8	32,5	3,1	30,7	23,5	22,6
Աշխատում են 2 անդամներ	0,7	26,0	1,2	27,4	32,0	33,5
Աշխատում են 3-ից ավելի անդամներ	1,1	24,9	0,9	25,4	23,8	26,9
Ընդամենը	1,9	29,5	1,9	28,7	100	100

¹²¹ Հայաստանի սոցիալական պատկերը և ազբատությունը, Երևան, 2008, էջ 38:

¹²² Նույն տեղում, էջ 56:

Զբաղված աղքատները հիմնականում բյուջետային ոլորտի աշխատողներն են, որոնք ստանում են միջինից ցածր աշխատավարձ: Նման իրավիճակում զբաղվածության ընդլայնումն այդ ճյուղերում կամ դրա կրճատման զսպումը, ի հաշիվ աշխատավարձի ցածր մակարդակի, հեռանկարային չի կարող համարվել ո՛չ աղքատության կամ անհավասարության կրճատման, ո՛չ էլ կենսամակարդակի բարձրացման տեսանկյունից: Թեև վերջին տարիներին ՀՀ-ում նկատվել է ինչպես նվազագույն, այնպես էլ միջին անվանական աշխատավարձերի բարձրացում (Աղյուսակ 3.27), այնուամենայնիվ այդ միջոցառումները դեռևս աղքատության հաղթահարման և եկամուտների անհավասարության կրճատման վրա էական ազդեցություն չեն թողնում:

Աղյուսակ 3.27. Աշխատավարձի սահմանված նվազագույն չափը, միջին ամսական անվանական և իրական աշխատավարձերը 2003-2016 թվականներին (դրամ)¹²³

	Աշխատավարձի օրենքով սահմանված նվազագույն չափը	Միջին ամսական անվանական աշխատավարձը	Իրական աշխատավարձը
2003 թ.	5 000	34 783	33 222
2004 թ.	13 000	43 445	40 603
2005 թ.	13 000	52 060	51 750
2006 թ.	15 000	62 293	60 537
2007 թ.	20 000	77 776	74 498
2008 թ.	25 000	91 331	83 790
2009 թ.	30 000	101 895	95 544
2010 թ.	32 500	108 840	-
2012 թ.	32 500	140 739	-
2013 թ.	35 000	146 524	138 491
2014 թ.	50 000	158 580	153 961

¹²³ Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թ.-ի հունվար-դեկտեմբեր, Երևան, 2017, էջ 15: www.armstat.am, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 91:

2015թ.	50 000	171 615	165 492
2016թ.	55 000	188 851	-

Աղյուսակ 3.28. ՀՀ բնակչության աղքատությունն ըստ տնային տնտեսության չափի 2005-2009 թվականներին¹²⁴

S/տ ան- դամների թիվը	Աղքատների տեսակարար կշիռը (տոկոս)			Ծայրահեղ աղքատների տեսակա- րար կշիռը (տոկոս)		
	2005 թ.	2007 թ.	2009 թ.	2005 թ.	2007 թ.	2009 թ.
1	15.7	18.5	19.7	1.9	1.0	1.7
2	18.7	17.0	23.9	2.1	1.6	1.6
3	18.9	17.9	23.0	3.2	2.2	1.1
4	25.0	18.4	29.2	4.0	2.2	1.5
5	34.8	27.4	35.7	4.7	3.8	4.0
6	34.0	33.0	41.3	6.1	4.3	5.5
7 և ավելի	46.8	33.8	51.6	7.2	8.6	8.5

Աղյուսակ 3.29. ՀՀ բնակչության աղքատությունն ըստ տնային տնտեսության չափի 2008 և 2015 թվականներին¹²⁵

S/տ ան- դամների թիվը	2008 թ.		2015 թ.			
	Ծայրա- հեղ աղ- քատ	Աղքատ	Ծայրա- հեղ աղ- քատ	Աղքատ	%-ն աղ- քատ բնակ- չության մեջ	%-ն ընդ- հանուր բնակչու- թյան մեջ
1	0.9	17.2	0.8	11.5	1.8	4.6
2	0.8	19.0	1.5	20.1	7.9	11.8
3	1.0	18.8	1.4	22.7	11.5	15.1
4	0.9	23.6	1.1	27.5	19.2	20.8
5	1.9	30.3	2.0	29.8	19.4	19.3
6	2.8	34.7	1.7	38.0	20.4	16.0
7 և ավելի	2.4	38.2	5.4	47.6	19.8	12.4
Ընդամենը	1.6	27.6	2.0	29.8	100	100

¹²⁴ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2010, էջ 90:

¹²⁵ Նույն տեղում, էջ 52:

Աղքատության ռիսկերն աճում են տնային տնտեսության չափի անին զուգահեռ: Հայաստանի մարզերում տնային տնտեսություններն ունեն ավելի շատ երեխաներ, ուստի փոքր տնային տնտեսությունների համեմատ՝ եկամուտների ավելի ցածր մակարդակ: Ընդ որում՝ վերջին տարիներին բազմաճանաչ ընտանիքների աղքատության մակարդակն աճել է. եթե 2008 թ.-ին աղքատ էր յոթ և ավելի անդամ ունեցող տնային տնտեսությունների 38.2 %-ը, ապա 2015 թ.-ին՝ 47.6 %-ը (Աղյուսակներ 3.28 և 3.29):

Հետաքրքիր է նաև աղքատության և բնակչության կրթական մակարդակի կախվածությունը: Քանի որ մարդկային կապիտալը, որի կարևոր բնութագրիչներից է բնակչության կրթական մակարդակը, բարձր եկամուտների աղբյուր է, այդ պատճառով այն հակադարձ համեմատական է աղքատության մակարդակին: Այսպես, 2015 թ.-ին աղքատ էին ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների 33.4 %-ը և բարձրագույն կրթություն ունեցողների 15.7 %-ը, 2007 թ.-ին՝ համապատասխանաբար 28.0 և 11.9 %-ները (Աղյուսակներ 3.30 և 3.31): Հետևաբար, աղքատության կրճատման արդյունավետ և հեռանկարային ուղին կրթական մակարդակի բարձրացումն է:

Աղյուսակ 3.30. ՀՀ բնակչության աղքատությունն ըստ կրթական մակարդակի, տոկոսներով¹²⁶

Կրթության մակարդակը	Աղքատ			Ծայրահեղ աղքատ		
	2005 թ.	2007 թ.	2009 թ.	2005 թ.	2007 թ.	2009 թ.
Տարրական	29.9	31.4	46.4	4.6	2.9	5.6
Թերի միջնակարգ	37.0	27.7	45.4	6.7	5.3	6.1
Միջնակարգ ընդհանուր	34.4	28.0	37.4	5.3	4.0	4.1
Միջնակարգ մասնագիտական	26.1	22.5	30.3	3.8	3.1	2.6
Բարձրագույն	15.4	11.9	16.9	1.9	1.1	1.7

¹²⁶ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2010, էջ 91:

**Աղյուսակ 3.31. ՀՀ աղքատությունն ըստ կրթության մակարդակի
(16 և բարձր տարիքի բնակչություն)¹²⁷**

Կրթության մակարդակը	2008 թ.		2015 թ.			
	Ցայրահել աղքատ	Աղքատ	Ցայրահել աղքատ	Աղքատ	%-ը աղքատ. մեջ (համեմատվող բնակչության մեջ)	%-ը համեմատվող բնակչության մեջ
Տարրական և ցածր	4,2	36,1	6,9	54,	3,4	1,8
Թերի միջնակարգ	3,2	40,1	5,2	43,	13,9	9,2
Միջնակարգ ընդհանուր	1,7	30,2	1,8	33,	51,2	44,1
Միջնակարգ մասնագիտական	1,0	21,9	1,7	24,	19,5	22,9
Բարձրագույն	0,4	14,7	0,3	15,	12,0	22,0
Ընդամենը	1,6	26,6	1,8	28,	100	100

**Աղյուսակ 3.32. Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի և ք.
Երևանի 2009 թվականին (տոկոսներով)¹²⁸**

	Ցայրահել աղքատ	Աղքատ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ	Աղքատության խտություն	Աղքատության սրություն
ք. Երևան	2.1	26.7	34.5	5.4	16
Արագածոտն	1.6	25.4	3.7	4.6	1.2
Արարատ	3.4	39.8	7.6	9.0	2.7
Արմավիր	3.7	31.3	8.2	7.3	2.3
Գեղարքունիք	2.2	40.4	6.6	8.2	2.2
Լոռի	7.7	41.7	10.3	11.5	4.1
Կոտայք	6.6	43.0	10.0	11.3	3.8
Շիրակ	5.5	47.2	9.0	11.2	35

¹²⁷ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 55:

¹²⁸ Նույն տեղում, էջ 40:

Սյունիք	2.2	23.4	4.0	4.7	1.3
Վայոց ձոր	1.6	30.3	1.9	6.2	1.7
Տավուշ	1.8	31.3	4.2	6.7	2.0
Ընդամենը	3.6	34.1	100	7.8	2.4

Աղքատությունը Հայաստանի Հանրապետությունում հավասարաչափ չի բաշխվում: Տարբերությունները դրսևորվում են նախ և առաջ ըստ բնակավայրերի և ըստ մարզերի: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում 2015 թ.-ին աղքատության մակարդակի ցուցանիշները գերազանցել են 2008 թ.-ի ցուցանիշները ինչպես երկրի մակարդակով, այնպես էլ բոլոր մարզերում և Երևանում: Աճել է նաև ծայրահեղ աղքատության մակարդակը (Աղյուսակներ 3.32 և 3.33):

Աղյուսակ 3.33. ՀՀ աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի և ք. Երևանի (տոկոսներով)¹²⁹

	2008 թ.		2015 թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
Երևան	1,1	20,1	2,0	25,0	27,4	32,7
Արագածոտն	0,5	20,3	0,4	16,1	2,1	3,9
Արարատ	1,6	31,3	1,3	27,3	8,1	8,8
Արմավիր	0,7	24,5	2,1	29,6	9,2	9,3
Գեղարքունիք	0,4	32	1,3	32,1	7,4	6,8
Լոռի	2,8	34,2	2,8	36,2	11,5	9,5
Կոտայք	2,1	39,5	2,3	35,9	12,2	10,1
Շիրակ	4,6	42,4	3,9	45,3	11,8	7,7
Սյունիք	1,3	20,2	0,7	24,5	3,7	4,5
Տավուշ	1,7	23,2	2,0	35,3	5,5	4,7
Ընդամենը	1,6	27,6	2,0	29,8	100	100

¹²⁹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 44:

2009 թ.-ին աղքատության մակարդակը միջին հանրապետականից բարձր էր ՀՀ Շիրակի, Կոտայքի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում: 2008 թ.-ի համեմատ 2015 թ.-ին Արարատի մարզում աղքատությունը միջին հանրապետական ցուցանիշից նվազել է, իսկ Տավուշի մարզում՝ աճել: Անցումային ողջ ժամանակահատվածում Շիրակի մարզում գրանցվել է ՀՀ ամենաբարձր աղքատության մակարդակը: 2009 թ.-ին այս մարզում աղքատության գծից ցածր էր բնակչության 47.2 %-ը, 2015 թ.-ին՝ 45.0 %-ը: Դա բացատրվում է սոցիալ-տնտեսական մի շարք գործոններով: Մասնավորապես ՀՀ Շիրակի մարզը 1988 թ.-ի ավերիչ երկրաշարժից առավել տուժած բնակավայրերով շարունակում է մնալ հանրապետության ամենաաղքատ տարածաշրջանը:

Աղքատության առավել ռիսկային խմբերն են Աղետի գոտու բնակչությունը, փախստականները, որոնք հիմնականում բնակություն են հաստատել Հայաստանի տարբեր մարզերում, գործազուրկները, բազմանդամ տնային տնտեսությունները, թոշակառուները, հաշմանդամները և այլն: Խոցելի խմբերից աղքատության խորության և սրության ցուցանիշներով առանձնանում են հատկապես փախստականները, ինչը դրսևորվում է աղքատությանն ուղեկցող այնպիսի գործոններով, ինչպիսիք են երիտասարդների լայնածավալ արտագաղթը, բնակչության ծերացումը, գործազրկությունը, բնակարանային վատթարագույն պայմանները, որոնք, ըստ էության, աղքատության ոչ դրամական ցուցանիշներ են:

Աղյուսակ 3.34. Աղքատության մակարդակի միտումները 2008 և 2009 թվականներին գյուղ-քաղաք կտրվածքով (տոկոսներով)¹³⁰

	2008 թ.		2009 թ.	
	Աղքատ	Ճայրահեղ աղքատ	Աղքատ	Ճայրահեղ աղքատ
Գյուղական բնակավայրեր	27.5	1.2	33.7	1.7
Քաղաքային բնակավայրեր	27.6	1.9	34.9	4.6

¹³⁰ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2010, էջ 64:

Ընդամենը	27.6	1.6	34.1	3.6
----------	------	-----	------	-----

Կարևոր ենք համարում անդրադառնալ նաև աղքատության ցուցանիշների վերլուծությանը՝ *գյուղ-քաղաք կտրվածքով*: Համաձայն ստացված գնահատականների՝ 2009 թ.-ին աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում ավելի ցածր էր, քան միջին հանրապետական և քաղաքային բնակավայրերի աղքատության մակարդակը (Աղյուսակ 3.34):

Գյուղական բնակավայրերում գրանցվել են ծայրահեղ աղքատ բնակչության ամենացածր, իսկ Երևանից դուրս այլ քաղաքներում՝ ամենաբարձր ցուցանիշները: Նման ցուցանիշները վկայում են, որ բնամթերային գյուղատնտեսությունը կարևոր դեր ունի մարդկանց ծայրահեղ աղքատությունից դուրս բերելու գործում: Հարկ է նշել նաև, որ գյուղաբնակ աղքատները հիմնականում զբաղված են գյուղատնտեսական գործունեությամբ, իսկ ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղված է նրանց չնչին մասը: Մինչդեռ զբաղվածությունը ոչ գյուղատնտեսական հատվածում միջին հաշվով առավել եկամտաբեր է և կարող է համդես գալ որպես գյուղաբնակ աղքատների համար եկամուտների ավելացման, հետևաբար նաև գյուղական բնակչության աղքատության կրճատումը պայմանավորող հիմնական գործոն: Միջին հաշվով 2009 թ.-ին գյուղատնտեսական գործունեությունն ապահովել է գյուղաբնակ տնային տնտեսությունների ամբողջական եկամտի միայն 35.6 %-ը՝ 2008 թ.-ի 38.8 %-ի համեմատ: Ինքնազբաղվածությունից ստացված եկամտի տեսակարար կշիռը 2008-2009 թթ.-ին նվազել է 22 %-ով: Միևնույն ժամանակ կրճատվել է վարձու աշխատանքից ստացված եկամտի տեսակարար կշիռը՝ 2009 թ.-ին կազմելով 26.5 % 2008 թ.-ի 29.6 %-ի դիմաց: Գյուղաբնակ տնային տնտեսությունների ամբողջական եկամուտների կազմում ավելացել է պետական տրանսֆերտների՝ կենսաթոշակների ու սոցիալական աջակցության մասնաբաժինը, մի փոքր նվազել է մասնավոր տրանսֆերտների բաժինը. 2008 թ.-ի 6.6 %-ի դիմաց 2009 թ.-ին կազմելով 6.5 %:

2015 թ.-ին պատկերը փոխվել է. աղքատության մակարդակը միջին հանրապետականից ցածր է միայն մայրաքաղաքում: 2014 թ.-ի համեմատ 2015 թ.-ին աղքատության ցուցանիշները քաղաքային բնակավայրերում ցույց են տալիս աղքատության մի փոքր կրճատում, մինչդեռ գյուղական բնակավայրերում՝ աճ: Գյուղերում աղքատության մակարդակը, աճելով 2008 թ.-ից հետո ընկած ողջ ժամանակահատվածում, 2008 թ.-ի 27.5 %-ից 2015 թ.-ին հասնել է 30.4 %-ի (Աղյուսակ 3.35): Ինչպես աղքատության մակարդակը, այնպես էլ ծայրահեղ աղքատության ամենաբարձր մակարդակը քաղաքային բնակավայրերում է (բացի Երևանից). 2015 թ.-ին այդ ցուցանիշները եղել են համապատասխանաբար 34.4 և 2.4 %:

Աղյուսակ 3.35. ՀՀ աղքատության հիմնական ցուցանիշները 2008, 2014 և 2015 թվականներին գյուղ-քաղաք կտրվածքով (տոկոսներով)¹³¹

	2008թ.			2014թ.			2015թ.					
	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	%-ը ցուցանիշից ստոման 2008թ.	Աղքատության խոստովանողներ	Աղքատության ցուցանիշներ
Քաղաքային բնակավայրեր	1.9	13.0	27.6	2.4	11.2	30.0	2.2	10.4	29.4	61.5	4.7	1.3
Զ. Երևան	1.1	8.1	20.1	2.0	9.0	25.2	2.0	8.3	25.0	27.4	3.9	1.1

¹³¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, Երևան, էջ 40:

Այլ քա- ղաք- ներ	2.8	18.2	35.8	2.9	13.6	35.1	2.4	12.8	34.4	34.1	5.5	1.5
Գյու- ղա- կան բնա- կա- վայ- րեր	1.2	11.9	27.5	2.0	10.4	29.9	1.7	10.3	30.4	38.5	4.9	1.3
Ըն- դամե- նը	1.6	12.6	27.6	2.3	10.9	30.0	2.0	10.4	29.8	100	4.7	1.3

Թեև վերջին տարիներին ինչպես աղքատության, այնպես էլ ծայրահեղ աղքատության ցուցանիշները փոքր-ինչ նվազել են ՀՀ բոլոր մարզերում և Երևանում, այնուհանդերձ աղքատության հաղթահարումը, տնտեսության զարգացման կառուցվածքային և տարածաշրջանային անհամասնությունների համահարթեցումը և բնակչության եկամուտների տարբերությունների կրճատումը պետք է հանդիսանան պետության սոցիալական քաղաքականության գերակայությունները: Ինչպես նախորդ տարիներին, բնակչությունն ավելի աղքատ է աշխարհագրական բարձր դիրք ունեցող, սահմանամերձ, մայրաքաղաքից մեծ հեռավորության վրա գտնվող բնակավայրերում, այն մարզերում, որտեղ գյուղատնտեսության զարգացման համար պայմաններն առավել անբարենպաստ են (ենթակառուցվածքների թերզարգացվածություն (ճանապարհներ, կապ, գյուղմթերքի մշակման, մթերման և պահպանման հնարավորություններ), փոքր հողակտոր, հողի ոռոգման սահմանափակ հնարավորություն, սահմանափակ ֆինանսական ռեսուրսներ, գյուղտեխնիկայի բացակայություն և այլն): Բնականաբար, այս և մի շարք այլ հիմնախնդիրների լուծումը պահանջում է հասցեականացված պետական քաղաքականության իրագործում:

Մարդկային կապիտալում ներդրումների չափերը, դինամիկան, վերջին հաշվով, կախված են երկրի *մակրոտնտեսական զարգա-*

ցումներից, ՀՆԱ-ի աճից ու կառուցվածքային փոփոխություններից: Այդ պատճառով նախ անդրադառնա՞նք վերջին տարիների՝ 2000-2016 թթ.-ի մակրոտնտեսական զարգացումների բնութագրիչներին: 2000-2008 թթ.-ին Հայաստանի մակրոտնտեսական բնութագրիչները զարգանում էին դրական միտումներով: Հայաստանի Հանրապետությունն ամբողջությամբ վերցրած զարգանում էր երկնիշ թվերով, որը նաև բնակչության կենսամակարդակի համապատասխան աճի և աղքատության կրճատման հնարավորություն տվեց: Այսպես, եթե 1996 թ.-ին աղքատության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում 54.7 % էր, ապա 2006 թ.-ին այն իջավ և կազմեց 26.5 % (2008 թ.-ին՝ 27.6 %): Ընդ որում՝ ավելի մեծ չափերով իջավ ծայրահեղ աղքատության մակարդակը. 1996 թ.-ի 27.7 %-ից 2006 թ.-ին այն իջավ և կազմեց ընդամենը 2.7 %, 2008 թ.-ին՝ արդեն՝ 1.6 %¹³²: Աղքատության խորությունը 1996 թ.-ի 21.5 %-ից 2006 թ.-ին կազմեց 5.9 և 2008 թ.-ին՝ 5.1 %, իսկ աղքատության սրությունը՝ 1996 թ.-ի 11.1 %-ից 2006 թ.-ին՝ 1.7 և 2008 թ.-ին՝ 1.4 %: Աճեցին աղքատության ընդհանուր և պարենային գծերը: Աղքատության ընդհանուր գիծը 1996 թ.-ի 10784 դրամից 2008 թ.-ին հասավ 25188 դրամի, իսկ աղքատության պարենային գիծը 1996 թ.-ի 6612 դրամից 2008 թ.-ին հասավ 17232 դրամի¹³³:

**Աղյուսակ 3.36. Հայաստանի մակրոտնտեսական ցուցանիշները
2012-2016 թվականներին**¹³⁴

	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.
Ամվանական ՀՆԱ (մլն դրամ)	4 266 460.5	4 555 638.2	4 828 626.3	5 032 089.0	-

¹³² Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 64:

¹³³ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ.-ի հունվար-դեկտեմբերին, Երևան, 2010, էջ 28:

¹³⁴ Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թ.-ի հունվար-դեկտեմբեր, Երևան, 2017, էջ 9-10, 16: Տե՛ս նաև Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 33:

Իրական ՀՆԱ (մլն դրամ), նախորդ տարվա միջին տարեկան գներով	-	4 405 450.9	4 721 560.7	4 974 223.0	-
ՀՆԱ աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %	107.2	103.3	103. 6	103.0	-
ՀՆԱ մեկ շնչի հաշվով (դրամ)	1 410 820	1 507 491	1 602 172	1 674 795	-
Գործազրկության մակարդակ (տոկոս)	17.3	16.2	17.6	18.5	-
Միջին ամսական անվանական աշխատավարձ (դրամ)	140 739	146 524	158 580	171 615	188 851
Սղաճ (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ), %	2.6	5.8	3.0	3.7	-1.4
Համախմբված բյուջեի պակասույթ (ՀՆԱ-ի նկատմամբ, %)	-1.4	-1.6	-1.9	-4.8	-
Արտաքին առևտրի հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)՝ ըստ ներմուծման ՍԻՖ գների	-2 881.0	-2 907.2	-2 877.1	-1 753.9	-1 509.5
ԱՄՆ դոլարի փոխանակ-	401.76	409.63	415.92	477.92	480.49

ման արժեքը (ժամանա- կաշրջանի մի- ջինը), դրամ					
ՀՀ արտաքին պետական պարտք (մլն. ԱՄՆ դոլար)	3 739.1	3 899.1	3 785.2	4 316.2	4 805.6
ՀՀ արտաքին պետական պարտք (% ՀՆԱ-ի նկատ- մամբ)	35.2	35.1	32.5	41.0	-

2004-2008 թթ. ընթացքում տնտեսության գրեթե բոլոր հատվածների կայուն տնտեսական աճը հանգեցրել էր տնտեսության զգալի կառուցվածքային տեղաշարժերի: Հատկապես նկատելի էր շինարարության աճի բարձր տեմպը, որն ապահովել էր 2008 թ.-ի ՀՆԱ-ի աճի 39.1 %-ը, ՀՆԱ-ի կառուցվածքում դրա տեսակարար կշիռը հասել էր մինչև 25.3 %-ի:¹³⁵

2008 թ.-ի համաշխարհային տնտեսական ճգնաժամը հարվածեց Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացումներին: Նշված դրական տեղաշարժերի արդյունքում բարելավված աղքատությունը բնութագրող ցուցանիշները կրկին վատթարացան, 2009 թ.-ին աղքատության մակարդակը հասավ 34. %-ի, նրանցից՝ շատ աղքատ բնակչության մակարդակը՝ 20.1 %-ի: 2009 թ.-ին գրանցվեց իրական ՀՆԱ-ի 14.1 % անկում, ընդ որում՝ շինարարության ծավալների մեծ չափով անկումը (41.6 %) կազմեց ՀՆԱ-ի անկման 74.5 %-ը, և ՀՆԱ-ի կառուցվածքում վերջինիս տեսակարար կշիռը նվազեց մինչև 18.6 %:¹³⁶

2010 թ.-ին արդեն Հայաստանում գրանցվեց 2.2 %, իսկ 2011 թ.-ին՝ 4.7 % տնտեսական աճ: 2012 թ.-ին տնտեսական աճը զգալի էր՝ 7.2 % (Աղյուսակ 3.36), սակայն դեռ բավարար չէր 2008 թ.-ի աղքատության մակարդակին վերադառնալու համար: 2013 թ.-ին 3.3 %

¹³⁵ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 32:

¹³⁶ Նույն տեղում, էջ 32:

տնտեսական աճի պայմաններում երկրում աղքատության մակարդակը նվազեց միայն 0.4 տոկոսային կետով և կազմեց 32.0 %: 2014 թ.-ին գրանցվեց աղքատության մակարդակի նվազում 2 տոկոսային կետով: 2015 թ.-ին ՀՀ աղքատության մակարդակը առանձնապես չբարելավվեց, այն նվազեց ընդամենը 0.2 տոկոսային կետով և կազմեց 29.8 %՝ 2008 թ.-ին արձանագրված 27.6 %-ի դիմաց: Շատ աղքատների տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ կազմեց 10.4 %՝ 2008 թ.-ին արձանագրված 12.6 %-ի դիմաց, ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 2.0 %՝ 2008 թ.-ին արձանագրված 1.6 %-ի դիմաց: Նման իրավիճակի պատճառներից էր տնօրինվող եկամտի աճի տեմպերի դանդաղումը արտաքին պահանջարկի աճի տեմպերի նվազման, փոխարժեքի արժեզրկման, Ռուսաստանից ներհոսող դրամական փոխանցումների կրճատման արդյունքում:

Այսպիսով՝ 2010-2016 թթ. ընթացքում տնտեսական աճը նպաստել է Հայաստանի բոլոր տնային տնտեսությունների սպառման ծավալների աճին և աղքատության կրճատմանը, սակայն երկրում աղքատ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը 2016 թ.-ին դեռևս ավելի մեծ է, քան մինչև համաշխարհային տնտեսական ճգնաժամն էր: Տնտեսական աճի շնորհիվ ավելանում են եկամտային բոլոր քվինտիլների սպառողական ծախսերը, և նվազում է աղքատությունը, սակայն ողջ բնակչության համեմատ ամենացածր եկամուտ ունեցող 40 %-ի պարագայում սպառողական ծախսերի ծավալն ավելի դանդաղ է աճել, քան ողջ բնակչության դեպքում: Աճի բաշխվածությունն ի նպաստ աղքատ խավի չի եղել: Վերջին տարիներին գրանցված մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի շնորհիվ Հայաստանը, Համաշխարհային բանկի դասակարգմամբ, աղքատ երկրների խմբից տեղափոխվեց ստորին միջին եկամուտներով երկրների խումբ, սակայն աղքատության մակարդակը դեռևս մնում է մտահոգիչ:

Համաշխարհային բանկի գնահատականներով՝ 2010-2014 թթ.-ի ընթացքում աղքատությունը ՀՀ-ում նվազել է, սակայն Հայաստանը դեռևս աղքատության ամենաբարձր մակարդակն ունեցող երկրներից է Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում: 2009 թ.-ի համաշ-

խարհային տնտեսական ճգնաժամից հետո երկիրը աղքատության և ընդհանուր բարեկեցության մասով շատ փոքր առաջընթաց է ունեցել: Մեկ շնչի հաշվով մինևույն ՀՆԱ-ի ցուցանիշն ունեցող այլ երկրներում գրանցվել է աղքատության ավելի ցածր մակարդակ. տնտեսական աճի և կյանքի պայմանների բաշխվածության բնույթը տարբերվում է տարածաշրջանի այլ երկրներից: 2014 թ.-ին Հայաստանի բնակչության 26.3 %-ն ապրում էր 2.5 ԱՄՆ դոլարի գնողունակությամբ համարժեք միջազգային աղքատության գծից ներքև¹³⁷:

Անցումային տնտեսությամբ երկրների համար մարդկային կապիտալի զարգացման մակարդակը բարեկեցության բարձրացման առաջատար գործոն է: Մարդկային կապիտալում ներդրումներ կատարելու վրա հիմնված աճի ուղի ընտրած երկրները տնտեսական զարգացման և բնակչության բարեկեցության աճի պլանում հասել են ապշեցուցիչ արդյունքների, իսկ մարդկային կապիտալում ներդրումները անմիջական կախվածության մեջ են հասարակության աղքատության մակարդակից: Որքան մեծ է աղքատությունը, այնքան փոքր են մարդկային կապիտալում ներդրումներ կատարելու հնարավորությունները և ծավալները: Մարդկային կապիտալի զարգացումների, այդ թվում՝ ներդրումների վրա որոշակի դրական ազդեցություն են թողնում համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին կատարվող հատկացումները:

Աղյուսակ 3.37. ՀՀ համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսերը 2008-2015 թվականներին (տոկոսներով, համախմբված բյուջեի ծախսերի նկատմամբ)¹³⁸

	2008 թ.	2012 թ.	2015 թ.
Կրթության ոլորտ	13,7	12,9	11,2
Առողջապահության ոլորտ	6	6,2	6
Մշակույթ, տեղեկատվական ոլորտ, սպորտ, կրոն	2,4	2,8	2,7
Կենսաբոշակներ	18,8	19,8	20

¹³⁷ Հարավային Կովկասի աղքատության հարցերի թիմ: Համաշխարհային բանկի աղքատության և հավասարության վարչություն, 4 հոկտեմբերի, 2016:

¹³⁸ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2016, Երևան, էջ 34:

Կենսաթոշակներ ՀՆԱ-ի նկատմամբ (տոկոսներ)	4,4	4,8	5,7
Այլ սոցիալական ծրագրեր	7,0	8,6	6,8
Ընդամենը սոցիալական ոլորտին ուղղված փաստացի ծախսեր	47,9	50,3	46,7

Աղյուսակ 3.38. Պետական և համայնքային բյուջեներից սոցիալական ոլորտներին ուղղված ծախսումների բաժինը ՀՆԱ-ում, տոկոս¹³⁹

Պետական և համայնքային բյուջեներից ծախսումների բաժինը ՀՆԱ-ի նկատմամբ, %	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.
առողջապահության ոլորտում	1.5	1.4	1.6	1.7
կրթության ոլորտում	3.1	3.0	3.1	3.2

Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 3.37-ի տվյալները, 2008-2015 թթ.-ին համախմբված բյուջեից սոցիալական ոլորտներին ուղղված ծախսերը մեծ փոփոխություններ չեն կրել. դրանք կազմել են ծախսերի 47-50 %-ը: 2012-2015 թթ.-ին ժամանակահատվածում պետական և համայնքային բյուջեներից ծախսումների բաժինը կրթության ոլորտում կազմել է ՀՆԱ-ի 3.0-3.2 %-ը, առողջապահության ոլորտում՝ ՀՆԱ-ի 1.4-1.7 %-ը (Աղյուսակ 3.38):

Աղքատության հաղթահարման համար Հայաստանին 2014 թ.-ին անհրաժեշտ էր 66.2 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 1.4 % կազմող գումար, իսկ 2015 թ.-ին՝ 71.4 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 1.4 % կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների՝ ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին (Աղյուսակ 3.39): Ծայրահեղ աղքատության վերացումը 2014 թ.-ին պահանջում էր 2.5 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 0.05 %-ը, 2015 թ.-ին՝ 1.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 0.04 %-ը՝ ի հավելումն ծայրահեղ աղքատներին արդեն իսկ ուղղված սոցիալական աջակցության և ապահովելով բարձր հասցեականություն: Միջազգային փորձը վկայում է, որ սոցիալական աջակցության տրամադրման անբերի հասցեականություն ապահո-

¹³⁹ Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թ.-ի հունվար-դեկտեմբեր, Երևան, 2017, էջ 17-18:

վելը շատ անհավանական է, ուստի աղքատության հաղթահարման համար պահանջվող փաստացի միջոցներն իրականում շատ ավելին են: Բարձր հասցեականություն ապահովելու նպատակով պահանջվող ռեսուրսների համեմատ ազատական տնտեսակարգով երկրներում աղքատության հաղթահարման համար պահանջվող նվազագույն ռեսուրսները հարկ է առնվազն կրկնապատկել:

Մարդկային զարգացման և մարդկային կապիտալի հետազոտություններում և վերլուծություններում այսօր որոշակի հետաքրքրություն է ներկայացնում *բազմաչափ աղքատության* հետազոտությունը, որի վերլուծությունը և ստացված արդյունքները ընդգրկված են 2016 թ.-ին Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական և վերլուծական զեկույցում: Եթե մինչ այդ բոլոր հետազոտություններում աղքատությունը ներկայացվել է բարեկեցության բաղկացուցիչներից զրկվածության, ընտանիքի պահանջմունքների բավարարման համար պահանջվող անհրաժեշտ սոցիալ-տնտեսական միջոցների սակավության տեսանկյունից, ապա բազմաչափ աղքատության ցուցանիշը գնահատում է աղքատության բազմակողմությունը, խորությունն ու տևականությունը և տալիս դրամային (ըստ սպառման ցուցանիշի) աղքատությունը լրացնող կարևոր տեղեկություններ:

Աղյուսակ 3.39.¹⁴⁰ Հայաստան. Աղքատության հաղթահարման դրամական արժեքը, 2014 և 2015 թվականներին

	2014 թ.		2015 թ.	
	ծայրահեղ աղքատ	աղքատ	ծայրահեղ աղքատ	աղքատ
Աղքատների միջին սպառումը (դրամ, մեկ չափահասին համարժեք, ամսական)	20394	34163	21 652	35 054
Աղքատության գիծ (դրամ, մեկ չափահասին համարժեք, ամսական)	23384	40264	24 109	41 698

¹⁴⁰ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2015, էջ 48: Տե՛ս նաև Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 48:

Աղբատներին պահանջվող լրացուցիչ սպառում (դրամ, ամսական)	2990	6101	2 457	6 644
Պակասությունը՝ աղբատների համար անհրաժեշտ լրացուցիչ սպառում աղբատության գծի նկատմամբ (տոկոսներով)	12.8	15.2	10.2	15.9
ՀՆԱ (մլրդ դրամ)	4843.2		5 032.1	
Անհրաժեշտ բյուջե (մլրդ դրամ)	2.5*	66.2*	1.8*	71.4*
Անհրաժեշտ բյուջեն որպես տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ	0.05	1.4	0.04	1.4

* Հաշվարկվում է՝ բազմապատկելով մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակն աղբատության մակարդակով և աղբատներին պահանջվող լրացուցիչ տարեկան (Աղյուսակ 3.39-ում բերված է ամսական պահանջվող լրացուցիչ սպառումը) սպառման մեծությամբ:

Աղյուսակ 3.40. Բազմաչափ աղբատության գնահատման համար ընտրված չափումները և ցուցանիշները¹⁴¹

Չափում՝ հիմնական կարիքներ	Տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե
Ծայրահեղ աղբատություն	Անկարող է բավարարել սննդամթերքի նվազագույն պահանջները
Արժանապատիվ կյանք	Չունի ֆինանսական միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում սնունդ կամ հագուստ գնելու համար
Մարդասիրական օգնություն	Կենսագործունեությունն ապահովելու հարցում կախված է մարդասիրական օգնությունից
Դրամական փոխանցումներից կախվածություն	Հիմնական կենսագործունեությունն ապահովելու հարցում կախված է դրամական փոխանցումներից կամ գտնվում է ծայրահեղ (պարենային) աղբատության մեջ
Չափում՝ բնակարանային պայմաններ	Տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե
Բնակարանային պայմաններից բախրվածություն	Չունի պատշաճ բնակարան, մասնավորապես բնակարանային պայմանները գնահատվել են որպես վատ կամ շատ վատ

¹⁴¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, Երևան, 2016, էջ 65-66:

Պատշաճ բնակարան	Չունի պատշաճ բնակարան, մասնավորապես բնակարանը կապիտալ վերանորոգման կարիք ունի, խոնավ է, գտնվում է հետնախորշերում կամ հին է, հատակածածկը և պատերը նորմալ վիճակում չեն
Գերբնակեցվածություն	Հասանելի բնակման կետեր չի գերազանցում մեկ չափահաս անձի հաշվով 20 քառակուսի մետրը
Առողջ ջեռուցում	Որպես ջեռուցման առաջնային աղբյուր՝ օգտագործում է փայտ, ածուխ և այլն
Կենտրոնացված ջրամատակարարում	Չունի կենտրոնացված ջրամատակարարման համակարգի հնարավորություն
Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն	Չունի կենտրոնացված ջրահեռացման կամ աղբահանության համակարգի հնարավորություն
Հոսող տաք ջուր	Չունի հոսող տաք ջրի համակարգի (դրսից օգտվելու) հնարավորություն
Վճարովի հանրային ծառայությունների որակ	Բավարարված չէ վճարովի ծառայությունների մեկ երրորդ կամ ավելի մասից՝ ջրամատակարարում, ջրահեռացում, աղբահանություն, հեռախոս, էլեկտրամատակարարում, փոստ, բանկային ծառայություններ, ոռոգում, հասարակական տրանսպորտ
Տրանսպորտային հասանելիություն	Չունի տրանսպորտից օգտվելու հնարավորություն. տրանսպորտային համակարգը և (շուրջամյա) ճանապարհային ցանցը բացակայում են կամ վատ վիճակում են

Չափում՝ կրթություն	Տնային տնտեսությունը համարվում է գրկված, եթե.
Միջնակարգ կրթության բացակայություն	15-75 տարեկան բոլոր անդամներն ունեն միջնակարգ (արհեստագործական կամ մասնագիտական) կրթամակարդակից ցածր կրթություն
Դպրոցական կրթության համակարգում ընդգրկվածություն	Ապագայի հետ կապված պարտադիր ուսման 6-17 տարեկան տարիքի առնվազն մեկ երեխա դպրոց չի հաճախում
Կրթական ծառայությունների հասանելիություն	Չունի հարևանությամբ գործող մանկապարտեզից, լրիվ միջնակարգ կրթության դպրոցից, առաջնային (ընդհանուր) կրթության դպրոցից օգտվելու հնարավորություն

Չափում՝ աշխատանք	Տնային տնտեսությունները համարվում են գրկված, եթե
Աշխատանքի շուկային մասնակցություն	Ընտանիքի անդամների կեսից ավելին աշխատանքի շուկային չի մասնակցում
Երկարաժամկետ գործազրկություն	Առնվազն մեկ անդամը երկարաժամկետ (կառուցվածքային) գործազրկության մեջ է
Արժանավայել աշխատանք	Չունի արժանավայել աշխատանքի հնարավորություն՝ ինքնուրույն գրավածի կարգավիճակով
Թերգրավածություն	Չունի աշխատանքի շուկային լիարժեք մասնակցության հնարավորություն (բոլորը բերգրավված են)

Չափում՝ առողջապահություն	Տնային տնտեսությունը համարվում է գրկված, եթե
Բնականոն գործունեության դադարեցում	Առնվազն մեկ անգամ հիվանդության, վնասվածքի կամ վատառողջության պատճառով դադարեցրել է բնականոն գործունեությունը
Առողջապահական ծառայությունների մատչելիություն	Չունի ֆինանսական միջոցներ բուժիաստատությունների կողմից մատուցվող առողջապահական (բացառությամբ ստամոքսաբուժական) ծառայությունների, բժշկի կողմից նշանակված ստուգումների և բուժման դիմաց վճարումների համար (անվճար ծառայությունների անհասանելության դեպքում)
Առողջապահության ծառայությունների հասանելիություն	Չունի հարևանությամբ գործող շտապ օգնության ծառայություններից, դեղատնից օգտվելու հնարավորություն
Առողջապահական ծառայությունների որակ	Գոհ չէ առողջապահական ծառայություններից

Հայաստանում բազմաչափ աղքատությունը ուսումնասիրելու ժամանակ ընտրվել են աղքատությունը բնութագրող այնպիսի գրկանքներ, որոնց քննարկումը ավելի լիարժեք է դարձնում աղքատության իրական պատկերը և կարող է նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացման արդյունավետ քաղաքականության

մշակմանը: Եթե բնակչության աղքատության գնահատման հիմնական գործիքը ընդհանրապես սպառողական զամբյուղն է՝ իր դրսևորումներով, ապա բազմաչափ աղքատությունը ուսումնասիրելու և գնահատելու հետ կիրառվում է չափումների և ցուցանիշների մի ծավալուն համակարգ, որը ներառում է տնային տնտեսության հիմնական կարիքները, բնակարանային պայմանները, կրթությունը, աշխատանքը և առողջապահությունը¹⁴²:

Դա հետազոտման և վերլուծության մոր մոտեցում է, որը հնարավորություն է տալիս նորովի գնահատելու և վերլուծելու աղքատության բազմաշերտ բնույթը և դրա արդյունքներով մշակելու և իրականացնելու աղքատության հաղթահարման բազմակողմ քաղաքականություն: Ըստ 2016 թ.-ի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցի՝ Հայաստանի բազմաչափ աղքատությունը առաջին անգամ դիտարկվել է հինգ չափումներով, որոնք շարադրված են Աղյուսակ 3.40-ում:

Աղյուսակում շարադրված բազմաչափ աղքատության գնահատման համար ընտրված հինգ չափումները և ցուցանիշները հնարավորություն են տալիս *բացահայտելու և ամփոփելու մի շարք զրբկանքների մասով առկա տեղեկատվությունը և դրանով իսկ բացահայտելու աղքատության բազմակողմանիությունը, խորությունն ու տևականությունը*: Այն ոչ միայն բացահայտում է որոշակի զրկանքներ կրող տնային տնտեսություններում ապրող անհատների տեսակարար կշիռը, այլև հաշվի է առնում նույն անհատին միաժամանակ բաժին ընկած զրկանքների քանակն ու փոխհամընկնումը:

¹⁴² Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 63-65:

Աղյուսակ 3.41. Բազմաչափ աղքատ համարվող տնային տնտեսություններում ապրող անհատների տեսակարար կշիռն ըստ բնակավայրի (բնակչության տոկոս)¹⁴³

Տարիներ	Ընդամենը	Գյուղական բնակավայրեր	Քաղաքային ալյ բնակավայրեր	Երևան
2010	41,2	52,8	37,2	32,6
2013	30,5	37,2	27,6	25,8
2015	29,1	32,7	25,9	28,0

Աղյուսակ 3.41-ում ներկայացված է, թե 2010-2015 թթ.-ին Հայաստանի բազմաչափ աղքատ համարվող տնային տնտեսություններում ապրող անհատների տեսակարար կշիռը ինչ փոփոխությունների է ենթարկվել ըստ բնակավայրերի: Հայաստանում բազմաչափ աղքատության մակարդակը 2010 թ.-ի 41.2 %-ից 2015 թ.-ին նվազել և կազմել է 29.1 %: Ընդ որում՝ գյուղական բնակչության բազմաչափ աղքատության մակարդակը 32.7 % է: Բազմաչափ աղքատության մակարդակն ամենից ցածր է Երևանում. 2010 թ.-ին այն եղել է 32,6 %, իսկ 2015 թ.-ին՝ ընդամենը 28.0 %: Սակայն այդ դրական միտումներով հանդերձ, 2015 թ.-ին ՀՀ բնակչության 29 %-ից ավելին գտնվում է բազմաչափ աղքատության պայմաններում:

Հետազոտության արդյունքում արձանագրվել է, որ 2015 թ.-ին բնակարանային պայմանների մասով ավելի քան մեկ միլիոն մարդ գրկանքներ է կրում: Առողջապահության և կրթության մասով համապատասխանաբար 0.7 մլն և 0.05 մլն մարդ փոխհամընկնող գրկանքներ է կրում, շուրջ 0.18 մլն մարդ գտնվում է աղքատության պարենային գծից ներքև և խոցելի է խոշոր ցնցումների, օրինակ՝ դրամական փոխանցումների ծավալի կրճատման նկատմամբ: Քաղաքականության առումով ոչ դրամային աղքատության հինգ չափումներից յուրաքանչյուրի մասով գրկանքներ կրող անհատների ընդհանուր թվի վերաբերյալ պատկերացում ունենալը կարևոր է այդ զբաղմունքների նվազեցմանն ուղղված քայլեր ձեռնարկելու համար:

¹⁴³ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 67:

Աղքատության մակարդակի և անհավասարության կրճատման, բնակչության ընդհանուր բարեկեցության աճի ապահովման հարցում ՀՀ կառավարությունը պետք է տնտեսական գործընթացների շատ ակտիվ մասնակից լինի: Դրա համար անհրաժեշտ են. 1) կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովմանն ուղղված պետական քաղաքականություն, 2) նպատակային ներդրումներ, 3) աղքատների ու խոցելի խմբերի պաշտպանություն:

Աղքատության կրճատմանը կնպաստեն զբաղվածության և աշխատավարձերի ավելի բարձր մակարդակը, սոցիալական ոլորտում կատարվող ծախսերը, օրինակ՝ կենսաթոշակները, ընտանեկան նպաստի ծրագրով (ԸՆԾ) կատարվող փոխանցումները: Այդուհանդերձ, Հայաստանում ԸՆԾ-ի ներգործությունը փոքր է, քանի որ բյուջեն սահմանափակ է: Կենսաթոշակների մակարդակը բավականին ցածր է. 2012 թ.-ին կենսաթոշակի միջին ամսական չափը ՀՀ-ում կազմել է 29696 դրամ, 2013 թ.-ին՝ 29122 դրամ, 2014 թ.-ին՝ 35813 դրամ և 2015 թ.-ին՝ 40441 դրամ¹⁴⁴:

Զբաղվածության հիմնախնդիրը լուծելու նպատակով անհրաժեշտ է բարելավել բիզնեսի արտաքին միջավայրը: Բացի այդ՝ պետությունը կարող է տնտեսական լծակներով կարգավորել աշխատանքի ներքին շուկաները: Մասնավորապես ձեռներեցներին անհրաժեշտ է շահագրգռել, որպեսզի նրանք մասնակցեն զբաղվածության պետական ծրագրերին՝ տալով նրանց ինչպես տնտեսական արտոնություններ՝ հարկային արտոնություններ, արտոնյալ վարկեր և ներդրումներ, այնպես էլ անուղղակի խրախուսման միջոցներ (օրինակ՝ ստեղծելով ֆիրմայի բարձր վարկանիշ): Նման միջոցները ֆինանսական խոշոր ծախսեր չեն պահանջում:

Մարդկային կապիտալի արդյունավետ վերարտադրության զարգացումների և առաջիկա հեռանկարների տեսանկյուններից խիստ մտահոգիչ է Հայաստանի Հանրապետությունում *մանկական աղքատության* սուր բնույթը:

¹⁴⁴ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 95:

Ըստ Համաշխարհային բանկի խմբի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի նոր համատեղ վերլուծության՝ երկու անգամ ավելի հավանական է, որ երեխաներն ապրեն ծայրահեղ աղքատության մեջ, քան մեծահասակները: «Վերջ դնենք ծայրահեղ աղքատությանը՝ կենդրոնանալով երեխաների վրա» ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2013 թ.-ին աշխարհում գրեթե 385 միլիոն երեխա ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ: Երեխաները կազմել են ուսումնասիրության ենթարկված բնակչության մեկ երրորդը, սակայն ծայրահեղ աղքատների կեսը: Ոչ միայն ավելի հավանական է, որ երեխաներն ապրեն ծայրահեղ աղքատության մեջ, այլև աղքատության ազդեցությունը ամենավնասակարն է երեխաների համար: Նրանք ամենախոցելիների մեջ ամենախոցելին են, իսկ ամենափոքր երեխաները վատթարագույն վիճակում են, քանի որ նրանց կողմից կրած գրկանքների արդյունքում վտանգվում է երեխաների ֆիզիկական և մտավոր զարգացումը:¹⁴⁵

2016 թ.-ին հրապարակվեց Համաշխարհային բանկի խմբի նոր կարևորագույն ուսումնասիրությունը՝ «Աղքատությունը և բարեկեցությունը բոլորին 2016՝ անդրադառնալով անհավասարությանը», ըստ որի՝ աշխարհում 367 միլիոն մարդ 2013 թ.-ին օրական ապրել է 1.90 ԱՄՆ դոլարով, որոնց կեսը 18 չլրացած երեխաներ ու դեռահասներ են: Աղքատության համաշխարհային գնահատականը հիմնված է 89 երկրներից հավաքագրված տվյալների վրա և ներկայացնում է զարգացող երկրների բնակչության 83 %-ը: Ենթասահարյան Աֆրիկային է բաժին ընկնում թե՛ ծայրահեղ աղքատության մեջ ապրող հինգ տարին չլրացած երեխաների 50 %-ը, թե՛ աշխարհի ծայրահեղ աղքատ երեխաների 50 %-ից ավելին: Հարավային Ասիան զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը՝ 36 %-ով, միայն Հնդկաստանում ծայրահեղ աղքատության մեջ ապրող երեխաների 30 %-ով: Ծայրահեղ աղքատության մեջ ապրող յուրաքանչյուր 5 երեխայից 4-ն ապրում են գյուղական բնակավայրերում:

¹⁴⁵ Գրեթե 385 միլիոն երեխա ապրում է ծայրահեղ աղքատության մեջ, <http://www.un.am/hy/news/498#sthash.Bvr3nklj.dpuf>

ՅՈՒՆԻՍԵՖ-ն ու Համաշխարհային բանկի խումբը աշխատում են իրենց գործընկերների հետ՝ վերջ դնելու աղքատությանը և քաջալերելու վաղ մանկական զարգացումը այնպիսի միջոցներով, ինչպիսիք են դրամական փոխանցումները, սնուցման, առողջապահության և կրթական ծրագրերը:

Համաձայն «Մանկական աղքատությունը Հայաստանում. քաղաքական և համընկնող խոցելիության ազգային վերլուծություն» գեկույցի, որն իրականացվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կողմից ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համագործակցությամբ և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Ինոչենտի հետազոտությունների գրասենյակի տեխնիկական օժանդակությամբ 2013 և 2014 թվականների տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների տվյալների հիման վրա, Հայաստանում երեք երեխայից մեկը և՛ աղքատ է, և՛ խոցելի (28.0 %): Այս երեխաները ամենախոցելին ու բացառվածն են և առաջնահերթ ուշադրության պետք է արժանանան սոցիալական քաղաքականության տեսանկյունից: Եթե Հայաստանում նյութապես աղքատ է ամեն երրորդ երեխան, ապա բազմաչափ աղքատության դրսևորումների տեսանկյունից խոցելի է երեխաների 64.0 %-ը: Միևնույն ժամանակ Հայաստանում երեխաների մեկ երրորդը խոցելի է, բայց ոչ աղքատ (36.0 %): Այս երեխաները անմիջական միջամտությունների կարիք ունեն խոցելիությունը հաղթահարելու համար և կարող են դուրս մնալ այն քաղաքականություններից, որոնք ուղղված են միայն նյութական աղքատության հաղթահարմանը: Գյուղաբնակ երեխաների 82.0 %-ը խոցելի է, մինչդեռ քաղաքաբնակների միայն 53.0 %-ն է խոցելի¹⁴⁶: Քաղաքականությունները պետք է ուղղված լինեն ենթակառուցվածքների տեսանկյունից քաղաք/գյուղ տարբերությունների հաղթահարմանը և ուժեղացնեն սոցիալական պաշտպանության համակարգը գյուղական տարածքներում՝ դրական ազդեցություն ունենալով տնային տնտեսության ընդհանուր մակարդակի վրա:

¹⁴⁶ <http://www.un.am/hy/news/498#sthash.Bvr3nklj.dpuf>

2015 թ.-ի հուլիսի 1-ից դեկտեմբերի 31-ն անցկացված ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «Երեխաների կարիքները» հետազոտության¹⁴⁷ արդյունքներով երեխաներն ավելի խոցելի են և՛ ընդհանուր, և՛ ծայրահեղ աղքատության ռիսկի նկատմամբ, քան ամբողջ բնակչությունը: Դրա մասին են վկայում Աղյուսակ 3.42-ի տվյալները. մինչև 18 տարեկան երեխաների 2.5 %-ը 2015 թ.-ին ապրում էր ծայրահեղ աղքատության, իսկ 33.7 %-ը՝ աղքատության մեջ: 2015 թ.-ին ծայրահեղ աղքատ և աղքատ է եղել հանրապետության բնակչության համապատասխանաբար 2.0 և 29.8 %-ը: 2008-2015 թթ.-ի ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում մանկական աղքատության մակարդակը 29.8 %-ից բարձրացրել է մինչև 33.7 %, նվազել է ոչ աղքատների բաժինը՝ 70.2 %-ից 66.3 %:

Աղյուսակ 3.42. Հայաստանի մանկական աղքատության ցուցանիշների զարգացման ընթացքը 2008-2015 թվականներին (տոկոսներով)¹⁴⁸

Տարիներ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ոչ աղքատ
2008	1.6	29.8	70.2
2010	3.7	41.4	58.6
2013	3.3	37.3	62.7
2015	2.5	33.7	66.3

Աղքատության միջին ցուցանիշների հետևում թաքնված է ընտանիքների կախվածությունը սոցիալական մի շարք անբարենպաստ պայմաններից և առանձնահատկություններից: Այլ հավասար պայմաններում ավելի բարձր է բազմամղում ընտանիքների երեխաների աղքատության հավանականությունը: Մինչև 18 տարեկան երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներում երեխաների 46,7 %-ը աղքատ է (բոլոր երեխաների մեջ 33.7 %-ի համեմատ), իսկ մեծ ընտանիքներում ծայրահեղ աղքատ է երեխաների 4.9 %-ը (բոլոր երեխաների 2.5 %-ի համեմատ): Մանկական աղքատության, այդ թվում՝ ծայրահեղ աղքատության ռիսկն ավելի մեծ է նաև մեկ կամ ավելի

¹⁴⁷ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 87-111:

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 87:

հաշմանդամությամբ երեխա ունեցող տնային տնտեսություններում, կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններում և այլն:

Ընտանիքի գլխավորի կրթական մակարդակի աճին զուգընթաց մանկական աղքատությունը նվազում է: Տնային տնտեսության գլխավորի աշխատանք ունենալը ևս նվազեցնում է երեխաների աղքատության հավանականությունը: Այն տնային տնտեսությունների երեխաների շրջանում, որոնց գլխավորն աշխատում է, աղքատությունը կազմում է 29.3 %՝ չաշխատողների 39.7 %-ի համեմատ: Մանկական աղքատությունն ամենաբարձրն է այն տնային տնտեսություններում, որտեղ 19-60 տարեկան չափահաս անդամներից ոչ մեկը չի աշխատում:

Մարզային կտրվածքով երեխաների աղքատության մակարդակը անհավասար է բաշխված: Երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը 2015 թ.-ին բարձր է եղել Շիրակի (5.8 %) և Լոռու (3.6 %) մարզերում: Երեխաների ընդհանուր աղքատության մակարդակը 2015 թ.-ին ամենաբարձրը եղել է Շիրակի մարզում (55.8 %), ամենացածրը՝ Արագածոտնի մարզում (14.0 %)¹⁴⁹:

Երեխաների կարիքների ուսումնասիրությունը աղքատությունը որպես մանկական աղքատության չափման եղանակ դիտարկում է սոցիալական և մշակութային տեսանկյունից: Այն ավելի շատ կարող է ազդել երեխաների զարգացման վրա, քան նյութական կարիքները:

Աղյուսակ 3.43. Տնային տնտեսությունում առկա 6-17 տարեկան երեխաների չբավարարված կարիքների մասնաբաժինն ըստ աղքատության մակարդակի 2015 թվականին (տոկոսներով)¹⁵⁰

Երեխաների կարիքները	Բոլոր երեխաները	Ոչ աղքատ երեխաներ	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Երեխաներին չեն տալիս ամենօրյա ծախսերի գրպանի փող	34,8	31,1	42,0	50,0

¹⁴⁹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 89-90:

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 102:

Երեխան չի հաճախում ատամ- նաբույժի մոտ տարին մեկ	54,6	50,9	61,7	38,6
Երեխան չունի պարապելու և խաղալու տեղ	31,6	26,2	42,4	69,3
տնից դուրս խաղալու տեղ չկա	23,6	18,8	32,2	59,1
Երեխան չունի առարկաներ ժա- մանցի համար, հեծանվի	33,9	24,9	51,4	66,6
Երեխան չունի առարկաներ սի- րած մախապիրության համար	60,7	56,2	69,3	74,4
չի հաճախում սպորտային ակումբ	67,8	66,3	70,6	66,7
չունի գրքեր՝ ընթերցելու համար	23,4	19,5	31	46,2
չունի մանկական թերթեր, ամ- սագրեր	64,1	60,4	71,4	57,1
տնից հեռու չունի մեկ շաբաթ արձակուրդ, չի հրավիրվում ժա- մանցի	57,1	51,8	67,4	65,7
ամիսը 2 անգամ ընկերներին չի հրավիրում ժամանցի	53,4	48,7	62,6	79,9
չունի անհրաժեշտ գրենական պիտույքներ	0,6	0,2	1,4	00
չունի տարբեր զբաղմունքների համար կոշիկներ	13,3	7,7	24,1	44,0

Աղյուսակ 3.43-ում ներկայացված տվյալների համաձայն՝ բոլոր երեխաների ընդհանուր թվից առավել շատ բացասական պատաս-
խաններ են տրվել սպորտային ակումբ կամ նմանատիպ խմբակ
ամիսն առնվազն մեկ անգամ այցելելու հարցին՝ 68 %-ը (աղքատ
երեխաներից՝ 71 %-ը): Չբավարարված կարիքներից երկրորդ տե-
ղում է երեխայի համար որևէ մանկական լրագիր, ամսագիր չգնելը՝
64 %-ը (աղքատ երեխաներից՝ 71 %-ը): Նմանատիպ վիճակ է մաս
երեխաների մյուս կարիքների բավարարման հարցում: Ընդ որում՝
աղքատ և ծայափեղ աղքատ երեխաների մոտ, ոչ աղքատ երեխանե-
րի համեմատ, կարիքների անբավարարվածության աստիճանն ավելի
մեծ է: Ծայրահեղ աղքատ երեխաների 74-80 %-ը գրկված է ամիսն
առնվազն երկու անգամ հրավիրվելուց ընկերների կողմից կամ հրա-
վիրելու ընկերներին ժամանցի:

Ահա այսպիսին է 2015 թ.-ին Հայաստանի Հանրապետությունում տնային տնտեսություններում առկա 6-17 տարեկան երեխաների չբավարարված կարիքների մասնաբաժինների տխուր պատկերը՝ ըստ աղքատության մակարդակի:

Աղյուսակ 3.44. Երկարաժամկետ օգտագործման ապրանքների բացակայությունը 2015 թվականին (տոկոսներով)¹⁵¹

	Բոլոր երեխաները	Աղքատ երեխաներ	Ծայրահեղ աղքատ երեխաներ
Սառնարան	3,2	6,9	24,6
Լվացքի մեքենա,	3,7	7,7	23,9
Բջջային հեռախոս	4,0	100,0	100,0
Փողեկուլ	24,9	39,1	65,6
Տեսամագնիտոֆոն	75,2	88,9	95,4
Լուսանկարչական ապարատ	61,7	73,8	85,5
Առդյոռ համակարգ	65,4	78,1	89,1
Ավտոմեքենա	60,0	83,5	100,0
Համակարգիչ	28,1	43,9	71,3

Երեխաների ըստ սպառման աղքատության վերլուծությունից բացի՝ կարևոր է ուսումնասիրել Հայաստանում երեխաների նյութական չբավորության խնդիրները: Նյութական չբավորությունը չափվում է տնային տնտեսությունում երկարաժամկետ օգտագործման ապրանքների բացակայությամբ: 2009-2015 թթ.-ին տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության մասնակից տնային տնտեսությունների առնվազն 10 %-ը ունեցել է Աղյուսակ 3.44-ում ներառված երկարաժամկետ օգտագործման ապրանքները: Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ երկարաժամկետ ապրանքների օգտագործումը էապես ցածր է աղքատ և հատկապես ծայրահեղ աղքատ ընտանիքներում: Այսպես, եթե երեխաների ընդհանուր թվաքանակի 3.2 %-ն է ապրում սառնարան չունեցող

¹⁵¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 92:

տնային տնտեսություններում, ապա աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների՝ համապատասխանաբար 6.9 և 24.6 %-ը: Եթե երեխաների ընդհանուր թվաքանակի 60.0 %-ն է ապրում ավտոմեքենա չունեցող տնային տնտեսություններում, ապա նույն ցուցանիշն աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում կազմում է համապատասխանաբար՝ 83.5 և 100 %:

Ընդհանրապես նյութական կարիքավորության մեջ է երեխաների ընդհանուր թվաքանակի 44 %-ը, իսկ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների թվում այն ավելի բարձր է և կազմում է համապատասխանաբար 69.6 % և 93.3 %:¹⁵²

2015 թ.-ին անցկացված «Երեխաների կարիքները» հետազոտության արդյունքներով, բացի վերը նշվածից, աղքատ երեխաների շրջանում բոլոր երեխաների համեմատ ավելի բարձր է կացարանային մեծաթիվ հարմարություններ չունենալու հավանականությունը¹⁵³: Երեխաների ընդհանուր թվաքանակի 39 %-ն ապրում է հետևյալ հարմարություններն ունեցող տներում՝ կենտրոնացված ջրամատակարարում, հոսող տաք ջուր, միացում կենտրոնացված կոյուղու համակարգին, կենտրոնացված գազամատակարարում, լոգարան կամ ցնցուղ, խոհանոց, հեռախոս: Աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում այդ ցուցանիշը կազմում է համապատասխանաբար՝ 27 և 15 %:

Աղքատ երեխաների շրջանում կացարանային ավելի վատ պայմաններում ապրելու հավանականությունը ևս ավելի բարձր է: Համաաղքության համար նշենք, որ եթե անբավարար ջեռուցման խնդիր ունեցող տնային տնտեսություններում է բնակվում Հայաստանի երեխաների 42 %-ը, ապա աղքատ երեխաների 52 և ծայրահեղ աղքատ երեխաների դեպքում՝ 76 %-ը: Խոնավ տնային տնտեսություններում է բնակվում աղքատ երեխաների 34 %-ը և ծայրահեղ աղքատ երեխաների 45 %-ը՝ երեխաների ընդհանուր թվաքանակի շրջանում արձանագրված 27 %-ի համեմատ:

¹⁵² Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 92:

¹⁵³ Նույն տեղում, էջ 93-97:

Աղքատ երեխաների շրջանում ավելի մեծ է մաս գերբնակեցված կացարաններում բնակվելու հավանականությունը: Եթե մեկ շնչի հաշվով շենք համարվի 0.43 կամ պակաս սենյակը, ապա երեխաների ընդհանուր թվաքանակի գերբնակեցման ցուցանիշը կկազմի 18 %, աղքատ երեխաների շրջանում՝ 24 %, իսկ ծայրահեղ աղքատ երեխաները՝ 51 %:

Աղյուսակ 3.45. Մանկական աղքատության մակարդակը տարիքային կենսաթոշակի եկամտի հաշվարկով և առանց դրա 2015 թվականին
(տոկոսներով)¹⁵⁴

Գիծ	Մանկական աղքատության մակարդակ	
	Կենսաթոշակով	Առանց կենսաթոշակի
Ծայրահեղ աղքատության գիծ	2,5	10,7
Աղքատության ընդհանուր գիծ	33,7	40,2

Սոցիալական ապահովության մպաստները էական դեր են խաղում մանկական աղքատությունը մեղմելու գործում: ՀՀ երեխաների ընդհանուր թվաքանակի 33.8 %-ն ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որոնց առնվազն մեկ անդամը ստանում է տարիքային կենսաթոշակ: Եթե կենսաթոշակները հանվեն տնային տնտեսության ընդհանուր ամսական ծախսերից, ապա մանկական ծայրահեղ աղքատության մակարդակն ավելի քան կքառապատկվի՝ 2.5 %-ից հասնելով 10.7 %-ի, իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակը 33.7 %-ից կհասնի 40.2 %-ի (Աղյուսակ 3.45):

Միևնույն ժամանակ աղքատ չհամարվող երեխաների 23.0 %-ը կհամարվի աղքատ, և ծայրահեղ աղքատ չհամարվող երեխաների 19.0 %-ը կդառնա ծայրահեղ աղքատ, եթե կենսաթոշակային եկամուտը հանվի տնային տնտեսության սպառումից:

Ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համար շատ կարևոր է ընտանեկան մպաստը: Հայաստանի երեխաների ընդհանուր թվաքանակի 23.4 %-ը ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որոնք ստանում են ընտանեկան մպաստ: Տնային

¹⁵⁴ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 98:

տնտեսության ընդհանուր ծախսերից ընտանեկան նպաստները հանելու դեպքում մանկական ծայրահեղ աղքատության մակարդակը մոտավորապես եռապատկվում է՝ 2.5%-ից հասնելով 6.9%-ի, իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակն աճում է 7.4%-ով՝ 33.7%-ից հասնելով 36.2%-ի (Աղյուսակ 3.46):

Աղյուսակ 3.46. Հայաստան. Մանկական աղքատության մակարդակն ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամտով և առանց դրա, 2015 թվականին (տոկոսներով)¹⁵⁵

Գիծ	Մանկական աղքատության մակարդակ	
	Ընտանեկան նպաստով	Առանց ընտանեկան նպաստի
Աղքատության ընդհանուր գիծ	33.7	36.2
Ծայրահեղ աղքատության գիծ	2.5	6.9

Ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտը նրանց սպառումից հանելու դեպքում աղքատ չհամարվող երեխաների 22.0 %-ը կհամարվի աղքատ, մինչդեռ ժամանակ ծայրահեղ աղքատ չհամարվող երեխաների 19.0 %-ը կհամարվի ծայրահեղ աղքատ:

Հետազոտության տվյալների համաձայն՝ երեխաների ընդհանուր թվաքանակի միայն 2.5 %-ն է ապրում երեխայի նպաստ ստացող տնային տնտեսություններում: Երեխայի նպաստի տեսքով ստացվող եկամուտը որևէ ազդեցություն չունի երեխայի աղքատ լինելու կամ չլինելու հանգամանքի վրա:

Մանկական աղքատության չափերը, նրա դրսևորման ծանր պայմանները, ոչ միայն սպառման, այլև կացարանային ոչ տանելի վիճակները անհամատեղելի են սոցիալական պետության, այդպես կոչված, հումանիստական գաղափարախոսության, մասնավորապես մարդկային կապիտալի սպորտային պայմանների, ինչպես նաև հայրենիքի պաշտպանության դիրքերում կանգնած և միշտ պատրաստ ապագա հայրենասեր զինվորների նվիրվածության և առաքելության հետ:

¹⁵⁵ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 99:

ԳԼՈՒԽ 4. ՀՀ մարդկային կապիտալի կորուստները և դրանց կանխման հիմնախնդիրները

4.1 Մարդկային կապիտալի քանակական կորուստները և հաղթահարման հիմնախնդիրները

4.1.1 Մարդկային կապիտալի ներդրումային հնարավորությունները ՀՀ անցումային ժամանակաշրջանում

Ինչպես ֆիզիկական, այնպես էլ մարդկային կապիտալի զարգացման հիմնական գործոնը, վերջին հաշվով, նրանում կատարվող ներդրումներն են, դրանց ծավալն ու արդյունավետությունը: Այդ ներդրումները նախ հասարակության կողմից տարբեր աղբյուրներից, տարբեր ձևերով ժողովրդագրական զարգացումներում կատարվող ներդրումներն են, որոնք հետազոտվում և հաշվարկվում են մարդահամարի, վիճակագրական տարեգրքերի, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղբյուրությունը» վիճակագրական վերլուծական զեկույցների և այլ նյութերում: Երկրորդ, տնային տնտեսությունների եկամուտներից կատարվող ներդրումներն են իրենց անդամների մարդկային կապիտալի որակը բարձրացնելու համար՝ հետազայում ավելի բարձր կենսամակարդակ ապահովելու ակնկալիքով:

Մարդկային կապիտալի զարգացումներում կատարվող ներդրումների չափերի և արդյունավետության արդյունքներն իրենց արտացոլումն են գտնում ամենից առաջ բնակչության քանակական փոփոխություններում: 1920 թ.-ին Հայաստանում ապրում էր 720 հազար մարդ: Բնակչության 85 %-ն անգրագետ էր: Խորհրդային Հա-

յաստանը, ԽՍՀՄ-ի բոլոր թերություններով, հակասություններով, բազմաթիվ ու բազմաբնույթ խոցելի կողմերով ու վարքագծով հանդերձ, պատմական կարճ ժամանակահատվածում դարձավ զարգացած բազմաճյուղ արդյունաբերական, արդյունավետ գործող գյուղատնտեսական և բարձր զարգացման հասած կրթության, գիտության և մշակույթի երկիր: Այդ բոլորը նյութական հնարավորություններ ստեղծեց ուշադրության կենտրոնում պահելու կրթության, գիտության, մշակույթի և առողջապահության հարցերը: Ավելին, խորհրդային իշխանությունը, իր ստեղծման առաջին շրջանից սկսած, մարդկային զարգացման այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են մատաղ սերնդի կրթությունը և դաստիարակությունը, գիտության և մշակույթի զարգացումը, բնակչությանը առողջապահության ծառայություններով ապահովելը, ինչպես նաև քաղաքային բնակչությանը բնակարաններով ապահովելը, հիմնականում իրականացնում էր անվճար (կամ արտոնյալ պայմաններով) պետության համապատասխան ֆոնդերի և ներդրումների միջոցով: Ընտանիքը նույնպես մասնակցում էր նշված սոցիալական խնդիրների լուծմանը, սակայն նրա կատարած ներդրումները պետական հսկայական ու կանոնավոր աճող ներդրումների կողքին աննշան էին:

Խորհրդային Միությունում, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանում, բնակչության սոցիալական նշված հիմնական խնդիրների լուծմանն ուղղված ներդրումները կոչվում էին սպառման հասարակական ֆոնդեր: Այդ բոլորի արդյունքում մարդկային և ժողովրդագրական զարգացումները հիմնականում գտնվեցին պետության ուշադրության ու հսկողության տակ և պատմական կարճ ժամանակահատվածում տվեցին իրենց դրական արդյունքները: Մարդկային զարգացման նպատակներով սոցիալական նշված ներդրումների արդյունքները հավաքական կերպով, ընդհանուր հիմնական գծերով իրենց դրսևորումը գտան բնակչության սպառման կառուցվածքային դրական փոփոխություններում: Դա մարդկային կապիտալի զարգացումների վրա ազդող շատ կարևոր ցուցանիշ էր, քանի որ ընտանիքի միջին շնչային եկամտի մեծության փոփոխությամբ փոխվում են ներդրումները ընտանիքի սպառման կառուցվածքում, ավելի արագ

են աճում ոչ սննդային ծախսերը: Աղյուսակ 4.1-ի տվյալները ցույց են տալիս, որ որքան փոքր է միջին շնչային եկամուտը, այնքան մեծ է սննդային ապրանքների վրա կատարված ներդրումների տեսակարար կշիռը, փոքր՝ ոչ պարենային ապրանքների վրա կատարված ներդրումների բաժինը, և հակառակը: Խորհրդային Հայաստանում նման բնույթի դիֆերենցված շնչային եկամուտներով հետազոտություն կատարվել է 1981 և 1991 թթ.-ի բանվոր-ծառայողների ընտանիքների բյուջեների մարտյան միանվագ հետազոտության նյութերով: Դրանք ավելի ներկայացուցչական և հավաստի են, քան ընտանիքների կանոնավոր ամենամյա ավանդական հետազոտությունները:

Աղյուսակ 4.1. Ընտանիքի ամբողջական եկամտի սպառման կառուցվածքը կախված միջին շնչային եկամտի տարբերություններից (1981 թ., տոկոսներով)¹⁵⁶

	Օգտագործված ամբողջական եկամուտը	սննդի համար	ոչ սննդային ապրանքների համար	ավիոլային խմիչքների համար	ծառայությունների համար	հարկերի և տուրքերի վճարելու համար	առ ծախսեր	խնայողականություն
Բոլոր ընտանիքները, այդ թվում՝	100	43.7	28.3	4.3	7.7	7.2	6.1	2.7
մինչև 50 ռուբլի	100	60.1	24.3	4.3	7.2	6.1	1.5	0.5
200 ռուբլի և ավելի	100	32.5	27.1	2.8	6.5	7.4	6.0	17.7

Խորհրդային Հայաստանում մարդկային կապիտալում ներդրումների հիմնական բաժինը կատարում էր պետությունը՝ անվճար

¹⁵⁶ Գ. Ղարիբյան, Հ. Մարգարյան, Բնակչության եկամուտների և կենսամակարդակի փոփոխությունների միտումները Հայաստանում (1980-1990 թթ.), «Բանբեր Երևանի համալսարանի», Հասարակական գիտություններ, N 1, (94) 1998, էջ 39:

դարձնելով բնակչության բժշկական սպասարկումը և մանկամսուրից մինչև ասպիրանտուրա ողջ կրթական համակարգը: Դրան գումարվում էր պետության հաշվին անվճար կամ արտոնյալ պայմաններով ընտանիքներին բնակարաններով ապահովելը և սոցիալական այլ պահանջմունքների բավարարումը (կրթաթոշակ, կենսաթոշակ, երեխաների պահպանման բազմաթիվ արտոնավճարներ և այլն): Դրանով է բացատրվում, որ պատմական կարճ ժամանակահատվածում Հայաստանը դարձավ մեծ գիտության, կրթության և զարգացած մշակույթի երկիր: Այդ բոլորը, վերջին հաշվով, մարդկային կապիտալի վրա կատարվող ներդրումներ են:

Հայաստանի անցումային տնտեսությունում մարդկային կապիտալում ներդրումային հնարավորությունները նախ կրճատվեցին 1988 թ.-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքով: Դրան գումարվեցին Ադրբեջանից ավելի քան 360 հազար թալանված փախուստականների բռնագաղթը Հայաստան, հին և նոր իշխանավորների մասնակցությամբ նոր իշխանակայացման ցավագին, երկիրը կործանող գործընթացները, ՀՀ բնակչության շուրջ 11 միլիարդ ԱՄՆ դոլարին համարժեք ավանդների սառեցումը: Այդ բոլորի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում առեղծված չափեր ընդունեց հարըստության և եկամտոտների բևեռացումը, չկայացավ միջին դասը, առաջացավ զանգվածային գործազրկություն և աղքատություն (1999 թ.-ին՝ 55 % աղքատություն)¹⁵⁷, որը և նվազագույնի հասցրեց երկրի ներդրումները մարդկային կապիտալի զարգացումներում:

1996 թ.-ից հետո ընկած ժամանակահատվածում, բարեբախտաբար, տնտեսական զարգացումները կայունացան, իսկ 2000 թ.-ից մինչև 2008 թ.-ի համաշխարհային տնտեսական ճգնաժամը ՀՀ-ում գրանցվեց երկնիշ թվերով տնտեսական աճ: Արդյունքում, 2000 թ.-ից սկսած, Հայաստանի բնակչության աղքատացման մակարդակը բոլոր չափանիշներով և ցուցանիշներով սկսեց նվազել: Սակայն

¹⁵⁷ Գ. Ղարիբյան, Հ. Մարգարյան, Ա. Խառատյան, Ա. Համբարձումյան, Մ. Եղիազարյան, Ն. Քոչինյան, Հ. Մկրտչյան, Կապիտալի նախասկզբնական կուտակման, հարստության ու եկամտոտների բևեռացման առանձնահատկությունները ՀՀ անցումային տնտեսությունում, Երևան, 2011, էջ 3-4:

2008 թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով այդ դրական գործընթացը դադարեց, աղքատության մակարդակը նորից բարձրացավ և 2015 թ.-ին կազմեց 29.8 %:

Հասկանալի է, որ շուրջ 30 % աղքատ բնակչություն ունենալու պայմաններում մարդկային կապիտալի զարգացման՝ 21-րդ դարի պահանջների ոգով ներդրումներ կատարելու շատ քիչ հնարավորություններ են մնում: Սակայն Հայաստանի բնակչությունը անգամ 1990-ական թվականների ամենածանր տարիներին կրթության նկատմամբ իր գեներտիկ դրական որակները չկորցրեց և իր վերջին նյութական հնարավորությունները ներդրեց բարձրագույն կրթության շարունակական զարգացման նպատակներին: Արդյունքում ոչ միայն շարունակեցին գործել մինչ այդ գոյություն ունեցող խորհրդային բարձրագույն ուսումնական հաստատությունները, այլև ավելացան նոր կազմակերպված տասնյակ բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ զուտ մասնավոր ներդրումների միջոցներով: Այդ ծանր տարիներին մի քանի տասնյակ նոր բացված մասնավոր բուհերը՝ բոլոր թերություններով հանդերձ, դրական մեծ դեր խաղացին մարդկային կապիտալի պահպանման և հետագա զարգացման խնդիրները լուծելու հարցում: Նախ, բարձրագույն դպրոցը աշխատանք չունեցող երիտասարդությանը փողոցից բերեց ուսումնական լսարան, գիտելիք տվեց և դաստիարակեց: Դրանով իսկ մասնավոր բուհերում սովորող երիտասարդությունը մնաց Հայաստանում, չարտագաղթեց: Երկրորդ, լրացուցիչ աշխատավարձով օգնեց նյութական ծանր պայմաններում հայտնված դասախոսներին և գիտնականներին՝ գոյատևելու, աշխատելու և գիտությամբ զբաղվելու: Այդ բոլորի շնորհիվ մասնավոր ներդրումները մարդկային կապիտալում տվեցին իրենց դրական արդյունքները: Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի բարձր որակները, անգամ այդ դժվար ու ծանր ժամանակահատվածում, շարունակվեցին պահպանվել: Դրա մասին են վկայում 2007-2008 թթ.-ը ՀՀ աշխատաշուկայի

հետազոտման տվյալները¹⁵⁸: Ըստ նշված հետազոտության արդյունքների, չնայած շուրջ մեկ միլիոն աշխատունակ բնակչության արտագաղթին, 2007-2008 թթ.-ին Հայաստանում 25-34 տարեկանների 40.6 %-ն ուներ բարձրագույն կրթություն, 28.4 %-ը՝ միջին մասնագիտական կրթություն, 6.0 %-ը՝ գիտական կոչումներ, իսկ 7.0 %-ը՝ հետբուհական կրթություն: Դա մարդկային լուրջ ներուժ է, մնում է, որ երկիրը այն արդյունավետ օգտագործի:

Մարդկային կապիտալը բարձր արդյունավետությամբ կիրառելու համար ներդրումներ են անհրաժեշտ ոչ միայն կրթության և առողջապահության խնդիրները լուծելու, այլ նաև աշխատունակ բնակչության զբաղվածությունն ապահովելու համար: Հետևաբար ներդրումները մարդկային կապիտալում բազմակողմ խնդիրներ են լուծում: Միայն կրթության և առողջապահության ներդրումներով արդյունավետ աշխատող բարձր որակավորմամբ մարդկային կապիտալ չենք ունենա: Առանց աշխատատեղերով ապահովելու խնդիրը լուծելու և զբաղվածությունն ապահովելու, հմուտ, շարունակ զարգացող և երկիրը հարստացնող մարդկային կապիտալ ունենալ չենք կարող:

Ժամանակակից Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի վերարտադրությունն ապահովող հիմնական ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը և կրթությունը, զբաղվածությունը, ինչպես նշվեց, իրականացվում է գերազանցապես մասնավոր ներդրումներով, հատկապես տնային տնտեսությունների եկամուտներով: Դրանով է բացատրվում, որ ներդրումների հնարավորությունները և չափերը կախված են տնային տնտեսությունների բյուջեների մեծություններից և զարգացման միտումներից: *Մարդկային կապիտալի ներդրումային հնարավորությունները հիմնականում արտացոլվում են բնակչության մեկ շնչի հաշվով կենսամակարդակը բնութագրող սոցիալ-փնտհասկան ցուցանիշներով*, որոնք ներկայացված են Աղյուսակ 4.2-ում:

¹⁵⁸ Գ. Ղարիբյան, Գ. Եզանյան, Ա. Համբարձումյան, Ա. Խառատյան, Կ. Ավետիսյան, Մ. Եղիազարյան, Ա. Մարտիրոսյան, Գ. Սիրոյան, Հ. Մկրտչյան, ՀՀ աշխատաշուկայի վերլուծություն (գիտահետազոտական աշխատանք), Երևան, 2010, էջ 4:

**Աղյուսակ 4.2. Տնային տնտեսությունների դրամական եկամուտների,
սպառողական ծախսերի կազմը և դրանց կառուցվածքը 2011-2015
թվականներին (միջինը մեկ շնչի հաշվով)¹⁵⁹**

	2011 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.
<i>Բոլոր եկամուտները, ընդամենը ամսական, դրամ, այդ թվում՝</i>	34206	42404	49535	52377
Աշխատանքային եկամուտներ	20460	25298	3001	33642
Սոցիալական տրամաֆերտներ	6502	7576	8308	9284
Եկամուտներ տարբեր տեսակի վաճառքներից	1741	2583	2654	2718
Դրամական այլ մուտքեր	5503	6947	8472	6733
<i>Սպառողական ծախսեր, ընդամենը ամսական, դրամ այդ թվում՝</i>	32585	36787	-	42867
Պարենային ապրանքների վրա (ներառյալ ծխախոտը)	18552	19146		20356
Ոչ պարենային ապրանքների վրա	5022	6568		8074
Ծառայությունների վրա	9011	11073		14437
<i>Դրամական եկամուտները, ընդամենը, այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %</i>	100	100	100	100
Աշխատանքային վարձատրություն	59.8	59.6	60.8	64.2
Սոցիալական տրամաֆերտներ	19.0	17.9	16.8	17.7
Եկամուտներ տարբեր տեսակի վաճառքներից	5.1	6.1	5.3	5.1
Դրամական այլ մուտքեր	16.1	16.4	17.1	13.0
<i>Սպառողական ծախսեր, ընդամենը, այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %</i>	100	100	100	100
Պարենային ապրանքների վրա (ներառյալ ծխախոտը)	56.9	52.0	49.7	47.5
Ոչ պարենային ապրանքների վրա	15.4	17.9	18.3	18.8
Ծառայությունների վրա	27.7	30.1	32.0	33.7

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի տնային տնտեսությունների մեկ շնչին ընկնող միջին ամսական դրամական եկամուտները 2011 թ.-ին կազմել են 34 206 դրամ, 2015 թ.-ին՝ 52 377 դրամ: Անգամ 42 հազար դրամը 2015 թ.-ին ՀՀ ԱՎԾ-ն Համաշխարհային բանկի աջակցությամբ հաշվարկված նվազագույն սպա-

¹⁵⁹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 102-103:

ռողական զամբյուղի պահանջների աղքատության գծի սահմաններում է:

Ինչ վերաբերում է սպառման ագրեգացված ցուցանիշին, մասնավորապես տնային տնտեսությունների մեկ շնչին ընկնող եկամտի հաշվով սպառողական ծախսերի կառուցվածքին, ակնհայտ է դառնում նույն պատկերը. պարենային ապրանքների վրա ծախսերի նման մեծ բաժինն (միջինը 55 %) արդեն բնակչության աղքատության ահազանգ է: *Հենց դա էլ բնութագրում է բնակչության, տնային տնտեսությունների մարդկային կապիտալում ներդրումներ կատարելու խիստ սահմանափակ հնարավորությունները*: Ավելին, ժամանակակից Հայաստանի Հանրապետությունը, 1990-ականների վերափոխումներից սկսած, բնորոշվում է բնակչության եկամուտների խիստ անհավասարաչափ բաշխմամբ: 1990-ականներին Ջինիի գործակիցը ՀՀ-ում 0.6 էր, որն ամենաբարձրն էր տարածաշրջանում: Այդ պատճառով անհրաժեշտ է բնակչության եկամուտները և սպառումը դիտարկել տարբերակված՝ ըստ քվինտիլային և դեցիլային խմբերի:

Աղյուսակ 4.3-ի տվյալները ցույց են տալիս, որ չնայած 1992-1994 թթ.-ին Ջինիի եկամտային գործակիցը Հայաստանի Հանրապետությունում 0.6-ից իջավ և 2015 թ.-ին կազմեց 0.34, այնուհանդերձ բնակչության եկամուտների բեռնացումը շարունակում է ահազանգող մնալ: Աղյուսակի տվյալներով, եթե բնակչության առաջին՝ ամենաաղքատ 20 % խմբի եկամուտների բաժինը ընդհանուրի մեջ 2015 թ.-ին կազմում է ընդամենը 6.0 %, ապա հինգերորդ՝ ամենահարուստ 20 % խմբի բաժինը հասնում է 47 %-ի: Հետևաբար բնակչության 80 %-ը, միասին վերցրած, 53 % եկամուտներ ունի, այսինքն՝ ընդամենը 6 %-ով ավելի, քան միայն հինգերորդ՝ 20 % հարուստ խումբը:

Աղյուսակ 4.3. Բնակչության դրամական եկամուտներն ըստ քվինտիլային խմբերի, տոկոսներով¹⁶⁰

	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2015 թ.
Դրամական եկամուտները, այդ թվում՝ ըստ բնակչության 20 % խմբերի	100	100	100	100
առաջին (առավել քիչ եկամուտներով)	7.0	7.0	5.0	6.0
երկրորդ	14.0	13.0	11.0	11.0
երրորդ	17.0	18.0	16.0	15.0
չորրորդ	24.0	25.0	23.0	21.0
հինգերորդ (առավել շատ եկամուտներով)	38.0	37.0	45.0	47.0
Եկամուտների համակենտրոնացման գործակիցը (Ջինիի ինդեքսը)	0.339	0.355	0.362	0.340

Հենց դա է ներկայացնում Հայաստանի Հանրապետության բնակչության եկամուտների անհավասարաչափ բաշխումը, հենց դրանով են պայմանավորված մարդկային կապիտալում տրանշին տրանստրոյությունների խիստ անհավասարաչափ ներդրումային հնարավորությունները:

Հայաստանի բնակչության եկամուտների և սպառման տարբերակված հետազոտությունը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը կատարել է նաև ըստ դեցիլային խմբերի, որն արտացոլված է Աղյուսակ 4.4-ում: Ինչպես նկատում ենք, եկամուտների և սպառման բաշխման բևեռացումն ավելի մեծ է ըստ դեցիլային խմբերի դիտարկման ժամանակ: Եթե 2015 թ.-ին ըստ քվինտիլային խմբերի բևեռացման դեպքում վերջին՝ 5-րդ քվինտիլային խմբի եկամուտները 1-ին քվինտիլայինի մակարդակը գերազանցում էր 7.9 անգամ (տոկոսային կետով), ապա 10-րդ ամենահարուստ խմբի եկամուտը 1-ին՝ ամենաաղքատ խմբի եկամուտների մակարդակը գերազանցել է 10.6 անգամ (տոկոսային կետով): Սա նշանակում է, որ բնակչության առաջին 10 %-ը, որը տնօրինում է ՀՀ տնային տնտեսությունների

¹⁶⁰ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 106: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 103:

ընդհանուր եկամուտների միայն 3.0 %-ը, ըստ էության, գտնվում է աղքատության գծից ներքև, և խոսք չի կարող լինել մարդկային կապիտալում լուրջ ներդրումներ կատարելու մասին: Բնակչության այդ խմբում ծայրահեղ աղքատ բնակչությունն է:

Աղյուսակ 4.4. Բնակչության եկամուտների և ծախսերի բաշխումն ըստ դեցիլային խմբերի¹⁶¹

Ըստ սպառողական ծախսերի				Ըստ դրամական եկամուտների			
Դեցիլներ	2011	2013	2015	Դեցիլներ	2011	2013	2015
Ամենաաղքատը I	3.3	3.2	3.1	Ամենաաղքատը I	1.9	2.0	3.0
II	4.7	4.8	4.5	II	3.6	3.6	3.6
III	5.7	5.7	5.6	III	4.9	5.0	4.9
IV	6.5	6.6	6.4	IV	6.2	6.0	6.0
V	7.5	7.6	7.5	V	7.4	7.3	7.3
VI	8.5	8.7	8.6	VI	8.8	8.7	8.2
VII	9.8	10.1	9.9	VII	10.7	9.8	9.6
VIII	11.5	11.9	11.6	VIII	12.9	12.0	11.7
IX	14.6	14.8	14.3	IX	16.0	15.6	14.3
Ամենահարուստը X	27.9	26.6	28.6	Ամենահարուստը X	27.6	30.1	32.0

Չնայած ՀՆԱ-ի նկատմամբ սոցիալական տրանսֆերտները մեծ գումար չեն կազմում, սակայն կարևոր դեր են կատարում աղքատության կրճատման գործում: Եթե սոցիալական տրանսֆերտների համակարգը չկայանար և չաճեր, աղքատության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում ավելի բարձր կլիներ: Աղյուսակ 4.5-ի տվյալները վկայում են, որ 2010 թ.-ին սոցիալական տրանսֆերտների չվճարման դեպքում աղքատությունը կհասներ 54.2 %-ի, իսկ 2015 թ.-ին՝ 43.7 %-ի: Ծայրահեղ աղքատության դեպքում, եթե ընտանեկան նպաստը չվճարվեր, ապա 2010 թ.-ին ծայրահեղ աղքատության մակարդակը կավելանար 7 անգամ:

¹⁶¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 105:

**Աղյուսակ 4.5. ՀՀ-ում սոցիալական տրանսֆերտների ներգործությունը
աղքատության մեղմացման վրա 2010 և 2015 թվականներին
(տոկոսներով)¹⁶²**

	Աղքատության մակարդակ		Այդ թվում՝ ծայրա- հեղ աղքատություն	
	2010 թ.	2015 թ.	2010 թ.	2015 թ.
Հետտրանսֆերտային մակարդակ (հետկրթաթոշակային և հետսոցիալական աջակցություն...)	35.8	29.8	3.0	2.0
Նախատրանսֆերտային մակարդակ (նա- խակրթաթոշակային և նախասոցիալական աջակցություն...)	54.2	43.7	20.9	18.2

Մարդկային կապիտալի վերարտադրության համակարգում որոշակի ներդրումներ են կատարվում նաև *կենդրոնացված կարգով՝ պերսոնական բյուջեի համապատասխան ծախսերով* (Աղյուսակ 4.6):

**Աղյուսակ 4.6. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի
ծախսերն ըստ ծախսերի գործառական դասակարգման (2008-2012 թթ.),
տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ¹⁶³**

	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2012 թ.
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	22.7	29.6	27.6	26.1	25.2
1. Ընդհանուր բնույթի հանրային ծա- ռայություններ	2.9	3.6	4.1	4.1	4.0
2. Պաշտպանություն	3.4	4.1	4.3	3.9	3.8
3. Հասարակական կարգ ամրապահություն և դատական գոր- ծունեություն		2.2	1.9	1.9	1.9

¹⁶² Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2014, էջ 164:

¹⁶³ Հ. Մարգարյան, Ա. Մարկոսյան, Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Երևան, 2014, էջ 121:

4. Տնտեսական հարաբերություններ	2.5	4.3	3.2	2.2	1.8
5. Շրջակա միջավայրի պաշտպանություն	0.1	0.1	0.1	0.2	0.2
6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	0.4	0.7	1.2	1.2	0.4
7. Առողջապահություն	1.4	1.8	1.6	1.7	1.6
8. Հանգիստ, մշակույթ և կրոն	0.4	0.5	0.5	0.5	0.6
9. Կրթություն	2.9	7.8	7.1	6.8	7.3
10. Սոցիալական պաշտպանություն	6.0	7.8	7.1	6.8	7.3
11. Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	1.0	1.1	0.6	1.0	1.0

Ինչպես նկատում ենք, մարդկային կապիտալի վերարտադրությանն ուղղված ՀՀ պետական բյուջեից ներդրումները (առողջապահություն, հանգիստ, մշակույթ ու կրոն, կրթություն և սոցիալական պաշտպանություն) 2012 թ.-ին կազմել են ՀՆԱ-ի շուրջ 17.0 %-ը, որը Հայաստանում չի կարող ապահովել մարդկային կապիտալում լուրջ ներդրումների իրականացումը: Դրանով է բացատրվում, որ 2013 թ.-ի մայիսի 16-ին ՀՀ կառավարության ընդունած ծրագրում առանձնահատուկ ուշադրության են արժանացել մարդկային կապիտալի զարգացման խնդիրները: Հայաստանի Հանրապետության կառավարության սույն ծրագրում առաջին անգամ (3.4 բաժնում) մարդկային կապիտալի հիմնախնդիրները դիտարկվում և քննարկվում են որպես կառավարության առաջիկա գործունեության հիմնական ուղղություն: Դրանում *կարևորվում են մարդկային կապիտալի ինչպես քանակական, այնպես էլ որակական վերարտադրության և ժողովրդագրական խնդիրները*, որոնց և հանգամանորեն կանդիդատանք աշխատանքում:

4.1.2 Մարդկային կապիտալի բնական կորուստները

Մարդկային կապիտալի քանակական բաղադրիչը բնակչությունն է: Մեր խնդիրը այժմ Հայաստանի Հանրապետության բնակչության քանակական կորուստների պատճառների վերլուծությունը և դրանց կանխման ուղիների բացահայտումն է:

Հայտնի է, որ բնակչության թվի ավելացումը կամ նվազեցումը պայմանավորված է.

- բնակչության բնական աճով կամ նվազմամբ,
- բնակչության թվաքանակի մեխանիկական փոփոխություններով՝ ներգաղթով կամ արտագաղթով:

Բնակչության բնական աճը բարդ, բազմագործոն սոցիալական երևույթ է, որի արմատները հասնում են հասարակության տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական, վերջին հաշվով, որն ամենակարևորն է, ընտանեկան զարգացումներին: Դրանով է բացատրվում այն հետաքրքրությունը, որ ունեցել է և ունի տնտեսագիտությունը բնակչության վերարտադրության հարցերում: Այդպես, դեռևս մերկանտիլիզմի դպրոցում, որտեղ ազգի հարստության ստեղծումը բացատրվում էր երկրի ներքին և հատկապես արտաքին առևտրով, բնակչության մեծ թիվը և աճը համարվում էր երկրի հարստանալու գործոն: Որքան մեծ է բնակչության թիվը, այլ գործոնների ազդեցությունների ամփոփոխ մնալու պայմաններում, այնքան մեծ կլինեն առևտրի ծավալները և ազգի հարստացման հնարավորությունները:

Բնակչության խնդիրներն իրենց արտացոլումն են գտել դասական տնտեսագիտության զարգացումներում:¹⁶⁴ Վ. Պետտին Անգլիայի հարստությունը գնահատում էր 417 միլիոն ֆունտ: Դրա 250 միլիոն ֆունտը վերագրում էր նյութական հարստությանը, իսկ մնացածը՝ մարդկային կապիտալին, բնակչությանը: Վ. Պետտին բնակչության վերարտադրության տնտեսական պայման համարեց նվա-

¹⁶⁴ Գ. Ղարիբջան, Գ. Եգանյան, Ա. Մարտիրոսյան, Բնակչության վերարտադրության հիմնախնդիրների արտացոլումը տնտեսագիտական մտքի զարգացումներում, «Ֆինանսներ և էկոնոմիկա», N 2(66), 2006, էջ 210-217:

գագույն աշխատավարձը, որը կոչվում էր ապահովելու բանվորի ընտանիքի նվազագույն կենսական պահանջները: Ավելին, նա գտնում էր, որ չպետք է աշխատողին նվազագույնից բարձր աշխատավարձ վճարել, քանի որ այդ դեպքում կփոքրանա կիրառվող աշխատանքի ընդհանուր ծավալը և քիչ հարստություն կստեղծվի: Իհարկե, Պետտին այդ հարցում սխալվում էր, քանի որ խորամուխ չէր լինում բնակչության պահանջմունքների աճի և դրանց բավարարման համար ավելի մեծ աշխատավարձ ստանալու անհրաժեշտության մեջ: Իրականում աշխատավարձի բարձրացումը ուղեկցվում է բանվորական ընտանիքի կամ ընդհանրապես նրա պահանջմունքների ավելի արագ աճով: Արդյունքում ավելի շատ չբավարարված պահանջմունքներ են առաջանում և ավելի է մեծանում աշխատավարձի ավելյացման անհրաժեշտությունը, ուստի աշխատավարձի որոշ բարձրացումը երբեք չի փոքրացնի կիրառվող աշխատանքի ծավալը և չի կաշկանդի դրա աճը:

Բնակչության վերարտադրության կապը աշխատավարձի և նրա փոփոխությունների հետ, Վիլյամ Պետտիի ելակետային դատողությունները շարունակում են զարգանալ Ա. Սմիթի և Դ. Ռիկարդոյի աշխատություններում: Նրանք գտնում էին, որ եթե մրցակցային ազատ զարգացող տնտեսությունը աշխատում է շահութաբեր և շարունակ արվում են լրացուցիչ ներդրումներ, ապա դա անընդհատ մեծացնում է նաև աշխատաշուկայում աշխատողի նկատմամբ պահանջարկը, ինչն էլ հանգեցնում է աշխատավարձի համապատասխան աճին և դրանով իսկ ապահովում բնակչության նորմալ վերարտադրությունը: Ա. Սմիթը և Դ. Ռիկարդոն նաև դրանում էին տեսնում գուտ մրցակցային շուկայում կապիտալիստների և բանվորների շահերի ներդաշնակությունը:

Բնակչության վերարտադրության հիմնախնդիրները առանցքային տեղ զբաղեցրին Թոմաս Ռ. Մալթուսի տեսությունում: Առաջնորդվելով ընդհանրապես տնտեսական ռեսուրսների, իսկ մասնավորապես հողի և սննդի սահմանափակության իրավիճակով՝ նա գտնում էր, որ եթե բնակչության թիվն աճում է երկրաչափական պրոգրեսիայով, իսկ նրա վերարտադրության և աճի համար անհրա-

Ժեշտ կենսամիջոցների քանակը՝ թվաքանական պրոգրեսիայով, ապա մարդկությունը պետք է իր աճը սանձահարի և ենթարկի կենսամիջոցների թվաքանական պրոգրեսիայով աճի պահանջներին:

Բնակչության վերարտադրության հարցերին «Կապիտալի» առաջին հատորում անդրադարձել է նաև Կ. Մարքսը: Ս. Սմիթի և Դ. Ռիկարդոյի մեթոդաբանական հիմքով Կ. Մարքսը բնակչության վերարտադրության օրինաչափությունները ևս քննարկում է աշխատավարձի մեծության և դրա փոփոխությունների հետ ունեցած առնչություններում: Սակայն նրա մոտեցման մեջ կա սկզբունքային այն տարբերությունը, որ Կ. Մարքսը, ի տարբերություն Ս. Սմիթի և Դ. Ռիկարդոյի, աշխատուժի նկատմամբ պահանջարկը չի դիտում որպես կուտակված ողջ կապիտալի արդյունք: «Աշխատանքի նկատմամբ պահանջարկը որոշվում է ոչ թե ամբողջ կապիտալի, այլ նրա փոփոխուն բաղադրամասի չափերով, ուստի այս պահանջարկը պրոգրեսիվ կերպով քչանում է, փոխանակ նրա հետ համապատասխան աճելուն»: Դա բացատրվում է նրանով, որ կապիտալի օրգանական կազմի աճի հետևանքով կապիտալի փոփոխուն բաղադրամասը հարաբերականորեն նվազում է, որի արդյունքում «կապիտալիստական կուտակումը մշտապես արտադրում է մի հարաբերական գերբնակչություն, որը կապիտալի արժեքի աճեցման միջին պահանջմունքների տեսակետից ավելցուկ է, հետևաբար ավելորդ է»:¹⁶⁵ Դա Կ. Մարքսը համարեց արտադրության կապիտալիստական եղանակին հատուկ բնակչության օրենք: Ջ. Մ. Քեյնսի մոտեցման առանձնահատկությունն այն է, որ, բացի շուկայական սոցիալ-տնտեսական օբյեկտիվ գործընթացներից, կարևորվում է նաև պետության միջամտությունը, մասնավորապես աշխատուժի պահանջարկի ձևավորման և պետության կողմից նրա արդյունավետ կիրառման հարցերում:

Հայաստանի և ընդհանրապես հայ բնակչության հետազոտություններով տարբեր առիթներով, տարբեր ժամանակներում զբաղվել

¹⁶⁵ Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1933, էջ 598:

են Զ. Կորկոտյանը,¹⁶⁶ պրոֆ. Մ. Ադոնցը,¹⁶⁷ Լ. Դավթյանը,¹⁶⁸ Ռ. Եզանյանը և Կ. Կոյունջյանը,¹⁶⁹ պրոֆեսորներ Ա. Խ. Կարապետյանը և Ա. Ա. Կարապետյանը, հատկապես ակադեմիկոս Վ. Ե. Խոջաբեկյանը: Նրանց աշխատություններում, մասնավորապես ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի 2001 թ.-ին հրատարակած «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XIX դարի շեմին» մեծածավալ աշխատությունում հետազոտվել և վերլուծվել են Հայաստանի բնակչության վերարտադրության զարգացումները (նախախորհրդային շրջանից մինչև մեր օրերը):

Ինչպես վերը նշվեց, բնակչության փոփոխության հիմքը նրա բնական աճը կամ նվազումն է, ուստի վերլուծությունը սկսենք դրանից: Խորհրդային Հայաստանում բնակչությունը 1920 թ.-ի 720 հազարից 1985 թ.-ին հասավ ավելի քան 3.5 միլիոնի և՛ բնական աճի, և՛ մեխանիկական աճի շնորհիվ: 1913 թ.-ին Հայաստանում բնակչության թիվը մեկ միլիոնից քիչ ավելի էր: Ըստ վիճակագիր Զ. Կորկոտյանի հաշվարկներով 1914-1919 թթ.-ին բնակչությունը մոտ 600 հազարով նվազեց և կազմեց 400 հազարից քիչ ավելի:¹⁷⁰ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու պահին՝ 1920 թ.-ին, այն կազմում էր ընդամենը 720 հազար մարդ: Այդ շրջանից սկսած՝ Հայաստանի բնակչությունը հիմնականում աճեց ներգաղթի շնորհիվ: Դիշտ է, այդ շրջանում Հայաստանի բնակչության վերարտադրությանը բնորոշ էր բարձր ծննդաբերությունը, սակայն մեծ էր նաև մահկանան մահացությունների թիվը: Դրանով հանդերձ, ծննդաբերության բարձր աճի կամ մահացության նվազման միտումի արդյունքում Հայաստանը 1923-1940 թթ. ունեցավ բնակչության 27.4 % բնական աճ: Բնակչությունը Հայաստանում բնական ու մեխանիկական աճի արդյունքում

¹⁶⁶ Զ. Կորկոտյան, Խորհրդային Հայաստանը 1920-1925 թթ. (ժողովածու), Երևան, 1926:

¹⁶⁷ М. Адонц, Экономическое развитие Восточной Армении в XIX в., Ереван, 1957.

¹⁶⁸ Լ. Դավթյան, Սովետական Հայաստանի բնակչությունը, Երևան, 1985:

¹⁶⁹ Ռ. Եզանյան, Կ. Կոյունջյան, Ետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները, Երևան, 2004:

¹⁷⁰ Զ. Կորկոտյան, Դերմակ ջարդերից դեպի կարմիր շինարարություն, Երևան, 1931, էջ 38:

1930 թ.-ի կեսերին հասավ 1913 թ.-ի մակարդակին: Ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի հաշվարկներով Հայաստանում 1920-ական թվականներից ի վեր արտասահմանյան 27 երկրներից հայրենադարձվել են շուրջ 225-230 հազար հայեր:¹⁷¹

Հայրենադարձությունը մեծ ծավալներ ընդունեց մասնավորապես Հայրենական պատերազմից հետո՝ 1946-1947 թթ., որի մասին են վկայում Աղյուսակ 4.7-ի տվյալները:

Սա զանգվածային հայրենադարձություն էր: 86 հազարից ավելի հայեր աշխարհի տարբեր երկրներից վերադարձան Հայաստան: Այդ հայրենադարձությունը մեծ չափերով նպաստեց հայ բնակչության ավելացմանը և հետագայում աճող չափերով ընդլայնված վերարտադրությանը: Որքան էլ դժվար լինեին պայմանները, հակասական լինեին զարգացումները և գնահատականները, միևնույն է, մեծ հաշվով արտասահմանյան 11 երկրներում ցրված շուրջ 90 հազար հայ փրկվեցին ուժացումից, վերադարձան հայրենիք, մնացին հայ, և նրանց ժառանգները շարունակեցին բազմաճառ հայրենիքում՝ ավելացնելով հայերի թվաքանակը: Այնպես որ, ինչպիսի բռնությունների էլ նրանք չենթարկվեին (1949 թ.-ի հայրենադարձների մի մասի արտորումը Ալբանի երկրամաս), միևնույն է, և՛ Հայաստանի համար, և՛ հենց իրենց՝ հայրենադարձների համար դա դրական երևույթ էր, որը հանգեցրեց հայ բնակչությունը շուրջ 90 հազարով, իսկ այլ տարիների հայրենադարձների հետ միասին՝ 230 հազարով ավելացնելուն:

Աղյուսակ 4.7. Հայրենադարձների ընդհանուր թիվն ըստ առանձին երկրների 1946-1947 թվականներին¹⁷²

Որ երկրից է եկել	1946թ.	1947թ.	Ընդամենը
Սիրիայից և Լիբանանից	19253	12985	32238
Իրանից	20597	-	20597
Հունաստանից	4974	13241	18215

¹⁷¹ Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, 2001, Երևան, էջ 175:

¹⁷² Նույն տեղում, էջ 174:

Ֆրանսիայից	-	5260	5260
Բուլղարիայից	4383	-	4383
Ռումինիայից	1738	-	1738
Եգիպտոսից	-	1669	1669
Պաղեստինից	-	1250	1250
Իրաքից	-	850	850
ԱՄՆ-ից	-	151	151
Չինաստանից	-	16	16
Ընդամենը	50945	35428	86373

Բայց հայրենադարձությունը հայրենիքին միայն հարյուր-հազարավոր հայեր չպարգևեց: Դա միայն հայության սոսկ քանակական աճ չէր: Աշխարհի տասնյակ երկրներից հայերի վերադարձը մաս բնակչության որակական աճ էր: Հայաստան ներմուծվեցին տասնյակ երկրների առաջադեմ քաղաքակրթությունը, գիտությունը, մշակույթը, արհեստները, ապրելակերպը, ավանդույթները: Մեր շատ հարգարժան հայրենակիցները սկսեցին արդյունավետ աշխատել գյուղատնտեսության, արդյունաբերության, մշակույթի, արհեստների և արվեստների ոլորտներում: Նրանք բարձր որակավորման հիանալի դերձակներ, կոշկակարներ, վարսավիրներ, ջուլիակներ, բանվորներ և այլ մասնագիտություններով օժտված նվիրյալ ու որակյալ աշխատողներ էին: Երգարվեստի համաշխարհային աստղեր ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Գոհար Գասպարյանի, Հովհաննես Չեքիջյանի, Հրաչյա Ներսիսյանի, Երվանդ Քոչարի, Վահրամ Փափագյանի, աշխարհահռչակ ջութակահար Ժան Տեր Մերկեյանի օրինակները վերը շարադրվածի փայլուն ապացույցներն են: Հայրենադարձության հենց այդ զարգացումները մեծապես նպաստեցին Հայաստանում մարդկային կապիտալի որակական զարգացումներին:

Հայրենադարձությունը տեղի էր ունենում մաս հարևան հանրապետություններից, մասնավորապես Վրաստանից, Ադրբեջանից, Հյուսիսային Կովկասից, Ռուսաստանից և այլ տարածաշրջաններից: Հակառակ դեպքում մենք չէինք ունենա մեծ նկարիչ Մարտիրոս Մարյանին, ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանին, աշխարհի չեմպիոն

Տիգրան Պետրոսյանին և շատ ուրիշ նշանավոր մեծ հայերի: Ուստի Հայաստանում մարդկային կապիտալի կայացման գործում մեծ է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին սփյուռքի դերը, որը այդ հարցերի քննարկումներում, ցավոք, անհրաժեշտ ուշադրության չի արժանացել: Ներգաղթը քննարկվել և արժևորվել է միայն բնակչության քանակական աճի տեսանկյունից: Թե ինչ դեր է այն ունեցել մարդկային կապիտալի որակական բաղադրիչների կայացման գործում, չըջանցվել է: Ուստի ինչպես դրսի, այնպես էլ ներսի սփյուռքից հայության ներգաղթի դերը արժևորվել է թերի՝ որպես բնակչության միայն քանակական աճ:

Այժմ ընդհանուր գծերով անդրադառնա՞նք բնակչության բնական աճի զարգացումներին: Նախ չմոռանա՞նք, որ հայրենական պատերազմը մոտավոր հաշվարկներով 300 հազար հայի կյանք խլեց, որից ամենայն հավանականությամբ շուրջ 200 հազարը՝ Հայաստանից, որը ոչ մեծ թվաքանակ ունեցող մեր ժողովրդի համար մեծ կորուստ էր: Դա ոչ միայն աշխատունակ 200 հազար բնակչության կորուստ էր, այլ նաև այդքան չկայացած ընտանիքների և նրանց սպասվող մոր ծնվող երեխաների կորուստ, որը ոչնչով հնարավոր չեղավ փոխհատուցել: Այդ բոլորով հանդերձ, Հայրենական պատերազմի ավարտից հետո Հայաստանում ձևավորվեցին բնակչության բնական աճի բարենպաստ պայմաններ: Բնակից գորացրված երիտասարդները ամուսնանում էին, և ծննդաբերությունն ակտիվանում էր: Ըստ ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի հաշվարկների՝ այն ուներ Ադյուսակ 4.8-ում ներկայացված պատկերը:

**Ադյուսակ 4.8. Ծնվածների և մահացածների թիվը, բնական աճը
ՀՀ-ում (բնակչության 1000 շնչի հաշվով)¹⁷³**

Տարեթիվ	Ծնվածների թիվը	Մահացածների թիվը	Բնական աճը	Ծնված 1000 երեխայից մինչև 1 տարեկան դառնալը մահացել են
1940	41.2	13.8	27.4	119

¹⁷³ Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շնչին, 2001, Երևան, էջ 178:

1950	32.1	8.5	23.6	69
1960	40.3	6.8	33.5	50
1965	28.6	5.7	22.9	37
1970	22.1	5.1	17.0	25.4
1975	22.4	5.5	16.9	30.6
1980	23.0	5.5	17.5	26.2
1985	24.1	5.9	18.2	24.8
1990	22.5	6.2	16.3	18.6

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ Հայրենական պատերազմի արդյունքում բնակչության վերարտադրության տեմպերը 1950 թ.-ին 1940 թ.-ի նկատմամբ փոքրացել են, կրճատվել է ծնվածների թիվը (1000 շնչի հաշվով 1940 թ.-ի 41.2-ից իջել և 1950 թ.-ին կազմել է 32.1): Սակայն 1960 թ.-ից սկսած՝ բնակչության բնական աճը նորից մեծանում է, իսկ հետագա տարիներին՝ որոշ չափով իջնում ու կայունանում: Այդ բոլորի արդյունքում ընտանիքը նորմալ վերարտադրության համար ուներ գյուղում 5-5.5 մարդ, քաղաքում՝ 4-4.5 մարդ, որն ապահովում էր Հայաստանում ժողովրդագրական նորմալ զարգացումները: Այդ ժամանակահատվածում Հայաստանում բնակչությունն ավելանում է նաև մեխանիկական աճի հաշվին: Ընդ որում՝ մեխանիկական աճը տեղի էր ունենում ոչ թե դրսից՝ արտերկրից, այլ Խորհրդային Միության հանրապետություններից, մասնավորապես Ադրբեջանից, մասամբ՝ նաև Վրաստանից:

1926 թ.-ից մինչև 2011 թ.-ը ՀՀ բնակչության թվաքանակների ամենահավաստի տվյալներն արտացոլվել են Հայաստանի Հանրապետության 2011 թ.-ի մարդահամարի արդյունքներում, որն իր արտացոլումն է գտել Աղյուսակ 4.9-ում:

**Աղյուսակ 4.9. ՀՀ մշտական բնակչության թվաքանակներն ըստ
1926-2011 թվականների մարդահամարների (հազար մարդ)¹⁷⁴**

Տարիներ	Ողջ բնակչությունը	Այդ թվում	
		քաղաքային	գյուղական
1926	881.3	167.1	714.2
1939	1.282.3	366.4	915.9
1959	1.763.0	881.8	881.2
1970	2.491.9	1.481.5	1.010.4
1979	3.030.7	1.992.5	1.038.2
1989	3.448.6	2.368.5	1.080.1
2001	3.213.0	2.066.1	1.146.9
2011	3.018.9	1911.3	1.107.6

Ինչպես նկատում ենք, սկսած 1979 թ.-ից, Հայաստանի բնակչության զարգացումներն ընթանում են 3 միլիոնի սահմաններում: Այն իր զագաթնակետին է հասել 1989 թ.-ին՝ կազմելով շուրջ 3.5 միլիոն մարդ, որից հետո սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամային իրավիճակների արդյունքում մշտական բնակչությունը 2011 թ.-ին կազմել է 3 միլիոնից քիչ ավելի մարդ: Իրականում 2011 թ.-ին առկա բնակչությունը Հայաստանի Հանրապետությունում կազմել է 2.876.771 մարդ, իսկ մշտական բնակչությունը՝ 3.018.854 մարդ: ՀՀ 2011 թ.-ի մարդահամարի նախնական տվյալների համաձայն՝ ՀՀ 2001 թ.-ի մարդահամարի համեմատությամբ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշը, ըստ հաշվառման պահի, նվազել է 130.823, իսկ մշտական բնակչությունը՝ 194.157 մարդով:

Կրկնենք, որ 1988 թ.-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժն առաջին լուրջ հարվածը հասցրեց Հայաստանի բնակչությանը, նրա նորմալ վերարտադրությանը: 25 հազար մարդ զոհվեց, իսկ 400 հազար աղետյալներ դուրս եկան Հայաստանի Հանրապետության սահմաններից, և միայն 350 հազարը վերադարձավ: *Այդպիսով՝ երկրաշարժի*

¹⁷⁴ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նախնական արդյունքները, Երևան, 2013:

արդյունքում միանգամից 75 հազար մարդու կորուստ ունեցանք, որից 25 հազարը՝ զոհված, 50 հազարը՝ արտագաղթած և չվերադարձած: Դա բնական աղետի արդյունքում մարդկային կապիտալի ծանր կորուստ էր՝ ոչ միայն հոգեբանական մեծ ցավով լցված կորուստ, այլ նաև արտադրողական մարդկային կապիտալի, կրթություն, որակավորում ստացած, արտադրության մեջ հմտացած և այդ բոլորի համար հասարակության կողմից կատարված մեծ ծախսերի կորուստ:

Սակայն քանակական առումով դա Հայաստանի մարդկային կապիտալի հիմնական կորուստը չէր: Հայաստանի Հանրապետությունում բնակչության թվաքանակի մասսայական կրճատման հիմնական ալիքը տեղի ունեցավ 1992-1994 թթ.-ին: 1993 թ.-ին 1988 թ.-ի համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի թողարկումը ՀՀ-ում կրճատվեց 64 %-ով, ավելի քան 2 անգամ կրճատվեց ՀՆԱ-ն: 1994 թ.-ին հիպերինֆլացիան կազմեց 5273 %, իսկ մեկ շնչին ընկնող սննդի կալորիականությունը հասավ ամենացածր արժեքին՝ 1700 կկալ: 1990-ականների սկզբին հարյուրավոր ձեռնարկությունների արտադրության խափանումը և շուրջ 650 հազար մարդու զանգվածային գործազրկությունը, բնակչության ավելի քան 11 միլիարդ ԱՄՆ դոլարին համարժեք ավանդների սառեցումը, մութը, ցուրտը, շուրջ 60 % բնակչության աղքատացումը հանգեցրին նրան, որ 800 հազարից մինչև միլիոն մարդ արտագաղթեց Հայաստանից: Դա իր չափերով վտանգավոր, հետևանքներով մմանը չունեցող արտագաղթ էր: *Միանգամից շուրջ մեկ միլիոն աշխատունակ բնակչություն, մարդկային արտադրողական կապիտալ արտագաղթեց երկրից: Դա նախ և առաջ իր չափերով հավասարը չունեցող մարդկային կապիտալի բացահայտ կորուստ էր, կորուստ՝ ոչ միայն փնտեսական անի, այլև նաև բնակչության ապագա նորմալ վերարտադրության տեսանկյունից:*

ՀՀ բնակչության թվաքանակի կրճատումը այսօր շատ մտահոգիչ է ինչպես տնտեսական և սոցիալական առումներով, այնպես էլ ազգային անվտանգության, քանի որ բնակչության թվաքանակի բացարձակ կրճատումը գուցակցվում է սահմանամերձ գյուղերի բնակ-

չության թվաքանակի նվազմամբ: 2011 թ.-ի մարդահամարի արդյունքների համաձայն՝ Հայաստանի մշտական բնակչության 63.3 %-ը բնակվում էր քաղաքներում, որի գերակշիռ մասը՝ մայրաքաղաք Երևանում: Աղյուսակ 4.10-ի տվյալները վկայում են, որ մինչև 1939 թ.-ը ներառյալ Հայաստանում գերակշռել է գյուղական բնակչությունը, 1959 թ.-ին քաղաքային և գյուղական բնակչության թվաքանակները համարյա հավասարվել են, իսկ 1970 թ.-ից մինչև այսօր էապես գերակշռում է քաղաքային բնակչությունը:

Աղյուսակ 4.10. ՀՀ մշտական բնակչության թվաքանակներն ըստ գյուղ-քաղաք բաժանման (տոկոսներով)¹⁷⁵

Տարիներ	Ամբողջ բնակչությունը	Այդ թվում՝	
		քաղաքային	գյուղական
1926	100	19	81
1939	100	29	71
1959	100	51	49
1970	100	60	40
1979	100	66	34
1989	100	69	31
2001	100	65	35
2011	100	63.3	36.7

Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 4.11-ի տվյալները, Հայաստանի գյուղական բնակչությունը մարզերի միջև անհամաչափ է բաշխված: Այն հիմնականում կենտրոնացված է Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, մասամբ Կոտայքի մարզերում (10-17 %): Բնակչությունից դատարկված են հատկապես սահմանամերձ մարզերի գյուղերը. Վայոց ձորի գյուղական մշտական բնակչությունը կազմում է 3 %, Սյունիքինը՝ 4 %, Տավուշինը՝ 7 %: Գյուղական բնակչության նման շերտավորված բաշխվածությունը ոչ մի քննադատու-

¹⁷⁵ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նախնական արդյունքները, Երևան, 2013, էջ 6:

թյան չի դիմանում ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ ազգային անվտանգության առումներով:

Աղյուսակ 4.11. ՀՀ գյուղական մշտական բնակչության բաշխումն ըստ մարզերի¹⁷⁶

Մարզը	2001 թ.		2011 թ.	
	մարդ	%	մարդ	%
Արարատ	192 131	17	186 264	17
Արմավիր	177 941	15	180 720	16
Գեղարքունիք	158 693	14	163 652	15
Կոտայք	118 488	10	116 916	10
Շիրակ	109 129	9,5	105 033	9
Արագածոտն	105 437	9,1	102 330	9
Լոռի	116 455	10	97 753	8,8
Տավուշ	83 655	7	74 423	7
Սյունիք	48 537	4	46 601	4
Վայոց ձոր	36 392	3	33 875	3
Ընդամենը ՀՀ	1 146 858	100	1 107 567	100

Աղյուսակ 4.12. ՀՀ մշտական բաղաբային բնակչության բաշխումն ըստ մարզերի և ք. Երևանի¹⁷⁷

Մարզեր և ք. Երևան	2001 թ.		2011 թ.	
	մարդ	%	մարդ	%
ք. Երևան	1 103 488	53	1 060 138	55
Շիրակ	174 260	8	146 908	8
Լոռի	169 953	8	137 784	7
Կոտայք	153 981	7	137 481	7
Սյունիք	104 147	5	95 170	5
Արմավիր	98 292	4,5	85 050	4,4
Արարատ	79 885	4	74 103	4
Գեղարքունիք	78 957	4	71 423	4
Տավուշ	50 721	2,5	54 186	3

¹⁷⁶ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նախնական արդյունքները, Երևան, 2013, էջ 9:

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 8:

Արագածոտն	32 864	2	30 595	2
Վայոց ձոր	19 605	1	18 449	1
Ընդամենը ՀՀ	2 066 153	100	1 911 287	100

Մարզերի միջև անհամաչափ է բաշխված նաև քաղաքային բնակչությունը (Աղյուսակ 4.12): Ինչպես նկատում ենք, 2011 թ.-ին ՀՀ մշտական քաղաքային բնակչության կեսից ավելին (55 %-ը) կենտրոնացված է ք. Երևանում, 27 %-ը՝ Շիրակում, Լոռիում, Կոտայքում և Սյունիքում, իսկ մնացած 17 %-ը՝ հաջորդ վեց մարզերում: Ամենաապակավը սահմանամերձ քաղաքային բնակչությունն է՝ Տավուշինը, Վայոց ձորինը և Սյունիքինը: Ինչ վերաբերում է 1 կմ² վրա բաշխված բնակչության խտությանը, այն ամենամեծը Երևանում է (4754 մարդ), ամենաքիչը՝ Վայոց ձորում (23 մարդ):


Աղյուսակ 4.13-ի տվյալները վկայում են, որ վերջին տարիներին բնակչության գերկենտրոնացվածությունը մայրաքաղաքում մեծանում է, և միաժամանակ Հայաստանի բոլոր մարզերում բնակչության քիվը նվազում է: 2012-2016 թթ.-ի ժամանակահատվածում կրճատվել է ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության քիվը:

Աղյուսակ 4.13. ՀՀ բնակչության թվաքանակն ըստ մարզերի ու Երևան քաղաքի, հազար մարդ¹⁷⁸

	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.
Հայաստանի Հանրապետություն	3 026.9	3 017.1	3 010.6	2 998.6	2986.5
Ըստ մարզերի					
ք. Երևան	1066.3	1068.3	1071.5	1073.7	1075.9
Արագածոտն	133.0	132.3	131.3	129.8	128.6
Արարատ	261.4	260.8	260.1	258.9	258.5
Արմավիր	267.1	267.2	267.0	266.6	265.8
Գեղարքունիք	235.6	234.1	233.0	231.8	230.7
Լոռի	234.7	230.8	228.0	225.0	221.1
Կոտայք	255.3	255.0	255.0	253.9	252.8

¹⁷⁸ Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թ.-ի հունվար-դեկտեմբեր, Երևան, 2017, էջ 9:

Շիրակ	251.3	248.3	246.4	243.2	239.3
Սյունիք	141.7	141.0	140.2	139.4	139.0
Վայոց ձոր	52.2	51.7	51.4	50.8	50.3
Տավուշ	128.3	127.6	126.7	125.5	124.5
Ըստ բնակավայրերի տեսակի					
Քաղաք	1 917.5	1 914.1	1 912.9	1 907.0	1 901.7
Գյուղ	1 109.4	1 103.0	1 097.7	1 091.6	1 084.8




Պատկեր 4.1 ՀՀ բնակչության բաշխումն ըստ մարզերի ու Երևան քաղաքի, 2016 թ., տոկոսներով¹⁷⁹

Հետաքրքիր է նաև Հայաստանի ամբողջ մշտական բնակչության բաշխումը ՀՀ մարզերի միջև: Պատկերը հետևյալն է. 2016 թ.-ին մշտական բնակչության ավելի քան 36 %-ը ապրում է Երևանում: Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերից յուրաքանչյուրում ապրում է ՀՀ բնակչության 9-ական %-ը, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերից յուրաքանչյուրում 8-ական %-ը, Սյունիքում՝ շուրջ 5 %-ը,

¹⁷⁹ Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թ.-ի հունվար-դեկտեմբեր, Երևան, 2017, էջ 9:

Արագածոտնում և Տավուշում` 4-ական %-ը, իսկ Վայոց ձորում` շուրջ 2 %-ը (Գծապատկեր 4.1):

2012 և 2016 թթ.-ին ՀՀ բնակչության բաշխումը գյուղ-քաղաք կտրվածքով ներկայացված է Գծապատկեր 4.2-ում, ըստ որի` դիտարկվող ժամանակահատվածում քաղաքային բնակչությունը 63.35 %-ից աճել է մինչև 63.68 %:



Գծապատկեր 4.2 ՀՀ բնակչության բաշխումը գյուղ-քաղաք կտրվածքով 2012 և 2016 թվականներին, տոկոսներով¹⁸⁰

Բնակչության կամ մարդկային կապիտալի քանակական կորուստները հիմնականում տեղի են ունենում բնակչության բնական աճի կրճատումով և բնակչության մեխանիկական աճի կորուստներով` արտագաղթով և աշխատանքային միգրացիայի միջոցով:

Սկսենք բնակչության բնական աճի կորուստներից: Այն մի երևույթ է, որը անկախության տարիներին դրսևորվեց երկրի տնտեսական և սոցիալական զարգացումների ու փոփոխությունների այնպիսի բացասական միտումներով, որոնք նվազեցնում են ծնելիությունը և մեծացնում մահացությունը: Արդյունքում իջնում են բնակչու-

¹⁸⁰ Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թ.-ի հունվար-դեկտեմբեր, Երևան, 2017, էջ 9:

թյան վերարտադրության տեմպերը՝ ընդհուպ մինչև բնակչության թվաքանակի բացարձակ նվազումը:

Բնակչության բնական աճը նախ և առաջ կախված է ծնելիության տարիքային գործակիցներից: Հասկանալի պատճառով ծնելիության գործակիցը կնոջ ապրած բոլոր տարիների համար մույնը լինել չի կարող: Այդ պատճառով ժողովրդագրությունը և ժողովրդագրական վիճակագրությունը կիրառում է ծնելիության տարիքային գործակիցներ ցուցանիշը:

Աղյուսակ 4.14. Ծնելիության տարիքային գործակիցները¹⁸¹

Տարիներ	Ծնվածների միջին թվաքանակը տարեկան 1000 կնոջ հաշվով							
	20-ից ցածր	20-24	25-29	30-34	35-39	40-44	45-49	15-49
1997	43.4	129.3	69.6	31.7	13.3	3.3	0.2	42.3
1998	34.6	117.9	63.2	28.0	12.4	3.1	0.2	37.4
1999	29.8	112.1	58.5	24.6	10.8	2.8	0.2	34.2
2000	27.3	103.2	53.7	23.5	10.6	3.0	0.2	31.7
2015	24.3	118.4	102.8	56.2	22.7	4.2	0.3	53.4

Ուսումնասիրությունները և Աղյուսակ 4.14-ի տվյալները ցույց են տալիս, որ 1990-2000 թթ.-ի ժամանակահատվածում Հայաստանում պտղաբերությունը նվազել է: 1997-2015 թթ.-ին որոշ տարիքային խմբերում ծնելիության տարիքային գործակիցները (ԾՏԳ) նվազել են: 20 տարեկանից ցածր տարիքային խմբում ծնվածների միջին թվաքանակը 1000 կնոջ հաշվով 1997 թ.-ի 43.4-ից 2015 թ.-ին իջել և հասել է 24.3-ի: 20-24 տարիքային խմբում ծնվածների միջին թվաքանակը 1000 կնոջ հաշվով նշված 20 տարիների ընթացքում 129.3-ից նվազել է մինչև 118.4: Փոխարենը մեծացել են 25-29 և 30-34 տարիքային խմբերի կանանց ծնելիության գործակիցները: Պատճառը կանանց ամուսնության միջին տարիքի աճն է՝ 27 տարեկան, որի ար-

¹⁸¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001, Երևան, էջ 30: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 35:

դյունքում 2015 թ.-ին 25-29 տարիքային խմբում ծնելիության գործակիցը դարձել է 102.8՝ 1997 թ.-ի 69.6-ի դիմաց:

Բնակչության կամ մարդկային կապիտալի բանական կորուստներն արտահայտող շատ կարևոր դրսևորումներից են ծնելիության և մահացության ցուցանիշները, որոնք իրենց արտահայտում են գտել Աղյուսակ 4.15-ում:

Ծնելիության և մահացության ցուցանիշների զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ 1990-2015 թթ.-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել ժողովրդագրական բացասական զարգացումներ: Ծնունդը ցուցաբերել է նվազման միտում. այն 1990 թ.-ի շուրջ 80 հազարից 2015 թ.-ին նվազել և կազմել է ընդամենը 41.7 հազար մարդ: Նույն բացասական միտումը առկա է 1000 բնակչի հաշվով ցուցանիշներում: 1990 թ.-ին 1000 բնակչի հաշվով ծնունդը 22.5 մարդուց իջել և 2015 թ.-ին կազմել է շուրջ 14 մարդ: Այդ երկու ցուցանիշների բացասական միտումներում ակնհայտ է նաև Հայաստանի Հանրապետության բնակչության թվի նվազման միտումը: Դա նշանակում է, որ բնակչության բնական աճը դանդաղել է: Ընդ որում՝ միայն այդ ցուցանիշը լիարժեք չէ՝ բնութագրելու բնակչության բնական աճի զարգացումները:

Աղյուսակ 4.15. Ծնելիության և մահացության ցուցանիշները ՀՀ-ում 1990-2015 թվականներին¹⁸²

Տարիներ	Ծնունդ						Մահ					
	1000 մարդ			1000 բնակչի հաշվով			1000 մարդ			1000 բնակչի հաշվով		
	նյութական	մոլորակ	տարի	նյութական	մոլորակ	տարի	նյութական	մոլորակ	տարի	նյութական	մոլորակ	տարի
1990	79.9	50.2	29.7	22.5	20.5	27.0	22	14.7	7.3	6.2	6.0	6.7
2000	34.3	21.4	12.9	10.6	10.3	24.6	24	15.7	8.3	7.5	7.5	7.6
2005	37.5	23.8	13.7	11.7	11.5	26.4	26.4	17.1	9.8	8.2	8.3	8.0
2010	44.8	28.3	16.5	13.8	13.6	27.9	27.9	17.8	10.1	8.6	8.6	8.6
2012	42.5	27.1	14.9	14.0	14.2	13.8	27.6	17.6	10.0	9.1	9.2	9.0
2015	41.7	27.1	14.6	13.9	14.2	13.4	27.9	17.7	10.1	9.3	9.3	9.3

¹⁸² Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, Երևան, 2016, էջ 22:

Դրան զուգահեռ շատ կարևոր ցուցանիշ են մահացության քվի փոփոխությունները: Դիտարկվող ժամանակահատվածում աճել է նաև մահացության ցուցանիշը: Եթե 1990 թ.-ին ՀՀ-ում մահացել էր ընդամենը 22 հազար մարդ, ապա 2015 թ.-ին՝ 27.9 հազար մարդ, իսկ 1000 բնակչի հաշվով մահերի թիվը 6.2-ից աճել է մինչև 9.3 մարդ: Հետևաբար բնակչության բնական աճը կասեցնում են ինչպես ծնելիության ցուցանիշների բացասական միտումները, այնպես էլ մահացության ցուցանիշների աճի միտումները: Այսպիսով՝ *մարդկային կապիտալը դիտարկվող ժամանակահատվածում՝ 1990-2015 թթ.-ին, բնակչության բնական աճի բացասական միտումների զարգացումների հերևանքով ունեցել է կանոնավոր կորուստներ*: Հայաստանի բնակչության քանակական զարգացումները, փոփոխությունները քաղաքում և գյուղում դրսևորել են ծնելիության և մահացության ցուցանիշների որոշ տարբերություններ և առանձնահատկություններ, սակայն մարդկային կապիտալի կորուստների հարցում հանրապետության կտրվածքով վերը շարադրված բացասական միտումները չեն փոխվում:

Բնակչության բնական աճի կամ մարդկային կապիտալի քանակական փոփոխությունների կարևոր ցուցանիշն է ՀՀ բնակչության հավելաճը, որը հաշվարկվել է ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Ա. Վարդանյանի կողմից: Ըստ հեղինակի ուսումնասիրությունների և վերլուծության, եթե 1985 թ.-ին բնակչության բնական հավելաճը կազմել է 60.7 հազար մարդ (1000 բնակչի հաշվով՝ 18.2 մարդ)¹⁸³, ապա 2010 թ.-ին՝ ընդամենը 16.9 հազար մարդ (1000 բնակչի հաշվով՝ 5.2 մարդ): Դա հետևանք է ինչպես ծնելիության նվազման, այնպես էլ մահացության աճի միտման: Ընդ որում՝ ծնելիությունը և դրա փոփոխություններն ու միտումները պայմանավորված են ՀՀ-ում ընթացող ժողովրդագրական ու սոցիալական ոչ բարենպաստ զարգացումներով: Դրանցից մեկը մշտական բնակչության սեռային բաշխվածությունն է: 2011 թ.-ի մարդահամարի արդյունքներով Հայաստանում մշտական բնակչության

¹⁸³ Ա. Վարդանյան, ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վերլուծություն, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012, Երևան, 2013, էջ 418:

սեռային բաշխվածությունով տղամարդկանց թվաքանակը կազմել է 1.448.052 մարդ (48 %), իսկ կանանցը՝ 1.578.020 մարդ (52 %):¹⁸⁴ Մարդահամարի հաշվառման պահի դրությամբ ամուսնացած է եղել 15 և բարձր տարիքի բնակչության 60.1 %-ը, երբևէ ամուսնացած չի եղել 28.4 %-ը, այրիները կազմել են 8.9 %, իսկ ամուսնալուծվածները՝ 2.6 %:¹⁸⁵ Քանի որ տղամարդիկ հակված են ուշ ամուսնության, ուստի, եթե 15-49 տարեկան երբևէ չամուսնացած կանայք կազմել են 32 %, ապա տղամարդիկ՝ 45 %: Ավելին, երբևէ չամուսնացած տղամարդկանց մասնաբաժինը վերջին տարիների ընթացքում կտրուկ աճել է՝ 2000 թ.-ի 31 % ցուցանիշի փոխարեն կազմելով 45 % 2010 թ.-ին, որը չէր կարող բացասաբար չանդրադառնալ ծնելիության գործակցի վրա և չկասեցնել բնակչության բնական աճի տեմպերը:

2010 թ.-ին իրականացված Հայաստանի բնակչության ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության արդյունքներով ՀՀ-ում 1990-2010 թթ.-ի ժամանակահատվածում պտղաբերությունը նվազել է: 20-24 տարիքային խմբի ՄՏԳ-ն կազմել է 209 ծնունդ 1000 կնոջ հաշվով (հարցման նախորդ 15-19 տարիների ժամանակահատվածում), իսկ վերջին 4 տարիների ընթացքում այդ գործակիցը նվազել է 34 %-ով՝ կազմելով 138 ծնունդ 1000 կնոջ հաշվով: Նույն ժամանակահատվածի կտրվածքով 15-19 տարիքային խմբի կանանց ՄՏԳ-ը կազմել է 83 ծնունդ 1000 կնոջ հաշվով հարցմանը նախորդող 15-19 տարիներին, իսկ վերջին 4 տարիների ընթացքում այդ գործակիցը նվազել է 66 %-ով՝ կազմելով 28 ծնունդ 1000 կնոջ հաշվով:¹⁸⁶

Այն փաստը, որ 2011 թ.-ի մարդահամարի տվյալներով ՀՀ բնակչության միայն 60.1 %-ն է ամուսնացած եղել, իսկ 2.6 %-ը՝ ամուսնալուծված, չէր կարող իր բացասական հետևանքները չթողնել բնակչության բնական աճի վերաբաղեցրած տեմպերի վրա:

¹⁸⁴ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նախնական արդյունքները, Երևան, 2013, էջ 11-12:

¹⁸⁵ Ա. Վարդանյան, ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վերլուծություն, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012, Երևան, 2013, էջ 418:

¹⁸⁶ Հայաստան. Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, Եր., 2010, էջ 123:

Բնակչության վերարտադրությունը հիմնականում ընթանում է տնային տնտեսություններում: 2011 թ.-ի մարդահամարի արդյունքներով Հայաստանում հաշվարկվել է 763.6 հազար տնային տնտեսություն, որոնցից 66.9 %-ը տեղաբաշխված է եղել քաղաքներում: Ընդ որում՝ 2001 թ.-ից մինչև 2011 թ.-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում տնային տնտեսությունների թիվը նվազել է: 2001 թ.-ին Հայաստանում գոյություն է ունեցել 779.4 հազար տնային տնտեսություն, իսկ 2011 թ.-ին՝ 763.6 հազար, այսինքն՝ դրանց թիվը 15.8 հազարով նվազել է (քաղաքում՝ 9 հազարով, գյուղում՝ 6.8 հազարով):¹⁸⁷ Այդ փոփոխությունների՝ տնային տնտեսությունների թվի նվազումը նույնպես իր դերը խաղացել է բնակչության բնական աճի ցուցանիշների նվազման միտումներում:

ՀՀ իշխանությունները վերջին ժամանակահատվածում ծննդաբերության անկման դեմ մի շարք միջոցառումներ են իրականացրել: Այսպես, Հայաստանում մայրերի 99 %-ը ստացել է նախածննդային խնամք: Հարցման արդյունքում չորս կանանցից երեքը (74 %) նշել են, որ նրանք ունեցել են անվճար նախածննդային խնամք ստանալու իրավունք, իսկ կեսից ավելին (53 %) նշել են նաև անվճար դեղորայք ստանալու իրավասության մասին: Այդ բոլորով հանդերձ, անվճար ծննդաբերությունը դեռևս ցանկալի՝ 100 % մակարդակին չի հասել: Հարցումները ցույց են տվել, որ հինգ կանանցից մեկը (21 %) վճարել է իր նախածննդային այցելության ժամանակ: Տասը կանանցից երեքը (29 %) վճարել է 1000-5000 ՀՀ դրամ, իսկ 20 %-ը՝ շուրջ 6000-10000 դրամ: Կանանց մեծամասնությունը (60 %) վճարել է լաբորատոր-գործիքային հետազոտության համար և այլն:¹⁸⁸

Մարդկային կապիտալի բնական վերարտադրության համակարգում կարևորվում է (0-1 տարեկան) և մինչև 6 տարեկան երեխաների մահացությունը: 1988 թ.-ի երկրաշարժից հետո մանկական մահացությունը հասել էր բարձր մակարդակի: Սակայն իշխանությունների իրականացրած մի շարք միջոցառումների արդյունքում,

¹⁸⁷ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամար, նախնական արդյունքներ, Երևան, 2013, էջ 11-12:

¹⁸⁸ Նույն տեղում, էջ 11-12:

1996 թ.-ից սկսած, ՀՀ-ում մանկական մահացությունը նվազման շարունակական միտում է դրսևորում: Այսպես, ՀԺՄՀ 2010 թ.-ի տվյալներով այն նվազել և կազմել էր 13 մահ՝ 1000 կենդանածին երեխայի հաշվով 2006-2010 թթ.-ի կտրվածքով: Այդ դրական տեղաշարժերը ինչ-որ չափով հակազդում են բնակչության վերարտադրության բացասական միտումներին, բայց նրա բնական աճի նվազման միտումները շարունակում են, քանի որ ՀՀ-ում վերջին 20 տարիների ժողովրդագրական զարգացումների վերջնական արդյունքում ունենք ծնելիության գործակցի նվազման միտում, որը և բնութագրում է բնակչության բնական աճի բացասական միտումները:

2014 թ.-ի նոյեմբերին Հայաստանի Հանրապետության վարչապետը ստիպված էր խոստովանել, որ այսօր Հայաստանը բնակչության աճի ժողովրդագրական ցուցանիշներով աշխարհում գրավում է վերջին տեղերից մեկը: Երեք միլիոնից պակաս բնակչության և դրանից արտագաղթ ունեցող երկրի համար դա վատագույն վիճակ է, մարդկային կապիտալի փտանգավոր չափերի հասնող քանակական կորուստ: Եթե ժողովրդագրական զարգացումների նշված միտումները շարունակվեն նաև առաջիկայում, հարցականի տակ կդրվեն անգամ բնակչության պարզ վերարտադրության իրական հնարավորությունները և զարգացումները:

Այսպիսով՝ մարդկային կապիտալի հիմնական բաղադրիչը՝ բնակչությունը, Հայաստանի Հանրապետությունում այսօր կազմում է շուրջ 3.0 միլիոն մարդ, որը անկախության 20 տարիներին ոչ միայն չի աճել, այլ 1990-ական թվականների նկատմամբ շուրջ 500 հազար մարդով նվազել է:

Մարդկային կապիտալի կարևոր բաղադրիչներից է առողջությունը: Բնակչության վերարտադրության համար կարևորվող ներդրումները կարող են արդարացվել, փոխհատուցվել և երկրի հարստությունը աճել, եթե մարդն առողջ է, ապրում ու աշխատում է երկար տարիներ: Պատահական չէ, որ անգլիացի մեծ տնտեսագետ Ա. Մարշալը գրել է. «Բնակչության ուժն ու առողջությունը արտադրողականության հիմքն են, որից կախված է նյութական հարստության ստեղծումը, երբ իր հերթին նյութական հարստությունն է օգտա-

գործվում խելամիտ, ապա նրա գլխավոր նշանակությունն այն է, որ վերջինս ավելացնում է ցեղի ուժն ու առողջությունը՝ ֆիզիկական, մտավոր և բարոյական»:¹⁸⁹

Առողջությունը մարդկային կապիտալի նորմալ վերարտադրության և արդյունավետ կենսագործունեության հիմքն է: Առանց դրա, ինչպիսի կրթություն և որակավորում ունենա մարդը, նա արտադրողաբար, արդյունավետ աշխատել և բարիքներ ստեղծել չի կարող: Դրանով է բացատրվում, որ քաղաքակիրթ, հարուստ ու զարգացած երկրում մարդու առողջության պահպանումը հասարակության ամենաառաջնային խնդիրներից է: Ծնվելուց հետո մինչև աշխատելը և բարիք ստեղծելը մարդու կայացման վրա անընդհատ ներդրումներ են կատարվում, ինչպես ընտանիքի, այնպես էլ հասարակության ու պետության կողմից: Աշխատուժի կայացումը և զարգացումը մարդկային կապիտալի կայացման ու զարգացման միջուկն են:

Կ. Մարքսը գրել է. «Աշխատուժ կամ աշխատելու կարողություն ասելով մենք հասկանում ենք միագումարությունը ֆիզիկական և հոգեկան հատկությունների, որոնք գոյություն ունեն մի մարդու մարմնի մեջ, կենդանի անձնավորության մեջ, և որոնց նա շարժողության մեջ է դնում ամեն անգամ, երբ որևէ տեսակի սպառարժեքներ է արտադրում»:¹⁹⁰ Աշխատուժի վերարտադրության ծախսերը կազմում են աշխատուժի արժեքը: «Աշխատուժի արժեքը մյուս ապրանքներից ամեն մեկի արժեքի նման որոշվում է այն աշխատաժամանակով, որ անհրաժեշտ է այս առանձնահատուկ բանի արտադրության, ուրեմն և վերարտադրության համար»:¹⁹¹ Սպառարժեք արտադրելու ու իր գործառույթը կատարելու համար, բացի կրթված, մասնագիտացված լինելուց, մարդկային կապիտալը ամենից առաջ պետք է առողջ լինի, երկար տարիներ աշխատի, որ կարողանա իր ընտանիքի և հասարակության կատարած ներդրումները փոխհատուցել և եկամտային որոշ կուտակում ստեղծել: Առանց առողջական լուրջ պաշարի մարդկային կապիտալն արդյունավետ գործել և իր գործառութային դերը

¹⁸⁹ А. Маршал, Принципы экономической науки: Москва, 1993, стр. 268.

¹⁹⁰ Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1933, էջ 33:

¹⁹¹ Տե՛ս նույն տեղում:

իրագործել չի կարող: Հետևաբար առողջությունը ոչ միայն անհատի երջանիկ ապրելու առաջին և հիմնական գրավականն է, այլ նաև մարդկային կապիտալի արդյունավետ տնտեսական գործունեության և բնակչության վերարտադրության հիմքը: Դրանով է բացատրվում, որ նրա առողջությունը միայն ընտանիքի խնդիրը չէ: Այն ողջ հասարակության, մասնավորապես պետության, նրա սոցիալական ինստիտուտների առաջնահերթ խնդիրներից է: Դրանով է բացատրվում, որ սոցիալական պետությունները բնակչության առողջության պահպանումը համարում են իրենց հիմնական ու գերակա խնդիրներից մեկը:

Առողջապահության համաթվում գլխավոր ցուցանիշ է համարվում կյանքի միջին տևողությունը: Սակայն դրա հետ միաժամանակ շատ կարևորվում են մարդու ապրած կյանքի որակը, ընթացքը: Միայն առողջ կյանքն է լիարժեք հնարավորություններ տալիս մարդուն ինքնահաստատվելու և ինքնաիրացվելու, ստեղծագործելու, ընտանիքը և երկիրը պահելու, հարստացնելու, հետևաբար նաև իր գործառույթային դերը կատարելու: Այստեղից էլ հետևում է, որ երկրի առողջապահական համակարգի գերագույն խնդիրը հիվանդությունների կանխարգելումն է: Սոցիալապես զարգացած երկրներում, մասնավորապես Եվրոմիությունում, Ճապոնիայում և ԱՄՆ-ում առողջապահության համակարգում շեշտը դրվում է հիվանդությունների, հատկապես վտանգավոր հիվանդությունների բացահայտման և կանխարգելման վրա: Հիվանդությունները ժամանակին բացահայտելն ու կանխարգելումը թանկ հաճույք է: Դրա համար բարձր որակավորման մասնագետներ և թանկարժեք սարքավորումներ են պետք, մեծ ներդրումներ են անհրաժեշտ՝ մասնագետներին վճարելու, սարքավորումներ ձեռք բերելու, տեղադրելու, և օգտագործելու համար: Սակայն աշխարհի զարգացած երկրներում կատարվող ուսումնասիրությունները և դրանց արդյունքների վերլուծությունները ցույց են տալիս, որ որքան էլ դրանք թանկ ու ծախսատար լինեն, վերջին հաշվով շահավետ են, քանի որ փրկվում է մարդը, մարդկային կապիտալը, որը տնտեսական տեսակետից ոչ միայն փոխհատուցում է բուժման համար կատարված ծախսերը, այլև իր ընտանի-

քի և հասարակության համար շարունակում է ստեղծել կուտակվող եկամուտ և հարստություն:

Առողջապահական համակարգի հիմքը ընտանիքն է, նրանում մարդու նորմալ կենսագործունեությունը, ապրելու, կրթվելու, աշխատելու և իր մարդկային բազմաբնույթ պահանջմունքները բավարարելու հնարավորություններն են: Համապատասխան սոցիալական հետազոտությունները ցույց են տալիս, որ որոշակի կախվածություն գոյություն ունի բնակչության առողջապահական վիճակի, նրա ապրելակերպի, կենսամակարդակի, մասնավորապես նրա կացարանային պայմանների միջև: Դրանով է բացատրվում, որ բնակչության առողջապահության վիճակը և նրա կարգավորման խնդիրները համակարգված և պարբերաբար ուսումնասիրվում են Հայաստանի ազգային վիճակագրման տարեգրքերում, մասնավորապես «Հայաստանի Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտությունում»:¹⁹²

Ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրքի մեթոդաբանության՝ բնակարանային ֆոնդը բոլոր բնակարանների ամբողջությունն է՝ անկախ սեփականության ձևերից, ներառյալ բնակելի տները, մասնագիտացված տները (հանրակացարանները, ապաստարանները, միայնակների և ծերերի համար հատուկ տները, մանկատները, հաշմանդամների, վետերանների համար գիշերօթիկ տները և գիշերօթիկ դպրոցները, ծառայողական բնակելի շենքերը և այլ շինություններ):¹⁹³

¹⁹² Հայաստան. Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, Երևան, 2012:

¹⁹³ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 187:

**Աղյուսակ 4.16. Բնակարանային ֆոնդը Հայաստանի
Հանրապետությունում (տարեվերջին)¹⁹⁴**

	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2014 թ.
Ամբողջ բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը, 1000 մ ² այդ թվում՝	84985	86.493	88634	95.024
քաղաքային	44.709	44.673	47206	51380
գյուղական	40.276	40.820	41428	43644
Բնակչության միջին ապահովվածությունը մեկ բնակչի հաշվով, մ ² ընդհանուր մակերես, ընդամենը այդ թվում՝	26.3	26.7	27.2	31.6
քաղաքներում	21.6	22.0	22.6	26.9
գյուղերում	34.6	35.0	35.4	39.8

Աղյուսակ 4.16-ի տվյալները ցույց են տալիս, որ 2008 թ.-ից մինչև 2014 թ.-ը ամբողջ բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը աճել է՝ 2008 թ.-ի 84.985 հազար մ²-ից 2014 թ.-ին հասնելով 95024 հազար մ²-ի: Ընդ որում՝ այդ միտումն առկա է ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղական վայրերում: Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ բնակչության ապահովվածությունը բնակարանային պայմաններով չափվում է ոչ այնքան բնակարանային ֆոնդի աճով, որքան մեկ բնակչին ընկնող մ² ընդհանուր մակերեսով: Այդ ցուցանիշը նույնպես աճել է: Եթե այն 2008 թ.-ին կազմել է 26.3 մ², ապա 2014 թ.-ին՝ 31.6 մ²: Այդ միտումն առկա է ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում:

Բնակչության առողջության համար կարևոր են ոչ միայն բնակարանային ապահովվածությունը, այլ նաև կացարանային պայմանները, հատկապես բնակչության գազամատակարարման պահանջմունքների բավարարումը:

¹⁹⁴ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 189: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 186-187:

**Աղյուսակ 4.17. Բնակչության պահանջների բավարարումը
գազամատակարարմամբ¹⁹⁵**

	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2014 թ.	2015 թ.
Գազի բացթողումը բնակչության մեկ բնակչի հաշվով ցանցային, մ ³ , այդ թվում՝	182	170	145	171	175
քաղաքներում	203	193	167	205	209
գյուղերում	146	130	105	112	115

Հայաստանի Հանրապետությունում բնակչության պահանջ-մունքների բավարարումը գազամատակարարմամբ 2008 թ.-ից մինչև 2015 թ.-ը գրեթե նույն մակարդակի վրա է գտնվել (Աղյուսակ 4.17): Միննույն ժամանակ նկատենք, որ քաղաքում գազամատակարարմամբ բնակչության պահանջներն ավելի լիարժեք են բավարարվում, քան գյուղում: Դա խնդիր է, որ պետք է անհանգստացնի համապատասխան կառավարման մարմիններին և առաջիկայում լուծում ստանա:

**Աղյուսակ 4.18. Խմելու ջրի մատչելիությունը տնային տնտեսությունների
համար 2008 և 2015 թվականներին, տոկոսներով¹⁹⁶**

Ջրի հիմնական աղբյուրը	Ընդամենը հանրապետությունում		Քաղաքային բնակավայրերում		Գյուղական բնակավայրերում	
	2008թ.	2015թ.	2008թ.	2015թ.	2008թ.	2015թ.
Կենտրոնացված ջրամատակարարում	97.1	97.3	99.5	99.9	92.4	92.5
մինչև 1 ժամ	0.7	0.0	0.1	0.0	1.9	0.0
1-5 ժամ	31.3	10.2	31.2	4.5	31.4	21.6

¹⁹⁵ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 192: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, Երևան, էջ 189: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 189:

¹⁹⁶ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2014, էջ 174: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 189:

6-12 ժամ	28.6	16.9	32.6	14.9	20.5	20.9
13-23 ժամ	5.7	7.0	5.9	7.3	5.3	6.4
24 ժամ	33.7	65.9	30.2	73.3	40.9	51.1

Բնակարանային ֆոնդից, կացարանային պայմաններից, մասնավորապես գազամատակարարմամբ բնակչության պահանջմունքների բավարարումից հետո առողջության վրա ազդող շատ կարևոր գործոններից է տնային տնտեսությունների խմելու ջրի մատչելիությունը:

Ինչպես նկատում ենք Աղյուսակ 4.18-ի տվյալներից, ՀՀ-ում ջրի մատչելիությունը տնային տնտեսությունների համար ընդհանուր առմամբ բավարար կարելի է համարել: Խնդիրը հիմնականում գյուղական բնակավայրերում ջրի մատչելիությունն ավելի բարձրացնելու և աստիճանաբար 24 ժամ ջրամատակարարման ցանկալի մակարդակին հասցնելու մեջ է:

Աղյուսակ 4.19. Երկարաժամկետ օգտագործման կենցաղային ապրանքների առկայությունը 100 կենցաղային տնտեսությունների հաշվով 2002 և 2015 թվականներին, տոկոսներով¹⁹⁷

Երկարաժամկետ օգտագործման կենցաղային ապրանքներ	Ընդամենը		Քաղաքային		Գյուղական	
	2008թ.	2015թ.	2008թ.	2015թ.	2008թ.	2015թ.
Հեռուստացույց	98	99	99	99	98	99
Սառնարան	91	95	94	97	85	95
Լվացքի մեքենա	79	92	82	92	73	92
Փռչեկով	46	71	52	74	33	66
Կարի մեքենա	42	71	41	53	45	49
Գազօջախ	86	92	89	92	80	91
Արբանյակային ալեհավաք	7	25	6	18	9	38

¹⁹⁷ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2013, էջ 138: Տե՛ս նաև Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 195:

Բջջային հեռախոս	72	96	75	96	68	97
Տեսախցիկ	3	7	3	7	1	6
Լուսանկարչական ապա- րատ	22	31	21	30	23	32
Համակարգիչ	10	61	14	64	2	54

Բնակչության առողջության կարևոր պայմաններից է նաև տնային տնտեսություններում երկարաժամկետ օգտագործման կեն-ցաղային ապրանքների առկայությունը:

Աղյուսակ 4.19-ի տվյալների հիման վրա կարելի է ասել, որ հե-ռուստացույցներով, սառնարաններով, լվացքի մեքենաներով, գազօ-ջախներով տնային տնտեսությունները ապահովված են: Խնդիրը որոշ չափով գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների համեմատաբար ցածր ապահովվածությունն է: Սակայն տարբերու-թյունները մեծ չեն, և որ ամենակարևորն է, 2015 թ.-ին գյուղական բնակավայրերը 2008 թ.-ի համեմատությամբ համարյա հիմնակա-նում բոլոր ապրանքների նկատմամբ ավելի մեծ աճ են արձանագրել, քան քաղաքում:

Բնակչության առողջության շատ կարևոր բաղադրիչներից ու գործոններից է կենսամակարդակը, տնային տնտեսությունների մեկ շնչին ընկնող եկամուտները, դրանց տարբերակումը և վերջապես աղքատությունը, որոնք հանգամանորեն քննարկվել են նախորդ բա-ժիններում: Ավելացնենք, որ հանրապետությունում աղքատության բարձր աստիճանը բնակչության առողջությունը քայքայող հիմնա-կան գործոնն է, այդ պատճառով նպատակահարմար է նորից դի-տարկել աղքատության մակարդակի ցուցանիշների զարգացման ընթացքը:

Ինչպես արդեն նշել ենք, 2004-2009 թթ.-ին աղքատության մա-կարդակը Հայաստանում 53.5 %-ից նվազեց մինչև 34.1 %: Ընդ որում՝ անգամ 2009 թ.-ին շատ աղքատ բնակչության մակարդակը 20.1 % էր, որը չէր կարող բացասաբար չանդադառնալ բնակչության առող-ջության վրա: Մինչև 2011 թ.-ը զգալի էր նաև ծայրահեղ աղքատ բնակչության մակարդակը (2011 թ.-ին՝ 3.6 %): Միայն 2015 թ.-ին է

աղքատության մակարդակը իջնում է 2008 թ.-ի մակարդակին (29.8 %), նրանցից շատ աղքատների մակարդակը կազմում է 10.4 %, իսկ ծայրահեղ աղքատներինը՝ 2.0 %:

Աղքատության մակարդակները միջին հանրապետականից բարձր են ՀՀ Շիրակի, Լոռու, Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում: Ամենաբարձրը Շիրակի մարզում է, որտեղ 2015 թ.-ին գրանցվել է 45.3 % աղքատություն: 2008-2015 թթ.-ին բոլոր մարզերում աղքատության մակարդակը աճել է (տե՛ս Աղյուսակ 3.33-ը): *Աղքատության, մասնավորապես շատ աղքատների ու հարկապես ծայրահեղ աղքատների շոշափելի մակարդակների պայմաններում բնակչության նորմալ առողջության մասին ոչ մի խոսք լինել չի կարող:*

Հայաստանի Հանրապետությունում, ամբողջությամբ վերցրած, չնայած աղքատության բարձր մակարդակի և բնակչության եկամուտների բաշխվածության մեծ բևեռացվածությանը, չնայած Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի շատ երկրների համեմատ պետական ցածր ֆինանսավորմանը, 2012 թ.-ին կյանքի սպասվող տևողությունը ծնվելու պահից տղամարդկանց մոտ կազմել է 70.9 տարի, իսկ կանանց մոտ՝ 77.5 տարի, 2015 թ.-ին՝ համապատասխանաբար՝ 71.7 և 78.2:¹⁹⁸ Այդ ցուցանիշները գերազանցել են անգամ 1990 թ.-ի համապատասխան մակարդակները: Ընդ որում՝ դրական կարևոր արդյունք է նաև մինչև մեկ տարեկան մանկական մահացության ցուցանիշի, ինչպես նաև մինչև հինգ տարեկանների մահացության գործակցի անկումը: Եվ դա այն դեպքում, երբ 2012-2015 թթ.-ին առողջապահության ոլորտի գծով համախմբված բյուջեի ծախսերի մասնաբաժինը 2008 թ.-ի համեմատ չի ավելացել համարյա մնացել է նույնը՝ 6.0 %-ի շրջանակներում (2012 թ.-ին՝ 6.2 %, 2015 թ.-ին՝ 6.0 %): Այդ նվաճումները, ըստ էության, պայմանավորված չեն եղել բնակչության կյանքի սոցիալական պայմանների բարելավմամբ: Դրանք հիմնականում պայմանավորված են 2012-2015 թթ.-ին առողջապահության ոլորտում իրականացված պետական արդյունավետ քաղա-

¹⁹⁸ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 138:

քականությամբ, բազմաթիվ կարևոր որոշումներով, մասնավորապես «մոր և մանկան առողջության պահպանման» ոլորտում: Մշակվել և հաստատվել են մոր և մանկան առողջապահական ծառայությունները կանոնակարգող շուրջ երկու տասնյակ հրամանների նախագծեր, իրագործվում են բնակչության առողջության պահպանմանը միտված մի շարք միջոցառումներ:

ՀՀ առողջապահության ոլորտում վիճակագրությունը փաստում է հետևյալը. 2015 թ.-ին բոլոր մասնագիտությունների բժիշկների թվաքանակը կրճատվել է դարձել է 13117 բժիշկ 2011 թ.-ի 13490-ի համեմատ, հիվանդանոցային հիմնարկների քանակը 2011-2015 թթ.-ի ժամանակահատվածում աճել է 2-ով, հիվանդանոցային մահճակալների քանակը 12236-ից աճել է մինչև 12532:¹⁹⁹

Դրական տեղաշարժեր կան ժամանակակից բժշկական ծառայությունները հանրապետության ողջ տարածքում հասանելի դարձնելու գործում. 2015 թ.-ին շահագործման են հանձնվել Մեղրիի՝ ժամանակակից սարքավորումներով հագեցած բժշկական կենտրոնը, սահմանամերձ Ճամբարակի առողջության կենտրոնը, Բերդի և Կապանի արդիականացված բժշկական կենտրոնները և այլն: Այնուհանդերձ, թե՛ բժիշկների թվաքանակով, թե՛ ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկների թվաքանակով ու հագեցվածությամբ մարզերը շատ են զիջում մայրաքաղաքին, և այս հարցում անելիքներ դեռ շատ կան (Աղյուսակներ 4.20 և 4.21):

Աղյուսակ 4.20. Բժիշկների և միջին բուժանձնակազմի թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 2015 թվականին²⁰⁰

(մարդ)

	Բժիշկների թվաքանակը		Միջին բուժանձնակազմի թվաքանակը	
	ընդամենը	10000 բնակչի հաշվով	ընդամենը	10000 բնակչի հաշվով
Ընդամենը՝ ՀՀ	13117	43.7	17632	58.8
Ք. Երևան	9084	84.6	8577	79.9

¹⁹⁹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, 2016, էջ 155:

²⁰⁰ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբյուրությունը, Երևան, 2016, էջ 142:

Արագածոտն	232	17.9	620	47.8
Արարատ	46	17.8	1018	39.3
Արմավիր	385	14.4	1029	38.6
Գեղարքունիք	321	13.8	951	41.0
Լոռի	509	22.6	1157	51.4
Կոտայք	525	20.7	1090	42.9
Շիրակ	570	23.4	1395	57.4
Սյունիք	288	20.7	780	56.0
Վայոց ձոր	114	22.4	238	46.9
Տավուշ	246	19.4	541	43.1

**Աղյուսակ 4.21. Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներն²⁰¹
ըստ տեսակի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 2015 թվականին**
(միավոր)

	Ինքնուրույն					Ստոմա- տոլո- գիական		Բաժանմունք հիվանդանոցի կազմում	ԸՄԼ	Ընդամենը
	Մեծահասակների	Մանկական	Առողջության կենտրոններ	Գլխավորական ամբուլատորիաներ		Մեծահասակների	Մանկական			
Ք. Երևան	23	2	41	-	5	24	5	35	10	145
Արագածոտն	-	-	1	16	-	1	-	6	-	24
Արարատ	-	-	1	49	-	3	-	6	-	59
Արմավիր	2	-	1	52	-	4	-	2	-	61
Գեղարքունիք	3	-	-	30	-	2	-	5	-	40
Լոռի	5	-	4	21	1	7	1	6	-	45
Կոտայք	2	-	4	30	1	3	-	6	-	46
Շիրակ	6	-	-	11	3	1	1	10	-	32
Սյունիք	-	-	-	10	1	2	-	5	-	18
Վայոց ձոր	-	-	-	5	-	-	-	3	-	8
Տավուշ	1	-	-	18	-	-	-	7	-	26
Ընդամենը ՀՀ	42	2	52	242	11	47	7	91	10	504

²⁰¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 142:

Բնակչության առողջության և ժողովրդագրության, այդ թվում մարդկային կապիտալի փոխառնչությունների մասին հետազոտություններ և տեղեկատվություն կան 2001 և 2011 թվականների մարդահամարի արդյունքներում, բոլոր տարիներին հրապարակվող Հայաստանի վիճակագրական տարեգրքերում, մասնավորապես 2010 թ.-ին հրատարակված «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն» ծավալուն ուսումնասիրությունում:²⁰²

Բնակչության առողջության ժողովրդագրության և մարդկային կապիտալի զարգացումների վրա դրանց ունեցած ազդեցության ուսումնասիրությունների արդյունքները շարադրված են նաև ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի 2013 թ.-ի տարեգրքում մեր համահեղինակությամբ հրատարակված հոդվածում:

Նշված հետազոտություններից, անշուշտ, իր ծավալով, հարցադրումներով, ուսումնասիրման մեթոդաբանությամբ և ծրագրի հարստությամբ առանձնանում է 2010 թ.-ին իրականացված «Հայաստան. ժողովրդագրություն և առողջության հարցերի հետազոտությունը»: Այն արժեքավոր է հատկապես նրանով, որ հետազոտվել է բնակչության բարեկեցության և առողջապահության մակարդակների փոխկախվածությունը: Դա հնարավորություն է տվել բնակչության բարեկեցությունը բաշխելու տարբերակված՝ ըստ գյուղ-քաղաք և ըստ ՀՀ մարզային կտրվածքների՝ 5 մակարդակների խմբավորումով: Նշենք, որ նման մեթոդով բնակչության բարեկեցության, առողջապահության և ժողովրդագրության փոխկախվածությունները առավել ամբողջությամբ են բացահայտվում:

Վերոնշյալ հետազոտության համաձայն՝ 2010 թ.-ին Հայաստանի Հանրապետությունում, ամբողջությամբ վերցրած, բնակչության 20 %-ը գտնվում էր բարեկեցության ամենացածր մակարդակում: Դրանք հիմնականում աղքատներն են կամ աղքատությանը մոտ խավերը, քանի որ 2010 թ.-ին բնակչության աղքատության մակարդակը շուրջ 34.0 % էր կազմում: Բարեկեցության միջին մակարդակը

²⁰² Հայաստան. Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, Երևան, 2010:

կում գտնվում էր ՀՀ բնակչության 20.6 %-ը, իսկ ամենաբարձր մակարդակում՝ 20.1 %-ը: Սա նշանակում է, որ ամենացածր և ամենաբարձր բարեկեցության մակարդակներում հավասար քանակի բնակչություն է գտնվում՝ 20-ական %:

Այլ հետազոտություններում Հայաստանում բարեկեցության ամենաբարձր մակարդակում հաշվարկվում է մինչև 15.0 % բնակչություն, իսկ ամենացածր մակարդակում՝ շուրջ 30-35 %: Այդ տարբերությունները, ըստ երևույթին, պայմանավորված են հաշվարկման տարբեր մոտեցումներով, տարբեր մեթոդաբանությամբ: Սակայն իրականությունը դրանից սկզբունքորեն չի փոխվում: Ակնհայտ է բնակչության բարեկեցության խիստ բևեռացումը, մեծ աղքատությունը և այդ ֆոնում հարուստ օլիգարխների մի ստվար խավի՝ բնակչության 15-20 %-ի բարեկեցիկ կյանքը:

Հենց դրանք պայմանավորում են ՀՀ-ում բնակչության առողջության, ժողովրդագրության և մարդկային կապիտալի ընդգծված անհավասարաչափ զարգացումները:

Բացի վերը նշվածներից՝ սոցիալական լուրջ խնդիրներ կան կապված գյուղ-քաղաք և մարզային կտրվածքներով բնակչության բարեկեցության մակարդակների տարբերությունների հետ: 2010 թ.-ին իրականացված «Հայաստան. ժողովրդագրություն և առողջության հարցերի հետազոտությունը» արձանագրում է, որ եթե գյուղում ամենացածր բարեկեցության մակարդակ ունեցողները բնակչության 48.7 %-ն են կազմում, ապա քաղաքում՝ ընդամենը 2.4 %-ը: Կամ, եթե ամենաբարձր բարեկեցության մակարդակ ունեցողները քաղաքում կազմում են 31.7 %, ապա գյուղում՝ ընդամենը 1.2 %: Մարզային կտրվածքով ամենաանմխիթար վիճակում է Արագածոտնի մարզը, որտեղ բարեկեցության ամենացածր մակարդակում գտնվում է բնակչության 61.1 %-ը, իսկ ամենաբարձր մակարդակում՝ 0.7 %-ը: Ընդ որում՝ նշենք, որ ամենաբարվոք վիճակը Երևան քաղաքում է, որտեղ բարեկեցության ամենացածր մակարդակում գտնվում է բնակչության ընդամենը 0.5 %-ը, իսկ ամենաբարձր մակարդակում՝ 45.7 %-ը:

Աղյուսակ 4.22 Բարեկեցության մակարդակներ (Մշտական բնակչության տոկոսային բաշխումն ըստ բարեկեցության մակարդակների և Ջինիի գործակիցը՝ համաձայն քաղաքային և գյուղական բնակավայրերի և մարզերի, Հայաստան, 2010թ.), (տոկոսներով)²⁰³

Բնակչություն (Մարզ)	Բարեկեցության մակարդակներ						Մշտական բնակչության թվաքանակ	Ջինիի գործակիցը
	Ամենացածր	Երկրորդ	Միջին	Չորրորդ	Ամենաբարձր	Ընդամենը		
Բնակավայր								
Քաղաքային	2,4	12,2	25,0	28,7	31,7	100,0	14741	0,06
Գյուղական	48,7	32,7	11,9	5,5	1,2	100,0	9065	0,32
Մարզ								
Երևան	0,5	6,6	18,3	28,8	45,7	100,0	8321	0,02
Արագածոտն	61,1	23,2	10,8	4,3	0,7	100,0	954	0,46
Արարատ	44,5	24,2	9,5	11,0	10,7	100,0	1904	0,32
Արմավիր	46,8	29,3	11,7	9,3	2,8	100,0	2104	0,33
Գեղարքունիք	24,4	42,9	20,9	10,9	1,6	100,0	1608	0,23
Լոռի	13,6	22,8	34,4	20,3	8,9	100,0	2074	0,16
Կոտայք	11,0	27,2	21,7	25,1	15,0	100,0	2069	0,15
Շիրակ	28,8	24,3	30,1	15,2	1,6	100,0	2120	0,26
Սյունիք	13,6	20,5	30,8	26,1	9,0	100,0	967	0,17
Վայոց ձոր	46,5	21,8	14,8	10,8	6,1	100,0	546	0,38
Տավուշ	36,1	31,0	17,6	12,5	2,8	100,0	1120	0,28
Ընդամենը	20,0	20,0	20,0	19,9	20,1	100,0	23787	0,22

Աղյուսակ 4.22-ը ցույց է տալիս, որ գյուղական բնակչության 81 %-ը գտնվում է ամենացածր և ցածր մակարդակներում: Քաղա-

²⁰³ Հայաստան, Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, Երևան, 2010, էջ 59:

քային բնակավայրերի տասը բնակիչներից վեցը գտնվում է բարեկեցության բարձր կամ ամենաբարձր մակարդակներում (60 %):

Ընդգծելով ոլորտի որոշ առաջընթացը՝ այնուհանդերձ, պետք է նշել, որ, ամբողջությամբ վերցրած, առողջապահության ոլորտն ունի լուրջ խնդիրներ, որոնք բարեփոխումների կարիք ունեն: Անշուշտ, ոլորտի բարեփոխումների ցածր արդյունավետությունը ամենից առաջ պայմանավորված է համակարգված քաղաքականության, ինչպես նաև ֆինանսական հոսքերի արդյունավետ կառավարման բացակայությամբ: Մասամբ է ներդրված պարտադիր բժշկական ապահովագրության համակարգը: Առողջապահության ոլորտում ոչ բավարար ներդրումների պատճառով աճել են կոռուպցիան և ստվերային շրջանառությունը: Հասարակության մեծամասնության համար բժշկական վճարովի ծառայությունները դժվար հասանելի են: Այս ամենը բնակչության առողջության վատթարացման պատճառ հանդիսացավ, ինչն էլ հանգեցրեց մարդկային կապիտալի լուրջ կորուստների: Դա իր արտացոլումն է գտել Աղյուսակ 4.23-ում:

Աղյուսակ 4.23. ՀՀ առողջապահության հիմնական ցուցանիշները²⁰⁴

	1997թ.	2001թ.	2005թ.	2009թ.	2011թ.	2014թ.	2015թ.
Բոլոր մասնագիտությունների բժիշկների թիվը	13023	11498	12307	13177	13490	12896	13117
Հիվանդանոցների քանակը	178	142	145	127	130	130	132
Հիվանդանոցներում մահճակալների թիվը	25560	16157	14353	12068	12236	12514	12532
Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների թիվը	497	460	458	487	506	509	504

²⁰⁴ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի 1999, 2005, 2009 և 2011 թվականների նյութերը, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 155-156:

Ամբուլատոր-պոլիկլինիկաների հաճախողների թվաքանակը	45561	39347	39236	38783	38734	39861	39451
Հիվանդանոցային մահճակալների թիվը 10 000 բնակչի հաշվով	64.4	53.9	44.6	37.1	37.4	41.6	41.8
Բժիշկների թվաքանակը (10 000 բնակչի հաշվով)	33.3	32.3	28.9	40.6	41.2	60.0	58.8

Աղյուսակ 4.23-ի տվյալները վկայում են, որ վերջին 18 տարիներին ընթացքում ՀՀ առողջապահական համակարգը բնութագրող ցուցանիշները փոխվել են հետևյալ կերպ. ավելացել են բժիշկների ընդհանուր թվաքանակը և ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների թիվը, կրճատվել՝ հիվանդանոցների քանակը և հիվանդանոցային մահճակալների թիվը: Բժիշկների ընդհանուր թվաքանակը նշված ժամանակահատվածում 13023-ից աճել է մինչև 13117, իսկ 10 000 բնակչի հաշվով բժիշկների թվաքանակը՝ 33.3-ից մինչև 58.8, ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների թիվն ավելացել է յոթով: Փոխարենը հիվանդանոցների քանակը կայուն կրճատման միտում է դրսևորել՝ 1997 թ.-ի 178-ից դառնալով 132 հիվանդանոց 2015 թ.-ին, իսկ հիվանդանոցային մահճակալների թիվը 10000 բնակչի հաշվով 64.4-ից իջել է 41.8-ի:

Այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են սրտանոթային համակարգի հիվանդությունները, չարորակ նորագոյացությունները, որոնք շարունակում են առաջնային տեղեր զբաղեցնել ընդհանուր մահացության կառուցվածքում, տարեցտարի դրսևորում են շարունակական աճի միտում: Սրանք այն հիվանդություններն են, որոնք վաղ կանխորոշման և զգալի ֆինանսական միջոցների առկայության դեպքում կարող են բուժվել: Իսկ եթե ավելացնենք նաև այն, որ բնակչության մեջ հիվանդությունների տարիքը երիտասարդացել է, ապա

կարելի է նշել, որ վերջինիս բացասական ազդեցությունը կարող է ունենալ բազմարկչի ազդեցություն՝ մարդկային կապիտալի կորուստների վրա:

Աղյուսակ 4.24. Հիվանդացության ժամանակ բժշկական խորհրդատվության կամ բուժման դիմաց բնակչության մասնաբաժինը՝ ըստ բնակության վայրի և բարեկեցության աստիճանի, տոկոսներով²⁰⁵

	2008 թ.	2010 թ.	2015 թ.
Ընդամենը	25.2	37.9	40.5
ք. Երևան	31.6	40.7	35.1
Այլ քաղաքներ	21.1	37.6	44.2
Գյուղական բնակավայրեր	21.4	35.3	43.5
Ոչ աղքատներ	28.0	41.6	43.8
Աղքատ	17.0	30.0	33.7
Ծայրահեղ աղքատ	9.0	24.1	13.5

Առողջապահության ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը բավական ցածր է հատկապես աղքատ բնակչության շրջանում: Այնուհանդերձ, առողջապահության ոլորտի վերջին տարիներին իրականացված որոշակի բարեփոխումները, հատկապես անվճար բժշկական ծառայությունների բաժնի աճը, հնարավորություն տվեցին Հայաստանի բնակչությանը ավելի հաճախ օգտվելու այդ ծառայություններից: Աղյուսակ 4.24-ի տվյալների համաձայն, եթե 2008 թ.-ին հիվանդության ժամանակ դիմել է առողջության առաջնային պահպանման ծառայություններին բժշկական խորհրդատվության կամ բուժման համար հիվանդների 25.2 %-ը, ապա 2015 թ.-ին արդեն՝ 40.5 %-ը, ընդ որում՝ այլ քաղաքներում բնակվողները և գյուղաբնակները՝ ավելի հաճախ, քան երևանաբնակները: 2015 թ.-ին նախորդ տարվա համեմատ հիվանդներն ավելի հաճախ են դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման ինչպես երկրի մակարդակով, այնպես էլ ըստ մարզերի: Միևնույն ժամանակ, քեև

²⁰⁵ Հայաստան. Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, Երևան, 2010: Տես նաև՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 144:

ըստ բնակչության բարեկեցության խմբերի համապատասխան ցուցանիշների միջև շեղումները հարաբերականորեն կրճատվել են, այդուհանդերձ այդ տարբերությունները շարունակում են նշանակալի մնալ: Եթե հիվանդության դեպքում ոչ աղքատների 43.8 %-ն է դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման, ապա աղքատների (առանց ծայրահեղ աղքատների) դեպքում՝ 33.7, ծայրահեղ աղքատների դեպքում՝ 13.5 %-ը:

Ըստ հետազոտությունների արդյունքների՝ առողջապահության հասանելիության անկման հետևանքով մարդիկ դիմում են բժշկի ծայրահեղ վիճակներում, խուսափում են բժշկի դիմելուց և կամ փորձում են տնայնագործական եղանակներով բուժվել: Համաձայն 2015 թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքների՝ բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառն ինքնաբուժումն է՝ 51.7 %, և ֆինանսական վատ վիճակը՝ 23 %:²⁰⁶ Բնական է, որ լուրջ հիվանդությունների դեպքում մեծան առողջապահական վարքը հանգեցնում է հիվանդության էլ ավելի խորացմանը, նոր բարդությունների առաջացմանը, բուժման ավելի դժվարացմանը, արդյունքում՝ մարդկային կապիտալի կորուստների: Այն փաստը, որ Հայաստանը ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային ծառայությունների օգտագործման դիտարկվող ցուցանիշներով 2.0-2.5 անգամ զիջում է ԱՊՀ և ԵՄ նորանդամ երկրներին, դրա հաստատումն է:

Բավական ցածր են նաև առողջապահական անհրաժեշտ ծառայությունների համար բնակչության վճարունակ կարողությունները: Փորձագիտական տվյալները ցույց են տալիս, որ բնակչության մեջ մեծամասնություն են կազմում այնպիսի սոցիալական խմբերը, որոնց առողջապահական ծախսերի հնարավորությունները չափազանց փոքր են: Արդյունքում տարեցտարի նվազում են տնային տնտեսությունների կողմից բժշկական ծառայությունների դիմաց վճարվող գումարները: Այսպես, 2011 և 2015 թթ.-ի ՏՏԿԱՀ ստացված տվյալների համաձայն՝ 2011 թ.-ին բժշկական ծառայությունների դի-

²⁰⁶ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 146:

մաց կատարված ծախսերը կազմել են տնային տնտեսությունների ծառայությունների վրա կատարված ծախսերի ընդհանրում 7.6 %-ը, իսկ 2015 թ.-ին՝ 6.2 %-ը 2009 թ.-ի 11.2 %-ի դիմաց: Փաստորեն, առողջապահությանն ուղղված ծախսերի բաժինը մեկ շնչի հաշվով տարեցտարի կրճատվում է: Տնային տնտեսության մեկ առկա անդամի հաշվով ամսական բժշկական ծառայությունների դիմաց կատարված ծախսերը 2009 թ.-ին կազմում էին միջինում ամսական 888 դրամ, 2011 թ.-ին՝ 686 դրամ, 2015 թ.-ին՝ 2 659 դրամ: Ըստ 2015 թ.-ի ՏՏԿԱՀ ստացված տվյալների՝ բժշկական ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են տնային տնտեսությունների ամբողջ ծառայությունների վրա կատարված ծախսերի 18.4 %-ը: 2015 թ.-ին բժշկական ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են աղքատ տնային տնտեսությունների սպառողական ծախսերի 7.2 %-ը կամ 105 դրամ, ոչ աղքատների դեպքում՝ 0.5 %-ը կամ 3 747 դրամ, իսկ ծայրահեղ աղքատները որևէ ծախս չեն ունեցել:²⁰⁷ Հասկանալի է, որ դրանով հիվանդը չի փրկվի: Վիճակը ավելի վատ է հանրապետության գյուղերում: Առողջապահության համար կատարվող մեծ ծախսերի հետևանքով տնային տնտեսությունները կարող են հայտնվել աղքատության գծից ներքև: Տնային տնտեսությունների հարցման արդյունքում պարզվել է, որ Հայաստանի տնային տնտեսությունների 6 %-ն աղքատ է դարձել առողջապահության համար գրպանից ծախսեր կատարելու հետևանքով, ինչը նկատելիորեն բարձր է տարածաշրջանի և աշխարհի մյուս երկրների մեծ մասի համեմատ:²⁰⁸


Այդ փաստերն ընդգծում են անվճար բժշկական փաթեթի կարևորությունը հատկապես աղքատ սպառողների համար: Ուստի հաշվի առնելով, որ այն կապված է ընտանեկան նպաստ ստանալու հետ, կարևորվում է ոչ միայն նպաստի հասցեականության ապահովումը, այլև աղքատների և ծայրահեղ աղքատների ընդգրկվածության բարձր աստիճանը: 2015 թ.-ին Հայաստանում պետական

²⁰⁷ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 148:

²⁰⁸ Ը. Ջնդոյան, Ֆինանսական հոսքերի արդյունավետությունը ՀՀ առողջապահության ոլորտում, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012, Երևան, 2013, էջ 187:

պատվերից օգտվելու իրավունք ունեցել է բնակչության միայն 8.5 %-ը: Ըստ աղքատության մակարդակի՝ պետական պատվերի իրավունք ունեցել է ծայրահեղ աղքատների 8.0 %-ը, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների) 7.7 %-ը և ոչ աղքատների 8.8 %-ը:

Տնային տնտեսությունների եկամուտների աճին զուգահեռ աճում է ընդհանուր սպառման նկատմամբ առողջապահության ծառայությունների վրա կատարվող ծախսերի տեսակարար կշիռը: 2015 թ.-ին ընդհանուր սպառման մեջ առողջապահությանն ուղղված ծախսերի բաշխումն ըստ քվինտիլային խմբերի հետևյալն է. ամենաաղքատ քվինտիլի առողջապահության ծառայությունների վրա ծախսերի մասնաբաժինը կազմում է 2.6 %, 2-րդ քվինտիլինը՝ 3.6, 3-ինը՝ 4.2, 4-ինը՝ 5.5 և ամենահարուստ 5-րդ քվինտիլինը՝ 16.4 %: Եթե ամենաաղքատ քվինտիլում առողջապահության ծառայությունների վրա ծախսերը զիջում են այդ ծառայությունների վրա միջին ծախսին 7 անգամ, ապա ամենավերին քվինտիլի բնակչության առողջապահության ծառայությունների վրա կատարված ծախսերը 3.5 անգամ գերազանցում են այդ ծառայությունների վրա միջին ծախսին (Գծապատկեր 4.3):



Գծապատկեր 4.3 Ընդհանուր սպառման մեջ առողջապահությանն ուղղված ծախսերի բաշխումն ըստ քվինտիլային խմբերի 2015 թվականին²⁰⁹

²⁰⁹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 149:

Մարդկային կապիտալի վերարտադրության գործում առողջության բաղադրիչի դիտարկման համատեքստում կարևորվում են նաև բնակչության առողջության վրա առավել ազդեցություն ունեցող *դեղամիջոցների սպառման ծավալները և դեղերի հասանելիությունը, բուժապասարկման և դեղորայքի սպառողական գների ինդեքսը*: Բուժապասարկման և օգտագործվող դեղերի վերջին տարիների փոփոխությունների միտումները բացասական զարգացումներ են դրսևորել, որը, անշուշտ, մարդկային կապիտալի առողջության դրական զարգացումներին չի նպաստել: Վիճակագրական տվյալները փաստում են ՀՀ-ում բնակչության կողմից դեղամիջոցների սպառման և դեղերի հասանելիության ցածր մակարդակը:

Պատահական չէ, որ այդ խնդիրները հանգամանորեն ուսումնասիրվել և քննարկվել են ՀՀ կառավարության 2012 թ.-ի հոկտեմբերի 18-ի նիստում, որտեղ ընդունվեց ծրագիր ՀՀ առողջապահության ոլորտում պետական վերահսկողության և դեղորայքային քաղաքականության հիմնախնդիրների լուծման շուրջ: Ուշադրության է արժանի, որ ծրագրի ներառությունում բացասական գնահատական է տրվել առողջապահության ոլորտում բուժապասարկման և, մասնավորապես, դեղորայքային գնային քաղաքականության հիմնախնդիրների լուծման գործում պետական վերահսկողության քաղաքականությանը: Անարդյունավետ են համարվել դեղերի կենտրոնացված գնումների գործընթացը, դեղերի վերագրանցման մեխանիզմների բացակայության պատճառով դրանց ֆիզիկական մատչելիության, դեղերի շրջանառության բարդ փուլերում անվտանգության և որակի ապահովումը, չգրանցված, ժամկետանց դեղերի շրջանառության դեմ պայքարը: Ծրագրով ընդունվեց միջոցառումների մի համալիր, որոնք նախատեսված են լուծելու նշված հիմնախնդիրները:

Բնակչության բուժապասարկման և դեղորայքի օգտագործման արդյունավետության խնդիրներն այսօր շարունակվում են լուծվել: Սակայն դրանք շատ բարդ, կյանքի վերարտադրության հետ առնչվող խնդիրներ են, որոնք, առանց պետական հստակ և մշտական վերահսկողության, դեղորայքի շրջանառության և գների կար-

գավորման, բուժապասարկման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի հաղթահարման, արդյունավետ լուծվել չեն կարող:

Աղյուսակ 4.25. Սպառողական գների ինդեքսն ըստ դիտարկվող քաղաքների 2015 թվականին²¹⁰ (օգոստոս*)

	ՀՀ ընդամենը	Երևան	Գյումրի	Վանաձոր	Գավառ	Կապան	Արտաշատ
Սպառողական գների ինդեքսը, ընդամենը, այդ թվում՝	97.9	98.0	97.2	97.4	48.6	97.9	99.0
պարենային ապրանքներ	93.0	93.4	91.6	92.7	93.6	92.7	95.2
ոգելից խմիչք, ծխախոտ	100.7	100.6	100.0	101.2	100.7	100.2	101.9
հագուստ և կոշիկ	99.7	98.8	103.6	104.1	105.0	103.1	98.5
բնակվարձ, վառելիք, էլեկտրաէներգիա	100.1	100.0	99.9	100.4	100.0	100.1	101.3
տնային գործածության ապրանքներ	107.3	107.9	104.9	107.4	105.4	107.6	101.1
բուժապասարկում և դեղորայք	107.9	108.6	106.7	104.2	113.5	106.9	106.0
տրանսպորտ և կապ	96.6	98.8	97.5	96.2	96.8	18.9	97.6
մշակույթի ապրանքներ և ծառայություններ	101.5	102.3	97.2	98.6	101.4	98.5	101.5
այլ ապրանքներ և ծառայություններ	104.7	103.4	108.5	104.8	107.6	106.4	111.8

*2014 թ.-ի դեկտեմբերի համեմատ

Հայաստանում բնակչության ցածր կենսամակարդակը և բարձր աղքատության մակարդակը բուժապասարկման և դեղերի գների առկա բարձր մակարդակների պայմաններում լուրջ խոչընդոտներ և

²¹⁰ ՀՀ, ԱՎԾ, Սպառողական գների ինդեքսը (գները) Հայաստանի Հանրապետությունում 2015 թ.-ի հունվար-սեպտեմբերին, Երևան, 2015, էջ 10:

դժվարություններ են ստեղծում բնակչության առողջապահության խնդիրները լուծելիս: Այդ տեսակետից ուշադրության են արժանի ՀՀ ԱՎԾ կողմից հրատարակված 2015 թ.-ի հունվար-հուլիս ամիսներին սպառողական գների ինդեքսի տատանումները: Աղյուսակ 4.25-ի տվյալները փաստում են, որ բուժսպասարկման և դեղորայքի սպառողական գների աճը նշված ընդհանուր համակցությունում եղել է ամենաբարձրը: ՀՀ կառավարության 2012 թ.-ի հոկտեմբերի 8-ի նիստի քննարկումների ժամանակ արձանագրվել են այդ ոլորտում տեղ գտած անպատասխանատու և անարդյունավետ դրսևորումները, որոնք առկա են նաև այսօր:

Պատմականորեն և տրամաբանորեն առողջապահական համակարգի ֆինանսավորման առաջնային աղբյուր է պետական բյուջեն: Ներկայումս համակարգը ֆինանսավորվում է ինչպես տեղական (պետական բյուջեն և բնակչության կողմից կատարվող վճարումները), այնպես էլ միջազգային աղբյուրներից (մարդասիրական օգնությունները, միջազգային ծրագրերը և այլն): ՀՀ-ում մասնավոր ֆինանսական միջոցների սղության, բժշկական ծառայությունների բարձր վճարների պայմաններում էական դեր են կատարում պետական բյուջեով պետության կողմից կատարվող ծախսերը: Սակայն առողջապահական համակարգին հատկացված պետական ծախսերը բավարար չեն համակարգի և բնակչության առողջապահական կարիքները նորմալ հոգալու համար: Այսպես, 2005 թ.-ին առողջապահության ոլորտին ուղղված ծախսերը կազմել են համախմբված բյուջեի ծախսերի ընդամենը 6.4 %-ը, 2006 թ.-ին՝ 7.0, 2007 թ.-ին՝ 6.3, 2008 թ.-ին՝ 6.0 %-ը: 2010-2011 թթ. այն մնացել է մոտ 6.3 %-ի սահմաններում, 2012 թ.-ին կազմել է համախմբված բյուջեի ծախսերի 6.2 %-ը, 2015 թ.-ին՝ 6.0 %-ը:²¹¹

Միևնույն ժամանակ այս ծախսերը երբևէ չեն գերազանցել ՀՆԱ-ի 1.8 %-ը՝ 2007 թ.-ին առողջապահության ոլորտում պետական և համայնքային բյուջեներից ծախսումների բաժինը ՀՆԱ-ի նկատ-

²¹¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբյուրությունը, Երևան, 2016, էջ 34:

մամբ կազմել է 1.5 %, 2008 թ.-ին՝ 1.4, 2009 թ.-ին՝ 1.8, 2010 թ.-ին՝ 1.6 %²¹², 2012-2015 թթ. ժամանակահատվածում՝ 1.4-1.7 %:²¹³

Ծախսերի նման մակարդակը ամենացածրերից մեկն է աշխարհում և շուրջ չորս անգամ զիջում է ԵՄ անդամ երկրների համապատասխան ցուցանիշին՝ կազմելով ԱՊՀ անդամ երկրների միջինի շուրջ կեսը:²¹⁴ ՀՀ-ում առողջապահության մեջ կատարվող ընդհանուր ծախսերում պետության ծախսերի տեսակարար կշիռը կազմում է ընդամենը 24.4 % (Շվեդիայում՝ 85 %, Ավստրիայում՝ 75 %, Հունաստանում՝ 53 %, Դանիայում՝ 82 %, Բելգիայում՝ 71.1 %):²¹⁵

Ըստ «Առողջապահության համաշխարհային կազմակերպության» գնահատականի՝ Հայաստանում առողջապահության ոլորտում կատարվող մասնավոր ծախսերի մակարդակը բավականին բարձր է՝ ՀՆԱ-ի նկատմամբ շուրջ 4.0 % և զարգացած երկրներից զիջում է միայն ԱՄՆ-ին և Շվեյցարիային: 2004 թ.-ին օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ-ում գործում է նաև մասնավոր կամավոր բժշկական ապահովագրության ինստիտուտը: 2009 թ.-ին ապահովագրության միջոցով կատարված առողջապահական ծախսերը կազմել են ընդհանուր մասնավոր ծախսերի ընդամենը 0.4 %-ը: 2015 թ.-ին ՀՀ առողջապահության նախարարությունը պետական պատվերի տեղադրման պայմանագրեր է կնքել 496 կազմակերպությունների հետ: Պետական պատվերից օգտվելու իրավունք ունեցել է բնակչության միայն 8.5 %-ը:²¹⁶

Ընդհանուր առմամբ Հայաստանում առողջապահության ընդհանուր ծախսերն աշխարհի ցածր և միջին եկամտով երկրներում հանդիպող ցուցանիշների շրջանակներում են: Գրեթե բոլոր ցածր և

²¹² Պարենային ապահովություն և աղքատություն, 2011 թ.-ի հունվար-դեկտեմբեր: Երևան, 2011, էջ 17-18:

²¹³ Նույն տեղում:

²¹⁴ Գ. Ղարիբյան, Ա. Հակոբջանյան, Բնակչության եկամուտների բաշխման և վերաբաշխման հարաբերությունները Հայաստանի Հանրապետության անցումային տարիներին, Երևան, 2011, էջ 95:

²¹⁵ ՀՀ առողջապահության ազգային հաշիվների 2006 թ.-ի զեկույց, ՀՀ ԱԾԻԳ, Երևան, 2007 (www.who.int):

²¹⁶ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ 140, 148:

միջին եկամտով երկրները ընդհանուր առմամբ (պետական և մասնավոր) իրենց ՀՆԱ-ի մոտ 8 %-ն են ծախսում առողջապահության ոլորտում: Հայաստանում առողջապահության ծախսերը կազմում են ՀՆԱ շուրջ 4.6 %-ը:

Այսպիսով՝ առողջապահության ոլորտում պետական ծախսերի մակարդակի ավելացումը պետք է հանդիսանա պետական սոցիալական քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը:

Առողջապահության ոլորտում վերջին տարիներին նկատվում են որոշակի դրական փոփոխություններ: Այսպես, 2015 թ.-ից մեկնարկվել է «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի շրջանակում իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների (գարկերակային գերճնշում, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) սրբինինգային ծրագիրը, որի շրջանակում 35-68 տարեկան ՀՀ բոլոր քաղաքացիները հնարավորություն ունեն անվճար հետազոտվելու: Բացի այդ, 2015 թ.-ից սկսած, սոցիալական փաթեթի շահառուները իրենց սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անցնում են պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն: 2015 թ.-ից մեկնարկվել է բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում սրտի անհետաձգելի վիրահատությունների՝ ոչ դեղապատ ստենդի տեղադրման ծրագիրը և այլն:

2015 թ.-ին շահագործման են հանձնվել Մեդրիի ժամանակակից սարքավորումներով հագեցած բժշկական կենտրոնը, սահմանամերձ Ճամբարակի առողջության կենտրոնը (Գեղարքունիքի մարզում)՝ ժամանակակից պահանջները բավարարող 2-րդ հիվանդանոցը), Բերդի և Կապանի արդիականացված բժշկական կենտրոնները, Մեծամորի բժշկական կենտրոնի պոլիկլինիկական հատվածը, 5 մարզում շահագործման են հանձնվել 6 նորակառույց և 1 հիմնանորոգված ու հագեցված առողջության առաջնային պահպանման կենտրոններ և ամբուլատորիաներ և այլն:

Առողջապահության ոլորտում վերջին տարիներին առկա դրական փոփոխություններին նպաստող միջոցառումների թվին են դասվում հետևյալ ծրագրերը.

- 2011 թ. փետրվարի 1-ից հանրապետությունում ներդրված, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների փոխհատուցման համավճարային համակարգը, որը տարածվում է անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության ծրագրերի վրա,
- 0-7 տարեկան երեխաներին անվճար բուժօգնության ցուցաբերման ծրագիրը,
- անվճար ծննդօգնության ցուցաբերման ծրագիրը,
- սոցիալապես անապահով խավերին անվճար բուժօգնության և դեղորայքի հատկացման ծրագիրը:

Հարկ է նկատել, որ հատկապես սոցիալական նպաստառուներին անվճար կամ արտոնյալ պայմաններով բուժօգնության ու համավճարային բուժօգնության ծրագրերի հետ կապված կան վարչարարական, կոռուպցիոն ու տեղեկատվական բնույթի խոչընդոտներ, որոնք նվազեցնում են այդ ծրագրերի արդյունավետությունը: Լուրջ հիվանդությունների դեպքում մարդիկ հաճախ չեն վստահում անվճար ծառայության որակին և պատշաճ մակարդակի բուժօգնություն ստանալու համար իրականացնում են ստվերային վճարումներ՝ գումար տալով բուժող բժշկին: Այդ վճարումները չնայած լուրջ լարվածություն են առաջացնում անապահով ու աղքատ ընտանիքների համար, սակայն նրանք հաճախ ստիպված են լինում դիմել վճարովի բուժօգնության պարտքերի, բարեկամների օգնության կամ ընտանիքի ունեցվածքից որևէ բան վաճառելու ճանապարհով:

Չնայած այս ամենին՝ նշված ընդհանուր բնույթի ծրագրերը ամեն դեպքում որոշակի դրական ազդեցություն ունեն առողջապահական ծառայությունների մակարդակը այնպիսին դարձնելու, որ մարդիկ անհրաժեշտության դեպքում գոնե անվճար նվազագույն բուժօգնություն ստանան: Այսինքն, եթե մարդը չունի որակյալ բուժօգնության համար ոչ անհրաժեշտ միջոցներ և ոչ էլ որևէ կերպ դա

ձեռք բերելու հնարավորություն, նա կարող է ապավինել անվճար բուժօգնության գործող ծրագրին: Այսպիսով, եթե ընդհանրացնենք, ապա կարելի է առանձնացնել աղքատների ու անապահովների կարիքների հետևյալ խմբերը.

1. կանխարգելիչ առողջապահական ծառայությունների կարիք,
2. ախտորոշիչ առողջապահական ծառայությունների կարիք,
3. հիվանդանոցային որակյալ բուժում ստանալու կարիք,
4. դեղորայքի ձեռքբերման կարիք:

Ինչ վերաբերում է համակարգային բնույթի խնդիրներին, ապա դրանց թվում կարելի է առանձնացնել.

- մարզային ու տարածքային առողջապահական ծառայությունների որակական անհամաչափության հաղթահարումը,
- որակյալ հիվանդանոցային որակյալ բուժօգնությունը և դեղորայքի մատչելիությունը խոչընդոտող վարչարարության պարզեցումը և կոռուպցիոն մեխանիզմների վերացումը,
- սոցիալական նպաստառուների ցուցակներում չմտնող, սակայն իրականում նման սոցիալական ծանր պայմաններ ունեցող խմբերին առողջապահական ծառայությունների մատչելության բարձրացումը:

Հատուկ ուշադրություն է պետք հիվանդությունների վաղ ախտորոշմանը, կանխարգելմանն ու բուժմանն ուղղված միջոցառումներին և դրանց իրականացման արդյունավետությանը: Միևնույն ժամանակ պետք է մատչելի դարձնել առանցքային ծառայությունները (հատկապես մարզերում)՝ համապատասխան որակ ապահովելով հանդերձ:

Խիստ կարևոր են սոցիալապես անապահով և առանձին այլ խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային մասնագիտացված բուժօգնության ապահովման հարցերը: Սոցիալական անապահով խմբերին առողջապահական ծառայությունների մատուցման երաշխիքների ապահովման և համապատասխան ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը պետք է սոցիալական փաթեթի շրջանակում բժշկական ապահովագ-

րության ծրագրի արդյունքների մանրամասն ուսումնասիրման և վերլուծության արդյունքում ապահովի սոցիալական անապահով խմբերին պետության կողմից տրամադրվող անվճար կամ արտոնյալ պայմաններով առողջապահական ծառայություններ: Առողջապահության ոլորտում պետական ծախսերի շարունակական ավելացումը դիտվում է սահմանված գերակայությունների ուղղությամբ միջոցառումների իրականացման առանցքային ուղղություններից մեկը: Այսպես, ՀՀ 2012-2015 թթ.-ի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում է առողջապահության ոլորտում պետական ծախսերի մակարդակը 2017 թ.-ին հասցնել ՀՆԱ-ի նկատմամբ 1.9 %-ի, իսկ 2025 թ.-ին՝ շուրջ 3 %-ի: Հաշվի առնելով բյուջետային խիստ սահմանափակումները 2013-2015 թթ.-ին՝ պետական առողջապահական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը մնալու է գրեթե անփոփոխ (շուրջ 1.6 %)՝ չնայած այն հանգամանքին, որ այդ ժամանակահատվածում անվանական արտահայտությամբ առողջապահության ոլորտում պետական ծախսերը միջին հաշվով աճելու են տարեկան մոտ 11 %-ով: Այդուհանդերձ, սկսած 2016 թվականից, նախատեսվում է պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության տարեկան 0.1-0.2 տոկոսային կետով ավելացում, որի արդյունքում ակնկալվում է ոլորտում իրական արտահայտությամբ պետական ծախսերի ավելացում 2011 թ.-ի համեմատ 2017 թ.-ին՝ 1.6, իսկ 2025 թ.-ին՝ շուրջ 4.2 անգամ:

Ծրագրվող ժամանակահատվածում առողջապահության ոլորտը լինելու է պետական ծախսային գերակայություններից մեկը, և ոլորտին հատկացումներն աճելու են ավելի արագ, քան համախմբված բյուջեի ընդամենը ծախսերը:

Արդյունքում ակնկալվում է, որ առողջապահության ոլորտում պետական ծախսերի մասնաբաժինը համախմբված բյուջեի ընդամենը ծախսերում 2017 թ.-ին կկազմի 7.1 %, իսկ 2025 թ.-ին՝ 9.7 % 2011 թ.-ին փաստացի արձանագրված 6.3 %-ի համեմատ:²¹⁷

²¹⁷ ՀՀ 2012-2015 թթ.-ի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, նոյեմբեր, 2012, էջ 104-105:

Ընտանիքի սոցիալ-հոգեբանական մթնոլորտը, ծնողների միջև առկա փոխհարաբերությունները շատ կարևոր են երեխայի, հատկապես դեռահասի ֆիզիկական և հոգեկան բարեկեցության համար: Սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների համաձայն՝ այն ընտանիքները, որտեղ ծնողներն իրենց փոխհարաբերությունները գնահատում են լավ, երեխաների 74 %-ը ունի «գերազանց» առողջություն, իսկ այն ընտանիքներում, որտեղ պահպանվում է լարված ու անառողջ հոգեբանական մթնոլորտ, երեխաների 33 %-ը ունի վատ առողջություն:

Հանրապետությունում աղքատ ու սոցիալապես անապահով խավերի համար որակյալ առողջապահական այնպիսի ծառայությունների ստանալը, որը կապահովի նրա մարդկային կայուն զարգացումը, այսօր հասանելի չէ: *Այս առումով կարելի է ներկայացնել մի քանի առաջարկներ, որոնք, մեր կարծիքով, կնպաստեն առաջիկա տարիներին վերը նշված հիմնախնդիրները մեղմելուն ու լուծելուն:*

Կարճաժամկետ ծրագրեր հրատապ խնդիրները լուծելու համար.

1) բնակչության շրջանում տարեկան նվազագույնը երկու անգամ լայնածավալ անվճար ախտորոշիչ ու կանխարգելիչ առողջապահական ծրագրերի պարբերական իրականացում,

2) սոցիալապես անապահով, բայց որևէ սոցիալական ծրագրի մեջ չներառվածների համար առողջապահական անվճար ծառայություններ ստանալու համակարգի մշակում ու իրականացում,

3) համավճարային սկզբունքի տարածում առողջապահության բոլոր ոլորտների վրա (ներկայումս այն վերաբերում է միայն գինեկոլոգիական ու անհետաձգելի բժշկական միջամտության կարիք ունեցող հիվանդություններին),

4) առողջապահական որակյալ ծառայությունների ապահովման նպատակով մարզային բնակավայրերի բնակիչների համար առողջապահական որակյալ ծառայությունների մատուցման պարբերական ակցիաների իրականացում,

5) համապատասխան որոշումներով նշված ծրագրերի բյուջետային ֆինանսավորման ապահովում,

6) տարբեր տեսակի բարեգործական կամ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության և առողջապահական ոլորտում նրանց կողմից իրականացվող ծրագրերի հետ պետական ծրագրերի միաժամանակյա իրականացման ակտիվացում: Բնակչության անապահով խավերի առողջապահական կարիքների մասին տեղեկատվական տվյալների ձևավորում և դրանց տարածում ոլորտում ծրագրեր իրականացնող բոլոր հնարավոր դերակատարներին,

7) աղքատ ու անապահով խավերին տրամադրվող պետական վերով անվճար կամ արտոնյալ առողջապահական ծառայությունների որակի բարձրացում և կատարելագործում:

Այսպիսով՝ ՀՀ առողջապահական համակարգը դեռևս բավարար չափով չի իրականացնում իր հիմնական առաքելությունը, անհրաժեշտ մակարդակով չի նպաստում բնակչության, ինչպես նաև մարդկային կապիտալի ընդլայնված վերարտադրությանը: Այդ առումով բարեփոխումներն այս համակարգում հիմնականում պետք է ուղղվեն համակարգի կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիայի և ստվերային շրջանառության կրճատմանը և վերացմանը, դեղորայքային շուկայում գնագոյացման կարգավորմանը: Այստեղ խիստ կարևոր է համակարգում ֆինանսավորման նոր մեխանիզմների, մասնավորապես բժշկական ապահովագրության համակարգի ներդրումը: Կառավարության խնդիրն է, բժշկական ապահովագրության համակարգի ներդրմամբ կրկին չձևավորվել արատավոր ստվերային շրջանառության այնպիսի մեխանիզմ, որն առկա է այսօր: Դրա համար պետք է կիրառվեն ոչ միայն կառավարման վարչական ու տնտեսական լծակները, այլ նաև բարոյահոգեբանական լծակները, բնակչության մեջ պետք է տարվի մեծ ծավալի բացատրական աշխատանք:

4.1.3 Միգրացիոն գործընթացները ՀՀ անցումային ժամանակաշրջանում

Ինչպես արդեն նշել ենք, բնակչության թվաքանակի փոփոխությունը պայմանավորված է ոչ միայն բնակչության բնական աճով կամ նվազմամբ, այլև մեխանիկական փոփոխություններով՝ միգրացիայով:

Պատմականորեն, դեռևս Խորհրդային Հայաստանում ժողովրդագրական զարգացումների, մասնավորապես արտագաղթի և աշխատուժի միգրացիայի խնդիրների շուրջ լուրջ հետազոտություններ են կատարել պրոֆեսորներ Ա. Խ. Կարապետյանը, Ս. Ա. Կարապետյանը, ակադեմիկոս Վ. Ե. Խոջաբեկյանը, դոցենտ Լ. Մ. Դավթյանը, դոցենտ Գ. Եգանյանը, Կ. Կոյումջյանը և շատ ուրիշներ:²¹⁸ 2012 թ.-ին լույս տեսավ «Միգրացիան և հմտությունները, Հայաստանի ազգային զեկույցը»,²¹⁹ 2013 թ.-ին՝ պրոֆ. Հ. Սարգսյանի, դոցենտներ Ք. Անտոնյանի և Կ. Խաչատրյանի «Միգրացիա, միտումներ և հետևանքներ» աշխատանքը²²⁰ և 2013 թ.-ին Հայ ռուսական համալսարանի պետպատվերով՝ «ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով» աշխատանքը:²²¹

Անցումային այդ ծանր շրջանի սոցիալ-տնտեսական բարդ զարգացումների գիտական հետազոտություններ է կատարվել նաև 2007-2008 թթ. ՀՀ կենտրոնական բանկի հայտարարած մրցույթային դրամաշնորհով, որը շահեց Երևանի պետական համալսարանի

²¹⁸ Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX, XX դարերում և XXI դարի շեմին, Երևան, 2001: Տե՛ս նաև ՀՀ աշխատաշուկայի վերլուծությունը (գիտահետազոտական աշխատանք), գիտ. ղեկավար Գ. Ղարիբյան, Երևան, 2010: Կապիտալի ճախասկզբնական կուտակման, հարստության ու եկամուտների բեռնացման առանձնահատկությունները ՀՀ-ում, գիտ. ղեկավար Գ. Ղարիբյան, Երևան, 2011:

²¹⁹ Միգրացիան և հմտությունները, «Հայաստանի ազգային զեկույց», Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին, 2012:

²²⁰ Հ. Սարգսյան, Ք. Անտոնյան, Կ. Խաչատրյան, Միգրացիա, միտումներ և հետևանքներ, Երևան, 2013:

²²¹ ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով, ծրագրի ղեկավար՝ Ա. Վարդանյան, քեմայի գիտ. ղեկավար՝ Ռ. Եգանյան, Երևան, 2013:

տնտեսագիտության ֆակուլտետը պրոֆ. Գ. Ղարիբյանի գլխավորությամբ: Հետազոտական խմբում էին տնտ. գ. ք. Գ. Եզանյանը, դոցենտներ Ա. Համբարձումյանը, Ա. Խառատյանը, Կ. Ավետիսյանը, Մ. Եղիազարյանը, Ա. Մարտիրոսյանը, տնտ. գ. ք. Գ. Սիրոյանը և տնտեսագետ Հ. Մկրտչյանը:

Հետազոտությունը իրականացվել է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 6129 տնային տնտեսությունների հարցման արդյունքներով: Հարցումներին մասնակից են եղել նաև ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողները: Հետազոտության արդյունքում բացահայտվեցին Հայաստանի տնային տնտեսությունների ժողովրդագրական առանձնահատկությունները և զարգացումները, դրանց միտումները և սոցիալական հետևանքները: Առանձնահատուկ վերլուծություններ կատարվեցին աշխատաշուկայի զարգացումների միտումները բացահայտելու ուղղությամբ:

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի մի քանի ամբիոնների համատեղ ուժերով, Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության բյուջետային ֆինանսավորմամբ, պրոֆ. Գ. Ղարիբյանի գլխավորությամբ և պրոֆ. Հ. Սարգսյանի գլխավոր խորհրդատվությամբ 2011 թ.-ին հետազոտվեց «Կապիտալի նախասկզբնական կուտակման, հարստության և եկամուտների բևեռացման առանձնահատկությունները և կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունում» թեման, որն առանձնանում էր իր արդիականությամբ, կարևորությամբ և միաժամանակ իր բարդության հատկանիշներով: Թեմայի կատարմանը մասնակցել են պրոֆ. Հ. Մարգարյանը, դոցենտներ Ա. Խառատյանը, Ա. Համբարձումյանը, Մ. Եղիազարյանը, Ն. Քոչինյանը և դասախոս Հ. Մկրտչյանը:

Նշված երկու լուրջ հետազոտությունները գլխավորում են բացահայտեցին Հայաստանի Հանրապետության անցումային շրջանի կապիտալի նախասկզբնական կուտակման բացառիկ դժվարություններն ու իշխանությունների իրականացրած անարդյունավետ, կոռուպցիոն քաղաքականության արդյունքում՝ ցավալի ու մինչև այ-

սօր շարունակվող տնտեսական ու սոցիալական, մասնավորապես ժողովրդագրական բացասական միտումներով զարգացումները:

20-րդ դարի 80-ական թվականներից սկսած՝ մի կողմից նվազեց սիյուռքահայերի, ինչպես նաև Ադրբեջանի և Վրաստանի հայագգի քաղաքացիների ներհոսքը Հայաստան, իսկ մյուս կողմից աճեցին դեպի դուրս, հատկապես Ռուսաստանի Դաշնություն, Եվրոմիության երկրներ և ԱՄՆ ուղղված արտահոսքերը: Ընդ որում, 80-ական թվականներին տիպիկ էր սեզոնային աշխատանքային միգրացիան, որը կազմում էր տարեկան շուրջ 30-40 հազար մարդ: Դրանք, ըստ էության, գյուղացիական հարաբերական գործազուրկներն էին, որոնք արտերկրում հիմնականում զբաղվում էին շինարարության ոլորտի աշխատանքներով: Եթե մինչև 1988 թ.-ի երկրաշարժը և Հայաստանի անկախացումը Խորհրդային Հայաստանին հատուկ էր բնակչության կանոնավոր աճը, ինչպես բնական աճի, այնպես էլ մեխանիկական աճի՝ ներգաղթի հաշվին, ապա 1988 թ.-ի երկրաշարժի և դրանից հետո Արցախյան պատերազմի և անկախացման ճանապարհին սոցիալ-տնտեսական անարդյունավետ վերափոխումների արդյունքում ձևավորված բնակչության 50-60 % արքատության պայմաններում՝ բնակչության թվաքանակի կրճատումը: ՀՀ ժողովրդագրական բնական բացասական աճի միտումներին գումարվեց նաև բնակչության արտահոսքը: 800 հազարից մինչև մեկ միլիոն մարդ Հայաստանից արտագաղթեց, որը բնակչության աշխատանքային միգրացիայի ձևով մինչև այսօր էլ շարունակվում է: *Դա արդեն մարդկային կապիտալի զանգվածային քանակական կորուստ է՝ իր բոլոր վրանգավոր սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական, ազգային անվտանգությունը խաթարող հետևանքներով:*

Միգրացիան, լինելով համաշխարհային տնտեսության գլոբալացման անխուսափելի հետևանքը, պայմանավորված է տարբեր երկրներում բնակչության աճի, կենսամակարդակների, տնտեսական հնարավորությունների և տնտեսության զարգացման խիստ անհամաչափությամբ: 1990-ականների սկզբից սկսած՝ միգրացիոն հոսքերում նշանակալի տեղ գրավեցին սոցիալիստական նախկին երկրնե-

րի, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիները:²²² Եվրոպայի անցումային երկրների ուղղվածությունը գլխավորապես ԵՄ կողմն էր, իսկ նախկին ԽՍՀՄ երկրների գլխավոր նպատակակետը ՌԴ-ն էր: Համաշխարհային բանկի տվյալներով 2013 թ.-ի դրությամբ բնակչության մեջ արտագաղթողների տեսակարար կշռով անցումային երկրների շարքում առաջին տեղում հայտնվեց Մոնտենեգրոն (45.4 %), ապա Բոսնիա և Հերցեգովինան (44.5 %), Ալբանիան (43.6 %), Կոսովոն (30.3 %), Մակեդոնիան (30.2 %), Հայաստանը (26.3 %) և Մոլդովան (24.2 %), իսկ ուղեղների արտահոսքի ցուցանիշով (բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռ արտագաղթողների մեջ) 2011 թ.-ին կրկին առանձնացավ Ալբանիան՝ 31.3 %, ապա՝ Ռումինիան՝ 20.6 %, Խորվաթիան՝ 19.8 % և Մոլդովան՝ 19 %:

Հայաստանի Հանրապետության՝ որպես անցումային տնտեսությամբ երկրի բնակչության արտագաղթի մեծ մասշտաբները հանգեցրին նրան, որ երկրում առաջացան լուրջ խնդիրներ՝ կապված թե՛ ժողովրդագրական փոփոխությունների հետ՝ ի դեմս աշխատունակ տարիքի բնակչության նվազման ու տարեցների թվի ավելացման, թե՛ սոցիալ-տնտեսական փոփոխությունների հետ՝ ի դեմս երկրի ներուժի նվազման և մարդկային կապիտալի քանակական կորստի, և թե՛ երկրի անվտանգության հետ՝ պայմանավորված սահմանամերձ շրջանների բնակչության թվաքանակի նվազմամբ: Վ. Խոջաբեկյանի գնահատմամբ անկախացումից հետո մինչև 2002 թ.-ը Հայաստանից արտագաղթողների թիվը տատանվում է 600 հազարից մինչև ավելի քան 1250 հազար մարդ:²²³ Որոշ հետազոտությունների համաձայն՝ ՀՀ-ից գուտ արտագաղթը (էմիգրացիան) 1991-1998 թթ. կազմեց 760 000-780 000 մարդ (կամ 1991 թ.-ի ՀՀ բնակչության 20 %-ը):²²⁴

²²² Գ. Ղարիբյան, Մ. Եղիազարյան, Գլոբալացման պայմաններում համաշխարհային միգրացիայի դրսևորումների հարցի շուրջ, «Ֆինանսներ և էկոնոմիկա», 2004, N 10-11, էջ 130-133: Տե՛ս նաև Գ. Ղարիբյան, Մ. Եղիազարյան, Միգրացիան ԱՊՀ ինտեգրացիոն տարածքում, «Ֆինանսներ և էկոնոմիկա», 2004, N 10-11, էջ 133-135:

²²³ Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերաբնակչությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, 2001, Երևան, էջ 308:

²²⁴ International Labour Organisation (ILO), 2009a. Migration and development: Armenia country study. ILO Subregional Office for Eastern Europe and Central Asia, 2009, p 5.

ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ 1992-2007 թթ. ՀՀ-ից արտագաղթածների թիվը կազմել է 1010 հազար մարդ (Աղյուսակ 4.26): Այլ աղբյուրներում նշվում է, որ անկախության տարիներին երկրից արտագաղթել է մեկ միլիոն 500 հազար մարդ:²²⁵ Հիշենք, որ միջազգային նորմերից ելնելով՝ կրիտիկական է համարվում 15 %-ը, որից հետո տվյալ ազգի (պետության) գոյատևումը խիստ վտանգի տակ է դրվում: Ընդ որում՝ Հայաստանում միջպետական միգրացիան շարունակվում է:

Աղյուսակ 4.26. ՀՀ միգրացիոն հոսքերը 1992-2007 թթ.²²⁶

(հազար մարդ)

Ժամանակահատված	Ժամանումներ	Մեկնումներ	Զուտ ներգաղթ
1992-1994	370	980	-610
1995-2001	350	600	-250
2002-2007	600	750	-150
Ընդամենը	1320	2330	-1010

IPSC-ի (Institute for Political and Sociological Consulting) հարցման համաձայն՝ 2011 թ.-ի մարտին Հայաստանի բնակչության 8.2 %-ը միգրացիան համարել է կարևոր հիմնախնդիրներից մեկը, իսկ սեպտեմբերին այդ թիվն արդեն 14.6 % էր:²²⁷ Միգրացիան իր սրությամբ զգալիորեն առաջ է անցել քննարկվող այլ թեմաներից, ինչպիսիք են կոռուպցիան և մարդու իրավունքները, ինչպես նաև Ղարաբաղյան հակամարտությունը: Ըստ 2012 թ.-ի դեկտեմբերին IPSC-ի կողմից իրականացված «Կյանքի որակի ինդեքսը 2012 թ.-ին» սոցիոլոգիական հետազոտության արդյունքների՝ հարցվածների 49.6 %-ը նշում է, որ հնարավորության դեպքում կմեկնի երկրից:

Որո՞նք են Հայաստանից արտագաղթելու հիմնական պատճառները, եթե 2012 թ.-ին բնակչության գրեթե կեսը ցանկություն ու-

²²⁵ www.bachtoarmenia.am

²²⁶ United Nations Development Program (UNDP), 2009. Armenia: National human development report 2009 – Migration and human development: Opportunities and challenges, *UNDP Armenia, Yerevan*, pp. 37-39:

²²⁷ <http://ipsc.am/am-quality-of-life-index-december-2012/>

ներ մեկնելու երկրից: Անդրադառնա՞նք հետազոտությունների արդյունքներին:

Հայաստանի Հանրապետության 6129 տնային տնտեսությունների 2007-2008 թթ. հետազոտության արդյունքներով նախորդ 15 տարիների ընթացքում ՀՀ-ից մեկնել է տնային տնտեսությունների անդամների 21.8 %-ը: Ինչպես նկատում ենք Աղյուսակ 4.27-ից, նրանց արտերկիր մեկնելու պատճառները տարբեր են, և դա միայն աշխատանքի բացակայությունը չէ: Լուրջ պատճառներ են լավ վարձատրվող աշխատանք գտնելը, ըստ մասնագիտության աշխատելը, սոցիալ-քաղաքական անկայուն վիճակը, անվտանգությունն ապագայի նկատմամբ, կրթությունը և, վերջապես, ընտանիքի մյուս անդամներին միանալը:

2007-2008 թթ. հանրապետության տնային տնտեսությունների շուրջ 20.0 %-ն արտերկրում ուներ ընտանիքի անդամներ, և նրանց 68.7 %-ը Հայաստանից բացակայում էր 3 և ավելի տարի: Դա նշանակում է, որ արտերկրում գտնվող ընտանիքի անդամներին միանալը դարձել է միգրացիոն նոր հոսքերի ածանցյալ, բայց կարևոր, պատճառ: Ավելին, եթե արտերկրում գտնվողները չվերադառնան, և նրանց թիվն ու բաժինը շարունակ աճի, ապա հեռանկարում այն կդառնա նոր, ավելի մեծ միգրացիոն հոսքերի պատճառ՝ իր բոլոր վտանգավոր հետևանքներով:


Աղյուսակ 4.27. Ի՞նչ պատճառով եք մեկնել արտերկիր²²⁸

	Պատասխանների թիվը	Տոկոսը
Պարզապես աշխատանք գտնելու	762	22,6
Ըստ մասնագիտության աշխատանքի բացակայությունը	78	2,3
Լավ վարձատրվող աշխատանք գտնելու	814	24,1
Միանալու ընտանիքի մյուս անդամներին	691	20,5

²²⁸ Գ. Ղարիբյան, Գ. Եգանյան, Ա. Համբարձումյան, Ա. Խառատյան, Կ. Ավետիսյան, Մ. Եղիազարյան, Ա. Մարտիրոսյան, Գ. Սիրոյան, Հ. Սկրտչյան, ՀՀ աշխատաշուկայի վերլուծություն (գիտահետազոտական աշխատանք), Երևան, 2010, էջ 47:

Սոցիալ-տնտեսական և քաղաքական անկայուն վիճակը ՀՀ-ում	101	3,0
Անվատահուրյունն ապագայի նկատմամբ Հայաստանում	49	1,5
Կրթություն	144	4,3
Այլ	733	21,7
Ընդամենը	3372	100,0

Սույն ուսումնասիրության արդյունքներով՝ 2007-2008 թթ. նախաճգնաժամային շրջանում, ի տարբերություն 2012 թ.-ի IPSC-ի հարցման արդյունքների (49.6 %), Հայաստանից ցանկանում է մեկնել տնային տնտեսությունների անդամների 39.9 %-ը: Մարզային կտրվածքով պատկերը հետևյալն է. ամենաքիչը երկրից մեկնելու ցանկություն ունեն Սյունիքի (28.2 %) և Արագածոտնի (24.0 %) մարզերի բնակիչները, ամենաշատը՝ Արմավիրի մարզի բնակչությունը (54.8 %): Ցանկանում է մեկնել Երևանի բնակչության 40.6 %-ը, ընդ որում՝ մեկնելու ավելի մեծ ցանկություն ունեն աշխատանք ունեցողները (43.3 %), քան չունեցողները (37.3 %): Նույն օրինաչափությունը առկա է գրեթե բոլոր մարզերում: Շիրակի մարզում ցանկանում է արտագաղթել մարզի բնակչության 45.0 %-ը, աշխատանք ունեցողների՝ 45.5 և չունեցողների 44.6 %-ը, Տավուշի մարզում՝ աշխատանք ունեցողների 58.3 և չունեցողների 51.6 %-ը և այլն: Այս փաստը խոսում է աշխատողների ցածր աշխատավարձի և/կամ մեկնելու սոցիալ-հոգեբանական պատճառների գերակայության մասին: Իսկապես, հարցման մասնակիցները նշել են, որ չէին մտածի արտագնա աշխատանքի մեկնելու մասին, եթե ամսական միջինը վաստակեին 200 հազար դրամ՝ 2007 թ.-ի հարցումների ժամանակ, և արդեն 300 հազար դրամ՝ 2008 թ. հարցումների ժամանակ: Նրանց 33.7 %-ը Հայաստանից ցանկանում է մեկնել լավ վարձատրվող աշխատանք գտնելու մտադրությամբ: Հարցման մասնակիցների 4.5 %-ը ցանկանում են հայրենիքից հեռանալ սոցիալ-տնտեսական և քաղաքական անկայուն վիճակից դրդված, 14.2 %-ը՝ ապագայի նկատմամբ ունեցած անվստահության պատճառով (Գծապատկեր 4.4):




Պատկեր 4.4. Ի՞նչ պատճառով եք ցանկանում մեկնել Հայաստանից

ՀՀ-ում արտագաղթողների թվաքանակի վրա միջին աշխատավարձի փոփոխության ազդեցությունը բացահայտելու նպատակով կատարված ռեգրեսիոն վերլուծության արդյունքների համաձայն՝ միջին աշխատավարձի աճը նպաստում է արտագաղթի նվազմանը: Մինչդեռ ժամանակ միջին աշխատավարձով է բացատրվում միգրացիա փոփոխականի վարիացիայի միայն 54 %-ը, մնացած 46 %-ը բացատրվում է այլ գործոններով՝ ապագայի հանդեպ վստահության կորստով, սոցիալ-տնտեսական և քաղաքական անկայուն վիճակով և այլն:²²⁹

Հայաստանում աշխատանք ունեցող, բայց մեկնել ցանկացող անձանց մեծ մասը բարձր որակավորմամբ աշխատողներ են, որոնք արտերկրում ավելի վաստակելու հնարավորություն ունեն: «ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծություն» հետազոտության արդյունքների համաձայն՝ 2007-2008 թթ. արտասահմանում գտնվողների 37.6 %-ն

²²⁹ Ա. Խառատյան, Ն. Քոչինյան, ՀՀ աշխատանքի շուկան և բնակչության արտագաղթը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», N 5-6, Երևան, 2004, էջ 127-132:

ուներ բարձրագույն, 1.9 %-ը՝ ետբուհական կրթություն, իսկ 1.5 %-ը՝ գիտական կոչում:



Պժապատկեր 4.5. Հայաստանից մեկնած անձանց հայրենիք վերադառնալու շարժառիթները

Հարցումների արդյունքներով պարզվել են նաև արտերկրից Հայաստան վերադառնալու հիմնական շարժառիթները՝ ընտանիքի և հայրենիքի կարոտը (55.6 %), աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտը (15.4 %), համապատասխան աշխատանք չգտնելը (12.7 %) (Պժապատկեր 4.5): Հատկանշական է այն փաստը, որ 2008 թ.-ի աշնան հարցումների ժամանակ համապատասխան աշխատանք չգտնելու հիմնավորմամբ Հայաստան ետ վերադարձածների թիվը զգալի աճել է: Վերջինս կրում է ինչպես սեզոնայնության, այնպես էլ, ամենայն հավանականությամբ, սկիզբ առած համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը:

Ուշագրավ են նաև ներքին աշխատանքային միգրացիայի զարգացումները Հայաստանի Հանրապետության տարածքային կտրվածքում (Աղյուսակ 4.28):

Աղյուսակ 4.28. Ի՞նչ պատճառներով եք փոխել Ձեր մշտական բնակության վայրը Հայաստանում²³⁰


	Պատասխանների թիվը	Տոկոսը
Աշխատանքի բացակայությունը	304	38,5
Ոչ բավարար վարձատրությունը	33	4,1
Սահմանամերձ շրջաններում պատերազմական վտանգի առկայությունը	33	4,1
Հիմնական կրթական օջախներից հեռու գտնվելը	145	18,3
Գյուղմթերքի իրացման դժվարությունները	5	0,7
Դժվարանում են պատասխանել	72	9,1
Այլ պատճառներ	199	25,1
Ընդամենը	791	100,0

Ներքին միգրացիայի հիմնական պատճառը դարձյալ աշխատանքի բացակայությունն է և ոչ բավարար վարձատրությունը: Դրանց գումարվում են կրթական օջախների հեռու գտնվելը և սահմանամերձ շրջաններում պատերազմական վտանգի առկայությունը: Ընդ որում՝ Հայաստանի ներսում բնակչության միգրացիայի հիմնական հոսքերը սահմանամերձ և բարձր լեռնային մարզերից ու տարածքներից են դեպի Երևան կամ այլ քաղաքներ, մասնավորապես դեպի Երևան քաղաքի շրջակայքը: Դա պայմանավորված է Երևանում և նրան հարակից քաղաքներում և գյուղերում համեմատաբար բարձր ապրելակերպով, աշխատանք ունենալու հարաբերականորեն ավելի մեծ հնարավորություններով և, որը ամենակարևորն է, երեխաների կրթություն ստանալու հեռանկարով, ինչպես նաև շուկաներին մոտ գտնվելու առավելություններով (գյուղմթերքը իրացնելու համար):

Հայտնի է, որ արտերկրից կատարվող դրամական փոխանցումները ՀՀ շատ ընտանիքների համար աղքատության կրճատման աղբյուր են: Հետազոտության արդյունքների համաձայն՝ արտերկրից

²³⁰Գ. Ղարիբյան, Գ. Եգանյան, Ա. Համբարձումյան, Ա. Խառատյան, Կ. Ավետիսյան, Մ. Եղիազարյան, Ա. Մարտիրոսյան, Գ. Սիրոյան, Հ. Սկրտչյան, ՀՀ աշխատաշուկայի վերլուծություն (գիտահետազոտական աշխատանք), Երևան, 2010, էջ 55:


տրանսֆերտներ ստացող ընտանիքներից 18.0 %-ի համար արտերկրից փոխանցվող դրամական օգնությունը կազմում է գրեթե ամբողջ ընտանեկան բյուջեն, 16.5 %-ի համար՝ բյուջեի հիմնական եկամուտները, 20.9 %-ի համար՝ եկամուտների գրեթե կեսը: Տրանսֆերտներ ստացող ընտանիքների 25.5 %-ի ընտանեկան բյուջեի եկամուտների 10-15 %-ն է ձևավորվում արտերկրի տրանսֆերտներով, իսկ 19.1 %-ինը՝ մինչև 10 %-ը (Գծապատկեր 4.6):



Գծապատկեր 4.6. Ընտանեկան բյուջեում դրսից ստացվող դրամական օգնության բաժինը

Հետազոտությամբ պարզվել է նաև, թե արտերկրում գտնվող միգրանտները ինչպես են ուղարկում իրենց գումարները: Հարցման մասնակիցների 78.5 %-ը նախընտրում է բանկային փոխանցումները, 13.4 %-ը՝ կանխիկ փոխանցումները մասնավոր անձանց միջոցով, և 8.0 %-ը անձամբ է վաստակած գումարը տեղափոխում (Գծապատկեր 4.7): Ընդ որում՝ հետազոտության երկու տարիների ընթացքում զգալիորեն աճել է բանկային փոխանցմամբ գումարի ուղարկումը՝ Հայաստան՝ 64.6 %-ից մինչև 84.5 %, և գրեթե նվազագույնի է հասցվել կանխիկ կերպով դրամի տեղափոխումը՝ շրջանցելով բան-

կային համակարգը: Սա խոսում է բանկային համակարգի նկատմամբ վստահության աճի մասին:



Գծապատկեր 4.7. Արտերկրից գումարի առաքման ձևը

2009 թ.-ին Աշխատանքի միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ իրականացվեց «Միգրացիան և զարգացումը, Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրությունը»: Այն դիտարկում է չորս փոխկապակցված խնդիր՝ ա) աշխատանքային միգրացիա և վերադարձ, բ) հմուտ աշխատուժի արտահոսք, գ) Հայաստանի կրթական համակարգի արձագանքը տեղական և գլոբալ աշխատանքային շուկաների ազդակներին և դ) միգրացիայի զարգացման ներուժի օգտագործմանն ուղղված հայաստանյան քաղաքականությունը և լավագույն միջազգային փորձը:

Ուսումնասիրության արդյունքում եզրակացվեց, որ ներկայումս Հայաստանից մշտական միգրանտների զանգվածային միգրացիոն հոսքեր չկան, ամենակարևոր հոսքը ժամանակավոր աշխատանքային միգրանտներն են: Տարեկան մոտ 60000 աշխատանքային միգրանտ աշխատանք է փնտրում Ռուսաստանում, հիմնականում՝

շինարարության ոլորտում:²³¹ Նրանք չեն ցանկանում ընտանիքներով տեղափոխվել Ռուսաստան և մշտական բնակություն հաստատել այնտեղ: Միաժամանակ նրանք չեն ցանկանում մշտապես վերադառնալ Հայաստան, քանի որ Հայաստանում չեն կարող գտնել նորմալ աշխատանք, որից բավարար եկամուտ կստանան: Աշխատանքային միգրանտները պատրաստ են մշտապես վերադառնալ Հայաստան, եթե կարողանան լավ վարձատրվող աշխատանք գտնել:

Ինչ վերաբերում է վերադարձողներին, ապա 2002-2008 թթ. ավելի քան 55000 միգրանտ է վերադարձել Հայաստան և որոշել արտերկիր չմեկնել առնվազն 2008 թ.-ի ընթացքում: Ներպետական աշխատաշուկայում վերադարձողների մրցունակությունը, ինչպես նաև նրանց միջին ամսական աշխատավարձն ընդհանուր առմամբ բարձրացել են՝ սովորական աշխատողների համեմատ: Այնուհանդերձ, չնայած վերադարձողները հմտությունների և տեխնոլոգիաների փոխանցման իմաստով դրական ազդեցություն են թողնում իրենց աշխատանքի ընդունող ընկերությունների վրա, նրանց օգուտը հայրենիքին ներդրումների, աշխատատեղերի ստեղծման և բիզնեսի զարգացման առումներով, ըստ երևույթին, սահմանափակ է: Դա պետք է զգոնացնի քաղաքականություն մշակողներին, որպեսզի վերջիններս դիտարկեն երկրի տնտեսական զարգացման գործում վերադարձող միգրանտների ներուժն առավել արդյունավետ օգտագործելու ուղիները:

Հետաքրքիր է, թե որպես արտագաղթի դրսևորում որո՞նք են միգրացիոն հոսքերի ժամանակակից միտումները: Այդ տեսակետից ուշադրության է արժանի «Միգրացիան և հմտությունները, Հայաստանի ազգային զեկույց»²³² աշխատության մեջ ուսումնասիրված պոտենցիալ և վերադարձած միգրանտների հետազոտության արդյունքները: Այսպես, ըստ այդ հարցումների, Հայաստանի 18-50 տա-

²³¹ Միգրացիան և զարգացումը, Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Երևան, 2009, էջ 27-28:

²³² Միգրացիան և հմտությունները, «Հայաստանի ազգային զեկույց», Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին, 2012:

րեկան քաղաքացիների 36.0 %-ը լրջորեն մտածում է Հայաստանից հեռանալու մասին: Տղամարդիկ շատ ավելի մեծ հակվածություն ունեն արտերկիր տեղափոխվելու (42.0 %), քան կանայք (30.0 %): Արտագաղթելու ավելի մեծ հակվածություն ունեն հատկապես երիտասարդները: Միգրացիայի ամենամեծ հավանականությունը բարձրագույն կրթությամբ խմբի մոտ է, որը և պայմանավորում է «ուղեղների» աճող արտահոսքի միտումը:

Ինչ վերաբերում է վերադարձած միգրանտների հետազոտության արդյունքներին, դրանք նախ հիմնականում տղամարդիկ են (87.0 %), որոնց արտերկրում մնալու միջին տևողությունը եղել է մեկ տարի: Նրանց տուն ուղարկած տրանսֆերտները ծախսվել են հիմնականում ընտանիքի գոյատևման վրա և միայն աննշան մասն է ներդրվել կրթական կամ բիզնես գործունեության մեջ: Ընդ որում՝ վերադարձած միգրանտների շուրջ կեսը արտերկրում կատարել է բարձր որակավորում չպահանջող աշխատանք, իսկ 28.0 %-ը նշել են, որ կատարել է իրենց կրթական մակարդակից ցածր բնույթի աշխատանք. մի հանգամանք, որը տանում է միգրանտների մի մասի որակազրկմանը: Ավելին, վերադարձած միգրանտների կեսը նշել է, որ արտերկրում եղած ժամանակ իրենք նոր հմտություններ ձեռք չեն բերել (այս արդյունքը կարելի է մեկնաբանել նաև, որ մյուս կեսը ձեռք է բերել նոր հմտություններ): Վերադարձած միգրանտների միայն 42.0 %-ն է Հայաստանում գտել աշխատանք, իսկ 58.0 %-ը մտածում է նորից արտագաղթելու մասին: *Դա ամենավերանգալոր միտումն է, որը հղի է ժամանակավոր, ոչ ընդամենական միգրացիան երկարաժամկետ, անվերադարձ ընդամենական միգրացիայի վերաճելուն:*

2009 թ.-ի «Մարդկային զարգացման ազգային զեկույցով» 2001-2005 թթ. միգրացիայի արդյունքում երկիրը կորցրեց իր բնակչության ավելի քան 17 %-ը: Այդ տարիների հետազոտությունների եզրահանգումներով, 1988 թ.-ից Հայաստանում սկիզբ առած միգրացիոն հոսքերը բաժանվում են չորս փուլի (Աղյուսակ 4.29):

Աղյուսակ 4.29. Հայաստանի բնակչության 1988-2007 թթ. միգրացիոն ծավալների փորձագիտական փուլային գնահատումը, հազար մարդ²³³

Փուլեր	Ցուցանիշներ	Տարիներ			
		1988-1991	1992-1994	1995-2001	2002-2007
Ապակայունացման փուլ	Ներհոսք	600	-	-	-
	Արտահոսք	620	-	-	-
	Շրջանառություն	-20	-	-	-
Զանգվածային արտահոսքի փուլ	Ներհոսք	-	370	-	-
	Արտահոսք	-	980	-	-
	Շրջանառություն	-	-610	-	-
Անցում կայունացման	Ներհոսք	-	-	350	-
	Արտահոսք	-	-	600	-
	Շրջանառություն	-	-	-250	-
Շարունակական ժամանակավոր միգրացիա	Ներհոսք	-	-	-	600
	Արտահոսք	-	-	-	750
	Շրջանառություն	-	-	-	-150
Ընդհանուր շրջանառությունը	-1030				

1. Ապակայունացման փուլ (1988-1991 թթ.):

- *Փախստականներ:* Հիմնական հոսքերն էին փախստականները՝ ներհոսք մոտ 420 հազար (շուրջ 360 հազարը Ադրբեջանից, մնացածը՝ ԽՍՀՄ այլ տարածքներից), արտահոսք՝ մոտ 170 հազար հայաստանաբնակ ադրբեջանցի: Սա եղել է հետխորհրդային հոսքերից միակը, որի արդյունքում երկրի բնակչության թիվը մոտ 250 հազարով աճել է: Տարբեր պատճառներով ներգաղթածների մեծ մասը Հայաստանից արտագաղթեց (ՌԴ և այլ երկրներ):
- *Երկրաշարժի գոյրու բնակչության էվակուացում և ռեէվակուացում (1989-1990 թթ.):* 200 հազար աղետյալներ էվա-

²³³ Միգրացիան և հմտությունները, Հայաստանի ազգային զեկույց, Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին, 2012, էջ 18:

կուացվեցին ԽՍՀՄ հանրապետություններ, որոնցից վերադարձան 150 հազարը:

- *Հասարակական-քաղաքական միգրացիա* (արտահոսք շուրջ 250 հազար, ներհոսք մոտ 30 հազար): Արտերկրում աշխատելու նպատակով արտագաղթեցին բարձր որակավորման մասնագետներ և ԽՍՀՄ նոմենկլատուրային մերժվածներ, նորահայտ գործարարներ, Ատոմակայանի, «Նախրիտի» և այլ գործարանների կանգնեցման հետևանքով աշխատանքը կորցրածներ:
- *Աշխատանքային սեզոնային միգրացիա*: Այդ մեծ խումբն ամբողջովին ընդգրկվեց երկրաշարժի գոտու վերականգնման աշխատանքներում, որը, սակայն, ԽՍՀՄ փլուզմամբ՝ 1992 թ.-ին դադարեց: Դա հանգեցրեց սեզոնային աշխատանքային միգրացիայի:

2. Չանգվածային արտահոսքի փուլը (1992-1994 թթ.): Սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամը, տնտեսության ընդհանուր կործանումը և կաթվածահար վիճակը, զանգվածային գործազրկությունը, բնակչության մասսայական ունեզրկումը, սպասարկման ողջ համակարգի կործանումը, նոմենկլատուրային կոռուպցիոն սեփականաշնորհումը, ավանդների սառեցումը, զանգվածային աղքատացումը, եկամուտների ահռելի բևեռացումը հանգեցրին երեք տարում 980 հազար մարդու էմիգրացիայի և միայն 370 հազարի՝ իմիգրացիայի, հիմնականում ռեէմիգրանտներ (նախկին էմիգրացվածների վերադարձ): Արդյունքում գրանցվեց մոտ 610 հազար արտագաղթ:

Արտագաղթողներից հիմնականը աշխատանքային միգրանտներն էին, երկրորդը՝ սոցիալ-կենցաղային միգրանտները (որոնք հեռանում էին երկրից սոցիալ-կենցաղային արտառոց պայմանների պատճառով՝ էլեկտրականության հովհարային անջատումներ, տրանսպորտային կոլապս, մութ ու ցուրտ օրեր և այլն): Ընդ որում՝ եթե մեկնածների շարքերում մեծ թիվ էին կազմում աշխատանքային միգրանտները (50 %), ապա վերադարձողների դեպքում, հակառակը, սոցիալ-կենցաղային միգրանտները (մոտ 60 %՝ աշխատանքայինի 35 %-ի դիմաց): Արդյունքում արտերկրում մնացածների թվում աշ-

խատանքային միգրանտների բաժինը (65 %) շուրջ 3 անգամ գերազանցեց սոցիալ-կենցաղային միգրանտների թվին:

Ընդ որում՝ արտահոսքի 75-80 %-ը տեղի ունեցավ դեպի ԱՊՀ երկրներ, հատկապես ՌԴ, մնացածը գրեթե հավասար բաժնեմասերով՝ Եվրոպա և ԱՄՆ: Այդ փուլում գերակշռել են ակտիվ տարիքում գտնվող տղամարդիկ (60 %): Այս բոլորի արդյունքում խաթարվեց բնակչության ժողովրդագրական կառուցվածքը՝ ըստ սեռի և տարիքի համամասնությունը: Աճեց բնակչության ծերացման միտումը, կրճատվեցին ամուսնությունները, ծնելիությունը, աճեց մահացությունը, ամուսնալուծությունները և այլն:

3. *Կայունության փուլը (1995-2000 թթ.):* Միգրացիոն ակտիվությունը կտրուկ նվազում է. մոտ 600 հազար էմիգրացվում է և շուրջ 350 հազարը՝ իմիգրացվում (հիմնականում ռեէմիգրանտներ), բացասական մնացորդը կազմում է 250 հազար մարդ:

Նշված փուլին բնորոշ են հետևյալ միտումները. արտահոսքը նվազեցրել է տրանսֆերտ փոխանցումներով երկրում մնացածների կենսամակարդակի բարձրացումը, ռեէմիգրացիայով ավարտվող հոսքը փոխարկվում է անվերադարձ հոսքի: Արդյունքում՝ սեզոնային միգրացիան նվազման միտում է ցուցաբերում, որը դրսևորվում է ժամկետային անհատականության և բարձր ռիսկայնության մեջ: Մեծանում է պարտքով մեկնելու ռիսկայնությունը՝ լավ վարձատրվող աշխատանք գտնելու ռիսկայնությունը, օրինականության ապահովման ռիսկայնությունը: Այդ բոլորի արդյունքում 900 հազար մարդ չի վերադառնում: Կան հաշվարկներ 1-1.2 միլիոնին հասնող արտագաղթի մասին:²³⁴

4. *Շարունակական ժամանակավոր միգրացիայի փուլ (2002-2007 թթ.):* Այս փուլի մասին ավելի հստակ պատկերացում կազմում ենք Աղյուսակ 4.30-ից, որի համաձայն՝ 2002-2007 թթ.-ի ժամանակահատվածում տարեկան միջին հաշվով երկիրը լքել է 25 հազար մարդ:

²³⁴ Վ. Թովմասյան, Ժողովրդագրական մարտահրավերները և բնակչության հեռանկարները, Երևան, 2013, էջ 103:

**Աղյուսակ 4.30. ՀՀ արտաքին և ներքին միգրացիան 2002-2007 թթ.-ի
հետազոտություններով²³⁵**

	Ընդհանուր	Տարեկան միջին	Մասնակցությու- նը արտաքին միգրացիային	Արտաքին միգ- րացիային մաս- նակցածների ընդհանուր թիվը
Ներհոսք	600 000	100 000	150 000	230 000 ± 15 000
Արտահոսք	750 000	125 000	320 000	
Շրջանառություն	-150 000	-25 000	-170 000	

«Աշխատանքի միջազգային կազմակերպության» (ԱՄԿ), ՍԱԿ-ի բնակչության հիմնադրամի զեկույցներում ներկայացված ՀՀ 2002-2007 թթ.-ի միգրացիոն հոսքերի գնահատումները լիովին համապատասխանում են Աղյուսակ 4.30-ում ներկայացված շարունակական ժամանակավոր միգրացիայի փուլի տվյալներին: Այդ զեկույցներում նշվում է, որ 2002-2007 թթ.-ին Հայաստանում արտագաղթը հիմնականում վերածվեց արտագնա աշխատանքի, որին մասնակցում էին տնտեսապես ակտիվ բնակչության գլխավորապես արական սեռի ներկայացուցիչները: Այս ժամանակահատվածում նախորդի համեմատ զուտ արտագաղթը փոքր-ինչ նվազեց և կազմեց միջինում տարեկան 25 հազար մարդ:²³⁶ Եթե վերանայենք առաջին երեք փուլերի արտագաղթի կառուցվածքները, ապա կարող ենք հստակ նկատել, որ շուկայական տնտեսությանն անցման հետագա փուլերում առաջանում է մշտական արտագաղթից սեզոնային կամ արտագնա աշխատանքի նպատակով արտագաղթի անցման միտում: Աշխատանքային միգրացիան հանգեցնում է «նոր» սփյուռքի ձևավորմանն ու էլ

²³⁵ Միգրացիան և հմտությունները, Հայաստանի ազգային զեկույց, Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին, 2012, էջ 24:

²³⁶ International Labour Organisation (ILO), 2009a. Migration and development: Armenia country study. ILO Subregional Office for Eastern Europe and Central Asia, 2009, pp. 11-14, 20. Տե՛ս նաև United Nations Population Fund (UNFPA) 2007. Report of a sampling survey of external and internal migration of the Republic of Armenia. UNFPA, Yerevan, 2007, pp. 40-72.

ավելի ուժգնացնում ներքին պահանջարկի կախվածությունն արտաքին ֆինանսական աղբյուրներից:²³⁷

«Միգրացիան և հմտությունները, Հայաստանի ազգային զեկույց» հետազոտության արդյունքներով՝ վերադարձող և ընթացիկ միգրանտների կառուցվածքային առանձնահատկություններում առկա է հետևյալ պատկերը.

- վերադարձողների շուրջ 2/3-ը և բացականների մոտ 3/4-ը տղամարդիկ են,
- վերադարձողների 73.2 %-ը և բացականների 82.8 %-ը 20-45 տարեկան են,
- ամուսնացած են վերադարձողների 70.0 %-ը և բացականների 67.5 %-ը,
- ընդհանուր միջնակարգ կրթություն ունեն վերադարձողների 41.9 %-ը, բացականների՝ մոտ 41.0 %-ը,
- աշխատանք ունեցած վերադարձողների 56.7 %-ը աշխատել է շինարարությունում, 15.3 %-ը՝ առևտրում, 10.0 %-ը՝ արդյունաբերությունում, բացականների դեպքում՝ համապատասխանաբար 55.7 %, 16.1 % և 18.7 %,
- արտերկրում գործազուրկ է եղել մեկնողների ընդամենը 2.0 %-ը,
- վերադարձածների 80.8 %-ը, բացականների 76.8 %-ը եղել են ՌԴ-ում:

Կատարված հարցումների արդյունքում պարզվեց, որ ՀՀ բոլոր տնային տնտեսությունների մոտ 36.0 %-ը (արտերկրում միգրանտ ունեցող տնային տնտեսությունների 70.0 %-ից ավելին) պարբերաբար դրամական փոխանցումներ է ստանում: Վերջին 5 տարիներին դրանց ծավալը շուրջ 15 անգամ գերազանցել է պետական տրանսֆերտների ծավալը, 2004-2005 թթ.-ին՝ ավելի քան 40, իսկ 2007 թ.-ին ավելի քան 85 անգամ գերազանցել է պետական մակարդակի ֆինանսական այլ աջակցությունների չափը: Դրամական փոխանցում-

²³⁷ Հ. Սարգսյան, Մարկոսյան Ա., Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Երևան, 2014, էջ 196:

ները նպաստում են անհավասարության և աղքատության կրճատմանն ու կենսամակարդակի բարձրացմանը, նպաստում են մարդկային կապիտալի զարգացմանը՝ կրթության և առողջապահության զարգացումներին: Ստացված տրանսֆերտների 90.0 %-ը 80.0 % տնային տնտեսությունները ծախսում են ընթացիկ սպառման վրա, խնայվում է 10.0 %-ը, տնային տնտեսությունների 9.0 %-ին հաջողվում է խնայել ստացված եկամտի մինչև 20.0 %-ը:

Հետազոտության արդյունքում եզրակացվեց, որ միգրացիոն գործընթացների ժամանակակից առանձնահատկությունները հետևյալն են.

ա) ձևավորվել է աշխատանքային միգրանտների կայուն զանգված, որի արդյունքում տարեկան շուրջ 15 հազար մարդ մեկնում է արտերկիր,

բ) առկա են մասն ոչ մեծ մշտական արտաքին միգրացիոն հոսքեր, որոնք ևս ընթանում են բացասական մնացորդով:

Միգրացիոն միտումների և հետևանքների մասին ուշագրավ է Հ. Սարգսյանի, Ք. Անտոնյանի և Կ. Խաչատրյանի «Միգրացիա, մտորումներ, հետևանքներ» հետազոտությունը: Նախ ուշադրության է արժանի Հայաստանի Հանրապետությունից մեկնածների ու ժամանածների հարաբերակցությունը:

Աղյուսակ 4.31-ի տվյալները ցույց են տալիս, որ 1992 -2000 թթ.-ին ՀՀ-ն ունեցել է միգրացիոն բացասական սալը: 1992 թ.-ից սկսած՝ 20 տարիների ընթացքում միայն երեք տարիների (2004, 2005 և 2006) համար ենք ունեցել միգրացիոն դրական սալը, որը 2006 թ.-ին գրանցվեց ամենաբարձր ցուցանիշը՝ 21.7 հազար մարդ: Վտանգավոր էր 2008 թ.-ից մինչև 2010 թ.-ը, ներառյալ միգրացիոն բացասական սալորդի աճի միտումը: Դրանում, անշուշտ, իր բացասական դերը խաղաց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Բարեբախտաբար, 2011 թ.-ին այն փոքր-ինչ կրճատվեց և 2010 թ.-ին 46.7 հազարի փոխարեն կազմեց 43.8 հազար մարդ:

**Աղյուսակ 4.31. ՀՀ-ից մեկնածներն ու ժամանածները 1992-2011 թթ.-ին,
հազար մարդ²³⁸**

Տարի	Ժամանածներ	Մեկնածներ	Միգրացիոն սալը (+,-)
1992	636,9	865,5	-228,6
1995	469,5	507,0	-37,5
2000	399,7	457,2	-57,5
2005	845,8	833,3	12,5
2010	1754,2	1800,9	-46,7
2011	1945,1	1988,9	-43,8

Սակայն ընդհանուր վիճակը շատ մտահոգիչ է, քանի որ Հայաստանի Հանրապետությունից միգրացիայի վանող գործոնները ոչ միայն չեն նվազում, այլև ուժեղանում են: Ավելին, դեպի ՀՀ գրավող այնպիսի գործոն, ինչպիսին հայրենասիրությունն է, Հայաստանը սիրելն է, քիչ ներգործություն ունի և կարծես թե նվազման միտում ունի: Փոխարենը աճում և միգրացիայի ուժեղացմանը նպաստում են այնպիսի վանող գործոններ, ինչպիսիք են՝ քաղաքական անկայունությունը և Հայաստանի ապագայի նկատմամբ անվստահությունը, Ադրբեյջանի տենդագին սպառազինումը, մասնավորապես Ռուսաստանից 4 միլիարդ դոլարի հարձակողական զենքի գնումը: Ուշադրության է արժանի հեղինակների հետազոտության այն մեթոդաբանությունը, որ հարցումներ կատարվել են աշխատունակ բնակչության «չմեկնած» և «վերադարձած» էմիգրանտների խմբերում: «Վերադարձած» էմիգրանտ է համարվել 18 և ավելի տարիքում Հայաստանից մեկնած և առնվազն երեք ամիս աշխատած անձը, իսկ չմեկնած՝ 18-50 տարիքային միջանցքում գտնվող անձը: Ընդ որում՝ հարցվածների 35.6 %-ը եղել են տղամարդիկ, իսկ 64 %-ը՝ կանայք: «Չմեկնածների» խմբում Հայաստանից արտագաղթելու մտադրություն չունեն 66.1 %-ը: «Պոտենցիալ» էմիգրանտների խմբերում բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը 8 %-ով փոքր է նվազագույն կրթություն ունեցողներից: «Չմեկնածների» խմբում «պոտեն-

²³⁸ Հ. Սարգսյան, Ք. Անտոնյան, Կ. Խաչատրյան, Միգրացիա, միտումներ և հետևանքներ, Երևան, 2013, էջ 5, 6:

ցիալ» էմիգրանտ են ոչ միայն աշխատանք չունեցողները, այլ նաև աշխատանք ունեցողները, հատկապես բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ աշխատողները: Վերջիններս չնայած աշխատում են, սակայն ունեն անբավարարվածություն աշխատանքի բնույթի և վարձատրության չափի հարցերում: Այդպես են կարծում և գնահատում միջին և բարձրագույն կրթություն ունեցողների շուրջ կեսը (49 %-ը): Մեկնել ցանկացողները նախընտրում են ՌԴ-ը (57.4 %), Եվրոմիությունը՝ (մինչև 20 %), ապա նոր՝ ԱՄՆ-ը:

Ընդ որում՝ մեկնողները չնայած նախընտրում են ՌԴ-ը, բայց ԱՄՆ և Եվրոմիություն պլանավորում են երկարաժամկետ, անգամ անվերադարձ վերաբնակեցում, որը շատ վտանգավոր է:

«Վերադարձած» խմբում գերակշիռ մասը (այդ խմբի 65.7 %-ը) նախընտրում է կրկին մեկնել: Դա բացատրվում է մի շարք պատճառներով.

1. «վերադարձածների» խմբում միայն 33.2 %-ն է հայրենիքում աշխատում, իսկ 42.8 %-ը աշխատանք չի գտնում,
2. ցածր է աշխատավարձը: Ավելին, անգամ աշխատավարձի մակարդակի ավելացումը բավարար չէ երկիրը չլքելու համար,
3. «վերադարձածները», հատկապես կանայք, մասնավորապես բարձրագույն կրթությամբ կանայք գերադասում են կյանքի որակի բարձրացում:

Ուստի միայն աշխատավարձի համեստ բարձրացումը արտագաղթի հարցը չի լուծում: Հեղինակները կատարել են ՀՀ ժողովրդագրական կառուցվածքի փոփոխման ուշադրության արժանի կանխատեսումներ, որոնք լրացնում են Հայաստանի բնակչության արտագաղթի վարքագծի զարգացումների գնահատումը:

Մտահոգություն է առաջացնում այն իրողությունը, որ թե՛ «չմեկնածների» և թե՛ «մեկնածների» խմբերում, ամբողջությամբ վերցրած, իշխում է արտագաղթելու ցանկությունը: Այդ միտումը մեծ է հատկապես երիտասարդների մոտ: Մասնավորապես «չմեկնածների» խմբում տղամարդիկ ավելի են հակված մեկնելու, ուստի երիտասարդ տղամարդիկ մեկնում են կայուն աշխատանք, բարձր աշխատավարձ

և որակյալ կյանք ստեղծելու մոդուլով: Ընդ որում՝ նրանց վրա աշխատանք ունենալու իրողությունը էական դեր չի խաղում:

«Վերադարձած» էմիգրանտ կանայք ավելի են հակված նորից գնալու, քան տղամարդիկ: «Վերադարձած» էմիգրանտների վրա աշխատանքի առկայությունն ունի նշանակալի ազդեցություն, քանի որ նրանք ծանոթ են նաև արտերկրի դժվարություններին: Սակայն այդ բանը չի կարելի ասել «չմեկնած» կին էմիգրանտների մասին: Նրանք ավելի են հակված մեկնելու արտերկիր: Այստեղ չի օգնում նաև աշխատավարձի որոշ բարձրացումը: Բարձր որակավորմամբ կին թե տղամարդ աշխատողները գիտեն, որ արտերկրում կստանան շատ ավելի մեծ աշխատավարձ: ՀՀ տնտեսության և ընդհանրապես սոցիալական զարգացումների վրա արտագաղթի տրամադրմանը փոփոխությունները նշանակալի ազդեցություն և հետևանքներ են բոլորում:

2013 թ.-ին Հայ ռուսական համալսարանի պետպատվերով իրականացվեց «ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով» աշխատանքը:²³⁹ ՀՀ տնային տնտեսությունների ընտրանքային տվյալների վերլուծության արդյունքում արձանագրվեց, որ նախ, դիտարկվող 2007-2012 թթ.-ին, նախընթաց 2002-2006 թթ.-ի համեմատ, մոտ 20 %-ով աճել է Հայաստանից բնակչության արտահոսքի ծավալը (տարեկան միջին հաշվով 25 հազար մարդուց մինչև մոտ 30 հազար մարդու): Երկրորդ, տեղի է ունեցել արտահոսքի կառուցվածքի որոշ փոփոխություն: Վերջինս դրսևորվում է նրանում, որ, ի տարբերություն 2002-2006 թթ.-ի, երբ ՀՀ արտաքին միգրացիայի բացասական մնացորդի մոտ 60 %-ը կազմում էին արտերկրում ժամանակավոր կուտակվող, գերազանցապես աշխատանքային միգրանտները ու միայն մոտ 40 %-ը ողջ կազմով արտերկիր մեկնած տ/տ-ների անդամները, որոնց վերադարձը նվազ հավանական էր, 2007-2012 թթ.-ին մույն հարաբերակցությունը կազմել է արդեն 50/50:

²³⁹ ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով, ծրագրի ղեկավար Ա. Վարդանյան, քեմայի գիտ. դեկավար Ռ. Եզանյան, Երևան, 2013:

Ուշագրավ է նաև երկրի արտաքին միգրացիոն գործընթացներին քաղաքային և գյուղական տ/տ-ների անդամների մասնակցությունը: Որակական առումով լինելով նույնատիպ՝ այն քանակական առումով բավականին տարբեր է: Այսպես, ամբողջի միայն 36 %-ը կազմող գյուղական տ/տ-ների անդամները կատարել են 2007-2013 թթ.-ի արտաքին միգրացիոն մեկնումների 49.1 %-ը, ժամանումների 48.1 %-ը, նրանց կողմից է ձևավորվել արտաքին միգրացիայի բացասական մնացորդի անգամ կեսից ավելին՝ 51 %-ը: Միջինից ավելի բարձր է եղել նաև այլ քաղաքային բնակավայրերում բնակվող տ/տ-ների արտաքին միգրացիոն ակտիվությունը: Կազմելով ամբողջի միայն 31.3 %-ը՝ նրանք իրականացրել են արտաքին միգրացիոն մեկնումների 33.6 %-ը և ժամանումների 33.4 %-ը, «ապահովել» են արտաքին միգրացիայի բացասական մնացորդի 34 %-ը: Սրանց ֆոնի վրա ք. Երևանը ներկայացնողների միգրացիոն ակտիվությունը կարող է գնահատվել որպես ցածր: Կազմելով ամբողջի 32.7 %-ը՝ նրանք կատարել են մեկնումների միայն 17.2 %-ը և ժամանումների 18.4 %-ը, ձևավորել են բացասական մնացորդի ընդամենը 14.9 %-ը:

ՀՀ-ում բնակվող տ/տ-ների անդամների 2007-2013 թթ.-ի արտաքին միգրացիոն գործընթացների բնույթի մասին կարելի է դատել հետազոտության հետևյալ արդյունքներից. 2007-2012 թթ.-ին կատարված յուրաքանչյուր 10 մեկնումներից 8-ը իրականացվել են աշխատելու նպատակով (434.8 հազար մեկնումից 348.4 հազարը): Մեկնումների առումով կարևորությամբ երկրորդ տեղում են գտնվել ընտանեկան (ընտանիքի միավորում, ամուսնություն, ամուսնալուծում և այլն), բնույթ կրող ուղևորությունները. 2007-2012 թթ.-ին՝ ամբողջի 14.5 %-ը: ՀՀ-ում բնակվող տ/տ-ների անդամ հանդիսացող արտերկիր մեկնածուների թվում մշտական բնակության մեկնածուները կազմում են ամբողջի ընդամենը 3.9 %-ը: Սա կարող է մեկնաբանվել որպես ևս մեկ վկայություն այն մասին, որ մշտական էմիգրացիան երկրից առավելապես ձեռք է բերել ընտանեկան երևույթի բնույթ: Կրթական, ուսումնական նպատակով մեկնումների մասը կազմում է ամբողջի միայն 1.5 %-ը:

Ինչ վերաբերում է հայրենիք վերադարձող միգրանտներին, ապա հարցումների արդյունքում իրենց վերադարձը որպես «վերադարձ ընտանիք», «ընտանիքի միավորում» են որակել վերադարձած աշխատանքային միգրանտների բացարձակ մեծամասնությունը (2007-2012 թթ.՝ ամբողջի 87.8 %-ը): Վերադարձ ուղևորությունների 9 %-ն էլ բնորոշվել է որպես «մշտական բնակություն»: Կարելի է կարծել, որ իրենց վերադարձին նման որակում են տվել մի կողմից այն աշխատանքային միգրանտները, որոնք վերադարձել են այլևս չմեկնելու մտադրությամբ, մյուս կողմից՝ այն մշտական բնակության մեկնածները, որոնք, այս կամ այն բերումով վերանայելով իրենց մոտեցումը, վերադարձել են հայրենիք: Վերադարձների 2 %-ից քիչ ավելի մասի վերադարձը պայմանավորված է եղել հայրենիքում հարմար աշխատանք գտնելով: Ուսման նպատակով վերադարձները կազմում են ամբողջի ընդամենը 0.4 %-ը: Մոտավորապես նույնքան է կազմում նաև որպես «բռնագաղթում» բնորոշված վերադարձների մասնաբաժինը: Պետք է կարծել, որ հարցվողները նման բնորոշում են տրվել այն վերադարձներին, որոնք հարկադրվել են ընդունող երկրների պաշտոնական կառույցների կողմից:

«Առաջին ժամանումների» կառուցվածքը այլ է: Այստեղ ընտանեկան ուղևորությունները կազմել են ամբողջի միայն 38 %-ը, մշտական բնակությանը միտվածները՝ արդեն 27.1 %-ը, որպես «բռնագաղթ» բնորոշվածները (սրանք, անկասկած, մեր սիրիացի հայրենակիցներն են)՝ 17.8 %-ը, աշխատանքայինները՝ 12.4 %-ը, կրթականները՝ 4.7 %-ը: Ներկայացված առանձնահատկությունները, որպես կանոն, բնորոշ են նաև առանձին տարիների հոսքերին:

Հետաքրքիր և հատկանշական է, որ արտաքին միգրացիոն գործընթացներին մասնակցության առումով հատկապես ակտիվ են եղել 30-39 և 40-49 տարեկանները: Կազմելով տ/տ անդամների ընդհանուր թվի միայն 13.3 %-ը՝ առաջինները իրականացրել են մեկնումների 22.1 %-ը, վերադարձների 21.4 %-ը, ձևավորել են բացասական մնացորդի 24.5 %-ը: Երկրորդների նույն մեծությունները կազմել են համապատասխանաբար՝ 11.9 %, 18.4 %, 21.2 % և 18.4 %:

Արտաքին միգրացիոն գործընթացների մասնակիցների կրթական կառուցվածքում արձանագրվել է միջնակարգ կրթություն ունեցողների բաժնի ընդգծված գերակշռում (54.2-54.9 %՝ միայն 39 % կազմող միջինի դիմաց) և բարձրագույն կրթություն ունեցողների անհամամասնորեն փոքր ներկայացվածություն (16-16.4 %՝ 27 % կազմող միջին մեծության դիմաց): Սա պայմանավորված է նրանով, որ մեկնումներ, թե վերադարձներ իրականացրածների գերակշիռ մասը կազմել են ոչ այնքան բարձր որակավորում պահանջող աշխատանքներ կատարող աշխատանքային միգրանտները:

Սոցիալ-տնտեսական կարգավիճակի կառուցվածքի առումով տ/տ-ների արտաքին միգրացիոն մեկնումներ և վերադարձներ կատարածների համակցությունները ընդգծված կերպով առանձնանում են: Այսպես, դիտարկման պահին աշխատող/զբաղված էր վերադարձ կատարածների ավելի քան կեսը, մեկնում կատարածներից՝ 10-ից 8-ը: Ըստ մեծությամբ երկրորդ սոցիալ-տնտեսական խումբն աշխատանք չունեցողներն են:

Ինչպես ցույց տվեցին հետազոտության արդյունքները, հարցվածների կողմից իրենց վերջին միգրացիոն ուղևորությունների մուտքի և ելքի երկրների թվում մատնանշվել են աշխարհի 5 աշխարհամասերի (Եվրոպա, Ասիա, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ և Աֆրիկա), 39 երկրներ, այդ թվում՝ այնպիսի հեռավոր և էկզոտիկ երկրներ, ինչպիսիք են Բրազիլիան, Հարավաֆրիկյան հանրապետությունը, Անգոլան և Բոտսվանան: Մեկնողների մուտքի հիմնական երկիրը, ինչպես ետխորհրդային ողջ ժամանակում, շարունակում է մնալ ՌԴ-ը: Այն հանդիսացել է վերջին մեկնումների 89.4 %-ի նշանակետ երկիրը, ինչն անգամ զգալիորեն գերազանցում է 2002-2007 թթ.-ի նույն մեծությանը՝ 76.4 %: Կարևոր է նշել, որ 2002-2007թթ.-ի համեմատ մեկնածների թվում, ՌԴ-ից գատ, մնացած բոլոր ուղղությունների մասնաբաժինները բավականին կտրուկ կերպով նվազել են:

ՀՀ միգրացիոն գործընթացներին վերաբերող հաջորդ ուշագրավ աշխատանքը 2013 թ.-ին տնտ. դոկտոր Ջոյա Թադևոսյանի գլխավորությամբ իրականացված «Արտագնա աշխատանք

քային միգրացիա, գնահատականներ և մտորումներ» հետազոտությունն է:²⁴⁰ Աշխատանքում նշվում է, որ 1991–2011 թթ.-ի ընթացքում ՀՀ-ից արտագաղթել է մոտ 1,2 մլն մարդ, ինչը ժամանակաշրջանի սկզբի նկատմամբ կազմում է 32,8 %, այսինքն՝ մոտ մեկ երրորդը: Նման ցուցանիշ չի արձանագրել ինչպես նախկին ԽՍՀՄ-ի ոչ մի հանրապետություն, այնպես էլ մեր տարածաշրջանի որևէ այլ երկիր: Հետազոտության արդյունքների ամփոփումը տազնապի տեղիք է տալիս այն առումով, որ հանրապետության առկա բնակչության էմիգրացիոն ներուժը դեռևս ոչ միայն հեռու չէ սպառված լինելուց, այլ, ամենայն հավանականությամբ, ունի աճի միտում: Ժամանակավոր կենցաղային և սոցիալ-տնտեսական էմիգրացիայի երևույթը, ներկայումս ավելի ու ավելի մեծ չափով է ստանում անվերադարձ արտագաղթի բնույթ: Անվերադարձ էմիգրացիային անցում կատարելու ծանրակշիռ ապացույցներից մեկը էմիգրանտների թվաքանակում սեռային կառուցվածքի տեղաշարժերն են:

Հարցվողների 15,6 %-ը հայտնել է արտագաղթելու հաստատականության մասին, իսկ 16,3 %-ը արտագաղթը համարում է հավանական: Արտագաղթելու մտադրություն չունեն հարցվողների 52,9 %-ը, ևս 9,5 %-ը երկիրը լքելու որոշումը համարում է քիչ հավանական, վերջապես, այս հարցում դեռ չեն կողմնորոշվել հարցվողների ընդամենը 5,7 %-ը: 2013 թ.-ի էմիգրացիոն ներուժի ձևավորման սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկություններից է այն, որ վստահաբար արտագաղթելու մտադրություն չունեն հարցվող կանանց 51,7 %-ը, իսկ տղամարդկանց 55,9 %-ը: Մինչև 45 տարեկան տղամարդկանց մոտ 45 %-ը պատրաստվում է արտագաղթել, ինչը 5-7 տոկոսային կետով բարձր է կանանց համապատասխան տարիքի էմիգրացիոն ներուժից: Նշենք նաև, որ, եթե մինչև 60 տարեկան հարցված կանանց էմիգրացվելու պատրաստականությունը բավական կայուն է՝ գտնվելով 37,3-ից մինչև 39,6 %-ի սահմաններում, ապա տղամարդկանց շրջանում այն 45 տարեկանից հետո գրեթե կրկնակի նվազում է: Կանանց էմիգրացիոն ներուժի բարձր լինելը

²⁴⁰ Արտագնա աշխատանքային միգրացիա, գնահատականներ և մտորումներ, գիտ. ղեկավար տնտ. դոկտոր Զ. Թադևոսյան, Երևան, 2014:

բացատրվում է հանրապետության սահմաններից դուրս ընտանիքի մյուս անդամներին վերամիավորվելու մտադրությամբ:

Եթե հարցվողների տարիքի և էմիգրացիոն ներուժի մակարդակների միջև դիտվում է հակադարձ կապ, ապա կրթական մակարդակի հետ կապն արդեն ուղիղ է: Այսպես, եթե բարձրագույն, թերի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների 34,4 %-ից մինչև 35,1 %-ն են պատրաստվում արտագաղթելու, ապա ընդհանուր միջնակարգ և ընդհանուր հիմնական կրթություն ունեցողների 27,0 %-ից մինչև 28,8 %-ն է հայտնել նման ցանկություն: Հետբուհական՝ մագիստրոսական կրթություն և գիտական աստիճան ունեցող 14 հարցվողներից 12-ը (կամ 85,7 %-ը) արտագաղթել չի ցանկանում: Սա բավական հուսադրող ցուցանիշ է այն առումով, որ կրթական բարձր մակարդակ ունեցող անձինք իրենց ապագան որոշակիորեն կապում են հայրենիքի հետ:

Սույն հետազոտությունը հաստատում է նաև մեկ այլ՝ միջազգային տնտեսագիտության մեջ ամրագրված օրինաչափություն. ավելի հեռավոր զարգացած տարածաշրջաններ կամ երկրներ միգրանտները տեղափոխվում են ընտանիքներով և կայացնում մշտական բնակության որոշում: Միգրացիայի ամենաակտիվ ուղղությունը, ըստ հետազոտության արդյունքների, Ռուսաստանի Դաշնությունն է, որտեղ գտնվում է վերջին տարիներին էմիգրացվածների 68,6 %-ը: Սակայն 2002–2007 թթ.-ի համեմատությամբ Ռուսաստան մեկնածների բաժինը մի փոքր նվազել է, ինչը պայմանավորված է սույն հետազոտությունում քաղաքային բնակավայրերից, ինչպես նաև բարձր կրթական մակարդակ ունեցող միգրանտների ներգրավվածության բարձր աստիճանով: Այսպես, Երևան քաղաքից մեկնածների միայն 50,8 %-ն է ուղևորվել Ռուսաստան: Հաջորդ ուշագրավ հանգամանքն այն է, որ զգալիորեն աճել են եվրոպական երկրներ և ԱՄՆ մեկնողների բաժինները, որոնք համապատասխանաբար կազմել են 13,4 % և 12,9 %: Եվրոպական երկրներ մեկնողների տարիքային կազմում բարձր է 20–29 տարեկանների բաժինը՝ 16,6 %, իսկ ԱՄՆ և Կանադա մեկնողների կազմում՝ մինչև 20 և 60-ից բարձր տարեկաններինը՝ համապատասխանաբար 22,0 % և 22,7 %:

2015 թ.-ից Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը «Գերմանիայի միջազգային համագործակցություն» ընկերության ֆինանսավորմամբ սկսեց իրականացնել «ՀՀ արտաքին միգրացիոն իրավիճակի եռամյա (2015-2017 թթ.) մշտադիտարկում՝ ընտրանքային հետազոտության միջոցով»:²⁴¹ Հետազոտության արդյունքներով ՀՀ տնային տնտեսությունների ընդգրկվածությունն արտաքին միգրացիոն գործընթացներում ընդլայնվել է՝ 2007-2013 թթ.-ի 24.3 %-ից 2012-2015 թթ.-ին հասնելով 33.8 %-ի (9.6 տոկոսային կետով): Միգրացիայի բացասական մնացորդը մեծացել է շուրջ 40 %-ով: Կանխատեսվել է, որ Հայաստանի 2012-2015 թթ.-ի միգրացիայի բացասական մնացորդի ամբողջական մեծությունը կկազմի շուրջ 140 հազար մարդ կամ բնակչության մոտ 4.7 %-ը, և որ դրա մոտ կեսը կլինեն մշտապես մեկնածները, մյուս կեսը՝ արտերկրում կուտակվող տևական աշխատանքային միգրանտները և տնային տնտեսությունների նրանց ուղեկցող անդամները:

Ուշագրավ է միգրացիայի աշխարհագրության փոփոխությունը: Հետազոտության արդյունքում արձանագրվել են մուտքի և ելքի երկրների թվի կրճատման (22 երկրներ 2013 թ.-ի 39-ի դիմաց) և ՌԴ մեկնող ու այնտեղից ժամանող հոսքերի բաժինների էլ ավելի մեծացման (համապատասխանաբար մինչև 94.6 % և 93.6 %) փաստերը:

Հայտնի է, որ արտերկրից ստացվող տրանսֆերտները Հայաստանի շատ ընտանիքների եկամտի կարևոր աղբյուրներից են: Սլավոնական համալսարանի կողմից իրականացված ընտրանքային հետազոտության համաձայն՝ արտերկրից դրամական մուտքերը ՀՀ տնային տնտեսությունների 13.6 %-ի համար եկամտի հիմնական, ևս 9.4 %-ի համար՝ լրացուցիչ աղբյուր են: Կարևորությամբ զիջելով միայն «վարձու հիմնական աշխատանք ՀՀ-ում» և «թոշակ/նպաստ» աղբյուրներին՝ այս աղբյուրն ավելի նշանակալի է, քան եկամտի այնպիսի կարևոր աղբյուրը, ինչպիսին է «սեփական գործը/բիզնեսը ՀՀ-ում»: Արտերկրից մուտքերի գերակշիռ մասն ստացվում է մաս-

²⁴¹ ՀՀ արտաքին միգրացիոն իրավիճակի եռամյա (2015-2017 թթ.) մշտադիտարկում՝ ընտրանքային հետազոտության միջոցով, ծրագրի ղեկավար՝ տ.գ.թ. Ա. Վարդանյան, քենայի գիտական ղեկավար՝ տ.գ.թ. Ռ. Եզանյան, Երևան, 2015:

նագիտացված կառույցների միջոցով (բանկային համակարգ՝ 73.0-88.3 % և փոստ՝ 8.6-17.0 %):

Ինչ վերաբերում է միգրացիոն ներուժին, ապա արձանագրվել է, որ սոցիալ-տնտեսական կարգավիճակի խմբերից առավել բարձր միգրացիոն ներուժ ունեն աշխատանք չունեցողները՝ 15.1 %: Մեկնելու ծրագիր ունեն մաս աշխատող/ինքնագրադվածների 6.4 %-ը, սակայն էլ ավելի մտահոգիչ է նրանց ոչ գյուղատնտեսական ոլորտի ինքնագրադված մասի գերակշիռ միգրացիոն ներուժի պահպանումը՝ 13.6 %: Սեփական ուժերով իրենց համար աշխատատեղ ստեղծած մարդկանց արտերկիր մեկնելու նման բարձր միտվածությունը վկայում է երկրում մանր բիզնեսի գործունեության և զարգացման պայմանների ոչ բարենպաստ լինելու մասին: Հետևաբար շարունակում է հրատապ մնալ դեռևս 2013 թ.-ի հետազոտության արդյունքների հիման վրա արված այն եզրահանգումը, որ մասնավոր ձեռներեցիին միգրացիայի դրդող պատճառների և գործոնների գիտական հետազոտումը, վերլուծումը և գնահատումը, դրանց ազդեցության նվազեցման ներուժ պարունակող միջոցառումների համալիրի մշակումը և գործարկումը ներկայումս արտակարգ կարևորություն ունեցող պետական խնդիրներ են:

Մեկնում ծրագրողները որպես պոտենցիալ մուտքի երկրներ մատնանշել են ՌԴ-ը, Ուկրաինան, Վրաստանը, ԱՄՆ-ն, Կանադան, Իսրայելը և ԵՄ անդամ հանդիսացող 10 երկրներ: Ծրագրվող մեկնումների գերակշիռ մասի նշանակետ երկիրը ՌԴ-ն է՝ 10-ից գրեթե 9-ը: ԵՄ երկրներ մեկնել ծրագրողների մոտ 43.0 %-ի նշանակետ երկիրը Ֆրանսիան է, ևս ավելի քան 18.0 %-ինն էլ՝ Գերմանիան:

Վերադարձած միգրանտների մեկնման պատճառների կառուցվածքում կատարվել են որոշակի տեղաշարժեր: Ի հաշիվ մյուս բոլոր պատճառների հիշատակումների բաժինների նվազման՝ մեծացել են «աշխատանք չգտնել/չունենալ» և «տնային տնտեսության համար գումար վաստակել» պատճառների հիշատակումների տեսակարար կշիռները: Սա խոսում է այն մասին, որ ներքին աշխատաշուկայի իրավիճակը և ընդհանուր առմամբ երկրի տնտեսական վիճակը ոչ միայն չի բարելավվել, այլև որոշակիորեն վատացել է: Հայաստա-

նում զբաղված լինելը չի երաշխավորում միջին կենսամակարդակի ապահովում, զբաղվածների մի մասը աղքատ է, որը և դրդում է արտագաղթի: Դրա վառ վկայություններից է այն փաստը, որ վերադարձած միգրանտների արտերկրյան և հայաստանյան աշխատանքային վաստակների շեղվածությունը կազմում է 6.6 անգամ (միջին հաշվով, համապատասխանաբար՝ 597,3 հազար ՀՀ դրամ և 89,8 հազար ՀՀ դրամ): Հետազոտության արդյունքում աշխատանք չունեցած վերադարձած միգրանտներից աշխատանք է փնտրել, այսինքն՝ դրսևորել է տնտեսական ակտիվություն, եղել է գործազուրկ միայն 38.1 %-ը:

Ուշագրավ է, որ վերադարձած միգրանտների 64.1 %-ի գնահատմամբ վերջին ուղևորության արդյունքում ունեցել են մասնագիտական գիտելիքների/հմտությունների ավելացում, ինչը, սակայն, նրանց 56.2 %-ի կարծիքով չի նպաստել ՀՀ աշխատաշուկայում իրենց ավելի մրցունակ դառնալուն: Սա կարող է բացատրվել մասամբ վերադարձած միգրանտների գնահատականների սուբյեկտիվությամբ, մասամբ էլ՝ Հայաստանում աշխատանքի տեղավորման համար գիտելիք/հմտություն գործոնի վճռորոշ չլինելով:

Արտերկրում գտնվող միգրանտ (ԱԳՄ) ունեցող տնային տնտեսությունների 2/3-րդը վերջին 12 ամիսներին ունեցել է արտերկրից դրամական մուտքեր: Այդ մուտքերի գումարի միջին մեծությունը, կազմելով 763 հազար դրամ կամ մոտ 1603 ԱՄՆ դոլար, մոտ 20 %-ով ավելի է վերադարձած միգրանտների (ՎՄ) տնային տնտեսությունների արտերկրից դրամական մուտքերից: Թե՛ արտերկրում գտնվող միգրանտների և թե՛ վերադարձած միգրանտների տնային տնտեսությունների կողմից արտերկրից ստացվող գումարների միայն փոքր մասն է ուղղորդվում մարդկային կապիտալի զարգացմանը (կրթություն, առողջապահություն՝ 12.0-13.0 %-ը) և տնտեսական կապիտալի ավելացմանը (բիզնես ներդրումներ՝ 1.4-1.7 %-ը): Մնացած գերակշիռ մասը՝ 85 և ավելի տոկոսը, հիմնականում ծախսվում է գոյության պահպանում պարզ վերարտադրություն իրականացնելու համար:

Էապես տարբերվում են ԱԳՄ-ների հայաստանյան և արտերկրյա աշխատանքների ոլորտների կառուցվածքները: Հիմնական տարբերությունն այն է, որ եթե հայաստանյան աշխատանքներում շինարարությունում են զբաղված եղել նրանցից 4-ից միայն 1-ը, ապա արտերկրում՝ արդեն 2/3-րդը: Շինարարությունից զատ ԱԳՄ-ներն արտերկրում աշխատում են գործնականում միայն 3 ոլորտներում՝ այլ ծառայություններ՝ 18,8 % (Հայաստան՝ 28,8 %), առևտուր և նորոգում՝ 8,9 % (Հայաստան՝ 11,4 %), արդյունաբերություն՝ 3,4 % (Հայաստան՝ 18 %):

Աշխատող ԱԳՄ-ների արտերկրյա ամսական վաստակի միջին մեծությունը՝ 261,7 հազար ՀՀ դրամ, 3,1 անգամ գերազանցում է հայաստանյան նույն ցուցանիշին՝ 85 հազար ՀՀ դրամ: Մյուս կողմից, սակայն, համադրելով այդ թվերը ՎՄ-ների արտերկրյա (597,3 հազար ՀՀ դրամ) և ներկայիս հայաստանյան (մոտ 90 հազար ՀՀ դրամ) ամսական վաստակների միջին մեծությունների հետ և հաշվի առնելով ցուցանիշների ժամանակային տարբերությունները՝ կարելի է արձանագրել, որ եթե հայաստանյան վաստակի մեծությունն անգամ ոչ մեծ չափով՝ 5,6 %-ով աճել է, ապա արտերկրինը կրկնակի նվազել է:

Որպես հետազոտության արդյունքների ամփոփում՝ նշվել է, որ, բացառությամբ հայրենիք, հայրենասիրություն գործոնների, տնտեսական և սոցիալական բնույթի ձգող այլ գործոնների գրեթե լիակատար բացակայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ.

- արտագնա միգրացիոն գործընթացներում ներառվածների խմբաքանակի աճի միտումը, ամենայն հավանականությամբ, կշարունակվի (միգրացե անգամ հարաճուն տեմպերով),
- կիսված ընտանիքների վերամիավորումը հիմնականում կշարունակվի տեղի ունենալ ոչ թե Հայաստանում, այլ արտերկրում,
- տ/տ ողջ կազմով մշտական էմիգրացիայի ծավալներն առնվազն չեն փոքրանա:

Վերը ներկայացված բոլոր հետազոտությունների արդյունքները, նաև ԱՎԾ տվյալները փաստում են, որ *որպես հայերի միգրա-*

ցիայի ուղղությունը որոշող վեկտոր միշտ հանդես է եկել և շարունակում է հանդես գալ հայկական սփյուռքը: 90-ականների սկզբին Հայաստանից դուրս ապրող հայերից 532 հազարն ապրում էր ՌԴ-ում, 600 հազարը՝ ԱՄՆ-ում: Ըստ ռուսական պաշտոնական տվյալների՝ հայերի նետոտ-միգրացիան Ռուսաստան 1990-1997 թթ.-ին կազմել է 258 հազար մարդ²⁴², Ա. Տեր-Սիմասյանի հաշվարկներով՝ «հայ էմիգրանտների թիվը 90-ականների առաջին կեսին ԱՄՆ-ում գնահատվում էր 80 հազար»²⁴³ (բնականաբար, երկու երկրում էլ ոչ բոլոր միգրանտներն են ընկել պաշտոնական հաշվառման մեջ): Միաժամանակ ՀՀ կառավարությանն առնթրել Միգրացիայի և փախստականների վարչության տվյալները փաստում են, որ անցումային ժամանակաշրջանում հայ էմիգրանտների 3/4-ը մեկնել է ԱՊՀ երկրներ, նրանցից 80-85 %-ը՝ ՌԴ, մնացած քանակի գրեթե կեսը՝ եվրոպական երկրներ և մոտ 40 %-ը՝ ԱՄՆ:

Հայաստանից աշխատանքային միգրանտների հիմնական հոսքի ԱՊՀ երկրներ ուղղվելու պատճառը, այստեղ մեծ հայկական գաղթօջախների առկայությունից զատ, մեր երկրների բնակչությանը կապող պատմական և մշակութային ընդհանուր ավանդույթներն են, երկիրը մեր քաղաքացիներին լավ ծանոթ լինելը, լեզվական խոչընդոտների բացակայությունը: Վիճակագրական տվյալները փաստում են, որ 1998 թ.-ին Հայաստանից մեկնողների ընդհանուր թվում ԱՊՀ երկրներ մեկնողները կազմել են 92.0 %, իսկ այլ երկրներ՝ 0,8 %, 2002 թ.-ին համապատասխանաբար՝ 78.0 % և 22.0 %:²⁴⁴ Միջազգային փորձագետների գնահատականներով 2013-2014 թթ.-ին Հայաստանից արտագաղթողները հիմնականում մեկնել են ԵՄ և ՌԴ, արտագնա աշխատողների ավելի քան 80 %-ը մեկնել է ՌԴ:²⁴⁵ Ըստ

²⁴² А. Г. Вишневский, Распад СССР: этнические миграции и проблема диаспор.// Общественные науки и современность. Национальные отношения, 2000, Н. 3. стр. 115-130, стр.120.

²⁴³ А. Ter Minassian, La diaspora armenienne.// Diasporas. Montpelier. 1995, p.32.

²⁴⁴ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003, Երևան, էջ 43:

²⁴⁵ А. Weiner, 2014. A look at migrations in the post-soviet space—the case of Eastern Europe, South Caucasus and Russian Federation. *International migration*, 52(5), pp.47-51. St'u űuű Bara, A., A. Di Bartolomeo, Z. Brunarska, S. Makaryan, S. Mananashvili and A.

ՀՀ ԱՎԾ 2014 թ.-ի հետազոտության արդյունքների՝ ՌԴ մեկնողները կազմում են 95 %, իսկ ՀՀ ԿԲ կողմից 2015 թ.-ի հետազոտության արդյունքներով՝ 84 %:

Վերոնշյալ տվյալները, կարծում ենք, հիմք են տալիս ասել, որ հայերի միգրացիան տեղի է ունենում սփյուռքի հովանավորության ներքո: Վերջինս արտահայտվում է միգրանտներին ցույց տրվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բարոյական աջակցության մեջ: Միգրանտների համար շատ կարևոր է «սոցիալական կապիտալի» առկայությունը, այսինքն՝ բարեկամական կամ ընկերական կապերի, տեղեկատվության առկայությունը: Հայ միգրանտների համար բարեկամների և ծանոթների օգնությունը ոչ միայն անշահախնդիր, այլև նախաձեռնողական բնույթ է կրում, որի հիմքում ընկած են հայ ժողովրդին բնորոշ ընտանեկան և բարեկամական ամուր կապերը: Հայկական սփյուռքը այն ինստիտուցիոնալ ձևն է, որը հեշտացնում է սոցիալ-մշակութային այլ միջավայրում հայտնված մարդու հարմարումը: Ժամանակի ընթացքում, ստանալով ռեզիդենտի կարգավիճակ, հայ իմիգրանտները հնարավորություն են ստանում նաև սոցիալական սանդուղքով վեր բարձրանալու: Վերջինիս մեծապես նպաստում է հայերի էթնիկ ձեռներեցությունը²⁴⁶: Ս. Վ. Ռյազանցևը գրում է. «ըժվար նյութական կացության մեջ հայտնված բարեկամին օգնելը հայերի վարքի նորման է հանդիսանում... հայ միգրանտները 2-3 անգամ ավելի բարձր գործարար պոտենցիալ ունեն, քան ռուսները...»:²⁴⁷

Նկատենք, որ էթնիկ ձեռներեցությունը մեր ժողովրդին բնորոշ է եղել դարեր շարունակ, իսկ գլոբալացման դարաշրջանում այն ընդունել է լայն մասշտաբներ՝ դառնալով հայ միգրանտների սոցիալ-

Weinar, 2013b. Regional Migration Report: South Caucasus. European University Institute, Florence, MPC Migration Report, p. 112:

²⁴⁶ Լ. Խառատյան, ՀՀ միգրացիոն գործընթացները անցումային ժամանակաշրջանում, ՀՀ սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները (գիտական հոդվածների ժողովածու – 6), ՀՀ ֆին. և էկոնոմ. նախար. տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2005, էջ 60-68:

²⁴⁷ С. В. Рязанцев, Этническое предпринимательство как форма адаптации мигрантов.// Общественные науки и современность. Национальные отношения, 2000, Н. 5, стр. 73-86, стр 83.

տնտեսական հաջող հարմարման իրական ուղին: Նոր հասարակությունում ձեռներեցության հետ մեկտեղ ուղղահայաց մոբիլության հնարավորության պարտադիր պայմաններ են այդ հասարակության արժեքային համակարգի ընդունումը, նորմերի յուրացումը և օրենքների իմացությունը: Այսօր աշխարհի տարբեր երկրների հայկական գաղթօջախներում հիմնականում պահպանվում են հայոց լեզուն և կրոնը, ազգային առանձնահատկությունները: Վ. Թովմասյանի գնահատումներով՝ 90-ականներին ԱՄՆ-ում հայերի ամուսնությունները այլ ազգերի ներկայացուցիչների հետ կազմում էին ընդհանուրի 10 %-ը:²⁴⁸ *Այնուհանդերձ, միգրանտների երեխաները, թոռները աստիճանաբար լուծվում են նոր միջավայրում: Գլոբալացումը պահանջում է ինտեգրման նոր սկզբունքներ, որոնք ունեն ոչ էթնիկ հիմք:*

Զննարկենք, քե ինչպիսի փոփոխական ու ժողովրդագրական հետևանքներ ունեցան ՀՀ միգրացիոն գործընթացների զարգացումները ՀՀ անցումային ժամանակաշրջանում:

Հայաստանում պաշտոնական տվյալներով տարբեր տարիներին արտերկրից մասնավոր դրամական փոխանցումների մասնաբաժինը տատանվել է ՀՆԱ-ի 18-25 %-ի միջակայքում: Իրականում դրանց ծավալներն ավելին են, քանի որ մարդկանց մի մասը իր հարազատներին գումարներ է փոխանցում ոչ պաշտոնական ուղիներով: Համաշխարհային բանկի գնահատմամբ՝ ՀՆԱ կազմում արտերկրից դրամական փոխանցումների տեսակարար կշռի ցուցանիշով ոչ միայն անցումային երկրների խմբում, այլև ամբողջ աշխարհում առաջին տեղում հայտնվեց Տաջիկստանը, որին հաջորդեցին Ղրղզստանն ու Մոլդովան: 2010-2015 թթ.-ին այս երկրներ մուտք գործող դրամական միջոցները միջինում կազմել են ՀՆԱ-ի համապատասխանաբար 38.1 %-ը, 28.6 %-ը և 26.7 %-ը: Դիտարկվող ժամանակահատվածում մեծ տեսակարար կշիռ ունեցան նաև Հայաստանը՝ ՀՆԱ-ի 17.6 %-ը, Կոսովոն՝ 16.5 %-ը, Վրաստանը՝ 11.1 %-ը, Բոսնիա և Հերցեգովինան՝ 10.8 %-ը:

²⁴⁸ Վ. Թովմասյան, Հայությունը և Հայաստանի ժողովրդագրական զարգացումը, Լոս Անջելես, 1997, էջ 132:

Հայաստանի Հանրապետությունում 2003 թ.-ին արտերկրից փոխանցվող տրանսֆերտների ծավալը պաշտոնապես գնահատվել է 289 միլիոն դոլար, սակայն ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության փորձագետների գնահատմամբ այն հասել է մոտ 900 միլիոն ԱՄՆ դոլարի:²⁴⁹ 2004 թ.-ից սկսած՝ Հայաստանում արտերկրից փոխանցվող տրանսֆերտների ցուցանիշում արձանագրվել է տարեկան միջինը 40 % աճ մինչև 2009 թ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամը: 2009 թ.-ին արձանագրվել է մասնավոր տրանսֆերտների նվազում 41 %-ով: 2010 թ.-ին պաշտոնական տվյալներով Հայաստանի քաղաքացիների անունով արտերկրից ստացվել են 1293.7 մլն ԱՄՆ դոլարի դրամական փոխանցումներ: 2011 թ.-ին Կենտրոնական բանկի փոխանցմամբ 2010 թ.-ի համեմատությամբ տրանսֆերտների հոսքը մեր երկիր աճել է շուրջ 20 %-ով: 2011 թ.-ին ԱՄՆ-ից Հայաստան են փոխանցվել 74.3 մլն ԱՄՆ դոլարի տրանսֆերտներ, Ուկրաինայից՝ 25.0 մլն, Ղազախստանից՝ 20.6 մլն, Գերմանիայից՝ 10.6 մլն, Ֆրանսիայից՝ 10.8 մլն ԱՄՆ դոլար: Տրանսֆերտների ավելի քան 80 %-ը՝ 1295.1 մլն ԱՄՆ դոլար, ապահովել է Ռուսաստանը²⁵⁰: 2005-2013 թթ.-ի ժամանակահատվածում արտերկրի ֆիզիկական անձանցից ստացվող մասնավոր տրանսֆերտների զուտ հոսքը աճել է 247.5 %-ով, այդ թվում՝ Ռուսաստանից՝ 311.6 %-ով, ԱՄՆ-ից՝ 95.1 %-ով: Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի մասնավոր տրանսֆերտների ընդհանուր ծավալում Ռուսաստանի և ԱՄՆ-ի բաժինը վերջին տարիներին կազմել է շուրջ 90 %, ընդ որում՝ Ռուսաստանի բաժինը աճում է, իսկ ԱՄՆ-ի բաժինը, ընդհակառակը, նվազում: 2014 թ.-ի վերջից տրանսֆերտների հոսքը նկատելիորեն սկսեց նվազել և շարունակում է նվազել: 2015 թ.-ին արտերկրից Հայաստան փոխանցվող արտաքին մասնավոր տրանսֆերտները 2013 թ.-ի համեմատ նվազել են 35.4 %-ով (661321 հազար դոլարով), ինչը հիմնականում պայմանավորվել է Ռուսաստանից փոխանցվող տրանսֆերտների կրճատմամբ: Ռուսաստանի Դաշնությունից ստացված տրանսֆերտների ծավալը նվազել է 43 %-ով (690691 հա-

²⁴⁹ <http://www.azg.am/AM>

²⁵⁰ www.b24.am/finance/35406.html

գար դոլարով), իսկ ԱՄՆ-ից ստացվողը՝ աճել 145.0 %-ով (37073 հա-
գար դոլարով):²⁵¹

Եթե Հայաստանը համեմատենք աշխարհում դրամական փո-
խանցումներ ստացող առաջատար հնգյակի՝ Հնդկաստանի, Չինաս-
տանի, Ֆիլիպինների, Մեքսիկայի ու Ֆրանսիայի հետ, ապա *մեկ շն-
չի հաշվով փոխանցումների ծավալով մեր ցուցանիշը գերազանցում
է այդ երկրներին շուրջ 3 անգամ*: Սա նշանակում է, որ Հայաստան
ուղարկվող դրամական փոխանցումները էական ազդեցություն ունեն
ինչպես ՀՀ սոցիալ-տնտեսական ցուցանիշների ձևավորման վրա
վրա, այնպես էլ՝ շատ ընտանիքների կենսամակարդակի: Նշենք, որ
պաշտոնական գնահատականներով 2015 թ.-ին ՀՀ մուտք գործող
մասնավոր տրանսֆերտների անկումը առաջին հերթին ազդեցու-
թյուն է թողել առևտրի վրա: 2015 թ.-ին մեր երկրում առևտրի ընդհա-
նուր շրջանառությունը կազմել է 2 տրիլիոն 4 մլրդ 282,26 մլն ՀՀ
դրամ: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշը կրճատվել է 8%-ով:²⁵²

Սի շարք էմպիրիկ հետազոտությունների արդյունքներով ար-
տերկրից փոխանցումների և տնտեսական աճի միջև առկա է ուղիղ
կախվածություն, արտերկրից ստացվող տրանսֆերտները նպաս-
տում են տնտեսական աճին, մյուսների արդյունքներով երկու փոփո-
խականների միջև կապը բացակայում է:²⁵³ Նույնիսկ Մոլդովայում,
որտեղ 2006-2011 թթ.-ի ընթացքում փոխանցումների տեսակարար
կշիռը ՀՆԱ-ում 14 %-ից հասավ 19.1 %-ի, փոփոխականների միջև
նշանակալի կախվածություն առկա չէ:²⁵⁴ Որոշ հետազոտողներ
պնդում են, որ փոխանցումների ազդեցության «նշանը» մեծապես
կախված է նրանից, թե որքանով է պետությունը կարողանում օգտա-

²⁵¹ Г. Саргсян, А. Маркосян, В. Сидоров, Я. Ядгаров, Трансформационные аспекты феномена рыночного хозяйства, Ереван, 2016, с. 369.

²⁵² <https://b24.am/mobile/economy/58330.html>

²⁵³ A. Barajas, R. Chami, C. Fullenkamp, M. Gapeen and P. J. Montiel, 2009. Do workers' remittances promote economic growth?. *IMF Working Paper No. 09/153*, pp. 1-23.

²⁵⁴ A. Stratan, M. Chistruga, V. Clipa, A. Fala and V. Septelici, 2013. Development and side effects of remittances in the CIS countries: the case of Republic of Moldova. Migration Policy Centre; CARIM-East Research Report No. 2013/2, pp. 1-56.

գործել դրանց պոտենցիալը, և նրանից, թե ստացողները ինչպես են օգտագործում այդ միջոցները:²⁵⁵

Հայաստանի համար կատարված էմպիրիկ հետազոտությունները ցույց են տալիս, որ *արտերկրից դրամական փոխանցումների և ՀՆԱ-ի աճի միջև առկա է վիճակագրորեն նշանակալի դրական կապ*: Ըստ ՀՀ 2002-2012 թթ.-ի վիճակագրական տվյալների հիման վրա կատարված վերլուծության արդյունքների՝ արտերկրից տրանսֆերտների մեկ տոկոս աճը մեկ եռամսյակ հետո հանգեցնում է իրական ՀՆԱ-ի 0.33 տոկոս աճի:²⁵⁶ ՀՀ 2002-2010 թթ.-ի վիճակագրական տվյալների հիման վրա կատարված հետազոտությունում դիտարկվել է վեկտորական ավտոռեգրեսիայի (VAR) երկու մոդել, որոնցից առաջին մոդելում վերլուծությունների մեջ կիրառվել է իրական փոխարժեքը, իսկ երկրորդում՝ անվանականը: Մոդելներում ներառված մյուս փոփոխականներն են՝ ՀՆԱ-ն, տոկոսադրույքը, գնաճը և դրամական փոխանցումները: Հետազոտությունը ցույց է տվել, որ առաջին մոդելում արտերկրից դրամական փոխանցումների ազդեցությունները ՀՆԱ-ի և գնաճի վրա նշանակալի են, ինչը չի արտահայտվում իրական արդյունավետ փոխարժեքի դեպքում: Մոդելում ՀՆԱ և տրանսֆերտներ ցուցանիշների միջև արձանագրվել է դրական կապ: Սիննույն ժամանակ ՀՆԱ-ի և գնաճի շոկերը չեն ազդում փոխարժեքի վրա, մինչդեռ փոխարժեքի շոկերը բերում են ինչպես ՀՆԱ-ի, այնպես էլ գնաճի փոփոխմանը: Երկրորդ VAR մոդելում ստացված արդյունքների հիմնական տարբերությունը առաջինի արդյունքներից այն է, որ իրական արդյունավետ փոխարժեքը անվանական փոխարժեքով փոխարինելու դեպքում արտերկրից դրամական փոխանցումների ազդեցությունը փոխարժեքի վրա դառնում է նշանակալի: Վերջինս երկրորդ մոդելում ներկայանում է տրանսֆերտներ-փո-

²⁵⁵ R. Chami and C. Fullenkamp, 2013. Beyond the household. *Finance and Development*, 50(3), pp.48-51. Տե՛ս նաև Clemens, M.A. and McKenzie, D.J., 2014. Why don't remittances appear to affect growth?. *Center for Global Development Working Paper No. 366*, pp. 1-51.

²⁵⁶ Ա. Խառատյան, Ն. Քոչինյան, ՀՀ տնտեսական աճը և սոցիալական հիմնախնդիրները: «Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր», Երևան, 2013, հ. 10., N 1, էջ 5-11:

խարժեք հակադարձ կապով: Տնտեսագիտական մեկնաբանությունը հետևյալն է. ՀՀ մասնավոր տրանսֆերտների աճը այլ հավասար պայմանների դեպքում հանգեցնում է անվանական փոխարժեքի աճին (դրամի արժևորմանը)՝ վատթարացնելով արտահանման պայմանները և նվազեցնելով բնակչության այն մասի իրական եկամուտները, որոնց եկամտի հիմնական աղբյուրը արտերկրից ստացվող դրամական օգնությունն է:²⁵⁷

Արտերկրից փոխանցվող տրանսֆերտները միկրոմակարդակում զգալի դեր են կատարում միգրանտների ընտանիքների ինչպես առաջնային պահանջարկների, այնպես էլ ընդհանուր կենսամակարդակի բարձրացման, կրթական ու առողջապահական խնդիրների լուծման գործում: Ըստ ՀՀ կենտրոնական բանկի 2015 թ.-ին դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների շրջանում անցկացված հարցման տվյալների՝ վերջիններիս 47 %-ի եկամտի կազմում 50 %-ից ավելին կազմում են դրամական փոխանցումները, իսկ ընտանիքների 9.5 %-ն ապրում է բացառապես դրամական փոխանցումների հաշվին: Այնուամենայնիվ, որոշ էմպիրիկ աշխատանքներ կասկածի տակ դրեցին դրամական փոխանցումների այս դրական ազդեցությունները: Մասնավորապես, խոսքը գնում է բարոյական վտանգի մասին, երբ փոխանցումներ ստացող տնային տնտեսությունները նվազեցնում են իրենց աշխատանքի առաջարկը՝ հիմնվելով միայն դրամական փոխանցումների վրա: Վերջինս մեծացնում է ծագման երկրի կախվածությունը միջազգային դրամական փոխանցումներից, ինչի արդյունքում երկիրը դառնում է ավելի զգայուն փոխանցումների աղբյուր հանդիսացող երկրներում առաջացող ճգնաժամների նկատմամբ:

Ինչ վերաբերում է արտերկրից տրանսֆերտների ազդեցությանը եկամուտների անհավասարության վրա, ապա մի շարք հետազոտությունների արդյունքներով միգրացիայի աճը նվազեցնում է անհավա-

²⁵⁷ Ռ. Գևորգյան, Ա. Խառատյան, Ն. Քոչինյան, Սոցիալական հիմնական զարգացումների վերլուծությունը Հայաստանի անցումային տնտեսությունում: ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2011, Երևան, 2011, էջ 44-53:

սարությունը, քանի որ հնարավորություն է տալիս տրամաֆերտներ ստացող ընտանիքներին բարձրացնելու կենսամակարդակը: Միևնույն ժամանակ փոխանցում ստացողների սպառողական ծախսերը բազմարկչի միջոցով հանգեցնում են աշխատավարձի միջին մակարդակի աճի՝ դրանով իսկ դրականորեն ազդելով փոխանցում չստացողների ֆինանսական վիճակի վրա: Որոշ հետազոտություններում խոսվում է նաև դրա բացասական ներգործության մասին: Նշվում է, որ միգրացիան ռիսկային է և ծախսատար, հետևաբար ոչ բոլոր ընտանիքները կարող են իրենց թույլ տալ միգրանտ ունենալ:²⁵⁸ Այս առումով միգրացիան մեծացնում է անհավասարությունը ոչ միայն միջազգային և ներքին միգրանտների, այլ նաև միգրանտ ունեցող և չունեցող տնային տնտեսությունների միջև:²⁵⁹ Այսպիսով՝ կարող ենք նշել, որ ազդեցությունները միանշանակ չեն, սակայն դրամական փոխանցումների և աղքատության միջև *բացասական կապի ապացույցներն ավելի զերակշիռ են*:

Ըստ Հայաստան վերադարձած միգրանտներին վերաբերող հետազոտությունների արդյունքների՝ վերադարձածներից շատերը կարճ ժամանակ անց նորից հակվում են հեռանալու երկրից: Դրանք հիմնականում այն մարդիկ են, որոնք արտերկրում աշխատելիս բարձրացրել են իրենց մարդկային կապիտալի որակը և Հայաստանի աշխատանքի շուկայի սահմանափակության պատճառով չեն կարողանում գտնել իրենց ներուժի իրացման համար նպաստավոր պայմաններ ու համարժեք վարձատրություն: Ըստ մի շարք հետազոտությունների արդյունքների՝ միգրանտների 40-50 %-ը գտնում է, որ Հայաստանից դուրս ձեռք բերված փորձը մեծացրել է աշխատանքի շուկայում իրենց մրցունակությունը: Միաժամանակ զանգվածային էմիգրացիան կրճատում է գործազրկությունը, նպաստում է լարվա-

²⁵⁸ O. Stark and R. E. Lucas, 1988, Migration, remittances, and the family. *Economic Development and Cultural Change*, pp. 465-481.

²⁵⁹ Jr R. H. Adams, 2011, Evaluating the economic impact of international remittances on developing countries using household surveys: A literature review. *Journal of Development Studies*, 47(6), pp. 809-828.

ծության մեղմացմանը աշխատանքի շուկայում՝ կանխարգելելով սոցիալական էական բախումները:

Հարկ է նշել, որ վերջին 15 տարվա տեսական գրականությունը փորձում է ցույց տալ, որ կրթված աշխատողների կորուստը կարող է վնասել երկիրը կարճաժամկետ հատվածում, սակայն ապագայում արտագաղթելու վերաբերյալ մարդկանց ձգտումները կարող են մարդկային կապիտալում ներդրումների կուտակման շարժառիթ հանդիսանալ, որը կարող է լինել այնքան շահավետ, որքան դրամական փոխանցումների ստացումն է կամ որակավորված աշխատուժի վերադարձը: Կրթված աշխատողների հոսունությունը կարող է մասն արագացնել տեխնոլոգիայի տարածման գործընթացը՝ ապահովելով տնտեսական աճ երկարաժամկետ հատվածում:²⁶⁰ Մասնավորապես միգրանտները, որոնք ետ են գալիս հայրենիք, իրենց հետ կարող են բերել արտադրական կարողությունների տարրեր, որոնք հնարավոր է ձեռք բերել միայն արտասահմանում: Շատ դեպքերում միգրանտները վերադառնում են իրենց կարիերայի առավել հասուն փուլում, երբ դեռևս չեն անցել թոշակի և հակված են արտասահմանում իրենց խնայած միջոցների հաշվին ձեռնարկատիրությամբ զբաղվելու հայրենիքում:

Այսպիսով՝ մի կողմից՝ միգրացիան մարդկանց հնարավորություն է ընձեռնում ապահովելու իրենց ընտանիքների բարեկեցությունը, իսկ մյուս կողմից այն մարդկային կապիտալի որակի աճի յուրատեսակ միջոց է: *Սրանք արտագաղթի դրական կողմերն են:*

Որո՞նք են արտագաղթի հիմնական բացասական հետևանքները: ՀՀ-ի համար:

- Սոցիալ-տնտեսական բացասական զարգացումները հանգեցրել են նրան, որ, 1988-ից սկսած, Հայաստանից արտագաղթել է 1-1.5 մլն մարդ, 2016 թ.-ին 2015 թ.-ի համեմատ պաշտոնապես արձանագրվեց ՀՀ բնակչության թվաքանակի նվազում:

²⁶⁰ M. Beine, F. Docquier and H. Rapoport, 2001, Brain drain and economic growth: theory and evidence. *Journal of development economics*, 64(1), pp. 275-289.

- Նվազել է ակտիվ աշխատանքային և վերարտադրողական տարիքի բնակչության տեսակարար կշիռը, արդյունքում նվազել է ծնելիությունը, կրճատվել ամուսնությունների թիվը: Ծնունդների առաջիկա կրճատումները և ծերացած բնակչության մահվան առկա գործակիցները կարող են ապագայում հասցնել Հայաստանի Հանրապետության բնակչության թվի բացարձակ ծերացմանը և հետագա նվազմանը:
- Միգրացիան կապված է բավականին հոգեբանական մեծ «ծախսի» հետ. միգրանտների ընտանիքներում առկա է ամուսնալուծության կամ հոգեբանական լարվածության ավելի մեծ ռիսկ:
- Մի կողմից աշխատանքային ակտիվ և վերարտադրողական տարիքի բնակչության տեսակարար կշռի կրճատումը նվազեցրել է երկրի արտադրական հնարավորությունները, որը երկարաժամկետ բացասական ազդեցություն է թողնում տնտեսության պոտենցիալ ՀՆԱ-ի վրա, մյուս կողմից ուղեկցվում է հարկաբյուջետային հատվածում անհավասար կշռվածության ավելացմամբ (հարկային մուտքերի նվազմանը զուգահեռ աճում են առողջապահության և սոցիալական ապահովության ծախսերը):
- Միգրացիայի տեմպերը զսպելու գործում դանդաղ են ազդում սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական և հայրենասիրական գործոնները: «Ուղեղների արտահոսքի», ՀՀ-ից առավել ակտիվ նախաձեռնող մասի հեռանալու պատճառով նվազել է հասարակության ինտելեկտուալ ներուժը:
- Մեծ մասշտաբների արտագաղթը, հանգեցնելով հանրապետության սահմանամերձ մարզերի բնակչության թվաքանակի նվազման, բացասական ազդեցություն է թողել հանրապետության ազգային անվտանգության վրա: Դրան նպաստում են նաև ներքին միգրացիոն տեղաշարժերը:
- Արտերկրից փոխանցվող տրանսֆերտների մեծ ծավալները և միաբնեռությունը մեր երկրի տնտեսությունը մեծ կախվա-

ծության մեջ են դրել Ռուսաստանում ու ԱՄՆ-ում սպասվող տնտեսական միտումներից:

Արտագաղթը մեղմելու և կանխելու համար անհրաժեշտ է այն ծնող պատճառները հստակեցնել, խմբավորել և համակարգել: Ժամանակագրական առումով 20-րդ դարի վերջերին Հայաստանից գանգվածային արտագաղթը պայմանավորված էր 1988 թ.-ի Սպիտակի երկրաշարժով, Արցախի ազատագրման պատերազմով, ԽՍՀՄ-ի փլուզմամբ և երկրի տրանսֆորմացիոն աղետալի վերափոխումներով: Արտագաղթի այդ շրջանի առանձնահատկությունն այն էր, որ այն հիմնականում կարճաժամկետ բնույթ ունեւր և վերադարձի ակնկալիք:

Ներկայումս առաջացել են արտագաղթի նոր պատճառներ, իսկ արտագաղթն ընդունել է աշխատանքային միգրացիայի ձև: Ընդ որում՝ փոխվել է նաև աշխատանքային արտագնա միգրացիայի ձևով արտագաղթի բնույթը: Այն միտում ունի դառնալու անվերադարձ միգրացիա, որը շարունակվելու դեպքում կարող է հայաթափել երկիրը: Մասնավորապես երիտասարդների միգրացիոն վարքագծի վրա ազդում են երկու հակադիր գործոններ՝ ա) երկրից գնալուն նպաստող կամ դուրս մղող գործոններ, բ) երկիր վերադառնալու գործոններ:

Դուրս մղող գործոններն են.

- գործազրկությունը, ցածր աշխատավարձը և աղքատությունը,
- հարստության ու եկամուտների բեռնացման, սոցիալական անարդարության ու կոռուպցիայի էլ ավելի խորացումը,
- ընչաքաղցությունը, ամեն գնով շատ ու արագ հարստանալու ձգտումը և անպատժելիությունը,
- օրենքով ապրելու վստահ համակարգի բացակայությունը,
- հայ գյուղի և հայկական ընտանիքի ավանդույթների էլ ավելի խաթարումը, գյուղացու տնտեսական վիճակի էլ ավելի վատթարացումը,
- Հայաստանում ապագայի նկատմամբ անվստահությունը,
- չարացած ապրելակերպի մթնոլորտը,

- ժողովրդագրական բացասական միտումների խորացումը,
- Հայաստանը շատ սիրելու պակասը, դժվարություններով ապրելու հոգեբանության նվազման միտումը,
- հայրենասիրության, բարեկամասիրության և ընկերասիրության, ներողամտության նվազման միտումը:

Արյուերկրի գրավիչ գործոններն են.

- նորմալ ապրելու համար պահանջվող աշխատանքի և աշխատավարձի առկայությունը,
- որակյալ բարձրագույն կրթություն ստանալու և լավ մասնագետ ու բարձր աշխատավարձ ստանալու երաշխիքը,
- սոցիալական արդարության մթնոլորտը,
- օրենքի գերակայությունը,
- հեռանկարում հայրենիք վերադառալու համար արտերկրում տնտեսական ստեղծելու և գործարար մարդ կայանալու հնարավորությունը,
- հայկական մեծ սփյուռքի առկայությունը և արտագաղթողներին նրա հովանավորությունը:

Հայաստանից չմեկնելու, Հայաստան վերադառնալու և Հայաստանում մնալու միակ անվիճելի ու մաքուր գործոնը հայրենիքի կարոտն ու սերն է, որը, դժբախտաբար, մեր օրերում թուլացած է աշխատում և միտում ունի ավելի նվազելու: Եվ դա ամենատխուր, մտահոգիչ և վտանգավոր միտումն է:

Այդպիսով, երբ համադրում ենք երկրից դուրս մղող և արյուերկրի գրավիչ գործոնները Հայաստանում մնալուն նպաստելու գործոններին, տարբերությունը, դժբախտաբար, հոգուր արտագաղթինն է: Միաժամանակ կարծում ենք, որ եթե կոռուպցիան նվազման, իսկ սոցիալական արդարությունը աճի միտումներ ցուցաբերեն, եթե արդյունավետ և հիմնավոր աշխատեն ազգային անվտանգության, պաշտպանության, «Ազգ-բանակ» նոր մոդելի համոզիչ գաղափարները, մեծ հայերի, հատկապես մշակույթի գործիչների և մտավորականության համոզիչ ու հուզող խոսքը մեր բանակի հզորության և հայրենիքը ամեն գնով պաշտպանելու մասին, արտագաղթը կնվազի, և կսկսվի վերադարձը:

Որոշմք են արտագաղթը կանխելու ուղիները:

Դրանք շատ ու բարդ են: Ներառում են մեր կյանքի բոլոր կողմերը և ոլորտները: Դրանք և՛ տնտեսական, և՛ սոցիալական, և՛ անվտանգության, և՛ բարոյահոգեբանական ու քաղաքական հարաբերություններ են ընդգրկում: Այդ պատճառով գուցե ճիշտ է դրանց թվարկելը և նոր մեկնաբանելը: Եվ այդպես արտագաղթը կանխելու ուղիներն են.

- տնտեսական աճի տեմպերի արագացումը, գործազրկության կրճատումը, աշխատավարձերի բարձրացումը և աղքատության հաղթահարումը,
- բնակչության եկամուտների և հարստության ահռելի բևեռացման կրճատումը, արդարացի բաշխման հաստատումը,
- բնակչության բարոյահոգեբանական դժգոհության և լարվածության հաղթահարումը, ապագայի նկատմամբ վստահության վերականգնումը և հաստատումը,
- բանակի մարտունակության մշտական բարձրացումը, միջազգային հավասարակշռված գործառնություններով քաղաքական կայունության պահպանումը,
- հարկային, մաքսային և վարկային հարաբերությունների լծակներով և կոռուպցիայի հաղթահարումով մենաշնորհների սահմանափակումը, շուկայական ազատ մրցակցային օրենսդրական դաշտով փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումների և նոր աշխատատեղերի ստեղծման խթանումը,
- երկրի ժողովրդագրական զարգացումների բացասական միտումների հաղթահարումը, ամուսնությունների և ծննդաբերության աճի խրախուսումը,
- հատուկ ֆոնդերով և բարձր աշխատավարձով «ուղեղների» արտահոսքի կանխումը,
- սահմանամերձ գյուղերից արտագաղթի կանխումը և ներգաղթի խթանումը, բարձր լեռնային գյուղերի վերակենդանացումը և զարգացումը, հայ գյուղի և հայ ընտանիքի ավանդույթների վերակենդանացումը,

- Էկոլոգիական վտանգավոր ու աղետալի վիճակների հաղթահարումը,
- Երկրում համընդհանուր խնայողական հոգեբանության արմատավորումը, պետական ու մարզային պաշտոնյաների ուռճեցված հաստիքների և թանկարժեք գործուղումների շեշտակի կրճատումը, պաշտոնյաների և մեծահարուստների համար «սավրագլուխներով» անվտանգության «համակարգի» լուծարումը,
- Կոռուպցիայի հաղթահարումը և պետության հեղինակության բարձրացումը,
- հայրենիք-սփյուռք հարաբերությունների այնպիսի փոփոխությունները ու զարգացումները, որ սփյուռքը ոչ թե արտագաղթը հովանավորի, այլ, ընդհակառակը, ամեն կերպ հասնի հայրենադարձության:

Քանի որ արտագաղթը բարդ երևույթ է. ենթակա ոչ միայն երկրի դուրս մղող գործոնների, այլև արտերկրի գրավիչ գործոնների ազդեցությանը, ուստի նրա կանխման ուղիները և՛ բարդ են, և՛ բազմաբնույթ ու դժվար: Այդ պատճառով անհրաժեշտ է արտագաղթի դուրս մղող և արտերկրի գրավիչ գործոնները դիտարկել առանձին-առանձին: Վերլուծությունները ցույց են տվել, որ *արտագաղթը կանխելու հիմնական գործոնը, գլխավոր ուղին տնտեսական աճի տեմպերի արագացումն է*, այդ հիմքի վրա զբաղվածության աճը, գործազրկության կրճատումը, ընտանիքի մեկ շնչին ընկնող իրական եկամուտների մեծացումը և դրանց արդյունքում բնակչության դեռևս բարձր 29.8 % աղքատության հաղթահարումը:

Տնտեսական աճի և զբաղվածության աճի կարևորությունը Հայաստանում արտագաղթը կասեցնելու գործում հաստատվում է Լմպիրիկ հետազոտությունների արդյունքներով:²⁶¹ Ռեգրեսիոն վերլուծության արդյունքում ստացվել է վիճակագրորեն նշանակալի հակադարձ կապ զբաղվածություն և միգրացիայի սաղոդ, ինչպես նաև՝

²⁶¹ Ա. Խառատյան, Ն. Քոչինյան, ՀՀ միգրացիայի որոշիչների էկոնոմետրիկ վերլուծություն, Հայաստան. Ֆինանսներ և Էկոնոմիկա, Երևան, 2005 թ., # 8-9, (56-57), մայիս-հունիս, էջ 156-159:

ՀՆԱ և միգրացիայի սալոյ ցուցանիշների միջև: Այսինքն՝ և՛ զբաղ-վածության, և՛ ՀՆԱ-ի աճը նպաստում են արտագաղթի կրճատմանը: Միաժամանակ երկու փոփոխականով վեկտորական ավտոռեգրե-սիայի մոդելը հնարավորություն է տալիս բացահայտելու, որ միգրա-ցիայի շոկն ուժեղ ազդեցություն ունի միգրացիայի սալոյի վրա, այ-սինքն՝ միգրացիայի վրա ազդող, բայց մոդելում չներառված մի շարք կարևոր գործոններ՝ արդարացի սոցիալական քաղաքականության բացակայություն, վաղվա օրվա հանդեպ վստահության կորուստ և այլն, էական դեր են խաղում արտագաղթի մասին որոշում կայացնե-լիս:

Արտագաղթի շատ կարևոր պատճառ են բնակչության բարոյա-հոգեբանական բնույթի դժգոհությունները, որոնք առաջանում են հարստության և եկամուտների ահռելի բեռնացման, սոցիալական մեծ անարդարության և կոռուպցիայի առկայությամբ: 2009 թ.-ին ԱՄՆ հայ համայնքում անցկացված «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի»²⁶² քանակական հետազոտության արդյունքների համաձայն՝ ՀՀ-ում կոռուպցիան խոչընդոտում է ներ-քին և արտաքին ներդրումները, սահմանափակում առևտուրը, աղա-վաղում պետական ծախսերի չափերը և կառուցվածքը, հանգեցնում ստվերային տնտեսության աճին, խորացնում սոցիալական անհա-վասարությունը և այլն: Հետազոտման արդյունքներով կոռուպցիան ունի առնվազն երկակի բնույթ: Երկարաժամկետ կտրվածքում և հա-սարակության մակարդակում այն, անկասկած, բացասական եր-կույթ է, իսկ կարճաժամկետում ու անձնական մակարդակում՝ դրա-կան: Կոռուպցիայի բարձր մակարդակի հետ մեկտեղ անկախ Հա-յաստանի կառավարության ծախսողումների մեջ, սփյուռքի ներկայա-ցուցիչների կարծիքով, մտել է նաև անարդյունավետ արտաքին քա-ղաքականությունը: Զախտողումների ևս մեկ կարևոր կետ է դարձել բարոյական անկումը, որը նշանավորվել է արտագաղթի մեծ ալիքով: Ավելին, օլիգարխիան և սոցիալական սուր անհավասարությունը,

²⁶² Կոռուպցիայի հանրային ընկալման որոշ առանձնահատկությունները Հայաստա-նում, Երևան, 2009, http://www.noravank.am/upload/pdf/206_.pdf

ԱՄՆ հայ համայնքի ներկայացուցիչների կարծիքով, բերում են հայ-րենասիրական մտքի և հասարակության միասնության վերացմանը:

Յուրի Լևադայի վերլուծական կենտրոնի հրապարակած «Ուրբանով է արդարացված սոցիալական անհավասարությունը տարբեր երկրների քաղաքացիների տեսանկյունից» թեմայով հետազոտության արդյունքներով ուսումնասիրվել է աղքատների և հարուստների միջև գոյություն ունեցող հակակրանքը տարբեր ազգերի մոտ: Եթե նորվեգացիները, չեխերը և ճապոնացիները գտնում են, որ այդ հակակրանքը աննշան է, ապա հունգարացիները, ռուսները և լատիշները այն գնահատում են որպես չափազանց բարձր: Բացի այդ՝ արևմտյան երկրների և Ճապոնիայի ներկայացուցիչները համոզված են, որ եկամուտների միջև տարբերությունը ուղղակիորեն անհրաժեշտ է պետության բարգավաճման համար, մինչդեռ Արևելյան Եվրոպայում (Սլովենիա, Հունգարիա, Բուլղարիա) և Ռուսաստանում հակառակ կարծիքի են:

Կարծում ենք՝ ՀՀ բնակչության կողմից աղքատներ-հարուստներ հակակրանքը գնահատվում է միջինից շատ բարձր, իսկ եկամուտների միջև անհավասարությունը ահռելի է: Հայաստանում բնակչության եկամուտների մեծ բևեռացումը ստեղծում է սոցիալական անարդարության մթնոլորտ, սրում սոցիալական լարվածությունը: Այդ պատճառով բնակչության եկամուտների և հարստության ահռելի բևեռացման կանոնավոր կրճատումը և բարիքների բաշխման սոցիալական արդարացի համակարգի ստեղծումը, կոռուպցիայի կրճատումը արտագաղթի կանխման շատ կարևոր պայման են:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է*: ՀՀ տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը «հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը»: Այս սկզբունքը պարտավորեցնում է ՀՀ կառավարությանը վարել սոցիալական ապահովության, ապահովագրության և օգնության նպատակաուղ-

ված քաղաքականություն՝ սոցիալական արդարություն ապահովելու համար: Միայն այս դեպքում արտագաղթը կկանխվի, ներգաղթը կմեծանա, բանակը կհզորանա, և երկրի ազգային անվտանգությունը հուսալիորեն կգարգանա:

Նշենք, որ 2016 թ.-ի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ են մտել 2015 թ.-ի սեպտեմբերին Նյու Յորքում կայացած՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման գազաթնաժողովին աշխարհի երկրների առաջնորդների ընդունած՝ «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030-ում» ներառված 17 նպատակները: Առաջիկա 15 տարվա ընթացքում, առաջնորդվելով բոլորին վերաբերող այս նոր նպատակներով, երկրները կհամախմբեն իրենց ջանքերը՝ վերացնելու աղքատությունը, պայքարելու անհավասարությունների դեմ և լուծելու կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները: Այստեղ հաշվի է առնված, որ աղքատության վերացումը պետք է ուղեկցվի այնպիսի ռազմավարությունների կիրառմամբ, որոնք կնպաստեն տնտեսական աճի խթանմանը և սոցիալական մի շարք կարիքների բավարարմանը, այդ թվում՝ կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության և աշխատանքի հնարավորությունների ոլորտներում՝ միաժամանակ լուծելով կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները:

Հայաստանում արտագաղթի պատճառներից են օրենքի գերակայության բացակայությունը, էկոլոգիական վտանգների մեծացումը: Այդ պատճառով արտագաղթի հաղթահարման պայմաններից են օրենքի գերակայության հաստատումը և պետության հեղինակության բարձրացումը:

Քանի որ արտագաղթը բարձր է սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերում, որը վտանգավոր է երկրի ազգային անվտանգության տեսակետից, այդ պատճառով անհրաժեշտ է պետական մակարդակով և հնարավոր բոլոր այլ ներդրումներով ուժեղացնել բանակի մարտունակության մշտական բարձրացումը, բնակչության զբաղվածության և նրա կենսամակարդակի բարձրացումը, ընդհանրապես հայ գյուղի և հայ ընտանիքի դարերից եկող ավանդույթների վերակենդանացումը: Հայ գյուղը և գյուղական ընտանիքը մարդ-

կային կապիտալի արդյունավետ վերարտադրության մշտական հանգրվանն են եղել: Պետք է ամեն ինչ անել, որ գյուղերում դպրոցները չփակվեն:

Բնակչության զբաղվածության խրախուսման և այդ հենքի վրա նրա աղքատության և արտագաղթի կրճատման շատ կարևոր պայմաններից են պետական հարկային, մաքսային, հատկապես, վարկային նպատակաուղղված զարգացումներով մենաշնորհների տնտեսական գործունեության սահմանափակումները: Անհրաժեշտ է մշտական հսկողությամբ ստեղծել շուկայական ազատ ու արդար մրցակցային օրենսդրական դաշտ՝ դրանով խթանելով ձեռնարկատիրության զարգացումը մասնավորապես նպաստելով փոքր ու միջին ձեռնարկությունների և նոր աշխատատեղերի ստեղծման արդյունավետ և շահավետ գործունեությանը:

Հայտնի է, որ երկրում սոցիալական համերաշխության, քաղաքական կայունության և տնտեսական աճի ապահովման երաշխավորված միջոցը զարգացած փոքր ու միջին ձեռնարկատիրության առկայությունն է²⁶³: Ջբաղվածության ապահովման և, դրանով իսկ, աղքատության հաղթահարման խնդիրներն արմատական լուծումներ են ստանում միայն հասարակության միջին խավը ձևավորող փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՉ) միջոցով: ՀՀ ՓՄՉ սուբյեկտներին ուղղված պետական աջակցության ծրագրերը պետք է նպաստեն երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամասնադասությունների հաղթահարմանը: Կարևորելով ՓՄՉ դերը երկրի տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման, ինչպես նաև *երկրում սոցիալական համերաշխության* և քաղաքական կայունության ապահովման գործում՝ ՀՀ կառավարությունը 2015 թ.-ի հոկտեմբերին հաստատեց փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թթ.-ի ռազմավարությունը: Եթե նախորդ տարիներին ոլորտի զարգացման քաղաքականությունն ավելի շատ կենտրոնացած էր ՓՄՉ սուբյեկտների քանակական աճի և ռեսուրսների հասանելիու-

²⁶³ Փոքր և միջին ձեռնարկատիրություն// ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք, <http://www.mineconomy.am/arm/38/gortsaruyt.html>:

թյան վրա, ապա առաջիկա տարիներին շեշտը դրվելու է գիտելիքի, որակի, ՓՄՁ սուբյեկտների և ընդհանրապես ոլորտի մրցունակության բարձրացման վրա:

Քանի որ ժամանակակից աշխարհում և հատկապես Հայաստանի Հանրապետությունում մեծ վտանգ է «ուղեղների»՝ բարձր որակավորման մասնագետների արտահոսքը երկրից (արտերկրում բարձր աշխատավարձ ստանալու համար), անհրաժեշտ է բոլոր՝ տնտեսական և բարոյական լծակներով *կանխել մեր երկրի ապագա զարգացման համար շար անհրաժեշտ բարձր որակավորման մասնագետների արտագաղթը նրանց հալոսկ բարձր աշխատավարձ վճարելու գնով:*

Արտերկրից ստացվող տրանսֆերտների մեծ մասը ծախսվում է սպառողական նպատակներով: Դրանց դրական ազդեցությունը տնտեսության վրա կարող է ավելին լինել, եթե տրանսֆերտների խնայված մասը օգտագործվի նպատակային. ծառայի պետական ներդրումների աճին, ենթակառուցվածքների զարգացմանը, պաշտպանության համակարգի ամրապնդմանը և այլն: Այդ նպատակով անհրաժեշտ է բարձր տոկոսադրույքներ սահմանելու միջոցով խրախուսել բնակչության կողմից պետական արժեթղթերի գնումը և հավաքագրված միջոցները տարբեր ներդրումային ֆոնդերի միջոցով ծառայեցնել երկրի զարգացմանը:

Վերադարձած միգրանտների կեսից ավելին մտածում է նորից արտագաղթելու մասին: Այդ միտումը կանխելու նպատակով պետք է պետականորեն իրականացվի սոցիալ-տնտեսական այնպիսի քաղաքականություն, որը ենթադրում է.

- մարդկանց կրթությունն ու հմտությունները հնարավորինս համապատասխանեցնել երկրի առկա և պոտենցիալ մասնագիտացմամբ աշխատատեղերին, որի համար անհրաժեշտ է իրականացնել կոնկրետ ծրագրեր,
- վերադարձած միգրանտների զբաղվածությունն ապահովելու համար կառավարությունը, տեղական իշխանությունները պետք է նպաստավոր համապատասխան տնտեսական ու

իրավական, ներդրումային, ինչպես նաև արտոնյալ հարկային խթաններ ստեղծեն և կիրառեն:

Նշենք, որ ՀՀ-ում գործում են միգրացիային վերաբերող որոշ ծրագրեր: Այսպես, գործում է «Միգրացիա և զարգացում» ծրագիրը, որի նպատակն է աջակցել Եվրամիությունից Հայաստան վերադարձողներին՝ վերաինտեգրելու համար:²⁶⁴ Ծրագրի առաջին փուլն իրականացվել է 2010-2013 թթ.-ին, որի համար տրվել էր 700 հազար եվրո: Ծրագրի շրջանակներում 3 տարիների ընթացքում այս ծրագրի աջակցությունից օգտվել և հայրենիք է վերադարձել ընդամենը 83 ընտանիք կամ 190 անձ: Ներկայումս իրականացվում է ծրագրի երկրորդ փուլը, որի համար Լիխտենշտեյնի կառավարությունն ու ավստրիական «Կարիտասը» 200 հազար եվրո են տրամադրել: Հիմնական աջակցությունը, որ «Կարիտասը» տրամադրում է վերադարձողներին, բնակարանների վարձակալումն է կամ եղած բնարանների վերանորոգումն ու կահավորումը: Ոմանց տրամադրվել է անտոկոս փոխառություն: Ծրագրի շրջանակում տրամադրվում է նաև բժշկական, իրավաբանական աջակցություն, մասնագիտական դասընթացներ և այլն, սակայն *աշխատանքով ապահովելու երաշխիք չկա*: Ծրագրի արդյունքները վկայում են, որ վերադարձածների գրեթե կեսը գործազուրկ են ու չի բացառվում, որ նորից արտագաղթեն: Նշանակում է նման ծրագրերը չեն աշխատում, քանի որ արդյունք չկա: Այստեղից բխող կարևոր հետևությունն է՝ բարձրացնել գործող ծրագրերի արդյունավետությունը:

Նշենք նաև, որ 2016 թ. ապրիլի 19-ին Երևանում կայացավ Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄԿ) կողմից իր նոր՝ «Աջակցություն Հայաստանին միգրացիայի և սահմանների կառավարման ոլորտներում» (ՄԻԲՄԱ) ծրագրի ներկայացումը²⁶⁵: Ծրագրի նպատակը Հայաստանում միգրացիայի և սահմանների կառավարման ոլորտների համապատասխանեցումն է ԵՄ չափանիշներին: Ծրագիրը, մասնավորապես, ուղղված է պետական սահմանի անցման կետերում կիրառվող ընթացակար-

²⁶⁴ <http://www.caritas.am/hy/projects/migration-a-integration/migration-and-development>

²⁶⁵ <http://www.aravot.am/2016/04/19/681867/>

գերի արդյունավետության բարձրացմանը, առևտրի խթանմանը և ԵՄ ու Հայաստանի միջև վիզային ռեժիմի ազատականացման հնարավոր երկխոսությանը նպաստելուն:

Արտագաղթը հաղթահարելու վերը նշված ուղիներից բացի՝ կարևոր պայմաններ են մեր բանակի հզորության և մարտունակության անընդհատ բարձրացումը և երկրի անվտանգության ապահովումը: Ամեն գնով մենք պետք է ստեղծենք հզոր բանակ: Դրանում պետք է ներգրավվեն երկրի բոլոր մեծահարուստների ներդրումները: Եթե պետական մակարդակով դա չարվի, ապա «Ազգ-բանակ» մոդելը կմնա թղթի վրա գրված բարի ցանկություն:

Եվ վերջապես, արտագաղթը կանխելու հարցում մեծ դեր ունի Հայաստանը շատ սիրելի համընդհանուր, ամենօրյա, պետական, հասարակական նպատակասլաց դաստիարակչական գործունեությունը:

4.2 Մարդկային կապիտալի որակական կորուստները և կրթության զարգացման հիմնախնդիրները

Ժամանակակից հասարակությունում մարդկային կապիտալի որակական հիմնական բաղադրիչը կրթությունն է, կրթական կապիտալը: Այդ պատճառով մարդկային կապիտալի որակական կորուստները նախ և առաջ դրսևորվում են կրթական կապիտալի կորուստների մեջ: Մեր հազարամյակյին բնորոշ անցումը գիտելիքահենք տնտեսության ընդհանուր կապիտալային համակարգում իր նշանակությամբ և արդյունավետությամբ բուռն կերպով մեծացնում է հատկապես մարդկային կապիտալի կամ, այլ կերպ ասած, գիտելիքահենք մարդկային կապիտալի դերը: Այդ միտումը գիտելիքահենք տնտեսության զարգացման օրգանական և տրամաբանական պահանջն է, նրա շարժիչ ուժը, քանի որ կրթությունը, մեծ հաշվով, մարդու հնարավորությունների և, մասնավորապես, ընտրության հնարավորությունների ընդլայնումն է: Չպետք է մոռանալ, որ մարդկային կապիտալի զարգացման մակարդակը ամենից առաջ պայմանավոր-

ված է մարդու զարգացման մակարդակով: Հայտնի է, որ մարդկային զարգացման աստիճանը քանակապես չափվում և գնահատվում է մարդկային զարգացման համաթվով (ՄՁՀ): Մարդկային զարգացման համաթիվը մարդու կյանքի երեք հիմնական բաղադրիչների՝ առողջության (երկարակեցություն), գիտելիքի և կենսամակարդակի ամբողջությունն է: Դրանք, մարդու կյանքում ունենալով հարաբերական ինքնուրույնություն, մի ամբողջություն են կազմում, միմյանց հետ փոխկապակցված են և միմյանցով պայմանավորված: Այսպես, առողջությունը մարդու կայացման երաշխիքն է: Կրթությունը մարդկային կապիտալի զարգացման միջուկն է, իսկ կենսամակարդակը՝ առողջության և կրթության խտացման արդյունքը և պայմանը:

Հայաստանի վիճակագրական տարեգրքերում բնակչության կրթական մակարդակը հետազոտվում է մշակույթի հետ միասին. կրթությունը և մշակույթը դիտարկվում և ուսումնասիրվում են որպես մեկ ամբողջություն, որը այդ մոտեցման փիլիսոփայությամբ իմաստավորված է:²⁶⁶ 1948 թ.-ի դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում»²⁶⁷ մարդու իրավունքների շարքում վճռող տեղ է տվել կրթության իրավունքին: Մարդկային զարգացման գործում կրթության դերի հաջորդ վճռող քայլը 1990 թ.-ին Թաիլանդում կայացած «Կրթություն բոլորի համար» միջազգային գիտաժողովն էր, որը կրթությունը արժևորում էր ոչ միայն որպես մարդկային զարգացման կարևոր գործոն, այլ որպես աղքատությունը հաղթահարելու հիմնական ուղի:

Կրթության կարևորությունն ընդգծվում է հատկապես ժամանակակից հասարակությունում, որը թելադրվում է արտադրության նոր կառուցվածքով, տեղեկատվական բնույթի նորագույն տեխնոլոգիաներով, աշխատողների բարձր զարգացած մշակույթով: 19-րդ դարում համընդհանուր անցում է կատարվում ցանցային տնտեսության, որը տեղեկատվական տեխնոլոգիաների և գիտելիքի վրա հիմնված արտադրական գործունեության ներդաշնակ համակարգ է:

²⁶⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 117-118:

²⁶⁷ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Երևան, 1996, էջ 3:

Գիտելիքահենք ցանցային տնտեսության առանձնահատկությունների և դրա առավելությունների մասին վերջին կեսդարյա ժամանակահատվածում բազմաթիվ և բազմաբնույթ արժեքավոր հետազոտություններ են կատարվել: Հայաստանի Հանրապետությունում այդ խնդիրներին անդրադարձել է պրոֆ. Գ. Վարդանյանը իր «Գիտելիքահենք տնտեսություն» ծավալուն աշխատությունում:²⁶⁸ Հանգամանորեն վերլուծելով գիտելիքահենք ցանցային տնտեսության բնույթն ու առանձնահատկությունները՝ նշվում է, որ գիտելիքահենք տնտեսությունը նոր համակարգ է, նոր որակ, որը կարող է իր բացահայտ առավելությունները դրսևորել միայն բարձր կրթական մարդկային կապիտալի առկայության պայմաններում: Այստեղից էլ մեծ է կրթության առաջնակարգ տեղը և դերը ժամանակակից ցանցային տնտեսական համակարգում: Դրանով է բացատրվում, որ կրթական համակարգը և դրա անընդհատ կատարելագործումը ժամանակակից աշխարհի ամենաառաջնահերթ, բոլորից շատ քննարկվող ոլորտներից և խնդիրներից են: Պատահական չէ, որ այն մարդկային կապիտալը հատկապես շատ արժևորող և գնահատող ճապոնացիների ու շաղկապի կենտրոնում է: Ընդ որում՝ կրթության ճապոնական փիլիսոփայությունը գտնում է, որ կրթությունը սկսվում է մարդու ծնվելու պահից և չպետք է ավարտվի մինչև նրա մահը: Դրանով է բացատրվում այն առանձնահատուկ մեծ ուշադրությունը, որ ճապոնիայում նվիրվում է նախադպրոցական տարիքի երեխաների կրթությանը և դաստիարակությանը: Ճապոնիայում նախադպրոցական տարիքի երեխաների շուրջ 63 %-ը գնում են մսուր, չորս տարեկան երեխաների 80 %-ը և հինգ տարեկան երեխաների 90 %-ը հաճախում է մանկապարտեզ:²⁶⁹

Պետք է հիշել, որ Խորհրդային Հայաստանում, 1920 թ.-ից սկսած, կրթությունը մեծ զարգացում ստացավ: Ստեղծվեց կրթական ամբողջական համալիր համակարգ՝ սկսած նախադպրոցական կրթությունից, ավարտած ասպիրանտուրայով և հետբուհական կրթու-

²⁶⁸ Գ. Վարդանյան, Գիտելիքահենք տնտեսություն, Երևան, 2008:

²⁶⁹ Дм. Грейсон, О. Делл, Американский менеджмент на пороге XXI века, Москва, Экономика, 1991, с. 235.

թյունով: 1932 թ.-ին անցում կատարվեց պարտադիր տարրական կրթության, որը անգրագիտությունը 83 %-ից իջեցրեց 16 %-ի, իսկ 1960-ական թվականներից աստիճանաբար արմատավորվեց պարտադիր միջնակարգ կրթությունը: Ընդ որում՝ կրթությունն իր բոլոր մակարդակներում պետական էր և անվճար: Դա հնարավորություն տվեց երկրում ամբողջովին վերացնելու անգրագիտությունը, որը սոցիալական մեծ նվաճում էր:

Մարդկային զարգացման համաթվի բնակչության կրթության մակարդակի ինդեքսը բնութագրում է չափահաս բնակչության գրագիտությունը, ինչպես նաև տարրական, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների տեսակարար կշիռը: Այդ ցուցանիշով ՀՀ-ն բավականին լավ տեղ է զբաղեցնում, քանի որ խորհրդային կրթական զարգացած համակարգից բավականին մեծ ժառանգություն էր մնացել:

Այդուհանդերձ, անցումային ժամանակահատվածում և դրանից հետո մինչ այսօր էլ Հայաստանի Հանրապետությունում կրթության ոլորտում տեղ են գրել բացթողումներ և որոշակի կորուստներ: Խորհրդային Հայաստանում արդյունավետ գործող նախադպրոցական համակարգից քիչ բան մնաց, իսկ դպրոցական կրթական պետական համակարգը, ըստ էության, կաթվածահար եղավ:

Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագրի նախագծում, բնութագրելով կրթության համակարգի առկա վիճակը, նշվում է. «Մատչելիության առումով ամենախոցելի մախադպրոցական կրթությունն է: Ներկայիս հանրապետության 400-ից ավելի համայնքներում չկան մախադպրոցական հաստատություններ, իսկ ընդգրկվածությունը 2008 թ.-ին կազմել է ընդամենը 29.8 % (քաղաքային համայնքներում՝ 39.3 %, գյուղական համայնքներում՝ 13.6 %)»²⁷⁰: Ինչպես տեսնում ենք, անգամ 1997-2008 թթ.-ի տնտեսական զարգացման կայունացման ժամանակահատվածում մախադպրոցական կրթությունը ՀՀ-ում անմխիթար վիճակում էր:

²⁷⁰ Կրթություն. 2015, Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր, էջ 5-6:

Աղյուսակ 4.32 Պետական նախադպրոցական հիմնարկների և դրանցում ընդգրկված երեխաների թիվը²⁷¹

	1997 թ.	1998 թ.	1999 թ.	2000 թ.	2015 թ.
Պետական նախադպրոցական հիմնարկների թիվը	943	856	844	764	717
Դրանցում երեխաները, հազար երեխա	67.2	56.6	59.9	46.3	72.4
Տոկոսներով՝ համապատասխան տարիքի երեխաների թվաքանակից	18.5	17.1	17.7	17.2	-
Նախադպրոցական հիմնարկներում երեխաների ապահովվածությունը տեղերով	58.1	62.7	59.6	61.1	28.6

Աղյուսակ 4.32-ը փաստում է, որ 1997-2015 թթ.-ի ժամանակահատվածում նախադպրոցական հիմնարկների թիվը ոչ միայն շատ փոքր էր, այլև շարունակվում էր դրանց թվաքանակի նվազման միտումը: 1997 թ.-ի 943-ից 2000 թ.-ին մնացել էր 764, իսկ 2015 թ.-ին՝ ընդամենը 717 նախադպրոցական հիմնարկ: 1997-2000 թթ. այդ հիմնարկներում առկա էր նաև երեխաների թվաքանակի կրճատման միտում՝ 2000 թ.-ին նախադպրոցական հիմնարկներում ընդգրկված էր 46.3 հազար երեխա 1997 թ.-ի 67.2 հազարի դիմաց: 2015 թ.-ին 2000 թ.-ի համեմատ կրճատվել է նախադպրոցական հիմնարկներում երեխաների ապահովվածությունը տեղերով և միաժամանակ աճել երեխաների թվաքանակը այդ հիմնարկներում (46.3 հազարից դառնալով 72.4 հազար): Ինչ վերաբերում է համապատասխան տարիքի երեխաների ընդգրկվածության թվաքանակին, այն մոտավորապես 17-19 %-ի սահմաններում է այն դեպքում, երբ ճապոնիայում կազմում է 90 %:

²⁷¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001, Երևան, էջ 97: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 118:

Աղյուսակ 4.33. ՀՀ-ում համախառն ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում՝ ըստ քաղաքային և գյուղական համայնքների²⁷²

Տարի	Նախադպրոցական հաստատությունների թիվը			Ընդգրկված երեխաների թիվը			Ընդգրկվածության %-ը		
	ընդամենը	քաղաք	գյուղ	ընդամենը	քաղաք	գյուղ	ընդամենը	քաղաք	գյուղ
2004	653	422	231	45971	37993	7978	20.0	27.4	8.7
2009	622	403	219	53200	44400	9500	23.3	30.3	11.3
2012	683	421	262	69500	56300	13200	27.9	36.6	13.8
2013	697	422	275	68900	55200	13700	27.3	35.2	14.3
2014	713	428	285	72700	57000	15700	28.7	36.0	16.6
2015	717	431	286	72400	56800	15600	28.6	35.7	16.6

Աղյուսակ 4.33-ի տվյալներից հետևում է, որ 2004-2015 թթ.-ի ժամանակահատվածում նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկվածության մակարդակը փոքր-ինչ բարելավվել է՝ 20 %-ից աճելով մինչև 28.6 %, սակայն դեռևս անմխիթար է գյուղական համայնքների վիճակը: Այդպես, եթե ՀՀ-ում նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկվածությունը 2004 թ.-ին կազմել է 20 %, ապա գյուղում՝ ընդամենը 8.7 %: 2015 թ.-ին դրությունը հարաբերականորեն բարելավվել է հանրապետությունում այն կազմել է 28.6 %, իսկ գյուղում՝ 16.6 %:

Այժմ անդրադառնանք նախադպրոցական հաստատությունների մարզային բաշխվածությանը: 2012 թ.-ին Հայաստանում գործել են 683 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություններ (ՆԴՀ), որոնցից 440-ը՝ մանկապարտեզ, 214-ը՝ մսուր մանկապարտեզ, 29-ը՝ դպրոց մանկապարտեզ: 2015 թ.-ին դրանց թիվը աճել է մինչև 717: ՆԴՀ գործունեությունը, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, բաշխված է անհավասարաչափ, որն իր արտահայտումն է գտել Աղյուսակ 4.34-ում:

²⁷² ՀՀ սոցիալական վիճակը, 2005-2008 թթ.: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 119, 121: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 118:

**Աղյուսակ 4.34. ՀՀ ՆԳՀ - ների գործունեության ցուցանիշներն
ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 2015 թ.-ին²⁷³**

	ՆԳՀ-նե- րի քանա- կը, միավոր	խմբերի քանակը, միավոր		տեղերի քանակը, միավոր	երեխանների թվաքա- նակը, մարդ	
		ընդամե- նը	որից՝ 3 և բարձր տարիքի երեխա- ներ		ընդամե- նը	նրանցից աղջիկ- ներ
ք.Երևան	219	1152	1041	34112	32289	15696
Արագա- ծոտն	23	81	65	1839	1775	842
Արարատ	77	220	209	8283	6314	3132
Արմավիր	59	181	164	6044	4853	2307
Գեղարքու- նիք	42	110	105	3719	3214	1609
Լոռի	66	151	140	4909	4474	2142
Կոտայք	53	224	198	6953	6391	3084
Շիրակ	51	171	146	4908	4385	2744
Սյունիք	53	175	150	4844	4283	2097
Վայոց ձոր	15	37	37	1102	989	464
Տավուշ	59	137	122	4408	3406	1667
Ընդամենը	717	2639	2377	81121	72373	35784

Ինչպես նկատում ենք, նախադպրոցական հաստատություննե-
րը հիմնականում կենտրոնացած են Երևանում, իսկ գյուղական հա-
մայնքներից՝ Արարատում, Արմավիրում և Տավուշում: Ամենամաքա-
վարար քանակը առկա է Վայոց ձորի և Արագածոտնի մարզերում:
Երեխաների ընդգրկվածության ինչպես համրապետական, այնպես
էլ մարզային մակարդակները շատ հեռու են մորմալ ցուցանիշներից:
Եվ առաջինը դրանով են պայմանավորված երեխաների կրթության
ոլորտի մեծ թերությունները և կորուստները: Այդ անմխիթար վիճակը

²⁷³ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2013, էջ 158:
Տե՛ս նաև Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016, էջ
155:

պայմանավորված էր Հայաստանում 1990-ական թվականներից սկսված սոցիալ-տնտեսական բնույթի մի շարք պատճառներով: Մասնավորապես 1992-1994 թթ.-ին իրականացված սեփականաշնորհման կործանիչ քաղաքականությունը Հայաստանում հիմնովին կազմալուծեց նախադպրոցական հաստատությունները: 2000-ական թվականներին իրավիճակը սկսեց դանդաղ կարգավորվել. մի կողմից նախկին մսուր-մանկապարտեզների մի մասը սկսեց աշխատել, գործել, մյուս կողմից աստիճանաբար բացվեցին նոր մսուր-մանկապարտեզներ, հիմնականում՝ մասնավոր նախադպրոցական հաստատություններ: Սակայն այդ ժամանակահատվածում բնակչության շուրջ 60 % աղքատության պայմաններում մասնավոր նախադպրոցական հաստատությունները շատ դանդաղ էին կայանում: Միայն հետագա 2000-2015 թթ.-ին դրությունը շատ քե քիչ բարելավվեց: Անգամ 2012 թ.-ին երեխաների միջին ընդգրկվածությունը մսուր մանկապարտեզներում կազմում էր ընդամենը 28.0 %, իսկ գյուղական համայնքներում՝ շուրջ 14.0 %, որը շատ հեռու էր բավարար լինելուց: Դրանով է բացատրվում, որ ՀՀ կառավարությունը 2008 թ.-ին հաստատել է «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը», որը նպատակադրում էր մինչև 2015 թ.-ը ավագ նախադպրոցական տարիքային խմբի 5-6 տարեկանների ընդգրկվածությունը հասցնել մինչև 90 %-ի:²⁷⁴ Ընդ որում՝ հաշվի առնելով հատկապես աղքատ ընտանիքների երեխաների առավել ցածր ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում՝ ծրագրում առաջնայնությունը տրվում է աղքատ ընտանիքներին: Ավելացնենք, որ նախադպրոցական կրթական համակարգի անմխիթար վիճակը ՀՀ-ում ծանր է անդրադարձել ոչ միայն դպրոցական կրթության դրական զարգացումների վրա, այլ նաև ծննդաբերության վրա:

Չնայած ծրագրով նախատեսվել է 2015 թ.-ին նախադպրոցական կրթական համակարգում երեխաների ընդգրկվածությունը հասցնել 90 %-ի, 2008 թ.-ից մինչև 2011 թ.-ը այդ աճը եղել է ընդամեն-

²⁷⁴ Կրթություն. 2015, Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր, էջ 6:

ըն 1.7 %: Նշանակում է այդ ծրագիրը, որով 2015 թ.-ին այն պետք է հասցվեր 90 %-ի, անհավանական էր: Իրականությունն այն է, որ 2015 թ.-ին նախադպրոցական կրթական համակարգում երեխաների ընդգրկվածությունը հասավ ընդամենը 28.6 %-ի, քաղաքներում՝ 35.7 %-ի, իսկ գյուղերում՝ 16.6 %-ի²⁷⁵:

Սա նշանակում է, որ մարդկային կրթական կապիտալի կորուստները այսօր ևս Հայաստանում շարունակում են ռիսկային մնալ, և նրա մակարդակի բարձրացման իրական հնարավորությունները շատ փոքր են: Մարդկային կապիտալի որակական կորուստները կանխելու հիմքը նախադպրոցական կրթական մակարդակի անմխիթար վիճակի հաղթահարումն է, հատկապես գյուղական համայնքներում: Ընդ որում՝ բնակչության հարստության և եկամուտների խիստ բեռնացման և բնակչության շուրջ 30 % աղքատության պայմաններում, երբ նախադպրոցական կրթական համակարգը գործում է ընտանիքների մասնավոր վճարումներով, խիստ անհրաժեշտ է պետության օգնությունը՝ պետական բյուջեից հատկացվող սոցիալական տրանսֆերտների միջոցով: Այստեղից հետևում է, որ *«ՀՀ իշխանությունների, մասնավորապես ՀՀ կրթության նախարարության և մարզային համայնքների, առաջիկա խնդիրներն են մշակել և իրագործել կրթության զարգացման այս շար կարևոր սկզբնական օղակի՝ նախադպրոցական հասարակությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ:*


Հայաստանի Հանրապետությունում մրահոգող է դարձել նաև հանրակրթական համակարգում երեխաների ընդգրկվածության վիճակը: Ցավալի փաստ է, որ անգամ կառավարության համապատասխան օղակներում ընդունում են, որ «ամբողջական չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկվածության վերաբերյալ տվյալները»: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ Հայաստանում դպրոցից դուրս մնալու դեպքեր ոչ միայն կան, այլև տարեցտարի աճում են: Այդպես, 2002-2004 թթ.-ին դպրոց չհաճախող երեխաների ընդհանուր թիվը կազմել է համապա-

²⁷⁵ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 118:

տասխանաբար 1531, 4823 և 7630, իսկ դպրոց չհաճախելու դեպքերի ցուցանիշը՝ 0.3 %, 1.0 % և 1.6 %: Նշված երեք տարիների ընթացքում դպրոց չհաճախելու դեպքերի թվի աճը միջին հաշվով տարեկան կազմել է 250 %: Եթե այդ միտումը շարունակվի, ապա ապագան շատ մռայլ կդառնա:

Դպրոց չհաճախելու դեպքերն իրենց արտացոլումն են գտել նաև Հայաստանի Հանրապետության 2001 և 2011 թվականների մարդահամարի արդյունքներում: Այդպես, 2001 թ.-ի մարդահամարում արձանագրվել է, որ 2001 թ.-ին 108169 տղամարդ չուներ տարրական կրթություն, նրանցից ոչ տառաճանաչ են եղել 4581-ը: Կանանց մոտ 118264-ը չուներ տարրական կրթություն, նրանցից ոչ տառաճանաչ են եղել 6329-ը: Ընդ որում՝ կրթական մակարդակները քաղաքի և գյուղի կտրվածքներով էապես տարբերվում են: Քաղաքում 123638 հոգի չի ունեցել տարրական կրթություն, իսկ նրանցից ոչ տառաճանաչ են եղել 6339-ը, գյուղում տարրական կրթություն չի ունեցել 102815-ը, իսկ նրանցից ոչ տառաճանաչ են եղել 9864-ը:

2011 թ.-ի մարդահամարի նախնական արդյունքներում 15 և բարձր տարիքի ՀՀ մշտական բնակչության 21.7 %-ը հաշվառման պահի դրությամբ ունեցել են բարձրագույն և ավելի բարձր, իսկ 20.4 %-ը՝ նախնական և միջին մասնագիտական կրթություն: Ընդ որում՝ ուշադրության է արժանի մշտական բնակչության կրթական մակարդակի քաղաքային և գյուղական բաշխվածությունն ըստ ՀՀ 2011 թ.-ի մարդահամարի (6 և բարձր տարիքի հազար բնակչի հաշվով): Գծապատկեր 4.8-ը ցույց է տալիս, որ անգամ 2011 թ.-ին ՀՀ 15 և բարձր տարիքի մշտական բնակչությունը միայն միջնակարգ հանրակրթությամբ ունի բարձր՝ շուրջ 90 % ընդգրկվածություն: Ընդգրկվածությամբ երկրորդ տեղում է բարձրագույն և ավելի բարձր կրթական մակարդակը: Այստեղ, սակայն, գյուղական համայնքները շուրջ երեք անգամ զիջում են քաղաքայինին:



Փժապատկեր 4.8 Մշտական բնակչության կրթական մակարդակի քաղաքային և գյուղական բաշխվածությունը ըստ ՀՀ 2011 թ. մարդահամարի (6 և բարձր տարիքի հազար բնակչի հաշվով)²⁷⁶:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ այսօր քաղաքային և հատկապես գյուղական համայնքներում հազարավոր մարդիկ չունեն անգամ տարրական կրթություն: 2011 թ.-ի մարդահամարը նորից հաստատեց, որ Հայաստանի Հանրապետությունում, հատկապես գյուղական համայնքներում, առկա են անգրագետ կամ տարրական կրթություն չունեցող հազարավոր մարդիկ. մի իրողություն, որը հարի չէ 21-րդ դարի մարտահրավերներին:

Վերջին տարիների ՀՀ կրթության զարգացման իրավիճակների և միտումների մասին պատկերացում կարող ենք կազմել Աղյուսակ 4.35-ից: Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ չնայած 2008 թ.-ից մինչև 2015 թ.-ը նախադպրոցական հաստատությունների քանակը որոշ չափով ավելացել է (86-ով), այնուհանդերձ մտահոգիչ է երե-

²⁷⁶ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նախնական արդյունքները, Երևան, 2013, էջ 15:

խաների ցածր ընդգրկվածությունը, որը կազմել է 2008 թ.-ին 24.2 %, իսկ 2015 թ.-ին՝ 28.6 %: Ինչպես արդեն նշել ենք, վիճակը վատ է հատկապես գյուղերում, որը պետք է մտահոգի իշխանություններին, մասնավորապես, գյուղական համայնքներին, եթե ցանկանում ենք գյուղի կրթվածության մակարդակը բարձրացնել և աղքատությունը հաղթահարել:

Աղյուսակ 4.35. ՀՀ կրթության հիմնական ցուցանիշները տարեվերջին²⁷⁷

	2008 թ.	2009 թ.	2014 թ.	2015 թ.
Նախադպրոցական հաստատությունների քանակը	628	622	713	714
Դրանցում երեխաներ, 1000 երեխա	53.7	53.9	72.7	72.4
Տոկոսով համապատասխան տարիքի երեխաների թվաքանակից	24.2	23.3	28.7	28.6
Հանրակրթական դպրոցների քանակը	1475	1457	1437	1438
Դրանցում սովորողներ, 1000 մարդ	414.8	392.9	359.6	364.4
Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններ	28	46	44	44
Դրանցում սովորողներ, 1000 մարդ	4.6	5.6	7.3	6.9
Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	104	102	99	97
Դրանցում սովորողներ, 1000 մարդ	31.8	29.9	28.5	24.3
Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	90	77	62	60
Դրանցում ուսանողներ, 1000 մարդ	114.4	114.6	79.6	84.4
10000 բնակչի հաշվով	353.3	352.8	264.5	282.1

Հատկապես գյուղերում մտահոգիչ են մաս հանրակրթական դպրոցների քանակի և դրանցում սովորող աշակերտների թվի կրճատման միտումները: 2008-2015 թթ.-ի ժամանակահատվածում

²⁷⁷ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 120: Տե՛ս մաս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, Երևան, էջ 116-117: Տե՛ս մաս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 116-117:

հանրակրթական դպրոցների քանակը 1475-ից նվազել է մինչև 1438, իսկ դրանցում սովորող աշակերտների թիվը՝ 414.8 հազարից մինչև 364.4 հազար: Գյուղական վայրերում վիճակը տագնապալից է կրթության որակական բովանդակության տեսակետից, որը դրսևորվում է աշակերտների թվաքանակի մեծ կրճատումների պատճառով տարբեր դասարանները միացրած դասավանդելու, ինչպես նաև՝ քիչ թվով աշակերտ լինելու պատճառով որոշ գյուղերի դպրոցները փակելու և երեխաների կրթությունը հարևան գյուղերում կազմակերպելու մեջ:

Ինչ վերաբերում է Աղյուսակ 4.38-ում ներկայացված բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակի կրճատմանը (դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ բուհերի թիվը 90-ից դարձել է 74), դա բնական գործընթաց է՝ կապված համապատասխան մակարդակ չունեցող մասնավոր բուհերի փակման հետ:

Հանրակրթական դպրոցներում 2012-2013 ուս. տարում Հայաստանում սովորել է 368.708 աշակերտ, որոնց 48 %-ը աղջիկներն են: Դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 89.2 %: 2015-2016 ուս. տարում աշակերտների թիվը կրճատվել է՝ հասնելով 364.398-ի (Աղյուսակ 4.36), որի հիմնական պատճառներից են բնակչության շարունակվող արտագաղթը և ծնելիության ցածր մակարդակը:

Աղյուսակ 4.36. Հանրակրթական դպրոցների աշակերտների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2015-2016 ուս. տարում²⁷⁸

	Պետական դպրոցներ			Ոչ պետական դպրոցներ			Ընդամենը		
	կիժու	տևս	նյութուն	կիժու	տևս	նյութուն	կիժու	տևս	նյութուն
ք. Երևան	53245	57921	111166	2981	3675	6656	56226	61596	117822

²⁷⁸ Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, Երևան, 2016, էջ 158:

Արագածոտն	8099	9256	17355	-	-	-	8099	9256	17355
Արարատ	15540	16925	32465	-	-	-	15540	16925	32465
Արմավիր	15355	17974	33329	199	203	402	15554	18177	33731
Գեղարքունիք	13435	15698	29133	-	-	-	13435	15698	29133
Լոռի	14249	15376	29625	-	-	-	14249	15376	29625
Կոտայք	16532	18123	34655	42	57	99	14479	16191	30670
Շիրակ	14324	15941	30265	155	250	405	8005	8472	16477
Սյունիք	8005	8472	16477	-	-	-	8005	8472	16477
Վայոց ձոր	2967	3406	6373	-	-	-	2967	3406	6373
Տավուշ	7776	8098	15874	68	51	119	7844	8149	15993
Ընդամենը ՀՀ	169527	187190	356717	3443	4236	7681	172972	191426	364398

Մարզային կտրվածքով հանրակրթական դպրոցների ոլորտում ևս առկա են անհամաչափության վիճակներ և դրանց հաղթահարման խնդիրներ: Դա, մասնավորապես, վերաբերում է դպրոցների հեռավորությանը և, դրանով պայմանավորված, երթևեկության ծախսերի աճին, ժամանակի կորստին և այլ անհարմարություններին: Դպրոցների աշակերտների թվաքանակով, բնականաբար, առաջին տեղում է Երևանը. 2015-2016 ուս. տարում սովորել է 117822 աշակերտ, ամենավտորաթիվը Վայոց ձորի մարզի աշակերտներն են՝ ընդամենը 6373:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքներով, եթե ոչ աղքատ տնային տնտեսություններում ավագ դպրոցներում ընդգրկվածությունը կազմել է 73.0 %, ապա աղքատ տնային տնտեսություններում՝ 70.0 %, իսկ ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում՝ ընդամենը 51.0 %: Այդ նույն հետազոտության նյութերով ընդհանրապես կրթության ոլորտում, դժբախտաբար, առկա են կոռուպցիոն ռիսկերը, որը հատ-

կապես աղբատ ընտանիքների երեխաներին հոգեբանական ծանր վիճակի մեջ է դնում:

2007-2008 թթ.-ին հանրապետության ողջ տարածքում, բոլոր մարզերում 6129 տնային տնտեսությունների հետազոտության արդյունքներով բնակչության կրթական մակարդակների պատկերը ներկայացված է Աղյուսակ 4.37-ում: Աղյուսակից հետևում է, որ հետազոտված տնային տնտեսությունների անդամների 1.2 %-ն ունի տարրական կրթություն (չունի տարրական կրթություն միայն 0.3 %-ը), 4.5 %-ը՝ թերի միջնակարգ կրթություն, 29.5 %-ը՝ միջնակարգ, 16.0 %-ը՝ միջին մասնագիտական, 10.2 %-ը՝ թերի բարձրագույն, 34.1 %-ը՝ բարձրագույն, 0.7 %-ը՝ հետբուհական, 0.6 %-ը՝ գիտական կոչում:

Աղյուսակ 4.37. Տնային տնտեսությունների անդամների կրթական մակարդակը 2007-2008 թթ.²⁷⁹

	Պատասխանների թիվը	Ճշգրտված տոկոսը	Գումարային տոկոսը
Չունի տարրական կրթություն	66	0.3	0.3
Տարրական	230	1.2	1.5
Թերի միջնակարգ	898	4.5	6.0
Միջնակարգ	5882	29.5	35.4
Նախամասնագիտական	603	3.0	38.5
Միջին մասնագիտական	3192	16.0	54.4
Թերի բարձրագույն	2045	10.2	64.7
Բարձրագույն	6811	34.1	98.8
Հետբուհական	130	0.7	99.4
Գիտական կոչում	113	0.6	100
Ընդամենը	19970	100	-

Այդ նույն հետազոտության արդյունքներով, ըստ տարիքային խմբերի, կրթական մակարդակները բաշխվում են հետևյալ կերպ. 16-

²⁷⁹ Գ. Ղարիբյան, Գ. Եգանյան, Ա. Համբարձումյան, Ա. Խառատյան, Կ. Ավետիսյան, Մ. Շղիազարյան, Ա. Մարտիրոսյան, Գ. Միրոյան, Հ. Մկրտչյան, ՀՀ աշխատաշուկայի վերլուծություն (գիտահետազոտական աշխատանք), Երևան, 2010, էջ 14:

24 տարեկանների 29.0 %-ն ունի միջնակարգ կրթություն, 8.6 %-ը՝ միջին մասնագիտական, 28.3 %-ը՝ թերի բարձրագույն, 27.0 %-ը՝ բարձրագույն: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ, չնայած Հայաստանի Հանրապետությունից շուրջ մեկ միլիոն աշխատունակ բնակչության (այդ թվում՝ նաև որակավորված աշխատուժի) արտագաղթին, 2007-2008 թթ.-ին Հայաստանում 25-34 տարեկանների 40.6 %-ը ուներ բարձրագույն և 28.4 %-ը՝ միջին մասնագիտական կրթություն, 6.0 %-ը՝ գիտական կոչումներ, իսկ 7.0 %-ը՝ հետբուհական կրթություն: Աշխատուժի այդպիսի մեծ ներուժի առկայությունը պարտավորեցնում է բարձր արդյունավետությամբ իրացնել ռեսուրսները և հնարավորությունները, որը, ցավոք, երկրում ստեղծված տնտեսական ու սոցիալական բացասական զարգացումներում հնարավոր չէ կատարել:

Հայաստանի բնակչությունն անգամ 1990-ական թվականների ամենածանր տարիներին կրթության նկատմամբ ունեցած իր գեներտիկ որակները չկորցրեց, իր բոլոր հնարավորությունները, խնայողությունները անմնացորդ ներդրեց երեխաների կրթության գործին: Ոչ միայն շարունակեցին լիարժեք գործել խորհրդային բուհերը, այլև դրանց կողքին կայացան տասնյակ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնք, իրենց բոլոր թերություններով հանդերձ, դպրոցն ավարտած երեխաներին հնարավորություն տվեցին ստանալու գիտելիքներ: Միայն դրանով է բացատրվում, որ, չնայած շուրջ մեկ միլիոն, հիմնականում բարձր որակավորման աշխատուժի արտագաղթին, 2007-2008 թթ.-ին ՀՀ-ում 25-34 տարեկանների 40.6 %-ն ուներ մասնագիտական բարձրագույն կրթություն: Այդ արդյունքները չէինք ունենա, եթե Հայաստանում կրթության զարգացման ոլորտում պետության և հատկապես բնակչության կողմից ներդրումներ չկատարվեին:

Մարդկային կրթական կապիտալում պետական և մասնավոր ներդրումները հնարավոր դարձրին ցանկալի վիճակում պահելու ՀՀ-ի հատկապես բարձրագույն կրթական համակարգը, որն իր արտացոլումն է գտել Աղյուսակ 4.38-ի տվյալներում:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ-ն 2000-2010 թթ.-ին ուներ բուհերի լայն ցանց (74-90 բուհ): Չնայած 2004 թ.-ից սկսված բուհերի քանակի նվազելու միտմանը, առկա էր ուսանողների թվաքանակի աճի: 2000 թ.-ից մինչև այժմ գերակշռում է վճարովի կրթությունը: Դա նշանակում է, որ կրթական ոլորտում հիմնական ներդրումներ կատարողները՝ տնային տնտեսությունները, մասնավոր ներդրողներն են:

Աղյուսակ 4.38. ՀՀ բուհերը նկարագրող որոշ ցուցանիշների դինամիկ շարժերը 2000-2010 թթ.-ին²⁸⁰

Տարեթիվը	Պետական և ոչ պետական բուհերի քանակը	Ուսանողներ, հազ. մարդ	Ընդունվել են ուսանողներ	Պատրաստվել են մասնագետներ
2000	90	60,7	15,5	9.7
2001	91	65,6	18.2	10.2
2002	92	72.3	20.5	10.6
2003	93	77.9	21.5	11.7
2004	88	85.1	23	12.3
2005	89	97.8	24.8	13.3
2006	87	105.8	85.6	15,5
2007	85	112.2	26.2	17.9
2008	90	114.4	27.7	26.1
2009	77	114.6	26.5	23.3
2010	74	111	26.4	23.9

Մակրոմակարդակում իրականում առկա են սոցիալական լարվածության զարգացումներ: Խոսքը վերաբերում է այն ընտանիքներին, մասնավորապես 30 % աղքատներին, որոնք կրթություն ստանալու ներդրումների համար միջոցներ չունեն:

2012 թ.-ի փետրվարի 21-ի իր ելույթում ՀՀ վարչապետն ասել է. «Սոցիալական անհավասարությունը ծնվում է երկու պատճառով՝


²⁸⁰ 3. Սուվարյան, Վ. Հարությունյան, Վ. Սարգսյան, Վ. Խաչատրյան, Գիտական համակարգը և տնտեսական զարգացումը, Երևան, 2011, էջ 42:

կրթության և աշխատատեղերի անհասանելիության պատճառով: Այսօր անապահով ընտանիքների երեխաների միայն 10 %-ն է ընդունվում բուհ: Պետությունը պարտավոր է միջամտել և լուծել այս խնդիրը: Անապահովների համար ստեղծվելու են կրթություն ստանալու արտոնյալ պայմաններ՝ կրթությունը հասանելի դարձնելու համար»: ՀՀ կառավարությունը, իհարկե, որոշակի քայլեր ձեռնարկել է նշված խնդիրը լուծելու ուղղությամբ, սակայն անելիքներ դեռ շատ կան:

Ինչ վերաբերում է բարձրագույն կրթության զարգացումներին, ապա այն ունի հետևյալ պատկերը: Բնակչության կրթական մակարդակի մասին ամենահավաստի տեղեկություն է տալիս մարդահամարը: Ըստ ՀՀ 2011 թ.-ի մարդահամարի արդյունքների՝ մարդահամարի հաշվառման պահին 15 և բարձր տարիքի ՀՀ բնակչության 96.8 %-ն ունեցել է բարձրագույն, միջին և նախնական մասնագիտական, միջնակարգ և հիմնական կրթություն: 2011 թ.-ի մարդահամարի արդյունքով՝ 15 և բարձր տարիքի Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության 21.7 %-ը հաշվառման պահի դրությամբ ունեցել է բարձրագույն և ավելի բարձր, իսկ 20.4 %-ը՝ նախնական միջին մասնագիտական կրթություն:²⁸¹

Ուշադրության է արժանի այն իրողությունը, որ 2001 և 2011 թթ.-ի մարդահամարների համաձայն՝ բարձրագույն կրթություն ունեցող ամբողջ բնակչության մեջ Հայաստանում գերակշռում է կանանց բաժինը:

²⁸¹ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նախնական արդյունքները, Երևան, 2013, էջ 14:



Պատկեր 4.9 Բարձրագույն կրթություն ունեցող կանանց և տղամարդկանց հարաբերությունն ըստ 2001 և 2011 թթ. մարդահամարների (%)

Ակնհայտ է նաև բարձրագույն կրթություն ունեցող կանանց տեսակարար կշռի աճի միտումը: Դա պայմանավորված է սոցիալ-տնտեսական և հոգեբանական բնույթի գործոններով: Բարձրագույն կրթական համակարգում վերջին քսանհինգ-երեսուն տարիներին նկատելի է տղա ուսանողների նկատմամբ աղջիկ ուսանողների ուսումնական առաջադիմության բարձրացման միտումը:

Ուշադրության է արժանի Հայաստանի մշտական բնակչության կրթական մակարդակի քաղաքային ու գյուղական բաշխվածությունը: Ըստ ՀՀ 2011 թ.-ի մարդահամարի՝ 6 և բարձր տարիքի հազար բնակչի հաշվով այն ունի հետևյալ պատկերը. «չունի տարրական», «տարրական հանրակրթական», «հիմնական հանրակրթական», «միջնակարգ հանրակրթական» կրթածներով գյուղական բնակչությունը գերազանցում է քաղաքայինին, իսկ «միջին մասնագիտական», «բարձրագույն» և «հետբուհական» կրթածներով գերազանցում է քաղաքայինը: Դա բացատրվում է հետևյալ երկու պատճառներով: Առաջինը անցումն էր վճարովի բարձրագույն կրթական համակարգին: Գյուղական բնակչությունը վերջին 20 տարիներին ավելի շատ աղքատացավ և բարձրագույն կրթության ժամանակակից բավականին բարձր ուսման վարձերի համար դարձավ անվճարունակ: Դա վերաբերում է հատկապես բարձր լեռնային և սահմանամերձ

գյուղերին: Երկրորդ պատճառը գյուղական դպրոցների ցածր մակարդակն է, որի արդյունքում գյուղից դիմորդները մրցույթով դժվար են ընդունվում բուհեր: Աշխատանքի շուկայում ունեցած ցածր մրցունակությունը գյուղի երիտասարդության արտագաղթի պատճառներից մեկն է:

Այդ վիճակը, այսինքն՝ գյուղական բնակչության բարձրագույն կրթությունից օգտվելու սակավ հնարավորությունները էլ ավելի են մեծացնում սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերի բնակչության աղքատությունը և դժվարացնում այն հաղթահարելու ծրագրի իրականացումը: Աղքատության հաղթահարման հիմնական ճանապարհը կրթությունն է, բարձրագույն, որակյալ կրթությունը, որից, սակայն, գյուղը քիչ է օգտվում և դրանով իսկ դժվարացնում աղքատությունը հաղթահարելու պայքարը: *Ուստի անհրաժեշտ է այդ տիպի գյուղերի համար սահմանել սոցիալական այնպիսի հավասարի արտոնություններ, որ հնարավոր դարձնի կրթական կապիտալի գյուղ թափանցումը, և գյուղը փրկվի:*

Ինչ վերաբերում է բարձրագույն կրթության զարգացման խնդիրներին, դրանք շատ են ու բազմաբնույթ: Բացարձակ ճշմարտություն է, որ բարձրագույն կրթության մակարդակը շատ գործոններով է պայմանավորված, որոնց մեջ, սակայն, հիմնական գործոնը դասախոսների որակական մակարդակն է: Այդ ցուցանիշներով ՀՀ-ը նորմալ վիճակում է գտնվում, սակայն կան մաս լուծում պահանջող խնդիրներ:

Նախ ծանոթանա՞նք դասախոսների թվաքանակի և նրանց ուսումնագիտական ներուժի հետ:

Աղյուսակ 4.39 . Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվաքանակը բարձրագույն ուսումնական հաստատություններում (ուսումնական տարվա սկզբին - մարտ)²⁸²

	2008/09	2009/10	2010/11	2014/15	2015/16
Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվաքանակը ընդամենը (հաստիքային)	8283	8396	8843	7913	7947
Նրանցից ունեն գիտական աստիճան					
Գիտությունների դոկտոր	663	627	625	681	683
Գիտությունների թեկնածու	3269	3231	3391	3247	3352
Գիտական կոչում					
Ակադեմիկոս	41	40	36	26	32
Պրոֆեսոր	713	724	719	782	787
Դոցենտ	2357	2390	2485	2418	2507

Ինչպես նկատում ենք Աղյուսակ 4.39-ից, Հայաստանում պրոֆեսորադասախոսական անձնակազմը զարգացած բարձրագույն դպրոցի պահանջներով բավարար մակարդակ ունի: Ուստի ՀՀ բարձրագույն դպրոցի խնդիրները հիմնականում պայմանավորված են այլ գործոններով, մասնավորապես բարձրագույն կրթություն ստանալու հետ կապված մեծ ծախսերով: Դա վերաբերում է հատկապես շուրջ 30 % կազմող աղքատ բնակչությանը: ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2012 թ.-ին մեր հանրապետությունում անապահով ընտանիքների երեխաների միայն 10 %-ն է ընդունվել բուհ: Բացի այդ, երբ ընտանիքի ղեկավարը չունի բարձրագույն կրթություն, ընտանիքների 60 %-ն աղքատ է²⁸³: Անապահով ըն-

²⁸² Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 128: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 131:

²⁸³ www.aravot.am/2012/02/02/33909

տանիքների երեխաների համար կրթության անհասանելիությունը աղքատությունը վերարտադրելու պատճառներից մեկն է:

Ըստ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների՝ 2013 թ.-ին բարձրագույն կրթական հաստատություններում 18-22 տարիքային խմբի բնակչության ընդգրկվածությունը կազմել է 37 %, ոչ աղքատներինը՝ 44 %, աղքատներինը՝ 25 %, իսկ ծայրահեղ աղքատներինը՝ ընդամենը 10 %:²⁸⁴ 2015 թ.-ին այդ ցուցանիշների աճ է գրանցվել բոլոր սոցիալական խմբերում: Դրանք համապատասխանաբար կազմել են՝ 47 %, 51 %, 39 % և 18 %: Բարձրագույն կրթական հաստատություններում համախառն ընդգրկվածությունն ամենաաղքատ քվինտիլում կազմել է 30 %, երկրորդում՝ 42 %, երրորդում՝ 34 %, չորրորդում՝ 45 % և ամենահարուստ հինգերորդում՝ 78 %:²⁸⁵


Ինչպես տեսնում ենք, չնայած բարձրագույն կրթական հաստատություններում 18-22 տարիքային խմբի բնակչության ընդգրկվածության աճի միտումին, ամենավոքոր ընդգրկվածությունն ունեն աղքատները: Դա այն դեպքում, երբ բարձրագույն կրթությունը ամենից շատ աղքատ ընտանիքներին է պետք որպես աղքատությունը հաղթահարելու ամենաարդյունավետ միջոց: Ճիշտ է, վերջին տարիներին կրթության և գիտության նախարարությունը բարձր առաջադիմությամբ սովորող որոշ աղքատ ուսանողների կրթության վարձը զեղչում է, կամ այդ վարձը վճարում են որոշ բարեգործներ և բարեգործական կազմակերպություններ, սակայն դրանք խնդիրը չեն լուծում: Գիտակրթված մարդկային կապիտալի վերարտադրության և աղքատությունը ՀՀ-ում հաղթահարելու երկու շատ կարևոր խնդիրները լուծելու հուսալի ուղին երկրի պետական բյուջեի շատ ավելորդ ծախսերը (մասնավորապես ուռճացած կառավարման ծախսերը) կրճատելու ճանապարհն է և այդ միջոցներով բարձրագույն դպրոցում անվճար կրթության մասնաբաժնի աճը:

ՀՀ-ում մարդկային կապիտալի որակական կորստի ընդհանուր պատկերն է աղքատությունը, որը 30.0 %-ի սահմանագծից վերջին

²⁸⁴ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2013, էջ 170:

²⁸⁵ Նույն տեղում:

Ժամանակահատվածում գրեթե չի իջնում: Այդ ծանր աղքատությունը, որը 20 տարուց ավելի է, ինչ կաթվածահար է անում մեր ողջ հասարակական, տնտեսական ու բարոյահոգեբանական և սոցիալական կյանքը, ընկած է 1990-ական թվականներից սկսած մեր իշխանությունների խղճին: Այն ոչ միայն ծնում է արտագաղթ և բացահայտ կրճատում մարդկային կապիտալը, այլև դրա հետ միաժամանակ կրթական համակարգում, մասնավորապես բարձրագույն մասնագիտական կրթական համակարգում, էապես կրճատում է բնակչության ընդգրկվածությունը և դառնում մարդկային կապիտալի նաև որակական մեծ կորուստների պատճառ: Ըստ պաշտոնական աղբյուրների՝ կրթական համակարգում աղքատների ընդգրկվածության ցուցանիշը 2000-ական թվականներին 5.4, իսկ ծայրահեղ աղքատներից գրեթե 8 անգամ ցածր էր ոչ աղքատ բնակչության ցուցանիշից, որի մասին է վկայում ստորև բերվող գծապատկերը 3.2.2 -ը:



Գծապատկեր 4.10 Համախառն ընդգրկվածությունը մասնագիտական կրթական ծրագրերում ըստ աղքատության խմբերի

2001 թ.-ից սկսած՝ Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական համակարգում չնայած ուսանողների ընդգրկվածության ցուցանիշները աճել են, սակայն 2006 թ.-ին աղքատների ընդգրկվածությունը կազմել է ընդամենը 38.0 %:

Մասնագիտական, մասնավորապես բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական համակարգերում աղքատ բնակչության մասն ցածր ընդգրկվածությունը հետևանք է մի շարք պատճառների: Դրանք են.

ա) ուսման բարձր վարձավճարները, որ չեն կարող վճարել աղքատները,

բ) դպրոցում ժամանակակից ուսումնառության համակարգում լրացուցիչ վճարելու հնարավորություն չունենալու պատճառով մասնավոր պարապմունքների չհաճախելը, որը, անշուշտ, իջեցնում է աշակերտների կրթական մակարդակը,

գ) ընդունելության քննություններին կրկնուսույցների մոտ չնախապատրաստվելը (վճարելու հնարավորություն չունենալու պատճառով),

դ) ինքնին հասկանալի է, որ աղքատ խավը գրկված է հատուկ արտոնյալ կամ կոռուպցիոն մոդելներով ընդունվելու բոլոր հնարավորություններից:

Աղքատ ընտանիքները սովորաբար բազմանդամ, հատկապես շատ երեխաներ ունեցող ընտանիքներն են: Սոցիալական մեծ ծրագրեր կիրառող հարուստ երկրներում պետությունը լրացուցիչ ծնվող երեխայի համար խոշոր հատկացումներ է կատարում, բարձր նպաստներ է վճարում, և շատ երեխաներ չեն դառնում ընտանիքի աղքատության պատճառ: ՀՀ-ում ևս երեխայի ծննդյան կապակցությամբ տրվում է միանվագ նպաստ, որի փոքր չափերը չեն կարող լուծել խնդիրը:

2013 թ.-ի ՀՀ կառավարության մայիսի 16-ի № 515 ծրագրում նշված է. «...Աղքատությունն ու գործազրկությունը ոչ թե ճակատագիր են, այլ ամենօրյա աշխատանքով հաղթահարվող դժվարություն: Յուրաքանչյուրը պետք է համոզված լինի, որ իր զավակների ապագան ավելի ապահով և լավն է լինելու հայրենիքում, քան օտար ափերում..., կրթությունը դառնալու է աղքատության դեմ պայքարի մեր հիմնական գեները: Յուրաքանչյուր ոք կստանա որակյալ կրթություն և բժշկական օգնություն և սպասարկում՝ անկախ բնակության վայրից, հանրային դիրքից և եկամտի չափից: Բայլեր կձեռնարկվեն մի-

ջին մասնագիտական կրթության ոլորտն ընդլայնելու ուղղությամբ, անապահով ընտանիքի երեխաները կունենան անվճար ուսում ստանալու հնարավորություն»:

ՀՀ կառավարության ծրագրում որոշակիորեն նշված է աղքատության հաղթահարման և որակյալ կրթության զարգացման փոխադարձ կապի և այդ խնդիրների միաժամանակյա լուծելու հիմնախնդիրը: Ընդգծված է, որ կրթությունն ու աշխատանքն են սոցիալական բարդ խնդիրների, այդ թվում՝ և մարդկային կապիտալի կորուստները կանխելու գլխավոր ու որոշիչ ուղին: Ուստի կրթության զարգացումը ոչ միայն մարդկային կապիտալի կորուստների կանխման ուղղակի միջոց է, այլ նաև աղքատության հաղթահարման միջոց:

Կրթության ոլորտում ամբողջ աշխարհում մեծանում է պետության տնտեսական ու սոցիալական դերը: Սակայն ՀՀ ներկա զարգացումների տեմպերով բարձր արդյունքների դժվար է հասնել: Պետական և համայնքային բյուջեներից ծախսումների բաժինը կրթության ոլորտում ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 2007 թ.-ին 3.1 %, 2008 թ.-ին՝ 3.2 %, 2009 թ.-ին՝ 3.9 %, 2010 թ.-ին՝ 3.6 %²⁸⁶: Չնայած կրթության պետական ծախսերի բաժինը ՀՆԱ-ի նկատմամբ 2003 թ.-ի համեմատությամբ 2015 թ.-ին աճել է և 2.1 %-ից հասել 3.2 %-ի,²⁸⁷ սակայն դեռևս համաշխարհային մակարդակից շատ ցածր է: Սիջին եկամուտ ունեցող երկրներում այդ ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 4.5 %-ը և կառավարության ընդհանուր ծախսերի 14.2 %-ը, իսկ բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ համապատասխանաբար 5.1 %-ը և 12.5 %-ը:

Հայաստանի Հանրապետության կառավարության ընդունած 2013 թ.-ի մայիսի 16-ի ծրագրում մեծ տեղ է հատկացված կրթության զարգացման համալիր խնդիրների լուծմանը: Ընդ որում՝ դրանք դիտարկվում են ինչպես սոցիալական լուրջ խնդիրների, մասնավորապես աղքատության հաղթահարման հարթակում, այնպես էլ մարդ-

²⁸⁶ Պարենային ապահովություն և աղքատություն, 2011 թ.-ի հունվար-դեկտեմբեր, Երևան, 2011, էջ 17-18:

²⁸⁷ Նույն տեղում:

կային կապիտալի և ընդհանրապես մարդկային զարգացման հարաբերություններում: Եվ դրա հիմքերը կան, քանի որ կրթության ոլորտում հանրակրթության կարևոր ցուցանիշի գծով վերջին տարիներին ունեցել ենք նվաճումներ: Այսպես, 2003 թ.-ից սկսած՝ «Քվանտ» վարժարանի սաները միջազգային օլիմպիադաներում մվաճում են ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներ ինֆորմատիկա, աստղագիտություն, մաթեմատիկա առարկաներից: Երևանի պետական համալսարանը ներկայացնող ուսանողների թիվը 2016 թ.-ին մվաճեց ոսկե մեդալ մաթեմատիկայի միջազգային ուսանողական օլիմպիադայում: Իր արդյունքներով թիվը 2016 թ.-ին գերազանցեց Քենթրիջի համալսարանի թիմին: Սակայն, ամբողջությամբ վերցրած, առաջիկայում ՀՀ կրթական ոլորտի առաջ կանգնած են լուրջ մարտահրավերներ: Հայաստանը 133 երկրների շարքում տարրական կրթությունից բավարարվածության 3.3 ցուցանիշով զբաղեցնում է ընդամենը 81-րդ, իսկ կրթության համակարգի որակի ցուցանիշով՝ 105-րդ տեղը:

ՀՀ կառավարության ծրագրում նշված է, որ առաջիկայում նախատեսված է ապահովել որակյալ կրթական ու մշակութային ծառայությունների մատչելիությունը: «Բուհերը պետք է դառնան ժամանակակից հասարակության հենքը՝ միավորելով գիտությունը, դասավանդումը և նորարարական արտադրությունը».

- անվճար կրթություն է ապահովվելու սոցիալապես անապահով խավերի համար,
- ընդլայնվելու է նախադպրոցական կրթության հասանելիությունը,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բոլոր խոցելի խմբերի երեխաներին ընձեռվելու են որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորություններ,
- բուհերում սահմանվելու է ուսումնական վարձի վերին շեմ,
- առաջնային ուշադրություն է դարձվելու հայագիտության զարգացմանը:

Կրթության զարգացման ՀՀ կառավարության ծրագրային հիմնադրույթներն իրենց մասնավորեցումն ու կենսագործման ուղենիշները գտան «Կրթություն 2015» ՀՀ կրթության զարգացման 2011-

2015 թվականների պետական ծրագրում: Մասնավորապես, կրթությունը դիտվում է որպես «Հայաստանի մրցակցային հիմնական առավելություն»: Սահմանվում է մինչև 2015 թ.-ը բոլոր մակարդակներում բարձրացնել կրթության մատչելիությունը, հատկապես աղքատ ընտանիքների երեխաների ընդգրկվածությունը 2010 թ.-ի նկատմամբ բարձրացնել 20.2 %-ով՝ ապահովելով դպրոցին նախորդող տարում երեխաների 90 % ընդգրկվածություն, տարրական և միջին դպրոցում համախառն ընդգրկվածությունը հասցնել 99 %-ի, բարելավել կրթության որակը՝ այն համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին, պետական բյուջեից կրթությանը տրվող միջոցների մակարդակը հասցնել մինչև ՀՆԱ-ի 4.0 %-ի:

Մեր կարծիքով՝ ՀՀ կառավարության և «Կրթություն 2015» ծրագրերի ուշադրության արժանի հիմնադրույթները առավել արդյունավետ արդյունքներ կունենային, եթե չլինեին մի շարք բացթողումներ: *Սեռային և տարածքային կրթական մակարդակների առկա տարբերությունների հաղթահարմանը գյուղ-քաղաք կյրվածքով:* Բոլոր մարզերում, հատկապես սահմանամերձ ու բարձր լեռնային գյուղերում, սկսած նախադպրոցական կրթությունից ու վերջացրած բարձրագույն կրթությամբ, գյուղը ահավոր չափերով զիջում է քաղաքին, հատկապես Երևանին: *Կոնկրետ ինչ ուղիներով պետք է լուծվեն սոցիալական այդ լուրջ խնդիրները, ծրագրերում բացակայում են:* Ցանկալի էր՝ քննարկվեին նաև կրթության և աշխատաշուկայի փոխադարձ հարաբերության հարցերը: Միայն որակյալ մասնագետ պատրաստելը, առանց աշխատաշուկայի պահանջարկի հաշվառման, չի կարող երաշխավորել շրջանավարտին իր մասնագիտությամբ աշխատելը:

Հայաստանի ազգային անվտանգության զարգացման ու ապահովման տեսակետից աններելի են գյուղերում, հատկապես սահմանամերձ ու բարձր լեռնային գյուղերում դպրոցների փակումը և միավորումը (մի քանի գյուղերի համար):

4.3 Գործազրկությունը՝ որպես մարդկային կապիտալի որակական կորուստ, և դրա կանխման ուղիները

Մարդկային կապիտալի որակական հատկանիշների զարգացմանը նպաստում է աշխատանքը ձեռնարկությունում, որտեղ կուտակվող փորձի միջոցով կատարելագործվում են մարդու հմտությունները: Մարդկային կապիտալի որակական վերարտադրության այդ առանձնահատկությունը հստակորեն բացահայտվել և շարադրվել է Ա. Սմիթի և Կ. Մարքսի կողմից: Ընդ որում՝ արտադրության ոլորտում, աշխատանքի գործընթացում Մարքսը կարևորում է մարդկային կապիտալի մաշվածքի և վերարտադրության առանձնահատկությունները: Նշելով, որ մեռյալ կապիտալները ոչ միայն մաշվում ու արժեզրկվում են, այլև նրանց առկա մասսայի մի խոշոր մասը տեխնիկայի անընդհատ առաջադիմության շնորհիվ այնքան սաստիկ է հնանում, որ կարճ ժամանակում կարող է փոխարինվել նոր, ավելի կատարելագործված մեքենաներով: Մարքսը բացահայտել է նաև աշխատուժի՝ մարդու գործազուրկ վիճակի բացասական անդրադարձը նրա որակի, օգտակար հատկությունների՝ սպառողական արժեքի վրա: Նրան է պատկանում այն ձևակերպումը, որ մարդ մեքենաները անգործ վիճակում ժանգոտում են, որքան էլ նրանց յուրքսեն կամ թե շփեն:

Գործազրկության խնդիրը մտահոգել է նաև բազմաթիվ այլ տնտեսագետների: Այդ խնդրի լուծման համար կան բազմաթիվ տեսություններ, մասնավորապես՝ ավելցուկային բնակչության (մալթուսականություն), տեխնիկական առաջադիմության և շուկայական պահանջարկի անբավարարվածության (քեյնսականություն), արդյունավետ աշխատավարձի:

Գործազրկությունը մարդկային կապիտալի որակական կորուստ է, քանի որ մարդը, կորցնելով աշխատանքը, անգործ վիճակում կորցնում է աշխատուժի իր որակական հատկանիշները, մասնագիտացման մեջ խորանալու, հմտանալու և ընդհանրապես աշխատանքի արտադրողականության բարձրացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական և բարոյահոգեբանական խթանիչ

գործոնները: Ավելին, մարդկային կապիտալի կորուստները դրսևորվում են նաև մարդու ոչ մասնագիտությամբ աշխատելու և թերզբաղվածության պայմաններում: Այդ պատճառով անդրադառնանք զբաղվածության, գործազրկության և դրանց դրսևորման ձևերի գնահատումներին և զարգացումներին: Ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության մեթոդաբանության՝ զբաղված են համարվում անձիք, որոնք հետազոտվող շաբաթում.

- կատարել են վարձու կամ ոչ վարձու աշխատանք՝ անկախ այն հանգամանքից, թե աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր կամ սեզոնային, միանգամյա կամ պատահական, նույնիսկ եթե այդ աշխատանքը հետազոտվող շաբաթվա ընթացքում կազմել է ընդամենը մեկ ժամ,
- տարբեր պատճառներով ժամանակավորապես բացակայել են աշխատանքից,
- զբաղված են եղել տնային կամ գյուղացիական տնտեսությամբ, իսկ թողարկված արտադրանքը նախատեսված է եղել կամ մասնակի իրացման, կամ բացառապես սեփական վերջնական սպառման համար:

Վարձու աշխատող են համարվում այն անձիք, որոնք աշխատում են գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա և ստանում են դրամական կամ բնեղեն փոխհատուցում՝ աշխատավարձի տեսքով:

Ոչ վարձու աշխատող են համարվում մարդիկ, որոնք ինքնուրույն իրենց ապահովում են եկամտաբեր գործունեությամբ:

Զբաղվածության մակարդակը զբաղվածների տեսակարար կշիռն է աշխատանքային ռեսուրսներում:

Գործազուրկ են այն մարդիկ, որոնք.

- չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք,
- ակտիվորեն փնտրել են աշխատանք վերջին չորս շաբաթվա ընթացքում,
- պատրաստ են եղել անցնել աշխատանքի երկու շաբաթվա ընթացքում:

Գործազրկության մակարդակը գործազուրկների տեսակարար կշիռն է տնտեսապես ակտիվ բնակչության մեջ: Տնտեսապես ակտիվ բնակչությունը զբաղվածների և գործազուրկների գումարն է:

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության մեջ ներառվում են ան-
ձինք, որոնք հետազոտվող ժամանակաշրջանում չեն եղել զբաղված
կամ գործազուրկ:

Տնտեսական ակտիվության մակարդակը տնտեսապես ակտիվ
բնակչության տեսակարար կշիռն է աշխատանքային ռեսուրսներ-
ում:²⁸⁸

Նշված մեթոդաբանությամբ Հայաստանի Հանրապետությու-
նում աշխատանքային ռեսուրսների՝ մարդկային կապիտալի զբաղ-
վածության և գործազրկության զարգացումները և դրանցից բխող
խնդիրները դիտարկենք Հայաստանի վիճակագրական տարեգրքե-
րի, 2001 և 2011 թվականների մարդահամարների և այդ խնդիրներով
կատարված գիտական հետազոտությունների նյութերով, մասնավոր-
ապես, 2010 թ.-ին հրատարակված «ՀՀ աշխատանքի շուկայի վեր-
լուծություն (գիտահետազոտական աշխատանք)» նյութերով, որը
կատարվել է ՀՀ ԿԲ-ի հայտարարած մրցույթի դրամաշնորհով²⁸⁹:
Այդ նյութերը հիմք ընդունելով՝ մենք աշխատում ենք զբաղվածու-
թյան ոլորտում մարդկային կապիտալի որակական կորուստները դի-
տարկել գործազրկության, ոչ մասնագիտությամբ աշխատելու և
թերզբաղվածության զարգացումներում:

ՀՀ-ում աշխատունակ բնակչության մասսայական գործազրկու-
թյան սկիզբը, անշուշտ, 1988 թ.-ի երկրաշարժն էր: Դրանց ավելա-
ցան հազարավոր աղետյալ գաղթականները, որոնք ավելի մեծացրին
լարվածությունը աշխատանքի շուկայում, քանի որ երկիրը պատ-
րաստ չէր այդքան մեծ թվաքանակով իմիգրանտների աշխատանքով
ապահովելու: Որպես հարցի լուծում՝ քաղաքաբնակ գաղթականնե-
րին բնակեցրին գյուղական վայրերում, որտեղ նրանց մասնագիտա-

²⁸⁸ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 50-52:

²⁸⁹ Գ. Ղարիբյան, Գ. Եգանյան, Ա. Համբարձումյան, Ա. Խառատյան, Կ. Ավետիսյան, Մ. Եղիազարյան, Ա. Մարտիրոսյան, Գ. Միրոյան, Հ. Մկրտչյան, ՀՀ աշխատաշուկա-
յի վերլուծություն (գիտահետազոտական աշխատանք), Երևան, 2010:

կան որակավորումը չէր համապատասխանում գյուղական աշխատանքի պահանջներին: Բռնագաղթած հայ ազգաբնակչության մի մասը արտագաղթեց Հայաստանից: Վառելիքաէներգետիկ ճգնաժամը ավելի սրեց լարվածությունը աշխատանքի շուկայում, քանի որ մասսայաբար դադարեցին աշխատել արդյունաբերական ձեռնարկությունները: 1988 թ.-ի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի թողարկումը ՀՀ-ում 1993 թ.-ին կրճատվեց 64 %-ով, ավելի քան 2 անգամ կրճատվեց ՀՆԱ-ն: Աշխատանք չունեցողների թիվը գնալով աճում էր: Թվում էր, թե հողը մասնավորեցնելով՝ աշխատանքի շուկան զգալիորեն կընդլայնվի. մասնավոր գյուղացիական տնտեսությունները կսկսեն մեծ չափով օգտագործել վարձու աշխատուժ: Սակայն գյուղացին ինքը սկսեց մշակել իր հողը: Արդյունքում հողերի մի մասը չմշակվեց, և զգալի իջավ հողի օգտագործման արդյունավետությունը: Փաստորեն՝ բնական աղետը, պատերազմական իրավիճակը և տնտեսական վերափոխումների սխալները Հայաստանում նոր ձևավորվող աշխատաշուկայի բացասական զարգացումների և մասսայական գործազրկության պատճառ դարձան:

Զբաղվածության և գործազրկության մակարդակները և դրանց զարգացման միտումները բացահայտելու համար անհրաժեշտ է սկսել ՀՀ աշխատանքային ռեսուրսների հետազոտությունից, զարգացումներից և կառուցվածքային փոփոխություններից: Աշխատանքային ռեսուրսները, ըստ ՀՀ վիճակագրական ծառայության մեթոդաբանության, տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչության համագումարն են: Աշխատանքային ռեսուրսները ձևավորվում են աշխատունակ տարիքի աշխատունակ բնակչությունից: Աշխատունակ տարիքը, համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետի, ՀՀ-ում սահմանված է 16-63 տարեկան: Հայաստանի Հանրապետության 2008-2015 թթ.-ի աշխատանքային ռեսուրսները ներկայացված են Աղյուսակ 4.40-ում:

**Աղյուսակ 4.40: Հայաստանի Հանրապետության աշխատանքային
ռեսուրսները 2008-2015 թթ.-ին²⁹⁰**

	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.
Աշխատանքային ռեսուրսներ, ընդամենը 1000 մարդ	2376,9	2397,6	2389,7	2286,3	2260,8	2189,1	2180,2	2106,6
Այլ թվում՝ տնտեսապես ակտիվ բնակչություն	1414,6	1418,8	1483,3	1440,9	1418,3	1388,4	1375,7	1316,4
Զվաղվածներ, ընդամենը	1183,1	1152,8	1185,2	175,1	1172,8	1163,8	1133,5	1072,6
Գործազուրկներ, ընդամենը	231,6	265,9	278,2	265,7	245,5	224,6	242,1	243,7
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	962,3	978,9	926,4	845,4	842,5	800,7	804,5	790,3
Մովորող, ուսանող	219,3	215,3	196,9	171,7	176,7	152,9	160,7	148,1
Աշխատանք չունեցող այլ անձինք	298,8	310,9	278,7	245,7	220,0	210,5	200,0	201,7
Տնտեսական ակտիվ մակարդակ, %	59,5	59,2	61,2	63,0	62,7	63,4	63,1	63,5
Զբաղվածության մակարդակ, %	49,8	48,1	49,6	51,4	51,9	53,2	52,0	50,9
Գործազրկության մակարդակ, %	16,4	18,7	19,0	18,4	17,3	16,2	17,6	18,5

²⁹⁰ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 75: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, Երևան, էջ 51, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 51:

Բերված աղյուսակի ցուցանիշների զարգացումներից հետևում է, որ աշխատանքային ռեսուրսները 2008-2015 թթ.-ին ՀՀ-ում դրսևորել են նվազման միտում. 2008 թ.-ի 2376.9 հազարից 2015 թ.-ին կազմել են ընդամենը 2106.6 հազար: Այդ նույն ժամանակահատվածում առկա է նաև զբաղվածների նվազման միտումը: 2008 թ.-ի 1183.1 հազարից զբաղվածները 2015 թ.-ին կազմել են ընդամենը 1072.6 հազար: Ինչ վերաբերում է գործազուրկներին, ապա ունենք ճիշտ հակառակ միտումը: Եթե 2008 թ.-ին գործազուրկների թիվը 231.6 հազար էր կազմում, ապա 2015 թ.-ին այն հասավ 243.7 հազարի:

2008-ից մինչև 2010 թ.-ը Հայաստանի Հանրապետության տնտեսությունը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով զգալի կորուստներ կրեց: Տնտեսական աճը շուրջ 14.0 %-ը կրճատվեց, և դա չէր կարող իր անդրադարձը չունենալ նաև աշխատունակ բնակչության զբաղվածության ու գործազրկության աճի վրա:

Հետագայում, երբ ՀՀ տնտեսությունը հաղթահարեց ճգնաժամի բացասական հետևանքները, տնտեսական ակտիվությունը աճեց, գործազրկությունն էլ ցուցաբերեց նվազման միտում և 2010 թ.-ի 19.1 %-ից 2013 թ.-ին իջավ և կազմեց 16.2 %, սակայն 2015 թ.-ին կրկին աճեց՝ հասնելով 18.5 %-ի: Նշենք, որ աղյուսակ 4.40-ում ներկայացված գործազրկության մակարդակի ցուցանիշները պաշտոնական վիճակագրական ծառայության հաշվարկներն են, որոնք, որպես կանոն, իրական վիճակը ճիշտ չեն արտացոլում: Գործազուրկների մի մասը չի գրանցվում զբաղվածության ծառայություններում, նախընտրում է աշխատանք ստանալ ծանոթների և բարեկամների միջոցով և դուրս է մնում հաշվառումից: Ընտրանքային հետազոտական արդյունքներով ՀՀ-ում գործազրկության իրական մակարդակը 2015 թ.-ին ներկայացվում է 25 %-ի սահմաններում: Անգամ գործազրկության 18.5 %-ը շատ մեծ թիվ է, որը շուրջ 3 անգամ գերազանցում է գործազրկության բնական մակարդակը: *Ահա հենց դա էլ կազմում է մարդկային կապիտալի որակական բացահայտ կորուստներից մեկը:* Գործազրկությունը ոչ միայն առաջ է բերում աղքատություն կամ խորացնում է այն, այլև ապառախավորում է աշ-

խատուժը, իջեցնում է հետագայում աշխատելու դեպքում նրա աշխատավարձը, գործազուրկը դադարում է երկրի տնտեսական աճի մեծ լծակ, մեծ գործոն լինելուց և դրանով իսկ նպաստում է ինչպես երկրի, այնպես էլ իր ընտանիքի աղքատացմանը:

Մարդկային կապիտալի որակական կորուստները աշխատանքային ռեսուրսների կազմում հավասարաչափ չեն բաշխվում: Դրանք տարբերակվում են ըստ աշխատողների տարիքի, ըստ գործազուրկների կրթական մակարդակի, ըստ սեռի, ըստ քաղաքաբնակ և գյուղաբնակ տարածքների և այլն:

Աղյուսակ 4.41: Գործազրկության մակարդակն ըստ կրթության և ըստ սեռի 2011-2013 թթ.-ին, տոկոս²⁹¹

	Ընդամենը			Տղամարդ			Կին		
	2011	2012	2013	2011	2012	2013	2011	2012	2013
Ընդամենը	18,4	17,3	16,2	17,3	16,5	14,4	19,6	18,2	18,1
Բարձրագույն հետբուհական	19,5	18,1	16,4	17,9	16,3	12,5	21,0	19,8	19,9
Միջին մասնագիտական թերի բարձրագույն	20,1	18,4	17,6	16,9	15,0	13,3	22,7	21,1	20,9
Նախամասնագիտական (արհեստագործական)	17,8	24,9	10,2	12,2	23,3	6,8	26,6	27,4	17,2
Միջնակարգ ընդհանուր	17,4	16,4	15,9	17,3	16,7	15,8	17,5	15,9	16,0
Հիմնական ընդհանուր	17,3	15,6	15,5	20,5	18,2	18,6	11,9	11,2	9,1
Տարրական և ոչ լրիվ տարրական	2,1	1,8	5,0	0,1	4,0	2,5	3,9	0,0	5,1

²⁹¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 73, 75: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 73:

**Աղյուսակ 4.42: Գործազրկության մակարդակն ըստ կրթության և
գյուղ-քաղաք տարբերակման 2011-2013 թթ.-ին, տոկոս²⁹²**

	Ընդամենը			Քաղաք			Գյուղ		
	2011	2012	2013	2011	2012	2013	2011	2012	2013
Ընդամենը	18,4	17,3	16,2	26,9	25,5	23,4	5,8	5,3	6,0
Բարձրագույն հետբուհական	19,5	18,1	16,4	22,3	20,4	18,5	6,9	8,2	7,9
Միջին մասնագիտական թերի բարձրագույն	20,1	18,4	17,6	27,2	25,6	24,9	5,2	4,8	5,1
Նախամասնագիտական (արհեստագործական)	17,8	24,9	10,2	26,6	34,2	14,1	5,7	11,4	6,7
Միջնակարգ ընդհանուր	17,4	16,4	15,9	30,7	29,1	27,5	6,0	5,1	6,0
Հիմնական ընդհանուր	17,3	15,6	15,5	36,2	35,9	30,2	5,6	3,1	6,2
Տարրական և ոչ լրիվ տարրական	2,1	1,8	5,0	12,3	6,4	23,4	0,1	0,3	0,0

**Աղյուսակ 4.43: Գործազրկության մակարդակն ըստ կրթության,
2014-2015 թթ., տոկոս²⁹³**

	Ընդամենը		Տղամարդ		Կին		Քաղաք		Գյուղ	
	2014	2015	2014	2015	2014	2015	2014	2015	2014	2015
Ընդամենը	17.6	18.5	15.8	17.6	19.5	19.5	24.8	27.0	6.8	6.7
Բարձրագույն հետբուհական	17.7	17.9	15.2	14.8	20.1	20.8	19.9	19.9	9.7	10.5

²⁹² Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 73, 75: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 73:

²⁹³ Նույն տեղում:

Միջին մասնագիտական թերի բարձրագույն	18.3	22.0	16.3	20.6	19.7	22.9	24.3	30.7	7.7	5.8
Նախամասնագիտական (արհեստագործական)	16.0	17.8	12.7	16.2	23.3	22.1	22.9	29.6	7.6	7.4
Միջնակարգ ընդհանուր	18.1	17.8	17.0	18.3	19.4	1.1	31.1	32.0	5.6	6.5
Հիմնական ընդհանուր	10.0	15.3	9.6	18.8	10.8	9.3	21.1	33.6	5.8	2.5
Տարրական և ոչ լրիվ տարրական	3.8	8.5	2.9	14.0	4.6	0.0	24.9	28.5	1.5	0.0


Աղյուսակներ 4.41-4.43-ի տվյալները ցույց են տալիս, որ մախ, մեր բնակչությունը, մեծ հաշվով, օժտված է բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետներով, աշխատողներով: Դրանով է բացատրվում, որ բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների գործազրկության մակարդակները ՀՀ գործազրկության ընդհանուր մակարդակին 18-20 % սահմաններում գրեթե հավասար են: Երկրորդ, 2011-2013 թթ. հանրապետությունում գործազրկության մակարդակը դրսևորել է անկման միտում, իսկ 2014-2015 թթ.-ին, ՀՀ տնտեսության անբարենպաստ զարգացումներով պայմանավորված, կրկին աճել է: Երրորդ, կանանց գործազրկության մակարդակը 2-4 տոկոսային կետով գերազանցում է տղամարդկանց գործազրկության մակարդակը: Չորրորդ, գյուղ-քաղաք կտրվածքով գործազրկության մակարդակները դիտարկելիս ակնհայտ երևում է քաղաքային բնակչության համեմատ գյուղական

բնակչության գործազրկության եռակի ցածր մակարդակը, 2011-2015 թթ.-ին՝ 5.3-6.8 %, և դա բոլորովին նրա արդյունք չէ, որ գյուղում զբաղվածությունը բարձր է: Եթե այդպես լիներ, անհասկանալի կմնար գյուղերից, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերից երիտասարդության մեծ արտագաղթը: Նշանակություն ունենան ևս դասական տնտեսագիտության գնահատականները ագրարային զերբնակչության առանձնահատկության մասին: Հողային մասնավոր սեփականությունը քողարկում է ագրարային բնակչության գործազրկությունը, և այն դառնում է թաքնված:

Հարկ է մեկ անգամ ևս նշել, որ գործազրկության վերը քննարկված ցուցանիշները լիարժեք չեն ներկայացնում Հայաստանի աշխատանքի շուկայի վիճակը, քանի որ առկա է, մի կողմից, թաքնված գործազրկություն, մյուս կողմից՝ թաքնված զբաղվածություն: Առավել հավաստի տեղեկատվություն կարելի է ստանալ ընտրանքային հետազոտությունների արդյունքներից: Այսպես, ըստ «ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծություն» գիտահետազոտական աշխատանքի, 2008-2009 թթ.-ին հանրապետությունում գործազրկության փաստացի մակարդակը եղել է 25-30 %-ի սահմաններում (27.3 %), մինչդեռ պաշտոնական տվյալներով 2008 թ.-ին գրանցվել է 16.4 % գործազրկություն, իսկ 2009 թ.-ին՝ 18.7 %²⁹⁴:

Ինչ վերաբերում է միկրոմակարդակում գործազրկության պատճառներին, ապա այն 2008-2009 թթ.-ին ունեցել է հետևյալ պատկերը. աշխատանք չունեցողների 44.1 %-ը աշխատանք չունի, որովհետև չի կարողացել գտնել, 21.6-ը չի ցանկացել ունենալ, 23.8-ը ի վիճակի չի եղել մշտական աշխատանք կատարելու, իսկ 10.5 %-ը՝ այլ պատճառներով (Գծապատկեր 4.11):

²⁹⁴ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան, էջ 75:



Պատկեր 4.11. Մշտական աշխատանք չունենալու պատճառներ

Աշխատանք չունեցողների 24.2 %-ը ցանկանում է ունենալ միայն որակավորմանը, մասնագիտությանը համապատասխանող, 42.7 %-ը՝ բարձր վարձատրվող, իսկ 33.1 %-ը՝ ցանկացած աշխատանք:

Անհանգստացնող է գործազուրկների կառուցվածքն ըստ աշխատանք փնտրելու տևողության: ՀՀ աշխատանք չունեցողների 13.1 %-ը աշխատանք է փնտրել մինչև մեկ ամիս, 13.0 %-ը՝ 1-3 ամիս, 14.5-ը՝ 4-6 ամիս, 17.1-ը՝ 7-12 ամիս, իսկ 42.3 %-ը՝ 12 ամսից ավելի: 12 ամիս և ավելի աշխատանք փնտրողների %-ներն ամենաբարձրն են Շիրակի մարզում՝ 65.6 %, Վայոց ձորի մարզում՝ 60.0 %, Սյունիքի մարզում՝ 53.9 %, Լոռու մարզում՝ 53.5 % և Արագածոտնի մարզում՝ 51.4 %:

Աղյուսակ 4.44. Աշխատանք չունեցողներն ու աշխատանք փնտրողներն ըստ մարզերի (տոկոսներով մարզում հարցվածների նկատմամբ)²⁹⁵

ՀՀ-ն և մարզերը	Հարցվածները, մարդ	Աշխատանք չունեցողները , տոկոս	Աշխատանք փնտրողները, տոկոս
Ընդամենը ՀՀ	20223	27.3	19.7
Ք. Երևան	6511	20.9	5.1
Կոտայքի մարզ	1761	26.9	18.6
Շիրակի մարզ	1966	28.8	21.7
Տավուշի մարզ	935	29.1	21.7
Վայոց ձորի մարզ	367	25.3	16.3
Սյունիքի մարզ	1107	27.0	17.3
Արմավիրի մարզ	1546	46.3	41.8
Արարատի մարզ	1889	23.0	17.6
Լոռու մարզ	1785	31.6	19.0
Գեղարքունիքի մարզ	1435	31.9	19.0
Արագածոտնի մարզ	917	31.6	25.0

Աղյուսակ 4.44-ի տվյալները ներկայացնում են գործազրկության զարգացումները Հայաստանի Հանրապետության մարզային կտրվածքով: Աղյուսակից երևում է, որ նախ, 2008-2009 թթ.-ին հանրապետությունում գործազրկության իրական մակարդակը շուրջ 9 %-ով գերազանցել է պաշտոնական մակարդակը, ուստի իրատեսական են գիտական հետազոտության արդյունքների տվյալները: Երկրորդ, այդ ցուցանիշների ամենամեծ շեղումը առկա է եղել մայրաքաղաքում, որտեղ աշխատանք չունեցողները կազմել են 20.9 %, մինչդեռ աշխատանք փնտրողները՝ ընդամենը 5.1 %: Երրորդ, 2008-2009 թթ. գործազրկության ամենաբարձր մակարդակը եղել է Արմավիրի մարզում (46.3 %), իսկ ամենացածրը՝ Երևանում (20.9 %):

Նույն ժամանակահատվածի համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետա-

²⁹⁵ Գ. Ղարիբյան, Գ. Եգանյան, Ա. Համբարձումյան, Ա. Խառատյան, Կ. Ավետիսյան, Մ. Եղիազարյան, Ա. Մարտիրոսյան, Գ. Սիրոյան, Հ. Սկրտչյան, ՀՀ աշխատաշուկայի վերլուծություն (գիտահետազոտական աշխատանք), Երևան, 2010, էջ 39:

կան ծառայություն» գործակալության տվյալները ներկայացնում են գործազրկության բավականին նվազեցված ցուցանիշներ (Աղյուսակ 4.45):

Աղյուսակ 4.45. Տնտեսապես ակտիվ բնակչության կազմն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2009 թ.-ին²⁹⁶

	Տնտեսապես ակտիվ բնակչություն, հազ. մարդ	Այդ թվում՝		Գործազրկության մակարդակը%
		զբաղվածներ	գործազուրկներ	
Ընդամենը ՀՀ	1185.1	1103.7	81.4	6.9
ք. Երևան	346.6	323.9	22.7	6.5
Արագածոտն	66.3	65.0	1.4	2.0
Արարատ	119.8	116.5	3.3	2.7
Արմավիր	121.3	117.7	3.5	2.9
Գեղարքունիք	107.9	101.8	6.0	5.6
Լոռի	101.6	90.2	11.4	11.3
Կոտայք	82.9	75.3	7.6	9.2
Շիրակ	97.5	84.9	12.5	12.9
Սյունիք	59.6	52.6	6.9	11.6
Վայոց ձոր	27.0	25.6	1.1	4.1
Տավուշ	54.7	49.9	4.9	8.9

Աղյուսակ 4.46. Գործազրկության մակարդակն ըստ մարզերի և Երևան քաղաքի, տոկոս²⁹⁷

	2014թ.			2015թ.		
	Ընդամենը	Այդ թվում՝		Ընդամենը	Այդ թվում՝	
		տղամարդ	կին		տղամարդ	կին
Ընդամենը ՀՀ	17.6	15.8	19.5	18.5	17.6	19.5
ք. Երևան	26.9	24.7	29.5	30.2	28.1	32.5

²⁹⁶ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներ:

²⁹⁷ Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թ.-ի հունվար-դեկտեմբեր, Երևան, 2017, էջ 16:

Արագածոտն	5.1	2.3	7.7	5.7	1.6	10.0
Արարատ	7.5	1.8	12.8	8.3	4.6	12.0
Արմավիր	7.4	8.2	6.5	9.4	11.1	7.4
Գեղարքունիք	5.8	7.7	4.1	4.7	6.4	3.1
Լոռի	16.9	17.3	16.7	15.7	14.9	16.5
Կոտայք	22.8	16.4	30.9	23.0	21.0	25.4
Շիրակ	20.8	20.0	21.5	19.0	18.6	19.3
Սյունիք	18.3	12.4	24.8	15.7	18.0	12.2
Վայոց ձոր	13.0	9.0	16.5	10.1	6.7	13.2
Տավուշ	10.9	11.4	10.4	12.1	14.1	10.1

2014-2015 թթ.-ին գործազրկության մակարդակների պաշտոնական տվյալներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի (Աղյուսակներ 4.46) փաստում են, որ նախ, նշված ժամանակահատվածում գործազրկության կայուն բարձր մակարդակներ գրանցվել են Շիրակի, Սյունիքի և Լոռու մարզերում: Երկրորդ, գործազրկության մակարդակը բարձր է նաև Երևանում (30.7 %՝ 2015 թ.-ին) և Կոտայքի մարզում (23.0 %՝ 2015 թ.-ին): Երրորդ, գործազրկության մակարդակն ավելի բարձր է կանանց շրջանում, քան տղամարդկանց. 2015 թ.-ին գործազուրկ է եղել տղամարդկանց 17.6 %-ը, կանանց՝ 19.5 %-ը: Կանանց գործազրկության մակարդակը տղամարդկանց համեմատ հատկապես բարձր է Արագածոտնի, Արարատի և Վայոց ձորի մարզերում:

Աղյուսակ 4.47-ում ներկայացված է գործազրկության մակարդակն ըստ տարիքային խմբերի: Գործազրկության ամենաբարձր մակարդակը 30-54 տարիքային խմբում է՝ 60.6 %: Տարիքային այդ խումբը սովորաբար համարվում է մասնագիտության մեջ արդեն հրմտացած, փորձառու աշխատողների տարիքային խումբ՝ կարիերայի և աշխատավարձի աճի մեծ հավանականությամբ, մինչդեռ Հայաստանում գործազրկության միջին տարիքը 40 տարեկանն է: Այս փաստը մեկ անգամ ևս հաստատում է այն ակնհայտ իրողությունը, որ գործազրկությունը Հայաստանի համար հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներից մեկն է:

**Աղյուսակ 4.47. Պաշտոնապես գրանցված գործազուրկներն
ըստ տարիքի և սեռի, տոկոս²⁹⁸**

	Ընդամենը	Այդ թվում՝	
		տղամարդ	կին
Գործազուրկներ, ընդամենը, այդ թվում՝ ըստ տարիքի, տարեկան	100	100	100
16-19	2.1	2.3	2.0
20-24	9.4	10.6	8.9
25-29	13.2	11.8	13.8
30-54	60.6	62.1	59.9
55 և բարձր	14.7	13.2	15.4
Գործազուրկների միջին տարիքը, տարեկան	40.2	39.8	40.3

Մարդկային կապիտալի որակական կորուստ է մաս թերզբաղվածությունը: Խոսքը վերաբերում է նրանց, ովքեր աշխատում են օրենսդրորեն սահմանված աշխատաժամանակից պակաս աշխատօր կամ աշխատաշաբաթ: «ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծություն» գիտահետազոտական աշխատանքի տվյալներով ոչ լրիվ աշխատաշաբաթով աշխատողների տեսակարար կշիռը ՀՀ-ում (2007-2008 թթ.) կազմել է 43.4 %: Ամենաբարձրը գրանցվել է Սյունիքում (72.1 %), Լոռու մարզում (64.3 %) և Տավուշի մարզում (62.9 %):

Գործազրկությունը՝ մարդկային կապիտալի որակական այդ կորուստը կրճատելու և հետագայում կանխելու համար պահանջվում են սոցիալ-տնտեսական լուրջ զարգացումներ: Այս հարցում առաջնայինը, *անհրաժեշտ պայմանը տնտեսական կայուն աճ ապահովելն է*, որի համար, ի թիվս այլ գործոնների, անհրաժեշտ է ՀՀ ինստիտուցիոնալ միջավայրի բարելավում՝ մրցակցային շուկաների գերակայություն, կոռուպցիայի մակարդակի և ստվերային տնտեսության բաժնի կրճատում: Էմպիրիկ հետազոտությունների արդյունքում ստացվել է, որ գոյություն ունի վիճակագրորեն նշանակալի հակադարձ կապ ստվերային տնտեսության բաժնի և տնտեսական աճի

²⁹⁸ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան, էջ 74:

միջև, մինչդեռ Հայաստանում որոշ գնահատումներով ստվերային տնտեսության բաժինը հասնում է շուրջ 40 %-ի:

Տնտեսության խոցելի կողմերից է կոռուպցիան: Այն խոչընդոտում է ներքին ներդրումները, կասեցնում օտարերկրյա ֆինանսական միջոցների ներգրավումը տնտեսության զարգացման համար, ձախողում իրականացվող սոցիալական ծրագրերը: Վաշինգտոնում գործող Policy Forum Armenia (PFA) վերլուծական կենտրոնը 2013 թ.-ին հրապարակել է «Երկրի իրավիճակը» շարքից հերթական զեկույցը՝ «Կոռուպցիան Հայաստանում» վերտառությամբ:²⁹⁹ Ջեկույցի հիմնական եզրակացությունն այն է, որ *Հայաստանի տնտեսության վրա կոռուպցիայի բացասական ազդեցությունը տեղի է ունենում*: Օրինակ՝ կոռուպցիայի հետ առնչված ընկերություններին նվիրված զեկույցի հատվածում բացահայտվում է, որ «մեծ ընկերությունների՝ կոռուպցիայի առաջացրած լրացուցիչ ծախսերը կազմում են դրանց տարեկան վաճառքի հինգ %-ը, որն ամենաբարձրն է՝ համեմատված երկրների շարքում և քայքայում է ընկերությունների մրցունակությունն ու արդյունավետությունը»: Ջեկույցը մատնացույց է անում, որ *ՀՀ հանրային քաղաքականությունը մշակվում և իրականացվում է հիմնականում ամուր արմատներ չգած կոռուպցիայի վրա*, այլ ոչ թե քաղաքացիների շահերը սպասարկելու համար: Ամենաապշեցուցիչ բացահայտումն այն էր, որ կոռուպցիան Հայաստանում խիստ կենտրոնացված է և ստեղծում է անհատափառիկ արգելքներ երկրի տնտեսական զարգացման ու առաջընթացի համար:

Հայաստանում ինստիտուցիոնալ միջավայրի բարելավման հաջորդ կարևոր պայմանը հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության աճն է: Անկախությունից երեք տասնամյակ անց ՀՀ-ում դեռ առաջնահերթ խնդիրներից մեկը փոքր և միջին բիզնեսի զարգացումն է, մինչդեռ փոքր և միջին ձեռնարկությունները կարող են անհամեմատ փոքր կապիտալ ներդրումներով ծավալել իրենց գործունեությունը, ստեղծել նոր աշխատատեղեր և անհրաժեշ-

²⁹⁹ <http://www.a1plus.am/77628.html>

տության դեպքում ավելի արագ հարմարվել տնտեսական կտրուկ փոփոխություններին:

Երկրի աշխատանքի շուկայի բնութագիրը պատկերացում է տալիս տվյալ երկրի տնտեսական և սոցիալական վիճակի, բնակչության բարեկեցության մակարդակի մասին, քանի որ ներառում է սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական հարցերի լայն շրջանակ: Աշխատանքի շուկան հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման և բարիքների շուկայի հետագա զարգացման կարևոր նախադրյալն է: Այսօր ՀՀ աշխատանքի շուկայում առկա է գործազրկության բարձր մակարդակ, աշխատավարձի ցածր մակարդակ և մեծ դիսպերսիա, թաքնված գործազրկություն, թաքնված զբաղվածություն, գործազրկության կառուցվածքում մեկ տարուց ավելի գործազուրկների մեծ կշիռ, ուստի գործազրկության մակարդակի կրճատումը պետք է համարվի պետության առաջնային խնդիրներից մեկը: Գործազրկությունը կրճատելու պետական ակտիվ քաղաքականությունը տնտեսական զարգացման նպատակային ծրագրերի մշակումն է, որը միտված է կայուն տնտեսական աճի ապահովմանը և աշխատատեղերի ընդլայնմանը: Ակտիվ քաղաքականության միջոցառումների համակարգում գործազրկության մեղմացման կարևոր ուղիներից կարող են հանդիսանալ գործազուրկների համար հասարակական աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաև զբաղվածության հիմնադրամից գործազուրկներին ֆինանսական աջակցության ցուցաբերումը սեփական գործ հիմնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ, մասնավորապես փոքր և միջին ձեռներեցությամբ զբաղվելու նպատակով:

Գործազրկությունը կրճատելու պետական պասիվ քաղաքականությունը զբաղվածության ծառայությունների գործունեության արդյունավետության աճն է, գործազուրկներին տրամադրվող նպաստների բարձրացումը: Ինչպես վկայում է մի շարք եվրոպական երկրների փորձը (Ավստրիա, Դանիա, Նիդեռլանդներ, Իռլանդիա), կարևորվում է զբաղվածության ծառայությունների կազմակերպման և մենեջմենթի կատարելագործումը: Մասնավորապես այդ երկրներում զբաղվածության ծառայությունները գործում են եռակողմ կազմա-

կերպության ձևով՝ համագործակցելով տեղի իշխանությունների, գործատուների և արհմիությունների հետ: Նշված երկրների փորձը ցույց է տալիս նաև, որ հատկապես արդյունավետ են գործում տեղական և շրջանային զբաղվածության ծառայությունները: Նշված ծառայությունները հիմնականում սպասարկում են երկարաժամկետ գործազուրկներին, ինչը հատկապես կարևոր է Հայաստանի համար, որտեղ գործազուրկի աշխատանքի տեղավորման համար անհրաժեշտ ժամանակահատվածը 1 տարուց ավելի է: ՀՀ սոցիալական ապահովության համակարգում տարածքային ուսումնական կենտրոնների ստեղծումը հնարավորություն կտա գործազուրկներին վերապատրաստվելու կամ վերաորակավորվելու աշխատանքի շուկայում առավել պահանջարկ վայելող մասնագիտությունների գծով: Նման միջոցառումները կնպաստեն կառուցվածքային գործազրկության կրճատմանը:

Որպես կանոն՝ միշտ ընդգծվում է աշխատատեղերի պակասը լրացնելու և նոր աշխատատեղեր ստեղծելու անհրաժեշտությունը: Դա, իհարկե, մեծ հաշվով ճիշտ է, սակայն հենց այնպես, միայն լոկալ աշխատատեղերի ավելացումը գործազրկությունը չի վերացնի: Գործազուրկը կվերադառնա արտադրություն երկու հիմնական պայմանների առկայության դեպքում, եթե.

- առաջարկվի ըստ մասնագիտության աշխատանք,
- բարձր վարձատրվող աշխատանք:

Բարձր որակավորման մասնագետները, մասնավորապես ծրագրավորողները, մեկնում են արտերկիր ոչ այնքան աշխատատեղ չլինելու պատճառով, որքան բարձր աշխատավարձ ապահովող աշխատանք չլինելու պատճառով: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության (2013 թ., մայիսի 16) կառավարության ծրագրում նախատեսվում է՝ բնակչության արդյունավետ զբաղվածության և արժանապատիվ վաստակի, անհատական աշխատանքային հարաբերությունների կատարելագործման և աշխատանքի վարձատրության պետական երաշխիքների ապահովումը, բնակչության եկամտի աճի ապահովումը՝ բաշխման առավել արդար մեխանիզմների կիրառմամբ, աշխատողի աշխատանքի իրավունքի, աշխատանքի արտադ-

րողականության և արդյունավետության աճին համապատասխանող
իրական աշխատավարձի մակարդակի հետևողական բարձրացման
ապահովումը և այլն: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի կանխել
գործազրկությունը և մարդկային կապիտալի որակական կորուստ-
ները:

Վերջաբանի փոխարեն

Մարդկային կապիտալի վերաբաշխության խնդիրների քննարկումները և լուծումները մշտապես գտնվում են Հայաստանի Հանրապետության նախագահի և կառավարության ուշադրության կենտրոնում: Այսպես, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թ.-ի ծրագրում որպես հատուկ կարևոր ռազմավարական խնդիր ներկայացված են մարդկային կապիտալի զարգացումը և գործազրկության կրճատումը: Ընդ որում՝ ծրագրի ուշադրության կենտրոնում է բնակչության բնական աճը խթանելու միջոցով մարդկային կապիտալի քանակական կորուստների կրճատումը: Այդ նպատակով ծրագրում նախատեսվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարման համակարգի էական զարգացում, նպաստների չափերի շոշափելի ավելացում և վճարման համակարգի պարզեցում:

Հատուկ շեշտադրվում են առողջապահության համակարգի զարգացման անհրաժեշտությունը, մասնավորապես ոլորտում կոռուպցիայի հաղթահարումը, պետական պատվերների ծավալի էական ավելացումը և կիրառման հասցեականության ապահովումը:

Ծրագրում բարեփոխություններ են նախատեսվում կրթության բոլոր մակարդակների և տեսակների (նախադպրոցական, դպրոցական, բուհական, ասպիրանտական և հետբուհական) որակական զարգացումներում:

ՀՀ կառավարությունը 2016 թ.-ի ծրագրով լուրջ միջոցառումներ է իրականացնում երկրի ողջ տարածքում կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքար ծավալելու ուղղությամբ: Ընդգծվում է, որ միայն ծրագրով նշված բարեփոխումները հնարավոր կդարձնեն էապես կրճատելու աղքատությունը, բարձրացնելու

բնակչության կենսապայմանները, զարգացնելու փոքր և միջին ձեռներեցությունը և կանխելու արտագաղթը:

Մարդկային կապիտալի կորուստները կանխելու, նրա զարգացումը և արդյունավետությունը խրախուսելու նպատակով լուրջ առաջարկություններ արվեցին 2017 թ.-ի ընտրություններին մասնակցող բոլոր ութ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական ծրագրերում: Այսպես, Հայաստանի Հանրապետական կուսակցության նախընտրական ծրագրային դրույթներից են երկրում սոցիալական արդարության և համերաշխության հաստատումը, եկամուտների արդարացի բաշխումը և արժանապատիվ կյանքով ապրելու համակարգի ստեղծումը: Ծրագրվում է դրան հասնել տնտեսական աճի հիմքի վրա ինչպես աշխատավարձերի ու բոշակների ավելացման, այնպես էլ պետական բյուջեի ծախսերի սոցիալական ուղղվածությունը էապես մեծացնելու միջոցով: Հայաստանի հանրապետական կուսակցության ծրագրում կարևոր տեղ են հատկացվում բնակչության բնական աճի բացասական միտումները հաղթահարելու, երկրորդ և հաջորդ երեխաների ծնունդը նյութապես խրախուսելու և ընդհանրապես շատ երեխաներով բազմանդամ ընտանիքների սոցիալական խնդիրները պետության մշտական ուշադրության կենտրոնում պահելու և աջակցելու հարցերին:

Բնակչության առողջապահության ոլորտում նախատեսվում է իրականացնել հիվանդությունների կանխարգելման համալիր, մշտապես գործող ծրագիր, հասնելու բնակչության բուժապասարկման ապահովագրման համակարգի պարզեցման և արդյունավետ կիրառման այնպիսի համակարգի, որում վերջապես բացառվեն մեծ չափերի հասնող կոռուպցիոն ռիսկերը:

ՀՀ 2017 թ.-ի խորհրդարանական ընտրությունների Հանրապետական կուսակցության առաջադրած նախընտրական ծրագրում կարևոր բարեփոխումներ են նախատեսվում նաև կրթության ոլորտում: Նախատեսվում են կրթության նախադպրոցական, դպրոցական և բուհական մակարդակների ճշգրտումներ և ներդաշնակեցում: Մանկավարժների, դաստիարակների և դասախոսների միջին աշ-

խատավարձը նախատեսվում է դարձնել ոչ պակաս, քան քաղաքացիական ծառայողի միջին աշխատավարձն է:

Ժողովրդագրական խնդիրների ոլորտում նախատեսվում է ազգային հատուկ ծրագրի մշակում, պետության լիարժեք աջակցություն ընտանիքին՝ որպես հասարակության զարգացման հիմնական բջջի:

Ուշագրավ առաջարկություններ կան նաև Հայ հեղափոխական դաշնակցության նախընտրական ծրագրում: Ընդգծվում է, որ նվազագույն վարձատրությունը չի կարող ցածր լինել կենսաապահովման զամբյուղից, հակառակ դեպքում չենք կարող հաղթահարել աղքատությունը, և կխաթարվի մարդկային կապիտալի նորմալ վերարտադրությունը: Նախատեսվում է «Երաշխավորել տարեցների բարեկեցիկ ծերությունը: Անթույլատրելի է, որ ողջ կյանքն արդար քրտինքով իր հացը վաստակած տարեց քաղաքացին հայտնվի աղքատության մեջ»:

Ուշադրության է արժանի նաև բնական ռեսուրսների պահպանման պահանջը, ըստ որի՝ պետք է ստեղծվի «այնպիսի մեխանիզմ, որ բացառի բնական ռեսուրսների գերշահագործումը, հյուծումը»: Հակառակ դեպքում մեր եկող սերունդներին կգրկենք ռեսուրսներից և գոյատևման ու զարգացման հնարավորություններից:

Եվ վերջապես նախատեսվում է «վարել ակտիվ հայրենադարձման քաղաքականություն, որ հայրենիքից հեռացածները վերադառնան հայրենիք»:

Մարդկային կապիտալի նորմալ վերարտադրության և կորուստների կանխման վերաբերյալ մի շարք ուշադրության արժանի առաջարկություններ է արել նաև «Ծառուկյան» դաշինքը: Մասնավորապես ընդգծվում է, որ միջին կենսաթոշակի չափը համապատասխանեցվի նվազագույն կենսաապահովման զամբյուղին: Այդ նպատակով այն պետք է բարձրացնել 25 հազար դրամով և պարբերաբար ինդեքսավորել: Նվազագույն աշխատավարձը 2018 թ.-ի հունվարի 1-ից սահմանել 80 հազար դրամ: Առաջարկվում է առաջիկա երեք տարիներին փոքր և միջին ձեռնարկություններին ազատել հարկերից, էապես իջեցնել գազի և էլեկտրաէներգիայի գործող սակագնե-

րը, մաքսային ոլորտում վերացնել, այսպես կոչված, «հսկիչների» կիրառումը, առողջապահության ոլորտում արմատապես փոխել պետական պատվերի գործող համակարգը և այն ամբողջությամբ սերտիֆիկացնել: Գյուղատնտեսական վարկերի տոկոսը չպետք է գերազանցի 3-5 %-ի շեմը:

Ուշադրության արժանի առաջարկություններ կան նաև քաղաքական մյուս կուսակցությունների և դաշինքների ծրագրերում, մասնավորապես բնակչության ավանդների վերադարձման, պետության սոցիալ-տնտեսական դերի բարձրացման, ազգային անվտանգության հուսալի ապահովման, կոռուպցիայի հաղթահարման, կրթության և գիտության զարգացման, երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության, արտաքին քաղաքականության արդյունավետության բարձրացման, հայրենիք-սփյուռք հարաբերությունների վերանայման ու կատարելագործման, օրինականության և իրավունքի գերակայության հաստատման, հզոր պետություն և հզոր բանակ ստեղծելու, գյուղատնտեսության և գյուղի զարգացման և նման այլ կարևոր խնդիրների շուրջ:

Ինչպես նկատում ենք, Հայաստանի Հանրապետության առաջիկա արդյունավետ զարգացման խնդիրները բոլոր կուսակցությունների և պետական մարմինների ուշադրության շրջանակներում են: Սակայն դրանք իրենց դերով, նշանակությամբ և առաջնահերթությամբ նույնը չեն: Այսօր առաջին գերխնդիրը ազգային անվտանգության ապահովումն է: ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի կողմից ներկայացված «Ազգ-բանակ երկրի հուսալի պաշտպանություն» նոր մոդելը դրական գնահատականի արժանացավ մասնագետների և հասարակության կողմից: Այդ մոդելի բաղադրիչներն են ժամանակակից զենքով զինված, բարձր պրոֆեսիոնալիզմով, հայրենիքի պաշտպանությանն անմնացորդ նվիրված մարտունակ բանակը և ողջ երիտասարդության ռազմահայրենասիրական արդյունավետ դաստիարակությունը:

«Ազգ-բանակ» մոդելը իմաստավորում է, որ հայ ազգի գոյատևման և զարգացման միակ երաշխիքը մեր ազգային բանակն է: 2016 թ.-ի ապրիլյան չորսօրյա պատերազմը բացահայտեց հայ զին-

վորի բարոյական ու հերոսական շատ բարձր ոգին, սակայն ակնհայտ է, որ «Ազգ-բանակ» մոդելը արդյունավետ կաշխատի, եթե լուծվեն նաև զինվորների համապատասխան թվաքանակի ապահովման խնդիրները: Այս գործում պետք է ներառել նաև 7 միլիոնանոց հայկական սփյուռքին: Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության հիմնական խնդիրներից մեկը պետք է դառնա սփյուռքում Արցախյան պատերազմի ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի օրինակով հայ զինվորներին տեղում պատրաստելը: Պետք է հետևել Իսրայելի օրինակին. սփյուռքի հայ երիտասարդները կամավորության սկզբունքով կարող են ծառայել ՀՀ ազգային բանակում, այնուհետև վերադառնալ իրենց բնակության երկիր: Ամբողջ հայությունը պետք է ճիշտ գնահատի թշնամուն և ամեն ինչ անի՝ 10 միլիոնանոց հայությունով ուժեղացնելու Հայաստանը, հզորացնելու նրա բանակը, անասան պահելու բովանդակությամբ տիեզերական Հայաստան-Արցախ աշխարհը:

ՀՀ սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական մի շարք խնդիրների լուծման, այդ թվում՝ բանակում զինվորների համապատասխան թվաքանակի ապահովման համար ՀՀ գերակա խնդիրներից է աշխատանքային միգրացիայի և այլ ձևերով մոտավոր հաշվարկներով տարեկան 30-35 հազար աշխատունակ բնակչության, հիմնականում երիտասարդների՝ պոտենցիալ զինվորների, արտագաղթի կանխումը: Ինչպես ցույց է տալիս կյանքը, դա հեշտ լուծվող խնդիր չէ: Բայց պետական իշխանությունները, մտավորականությունը և ողջ հասարակությունը այսօր պետք է ամեն ինչ անեն, որ արտագաղթը կանխվի: Դրա անհրաժեշտ պայմանը կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճ ապահովելու հիման վրա երկրում բնակչության կենսամակարդակի աճն է, բավարար պայմանը՝ ՀՀ կառավարության 2016 թ.-ի ծրագրով նախատեսված երկրի ողջ տարածքում կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքարի միջոցառումների իրականացումը, ինչպես նաև՝ օրինականության և իրավունքի գերակայության հաստատումը:

2016-2017 թթ.-ին Հայաստանի կառավարությունը ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի հանձնարարականների հիման վրա

ընդունել է մի շարք կարևոր որոշումներ, որոնք կարող են նպաստել վերը նշված խնդիրների լուծմանը:³⁰⁰ Այդ որոշումներից են.

- պետական կառավարման համակարգի արդիականացմանն ուղղված քաղաքական որոշումները,
- բիզնեսի գործելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը՝ սկսած էլեկտրոնային եղանակով լիցենզիաների տրամադրման որոշումներից, վերջացրած գյուղատնտեսական քաղաքական տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների կողմից սպառվող գազի սակագնի մեղմացման միջոցառումներով,
- քաղաքացիների կյանքի հեշտացմանը և իրավունքների պաշտպանությանն ուղղված որոշումները: Մասնավորապես, «Հայփոստ», «Արդշինբանկ», «Ամերիաբանկ» և «Կոնվերսբանկ» օպերատորների միջոցով քաղաքացիներին այնպիսի ծառայությունների տրամադրումը, ինչպիսիք են քաղաքացիական կացության ակտերի գրանցումը, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, անշարժ գույքի պետական միասնական կադաստրին առնչվող տարբեր տեղեկատվությունները, որոշ գործառնություններ, որոնք վերապահված են եղել ոստիկանությանը և արտաքին գործերի նախարարությանը,
- կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ որոշումները՝ ապօրինի հարստացման քրեականացումը, կանխիկ գործառնությունների սահմանափակումը, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմավորման սկզբունքների փոփոխությունը, նաև որոշումներ, որոնք քաղաքացու պետական մարմինների հետ շփվելիս տարանջատում են դիմում ընդունելը և որոշում կայացնելը՝ դրանով նվազեցնելով կոռուպցիան, քանի որ դիմում ընդունողը չի կարող որոշում կայացնել,

³⁰⁰ Ներկայացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականների կատարման հաշվետվությունը, <https://168.am/2017/01/19/742299.html>:

- տեղական ինքնակառավարման մարմինների հետ կապված որոշումները՝ համայնքների հնգամյա զարգացման ծրագրերը, որոնք նախատեսված են առավելագույնս բացահայտել համայնքում առկա ներուժը, զարգացման հնարավորությունները և ուղղությունները:

Մեր կարծիքով՝ սոցիալ-տնտեսական որոշակի խնդիրների, հատկապես արտագաղթի կանխման կարևոր միջոցառումների շարքում շատ աննշան են մշակույթի, գրականության, հատկապես հեռուստատեսության ու մամուլի միջոցով բարոյափոխական, հայրենասիրական, հայասիրական, ազգային արժանապատվության, ազգի անկախ գոյատևման ու զարգացման ամենօրյա դաստիարակությունը և քարոզչությունը: Միայն է թերագնահատել այն դերը, որ արտագաղթողների, հատկապես երիտասարդության վրա կարող են թողնել մեծ հեղինակություն վայելող մտավորականների (բուհերի դասախոսների, դպրոցների ուսուցիչների, արվեստի գործիչների), տարեցների և վետերանների ելույթները, հիմնավոր պարզաբանումները: Ի՞նչ է անում այդ ուղղությամբ այնպիսի հզոր լրատվամիջոցը, ինչպիսին հեռուստատեսությունն է: Բացի լուրերից՝ հեռուստատեսությունը լցված է արտասահմանյան անշնորհ քարգանձված, ոչինչ չտվող ու բթացնող ինչպես նաև սեփական արտադրության տարաբնույթ անճաշակ հեռուստասերիալներով: Արտագաղթի թեման գրեթե անտեսված է, որը դատապարտելի է: Բարձր արվեստի լեզուններով մեր միակ Հայաստան-Արցախը սիրելու, շատ սիրելու ուղղությամբ շատ քիչ բան է արվում:

Արտագաղթի դեմ մի շարք ստեղծագործությունների թվում սքանչելի, հուզող ու ներգործող է մեծ բանաստեղծ Համո Սահյանի ճիշդ.

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
 Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
 Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
 Ախր ուրիշ տեղ հորովել չկա,
 Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում

Սեփական հոգին խորովել չկա ...

Ախր ուրիշ տեղ

Հողի մեջ այսքան օրհնություն չկա,

Այսքան վաստակած հոգնություն չկա,

Ախր ուրիշ տեղ ձյունի մեջ՝ արև,

Եվ արևի մեջ այսքան ձյուն չկա:

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,

Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ,

Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց քեզ:

Այո՛, իսկական հայի համար առանց Հայաստանի ապրելուց մեծ դժբախտություն չկա:

Եթե այդ բանաստեղծությունները մտնեն հայի հոգու մեջ, անկախ ծանր տնտեսական ու սոցիալական խնդիրներից, նա կիրառարվի արտագաղթելուց:

Այո՛, առանց Հայաստանի հայը երջանիկ չի կարող ապրել: Եվ ինչպես դրան չավելացնել մեծ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» հանճարեղ բանաստեղծության խոսքերը.

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բարձր եմ սիրում,

Մեր հին սագի ողբանվագ, լացակումած լարձ եմ սիրում,

Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման,

Ու մաիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա .

Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա .

Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի մման ճերմակ գագաթ չկա .

Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

Համո Սահյանը նկատի ունի հենց չարենցյան Հայաստանը, որը խորհրդային տարիներին Աշոտ Սաթյանի տաղանդավոր երաժշտությամբ հեռուստատեսության հաղորդումների ամենօրյա բացման էջն էր: Մի՞թե կարելի էր Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» երգից հոգնել, չվերապրել, չհպարտանալ և չուրախանալ, որ այդպիսի հայրենիքում ենք ապրում: Ինչո՞ւ հեռուստատեսության հաղորդումները

սկսելու այս հրաշալի էջը ջնջվեց: Բոլոր առումներով դա մեծ սխալ էր:

Հայաստանի Հանրապետության անկախության 25 տարիներին կոռուպցիան այնպիսի չափեր ու դրսևորումներ ընդունեց, որ 2017 թ.-ի ընտրություններին մասնակցող, առանց բացառության, բոլոր ութ կուսակցությունների ու կուսակցությունների դաշինքների նախընտրական ծրագրերում այն հիմնական խնդիրներից առաջինն էր: Հասարակության նորմալ զարգացման այդ ամենամեծ չարիքի՝ կոռուպցիայի դեմ պայքարում ևս, ի թիվս այլ միջոցների, պետք է կիրառվի մշակույթի ողջ գործիքակազմը: Պատմականորեն կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի միջոց են եղել գրականությունը, թատրոնը, կինոն և մշակույթի այլ ձևերը: Հայ իրականության մեջ դրա փայլուն օրինակներն են Գաբրիել Սունդուկյանի «Պեպոն»՝ իր Բազազ Արտեմի բացասական կերպարով, Շիրվանզադեի «Քառսը», Հ. Թումանյանի «Գիքորը» և այլն:

Մեր ժամանակակից գրականությունը և մշակույթը փորձ էլ չի անում ներկայացնելու և խարազանելու ժամանակակից հայ «Բազազ Արտեմներին», և մյուս կողմից, հարուստ գործարար, բարերար ու մեծ հայրենասեր մեծահարուստներ Մանթաշյանի և Արամյանի օրինակներով ներկայացնելու մեր օրերի Հայաստանի Մանթաշյանների՝ Հրանտ Վարդանյանի և նրա երկու որդիների, Գագիկ Ծառուկյանի, Ռալֆ Յիրիկյանի և մյուսների մեծ արժեք ներկայացնող բարեգործությունները:³⁰¹ Լավը արժևորելը և գնահատելը, քարոզելը նույնպես վատի խարազանում է:

Աղքատությունը, արտագաղթը հաղթահարելու ու կանխելու և երկրի ազգային անվտանգությունը հուսալի դարձնելու շատ կարևոր պայմաններից է գյուղում բնակչության բնական աճը փրկելու ու զարգացնելու գերխնդրի լուծումը: Չմոռանա՞նք, որ դարերով պետականությունը կորցրած Հայաստանի հայապահպանման խնդիրները հիմնականում լուծել է գյուղը, գյուղի ավանդական ընտանիքը: Դպրոցը գյուղը լուսավորող և երեխաներին կրթող, բնակչության

³⁰¹ <http://yerkirmedia.am/other/viva-cell-mts-15/> 04.06.2017

մշակութային և հոգևոր կարևոր կենտրոնն է: Ինչպե՞ս կարելի է բանը հասցնել նրան, որ գյուղը այնպես քանդվի, որ երիտասարդները թողնեն հեռանան, ամուսնությունները կրճատվեն, առանձին տեղերում համարյա վերանան, երեխաներ չծնվեն, և հարցը լուծվի դպրոցը փակելու, այլ գյուղերի դպրոցների հետ միացնելու ճանապարհով:

Անցյալում, խորհրդային տարիներին, երբ գյուղերն անհամեմատ կայուն զարգանում էին, նրանց խոշորացումը ոչ մի դրական արդյունք չի տվել: Ամեն մի գյուղ մի մեծ ընտանիք է՝ աշխատելու և ապրելու իր ինքնատիպ ավանդույթներով, սովորություններով, մոդելով: Գյուղերի միավորումը խաթարում է դարերով ձևավորված յուրաքանչյուր գյուղի կյանքի ավանդույթ դարձած մոդելը: Գյուղերի միավորման և խոշորացման պայմաններում ջարդվում են գյուղը պահող և աշխատեցնող այդ ավանդույթները, և նորը չի ձևավորվում: Դա հարցը լուծելու ճանապարհ չէ: Խոշորացումը, գյուղերը միմյանց միավորելը սխալ է: Պետք է դրանից հրաժարվել և գյուղը ու գյուղական դպրոցը զարգացնելու ճիշտ ուղի մշակել: Միայն այդ դեպքում գյուղը կսկսի շնչել, հարստանալ, և արտագաղթը կդադարի, ու շատ երեխաներ կծնվեն, և դպրոցներն էլ լիաթոք կաշխատեն: Դժվար խնդիր է, բայց դա է հարցի լուծման ճիշտ ճանապարհը: Չմոռանանք, որ գյուղն է ծնել Հովհաննես Թումանյանին, Ավետիք Իսահակյանին, Պարույր Մևակին, Համո Սահյանին, մարշալներ Հ. Բաղրամյանին, Հ. Բաբաջանյանին և շատ-շատերին: Էլ չենք խոսում, որ գյուղերն են պաշտպանում հակառակորդից մեր սահմանները:

Աշխատանքի մեջ բազմիցս նշվել է, բայց նորից կրկնում ենք, որ այսօր մեր երկրի ազգային անվտանգության հիմնական երաշխավորը հայ անձնագրի գինվորն է: Հենց նա հաղթեց և՛ 1990-ականների Արցախի պատերազմում, և՛ 2016 թ.-ի ապրիլյան պատերազմում: 1990-ական թվականներին Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական դաժան և Արցախի ազատագրման ծանր կռիվների տարիներին հայ մեծ բանաստեղծ Համո Սահյանը կոչ էր անում հզոր պահել թշնամիներով շրջապատված հայի անկոտրում սիրտը, հաղթանակի նկատմամբ նրա մեծ հավատը:

Առաքելու է, ինչ էլ որ լինի,

Իր ծովսն առ երկինք երդը նաիրյան

Եվ ոչ մի օրով աշխարհի երթից

Հետ չի մնալու երթը նաիրյան:

Ինչ հողմ ու հրդեհ, հրթիռ ու հյուլե,

Ամուր է հոգու բերդը նաիրյան:

Մեկ է քեզ պիտի հավատով զինես

Հավատով, որ կաս ու պիտի լինես:³⁰²

Աշխարհն արդեն մոռացել է ֆաշիզմի դեմ հայ ժողովրդի հերոսական մասնակցությունը, շուրջ 300 հազար հայ զոհերին, մոտ 100 Սովետական Միության հերոսներին, 100-ից ավելի հայ գեներալներին, մարշալներին ու ծովակալներին: Այսօր մեր դարավոր թշնամու դեմ համարյա մենակ ենք: Երկիր պաշտպանողը մեր հայ զինվորն է: Այդ պատճառով պետք է ամեն ինչ անենք, որ այդպիսի հերոս զինվորներ շատ ծնվեն, և ամենագլխավորը՝ կանխենք նրանց արտագաղթը: Անկախության 25 տարիներին այդ չարաբաստիկ երևույթի՝ արտագաղթի պատճառների մանրամասն վերլուծությունը աշխատանքում տրված է: Շարադրված են նաև այն հաղթահարելու ուղիները: Դժբախտաբար, համապատասխան ռեսուրսներ չունենալու պատճառով դրան շուտ չենք կարող հասնել: Մինչև աղքատությունը վերացնելը արտագաղթը կանխելու սոցիալ-տնտեսական լիարժեք պայմանների ստեղծումը պետք է գործի դնել մեր ազգային պատմական ու բարոյահոգեբանական, հայրենասիրական խորքային լծակները, օրինակները: Այսպես, երբ 1919 թ.-ին հիմնադրվեց Երևանի պետական համալսարանը, ամենակարևոր, բայց ամենադժվար խնդիրը համալսարանական կրթության բարձր պահանջները բավարարող պրոֆեսորադասախոսական կազմ ապահովելն էր: Նման մասնագետներ Հայաստանում չկային և կարճ ժամանակում հնարավոր չէր պատրաստել: Հայաստանի Հանրապետության այն ժամանակվա ղեկավար, մեծ հայ Ալեքսանդր Մյասնիկյանը կոչով դիմեց սփյուռքում ապրող և աշխատող հայ անվանի գիտնականներին, պրոֆեսորներին, մտավորականներին վերադառնալ Հայաստան և

³⁰² Հ. Սահյան, Ինձ բացակա չդնեք, Երևան, 2004, էջ 109, 159:

փրկել ու կայացնել նոր բացված Երևանի պետական համալսարանը: Շուրջ 80 հայ մեծ մտավորականներ թողեցին իրենց բարեկեցիկ կյանքը, վերադարձան հայրենիք և նյութական ծանր պայմաններում ապրելով՝ փրկեցին ու կայացրին համալսարանը: 2019 թ.-ին հարյուր տարին թևակոխող Երևանի պետական համալսարանի այսօրվա գիտակրթական բարձր մակարդակի հիմնաքարերը դրեցին նշված 80 մեծ հայերը, գիտնականները, պրոֆեսորները, մտավորականները:

Պատմական այդ հայրենասիրական, հայրենիքի փրկության համար զոհաբերության փաստը և նման այլ օրինակներ շատ քիչ են հրապարակվում, քարոզվում: Հայկական հեռուստատեսության եթերաժամանակի մեծ մասը զբաղեցնող, մեզ ոչինչ չտվող հեռուստասերիալները պետք է փոխարինվեն բնակչությանը, հատկապես երիտասարդությանը, հայրենասիրական ոգով դաստեարակելու բարձր մակարդակի հաղորդումներով: Հայրենիքի փրկության համար անձնագոհության բոլոր պատմական փաստերը թերթերով, գրքերով, կինոնկարներով, երաժշտական ստեղծագործություններով դպրոցներում և բուհերում պետք է հատուկ ծրագրերով ներկայացվեն: Իհարկե, դրա հետ մեկտեղ պետք է ամենուրեք հաստատվի և արմատավորվի սոցիալական արդարությունը: Ոչ մի կասկած, որ դա էապես կկանխի մեր ներկա և ապագա զինվորների արտագաղթը:

Պետք է նաև խրախուսվի բնակչության միգրացիան դեպի Արցախ: Այսօր Սիրիայից ներգաղթած հարյուրավոր հայեր (փախստականներ) բնակվում են Արցախում, համակերպվել և տնտեսական արդյունավետ գործունեություն են իրականացնում գյուղատնտեսության, մանր ու միջին ձեռնարկատիրական գործունեության մեջ: Տնտեսական լծակներով (բիզնեսի համար տարբեր կարգի արտոնությունների սահմանելու միջոցով) պետք է խրախուսվի Հայաստանի հայերի տեղափոխվելը Արցախ, որպեսզի մեր սահմանները ավելի ամրանան: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Վ. Սարգսյանի ներկայացրած «Ազգ-բանակ» հույս ու հավատ ներշնչող մոդելի միջուկը ապրիլյան հերոս զինվորն է: Պետք է ամեն գնով փրկել ու պահպանել նրան:

Գրականության ցանկ

1. Ազգային գեկույց «ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը», Երևան, 1998:
2. Արոնց Մ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դարի սկզբին, Երևան, 1968:
3. «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», Երևան, 2003:
4. Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Երևան, 2001:
5. Արտագնա աշխատանքային միգրացիա, գնահատականներ և մտորումներ, գիտ. ղեկավար տնտ. դոկտոր Զ. Թադևոսյան, Երևան, 2014:
6. Գևորգյան Ռ., Խառատյան Ա., Քոչինյան Ն., Սոցիալական հիմնական զարգացումների վերլուծությունը Հայաստանի անցումային տնտեսությունում, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2011, Երևան, 2011, էջ 44-53:
7. Դավթյան Լ., Սովետական Հայաստանի բնակչությունը, Երևան, 1985:
8. Եզանյան Ռ., Կոյումջյան Կ., Ետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները, Երևան, 2004:
9. ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012, Երևան, 2013:
10. Իսահակյան Ռ., Մարդկային կապիտալը և նրա կորուստները կրթության ոլորտում, «Այլընտրանք գիտական հանդես», 2013, N3(10), էջ 51-59:
11. Իսահակյան Ռ., Մարդկային կապիտալի զարգացման միտումները, Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր, Ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողով, Նյուքեթի ժողովածու, ԵՊՀ, ԵԳՄ, Երևան, 2014, էջ 22-25:

12. Խառատյան Ա., ՀՀ միգրացիոն գործընթացները անցումային ժամանակաշրջանում, ՀՀ սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները (գիտական հոդվածների ժողովածու – 6), ՀՀ ֆին. և էկոնոմ. նախար. տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2005, էջ 60-68:

13. Խառատյան Ա., Քոչինյան Ն., ՀՀ աշխատանքի շուկան և բնակչության արտագաղթը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», N 5-6, Երևան, 2004, էջ 127-132:

14. Խառատյան Ա., Քոչինյան Ն., ՀՀ միգրացիայի որոշիչների էկոնոմետրիկ վերլուծություն, «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, Երևան, 2005 թ., N 8-9, (56-57), մայիս-հունիս, էջ 156-159:

15. Խառատյան Ա., Քոչինյան Ն., ՀՀ տնտեսական աճը և սոցիալական հիմնախնդիրները, «Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր», Երևան, 2013, N 10., N 1, էջ 5-11:

16. Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1933:

17. Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանը 1920-1925 թթ. (ժողովածու), Երևան, 1926:

18. Կրթություն. 2015, Հայաստանի Հանրապետության կրթության գործացման 2011-2015 թվականների պետական ծրագիր:

19. ՀՀ արտաքին միգրացիոն իրավիճակի եռամյա (2015-2017 թթ.) մշտադիտարկում՝ ընտրանքային հետազոտության միջոցով, ծրագրի ղեկավար՝ տ.գ.թ. Ա. Վարդանյան, թեմայի գիտական ղեկավար՝ տ.գ.թ. Ռ. Եգանյան, Երևան, 2015:

20. ՀՀ, ԱՎԾ, Սպառողական գների ինդեքսը (գները) Հայաստանի Հանրապետությունում 2015 թ.-ի հունվար-սեպտեմբերին, Երևան, 2015:

21. «ՀՀ առողջապահության ազգային հաշիվների 2006 թ. գեկույց, «ՀՀ ԱԾԻԳ», Երևան, 2007: ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով, ծրագրի ղեկավար Ա. Վարդանյան, թեմայի գիտ. ղեկավար Ռ. Եգանյան, Երևան, 2013:

22. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2004:

23. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան,

24. 2008:

25. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2010:

26. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2013:

27. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2014:

28. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2015:

29. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2016:

30. Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001:

31. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նախնական արդյունքները, Երևան, 2013:

32. Հայաստան. Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, Երևան, 2012:

33. Հայաստան. Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, Երևան, 2010:

34. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Երևան:

35. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Երևան:

36. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ. հունվար-դեկտեմբեր, Երևան, 2010:

37. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, Երևան:

38. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001, Երևան:

39. Հայաստանի Հանրապետության օրենքը Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին, 27.07.2001:

40. Ղարիբյան Գ., Անհրաժեշտ արդյունքը սոցիալիստական վերարտադրության համակարգում, «Բանքեր Մոսկվայի համալսարանի», սերիա 8, տնտեսագիտություն, փիլիսոփայություն, 1963, N 1:

41. Ղարիբյան Գ., Անհրաժեշտ և հավելյալ արդյունքը սոցիալիստական հասարակարգում, Հայաստան, 1968:

42. Ղարիբյան Գ., Բնակչության կենսամակարդակը և նրա բարձրացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1972:

43. Ղարիբյան Գ., Հայկական ՍՍՀ արտադրողական ուժերի զարգացման և տեղաբաշխման հիմնական ուղղությունների կանխատեսումը 1976-1980 թթ. հեռանկարում: Բաժին 9- կենսամակարդակը: Երևան, 1973:

44. Ղարիբյան Գ., Մազպանյան Հ., Բնակչության եկամուտների և կենսամակարդակի միտումները Հայաստանում (1980-1990 թթ), «Բանքեր Երևանի համալսարանի». 1998, № 1(94), էջ 33-40:

45. Ղարիբյան Գ., Խառատյան Ա., Կապիտալի նախասկզբնական կուտակման առանձնահատկությունները պլանայինից շուկայական տնտե-

սուրբյան անցման շրջանում, «Հայաստան», Ֆինանսներ և էկոնոմիկա, N 4, 2002, էջ 4-9:

46. Ղարիբյան Գ., Խառատյան Ա., Անցումային տնտեսության բաշխման հարաբերությունները և բնակչության կենսամակարդակի շերտավորման ու սոցիալական արդարության հիմնախնդիրները, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, N 1(109), էջ 43-52:

47. Ղարիբյան Գ., Խառատյան Ա., Ետսոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի ուսումնասիրության մեթոդաբանական մոտեցումներ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, Հ. 2(110), էջ 3-10:

48. Ղարիբյան Գ., Ավետիսյան Կ., Մարդկային կապիտալի տեսության ձևավորումը և զարգացումը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, N 1, էջ 43-52:

49. Ղարիբյան Գ., Մարկոսյան Ա., Ասատրյան Հ., Մարդկային զարգացման հայեցակարգը և մարդկային կապիտալի զարգացման աստիճանի գնահատումը, Սոցիալ-տնտեսական վերափոխումները և զարգացման միտումները ՀՀ-ում: Հանրապետական գիտաժողովի նյութեր, 2004, էջ 114-117:

50. Ղարիբյան Գ., Եգանյան Գ., Մարտիրոսյան Ա., Բնակչության վերարտադրության հիմնախնդիրների արտացոլումը տնտեսագիտական մտքի զարգացումներում, Ֆինանսներ և էկոնոմիկա, N 2(66), 2006, էջ 210-217:

51. Ղարիբյան Գ., Եգանյան Գ., Համբարձումյան Ա., Խառատյան Ա., Ավետիսյան Կ., Եղիազարյան Մ., Մարտիրոսյան Ա., Սիրոյան Գ., Սկրտչյան Հ., ՀՀ աշխատաշուկայի վերլուծություն (գիտահետազոտական աշխատանք), Երևան, 2010:

52. Ղարիբյան Գ., Մարգարյան Հ., Խառատյան Ա., Համբարձումյան Ա., Եղիազարյան Մ., Քոչինյան Ն., Սկրտչյան Հ., Կապիտալի նախասկզբնական կուտակման, հարստության ու եկամուտների բեռնացման առանձնահատկությունները ՀՀ անցումային տնտեսությունում, Երևան, 2011:

53. Ղարիբյան Գ., Հակոբջանյան Ա., Բնակչության եկամուտների բաշխման և վերաբաշխման հարաբերությունները Հայաստանի Հանրապետության անցումային տարիներին, Երևան, 2011:

54. Ղարիբյան Գ., Իսահակյան Ռ., Մարդկային կապիտալի տեսության և մեթոդաբանության հարցեր, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012, Երևան, 2013, էջ 57-68:

55. Ղարիբյան Գ., Եղիազարյան Մ., Իսահակյան Ռ., Բնակչության առողջությունը՝ մարդկային կապիտալի բաղադրամաս, կորուստները և

կանխման հիմնախնդիրները, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2013, Երևան, 2014, էջ 180-193:

56. Ղարիբյան Գ., Իսահակյան Ռ., Միգրացիան որպես արտագաղթի տեսակ և դրա զարգացումները Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2013, Երևան, 2014, էջ 55-70:

57. Ղարիբյան Գ., Եղիազարյան Մ., Գլոբալացման պայմաններում համաշխարհային միգրացիայի դրսևորումների հարցի շուրջ, Ֆինանսներ և էկոնոմիկա, 2004, N 10-11, էջ 130-133:

58. Ղարիբյան Գ., Եղիազարյան Մ., Միգրացիան ԱՊՀ ինտեգրացիոն տարածքում, «Ֆինանսներ և էկոնոմիկա», 2004, N 10-11, էջ 133-135:

59. Մարդկային զարգացման հիմունքներ, Երևան, 2004:

60. Միգրացիան և զարգացումը, Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն, «Աշխատանքի միջազգային կազմակերպություն», Երևան, 2009:

61. Միգրացիան և հմտությունները, «Հայաստանի ազգային զեկույց», Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին, 2012:

62. Պարենային ապահովություն և աղքատություն, 2006 թ.-ի հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2007:

63. Պարենային ապահովություն և աղքատություն, 2011 թ.-ի հունվար-դեկտեմբեր, Երևան, 2011:

64. Պարենային ապահովություն և աղքատություն, 2011 թ.-ի հունվար-դեկտեմբեր: Երևան, 2011:

65. Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թ.-ի հունվար-դեկտեմբեր, Երևան, 2017:

66. Սարգսյան Հ., Անտոնյան Ք., Խաչատրյան Կ., Միգրացիա, միտումներ և հետևանքներ, Երևան, 2013:

67. Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Երևան, 2014:

68. Սովետական Հայաստանը 50 տարում, Երևան, 1970.

69. Սովարյան Յ., Հարությունյան Վ., Սարգսյան Վ., Խաչատրյան Վ., Գիտական համակարգը և տնտեսական զարգացումը, Երևան, 2011:

70. Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Երևան, 2001:

71. Վարդանյան Գ., Գիտելիքահենք տնտեսություն, Երևան, Գիտություն, 2008:

72. Քոչարյան Շ., Ինչո՞ւ դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Երևան, 2015:

73. Адонц М., Экономическое развитие Восточной Армении в XIX в: Ереван, 1957 г.
74. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Москва, 1994.
75. Гарибян Г. А., Проблемы повышения уровня жизни населения, Ереван, 1977.
76. Грейсон Дж., О. Делл К., Американский менеджмент на пороге XXI века, Москва, Экономика, 1991.
77. Изменяющее общество: теория, практика, 1,2, ЕГУ, 1997, стр. 64.
78. Кенэ Ф., Избранные экономические произведения, Москва, 1960.
79. Маркс К., Энгельс Ф., Капитал, соч 2-ое изд., т. 46, 1939, ч. II.
80. Маршал А., Принципы экономической науки, Санкт-Петербург, 1993.
81. Народное хозяйство СССР в 1970 г.
82. Петти У., Экономические и статистические работы, I и II. Соцэкгиз, 1940.
83. Разумов Т. О., Телешова И. Г., Образование и человеческое развитие. М. Т.Е.Н.С., 2000.
84. Саргсян Г., Маркосян А., Сидоров В., Ядгаров Я., Трансформационные аспекты феномена рыночного хозяйства, Ереван, 2016.
85. Смит А., Исследование о природе и причинах богатства народов, Москва, 1962.
86. СНГ в 2005 году. Статистический справочник, Москва, 2006.
87. Статический ежегодник Армении, Ереван, 1990.
88. Adams Jr R.H., 2011. Evaluating the economic impact of international remittances on developing countries using household surveys: A literature review. Journal of Development Studies, 47(6).
89. Baacker G. S. Investment in Human Capital: A. Theoretical and Empirical Analysis, New York, 1964.
90. Bara A., A. Di Bartolomeo Z. Brunarska S. Makaryan S. Mananashvili and A. Weinar, 2013b. Regional Migration Report: South Caucasus. European University Institute, Florence, MPC Migration Report.
91. Barajas A., Chami R., Fullenkamp C., Gapen M. and Montiel P.J. Do workers' remittances promote economic growth?. IMF Working Paper No. 09/153, 2009.
92. Chami R. and Fullenkamp C., 2013. Beyond the household. Finance and Development, 50(3), pp.48-51. St'u fiuul, Clemens, M.A. and McKenzie,

D.J., 2014. Why don't remittances appear to affect growth?. Center for Global Development Working Paper No. 366.

93. Beine M., Docquier F. and Rapoport, H., 2001. Brain drain and economic growth: theory and evidence. *Journal of development economics*, 64(1).

94. *Economic Growth in the 1990s: Learning from a Decade of Reform*, The World Bank, 2005.

95. *Inequality and Poverty in the CIS 1989-2002*, CIS Conference, University of Southamton, 2003.

96. International Labour Organisation (ILO), 2009a. *Migration and development: Armenia country study*. ILO Subregional Office for Eastern Europe and Central Asia, 2009.

97. United Nations Development Program (UNDP), 2009. *Armenia: National human development report 2009 – Migration and human development: Opportunities and challenges*, UNDP Armenia, Yerevan .

98. International Labour Organisation (ILO), 2009a. *Migration and development: Armenia country study*. ILO Subregional Office for Eastern Europe and Central Asia, 2009.

99. United Nations Population Fund (UNFPA) 2007. *Report of a sampling survey of external and internal migration of the Republic of Armenia*. UNFPA, Yerevan, 2007.

100. Weinar, A., 2014. A look at migrations in the post-soviet space—the case of Eastern Europe, South Caucasus and Russian Federation. *International migration*, 52(5).

101. Stratan A., Chistruga M., Clipa V., Fala A. and Septelici V., 2013. *Development and side effects of remittances in the CIS countries: the case of Republic of Moldova*. Migration Policy Centre; CARIM-East Research Report No. 2013/2

102. Stark O. and Lucas R.E., 1988. *Migration, remittances, and the family*. *Economic Development and Cultural Change*.

Ապրելով 1990-ական թվականների ցրտի, մթի, կարիքի և պատերազմական ծանր օրերը՝ կյանքի 80-ամյա շեմը բոլորած մեծ բանաստեղծ Համո Սահյանը գրել է.³⁰³

*Ով կղիմանար աշտան գավերին,
Ավերումներին այս անակնկալ,
Մենք ապրելու ենք ինչ էլ պատահի
Մեր հողի վրա մերն ենք լինելու,
Մեր անտեր գլխի տերն ենք լինելու:
* * **

*Եվ մեր երթի դեմ կչքվի ինքը՝
Այս ցրտի, սովի, թուրքի դաշինքը:*

³⁰³ Հ. Սահյան, Ինձ բացակա չլնեք, Երևան, 2004, էջ 93, 215

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Գրիգոր (Գրիշա) Ալեքսանի Ղարիբյան, Ալվարդ Ալբերտի Խառատյան,
Ռազմիկ Կամոյի Իսահակյան**

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Արման Ասմանգուլյան» ԱԶ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրություն՝ 19.10.2017:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 21,25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



Գրիգոր (Գրիշա) Ալեքսանի Ղարիբյան

Ծնվել է 1930 թ. Սյունիքի Բարիստվա (այժմ՝ Ծղուկ) գյուղում: 1946 թ. ընդունվել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան մկարչական ուսումնարանը: 1954 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ 1962 թ.՝ Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրան: 1963 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1973 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1954 թ. աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանում. 1978-2008 թթ.՝ «Տնտեսագիտության տեսության» ամբիոնի վարիչ, 1977-1978 թթ.՝ ԵՊՀ կուսակցական կոմիտեի երկրորդ քարտուղար, 1978-1991 թթ.՝ ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1993-2001 թթ.՝ ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան: 2016 թ. Հովհաննես Շարամբեյանի անվան կենտրոնում կայացավ նրա 25 զեղանկարների անհատական ցուցահանդեսը: 1999 թ. պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով: 2000 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: 2010 թ. նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում: Պարգևատրվել է ԵՊՀ ոսկյա երկու մեդալներով, Վ. Համբարձումյանի անվան հուշամեդալով, ՀՀ Կենտրոնական բանկի ոսկե հուշամեդալով, ՀԱՊՀ ոսկե մեդալով և իւ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մեդալով: 2010 թ. արժանացել է «Պատվավոր սյունեցի» կոչմանը: Հեղինակ է 100-ից ավելի գիտական աշխատությունների և հոդվածների:



Ալվարդ Ալեքերտի Խառատյան

Ալվարդ Խառատյանը ծնվել է 1964 թ. Երևանում: 1982 թ. ոսկե մեդալով ավարտել է միջնակարգ դպրոցը, 1987 թ.՝ ԵՊՀ տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը: Եղել է անվանական կրթաթոշակառու: 1987-1992 թթ. աշխատել է ՀԽՍՀ պետպլանին առընթեր Պլանավորման և տնտեսագիտության գիտահետազոտական ինստիտուտում որպես գիտաշխատող: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2006 թ.՝ դոցենտի գիտական կոչում: 1992 թ. առ այսօր աշխատում է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում որպես դասախոս: Հեղինակ է 31 գիտական աշխատությունների և հոդվածների:



Ռազմիկ Կամոյի Իսահակյան

Ռազմիկ Իսահակյանը ծնվել է 1988 թ. Երևանում: 1994-2004 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի թիվ 62 միջն. դպրոցը: 2004-2008 թթ. սովորել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում: 2008-2010 թթ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրատուրան: 2009-2010 թթ. ուսումնառել է Ֆինանսաբանկային ուսումնական կենտրոնում: 2011 թ. ընդունվել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ասպիրանտուրա, պաշտպանել «Մարդկային կապիտալի զարգացման միտումները ժամանակակից պայմաններում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը: 2016 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Հեղինակ է 7 գիտական հոդվածների:



ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2017
publishing.ygu.am